Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավաասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891·99·092
G-15L

Լ Է Օ

# ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

*Թ Ի Փ Լ Ի Ս*

*Արագատիպ Մն. Մարտիրոսեանցի*

**ՄԻՔԱՅԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ № 81.**

Дозв. ценз. Тифлисъ, 29 Апрѣля 1902 г.

ԳԱՑՈՒՍԼԻ ՀԱՑԵՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆԸ ՌՈՒՍԻԱՍՏԱՆԻ ՄԷՋ

ԽԱՆՍՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ

ՓԵՐԱԿՑԻՆ ԲԱՐԵՀԱՃՈՒԹԵԱՄԲ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

Թոյլտուութիւն լինելով ինձ հրատարակել Մոսկուայի մէջ մի-Հայերէն օրագիր «Հիւսիսափայլ» անունով. քաղցր պարտականութիւն եմ համարում իմ հրատարակել մի ծրագիր հայրենակից ընթերցող ժող(ովրդի) ի գործակցութիւն այս օգտաւէտ ձեռնարկութեանս. Մեր խորհուրդը լինելու է, ուսումնական Հայերի մէջ տարածել գիտական տեղեկութիւնք և գիտելիք, որ անհրաժեշտ են մեր օրերումս ամենայն մարդու որ և իցէ պաշտօնի վիճակից, թէ ուսումնականի և թէ չ ... [illegible] ... թէ հոգևորի և թէ աշխարհականի, որ կամք ունենա մտածել մեր լուսաւորեալ ժամանակաց պահանջմունքները, ... [illegible] ... թէ հոգեպէս։

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

## ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

## «ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼԻ» ՇՐՋԱՆԸ

## (1858—1865)

### I

Վաթսունական թուականների շրջանը։— Մտաւոր գործունէութիւն ռուսների մէջ։— Հայ երիտասարդութիւն. Նազարեանցը այդ երիտասարդութեան ներկայացուցիչ։—Հայերէն ամսագրի պահանջ. «Հիւսիսափայլ»։—Առաջին յայտարարութիւն։—Հասարակութեան վերաբերմունքը դէպի նոր ամսագիրը։—Թիֆլիս. Թշնամութիւն Նազարեանցի դէմ. «Մեղու Հայաստանի»։—Դժուար դրութիւն. դիմումն Կովկասեան փոխարքային։—«Հիւսիսափայլը» իբրև նոր սերունդի բերան։—Ի՞նչ էր նա բերում։—Աշխատակիցներ. հակառակորդներ։ 1— 22

II

«Հիւսիսափայլի» հրապարակախօսութիւնը։ —Սրա յատկութիւնները։—Կեանքը և «Հիւսիսափայլը»։—Նազարեանցի վերաբերմունքը ժամանակակից դէպքերին։—Դաստիարակչական ձգտումը մոռացնել է տալիս չափը։—Հրապարակական հարցեր։ — Հրապարակախօսական կրիտիկա։—Կոմս Էմմանուէլ։—Նրա «Յիշատակարանները»։—Դրանց նշանակութիւնը «Հիւսիսափայլի» համար։—Առաջին տարի . . . . 22—66

III

Երկրորդ տարվայ աջողութիւնները։—Խոչընդոտներ։—«Հայերի կոչումը մարդկութեան մէջ»։—Կրօն և ազգութիւն։—Էջմիածնի դերը։—Հայկական թատրօն։—Հասարակական կեանք չը կայ։—Հայ վաճառականի տիպը։—Մաթէոս Կաթողիկոսի հաստատութիւնը և ճանապարհորդութիւնը։—«Մտածող հայերի յոյսերը»։—Մաթէոսի բնաւորութիւնը։—Բողոքականութիւնը Շամախում։—1860-ի առաջին յօդուածը. փոփոխված հայեացք։—Արշաւանք կղերականութեան դէմ։—«Հիւսիսափայլի» երրորդ տարին։—Լայն ծրագիր. Նազարեանցը օգնութիւն է խնդրում։—Աշխատակիցներ. Յակոբ Մէլիք Յակոբեան։—Նորից հայոց պատմութեան փորձ և «Թարգմանիչների դարը»։ . . 66—100

IV

Խռովութիւններ Կ. Պօլսում մի բողոքական հայի պատճառով։ — «Հիւսիսափայլի» 10-րորդ տետրակը։—Րէֆօրմ հայոց եկեղեցու համար։—Թշնամութիւնը բորբոքվում է։—Նազարեանցի հակառակորդները։—Յովսէփ Չէրքէզեան։—Սուր հակառակորդի տիպ։—Չէրքէզեանի դիմումը հայոց կաթողիկոսին։—Նազարեանցի պատասխանը։—Մաթէոսի վերաբերմունքը։—Սինօդի վճիռը։—Նազարեանցին պաշտպանում է գրաքննական ատեանը։—Պետերբուրգի հայերի բողոքը։—Պատասխան «Կըռունկին»։—Նալբանդեանցի բացատրութիւնը։—Նոր եռանդ և Նազարեանցի պահանջը հասարակութիւնից։—Բարբարոսական դէպք Շամախում։ . . . . . . . . . . . . . . . 100—153

V

Կեանքի փորձը։—Չը կայ գրականութիւն առանց գրողների։—Նազարեանցի մասնաւոր գիտնական և գործնական դպրոցը։—Հրաւէր հայ ծնողներին, բայց անպտուղ։—Չէրքէզեանի նոր ստորութիւնը։—Նազարեանցի բաց նամակը։—Երկու տիպեր մամուլի գործիչների մէջ։—Անբարեխղճութիւնը արհամարհված։—Դիմում հասարակական դատաստանին։—Չը կայ այդ դատաստանը։—«Հիւսիսափայլի» դրութիւնը։—Պահանջներ հասարակութիւնից, դարձեալ ապարդիւն։—Բարեգործական ընկերութեան ծրագիր։—Հասարակական գործակցութեան գաղափարը։—«Հիւսիսափայլի» առաջարկութեան անմիջական հետևանքները։—Ընկերութիւններ Բագւում և Նոր Նախիջևանում։ 153—185

VI

Անաջողութեան տարի մեր մամուլի համար։—Նազարեանցի յայտարարութիւնը «Հիւսիսափայլի» դադարման մասին։—Դադարման պատճառները։—Դրանք միայն արհեստական չեն։—Միւս պարբերական հրատարակութիւնների վիճակը։—Նազարեանցի վերջին ցանկութիւնները։—«Հիւսիսափայլի» վերակենդանանալը։—Կ. Պօլսի «Մեղուի» յօդուածը։—Թիֆլիսի «Մեղուն»։—Պահպանողական նոր սերունդը հաշտված Նազարեանցի հետ։ . . . . . 185—201

VII

Վերջին տարին։—Անհատական ձեռնտուութիւն և ժողովրդական ընդհանուր գործակցութեան գաղափար։—«Հիւսիսափայլի» ուղղութիւնը։—«Ազգային մտածութիւնք»։—Դարձեալ լեզուի, կրթութեան, դպրոցական կազմակերպութեան հարցեր։—Գրական կռակ։—«Ազգային թշուառութիւն»։—Կ. Պօլիսը, Սահմանադրութիւնը, արդարութիւնը։ — Երկրորդ կիսամեակ, մահվան նշաններ։—Զիլլերի «Կասանդրան» իբրև «Հիւսիսափայլի» վերջարան։—Վերջին հառաչանք։—Աշխատակիցներ հրապարակախօսական բաժնում։—Յակոբ Մէլիք-Յակոբեան. «Աղթամարայ Կղզին»։—Միքայէլ Միանսարեան. դպրոցական սահմանադրութիւն, ժողովրդական կրթութիւն, մանկավարժական հարցեր . . . . . . . . . . . 201—231

VIII

«Հիւսիսափայլը» իբրև գրական ամսագիր։—1. Թարգմանական գրականութիւն։—Նազարեանցի մասնակցութիւնը. տարօրինակութիւններ ընտրութեան մէջ։—Կիկերոն, Ներսէս Լամբրոնացի, Բօկլ։—Եւրոպական գլուխգործոցներ. Զիլլեր, Շատօբրիան, Քալդերոն, Ալֆիերի։—Թարգմանիչ աշխատակիցներ. Նալբանդեանց, Համասփիւռ, Ռափայէլ Պատկանեան, Գէորգ Բարխուդարեան, Մանուկ Սադաթեան։—2. Ինքնուրոյն գրականութիւն։—Վէպ. «Մեռելահարցուկ» Նալբանդեանցի, «Տէր Սարգիս» Գ. Տէր-Յովհաննիսեանցի։—Թատերագրութիւն. «Հայոց ազգի լուսաւորիչքը» Ա. Սուլթան-Շահի։ — Բանաստեղծութիւն. Նալբանդեանց, Ռեստեն, Սմբատ Շահազիզ, Գ. Բարխուդարեան։—Եզրակացութիւններ։ . . . 231—287

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

## «ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼԻՑ» ՅԵՏՈՅ

(1865—1879)

I

Հրաժեշտ գրականութեան։—Գործունէութեան նոր ասպարէզ։—Ղլարցիների նամակը։—Նազարեանցի ցանկութիւնները։ — Ճանապարհորդութիւն դէպի Թիֆլիս։—Գէորգ կաթողիկոսը Մոսկվայում։—Ընտանեկան դժբախ-

*տութիւն։—«Լապտեր Հայաստանի»։—Նազարեանցը Թիֆլիսում։—Ներսիսեան դպրոց։—Բարեկարգութիւններ և հիասթափումն։—Վերադարձ Մոսկվա* . . . . . . . . . . . . . . 287—320

II

*Տեսչական պաշտօն Ներսիսեան դպրոցում։—Թիֆլիսը, նրա թողած տպաւորութիւնը։—Նազարեանցը չէ կարողանում գործել։—Ի՞նչ էր նրա տեսչութիւնը դպրոցի համար։—1869-ի դպրոցական հանդէսը։—Դժգոհութիւններ։—Նազարեանցի կազմած դասագիրքը։—Հրաժեշտ Թիֆլիսին, վերադարձ Մոսկվա։ — Գրական ծրագիր։—Վերջին գրուածք։—Ճանապարհորդութիւն դէպի Եւրոպա. Գերմանիայի թողած տպաւորութիւնը։—Մահ* . . . . . . . . . . 237—318

III

*Գծեր Նազարեանցի բնաւորութիւնից։—Գնահատութիւն մահից յետոյ. հոգեհանգիստներ։—Գրիգոր Արծրունու յօդուածը։—Երիցեանը Նազարեանցի մասին։—Պատասխաններ։—Նազարեանցի յիշատակը մեր գրականութեան մէջ։—Վերջին խօսք։* . . . . . . . 318—365

---



ՊԱՏԿԵՐՆԵՐ

1. *Ս. Նազարեանց (ֆոտոգրաֆիա Դեւնեու Թիֆլիսում).*
2. *«Հիւսիսափայլի» առաջին յայտարարութիւնը.*
3. *Միքայէլ Նալբանդեանց.*
4. *Յակոբ Մէլիք-Յակոբեան.*
5. *Միքայէլ Միանսարեանց.*
6. *Ռափայէլ Պատկանեան.*
7. *Մանուկ Սաղաթեան.*
8. *Բժ. Անանիա Սուլթան-Շահ.*
9. *Մ. Նալբանդեան.*
10. *Սմբատ Շահազիզեան.*
11. *«Հիւսիսափայլի» խմբագրատունը.*
12. *Բժ. Դաւիթ Ռոստոմեանց.*
13. *Գէորգ Բարխուդարեան.*
14. *Բժ. Գաբրիէլ Տէր-Յովհաննիսեան.*
15. *Մելքոն Փանեանց.*
16. *Ս. Նազարեանցի գերեզմանը.*
17. *Ստեփանոս Նազարեանց.*

---

*Հեղինակը քաղցր պարտականութիւն ունի հրապարակով իր խորին շնորհակալութիւնը յայտնելու այն անձանց, որոնք շատ սիրալիր պատրաստակամութեամբ աջակից հանդիսացան այս գործի մէջ: Առանց այդ աջակցութեան անհնարին կը լինէր հեղինակի համար գլուխ բերել մի աշխատութիւն, որ կարելիին չափ լիակատար ներկայացնէր հանգուցեալ Նազարեանցի կեանքը եւ գործունէութիւնը:*

# ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

## «ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼԻ» ՇՐՋԱՆԸ

### (1858—1865)

### I

*Վաթսունական թուականների շրջանը:—Մտաւոր գործունէութիւն ռուսների մէջ:—Հայ երիտասարդութիւն. Նազարեանցը այդ երիտասարդութեան ներկայացուցիչ:—Հայերէն ամսագրի պահանջ. «Հիւսիսափայլ»:—Առաջին յայտարարութիւն:—Հասարակութեան վերաբերմունքը դէպի նոր ամսագիրը:—Թիֆլիս. թշնամութիւն Նազարեանցի դէմ. «Մեղու Հայաստանի»:—Դժուար դրութիւն. դիմումն Կովկասեան փոխարքային:—«Հիւսիսափայլը» իբրեւ նոր սերունդի բերան:—Ի՞նչ էր նա բերում:—Աշխատակիցներ. հակառակորդներ:*

—o—

1856 թուականի մարտի 30-ին կնքվեց Պարիզի դաշնադրութիւնը, որ վերջ էր դընում Ղրիմի երկարատեւ և խիստ արիւնահեղ պատերազմին։ Ռուսաստանը, որ այդ պատերազմի մէջ հսկայական ջանքեր էր գործ

գրել չորս պետութիւնների միացած ոյժերին դիմադրելու համար, նշանաւոր զիջողութիւններ պիտի անէր, որպէսզի Պարիզի կօնգրէսը կարողանար համաձայնութեան կէտեր որոշել: Այդ զիջողութիւններից շատերը խիստ վիրաւորական էին Ռուսաստանի համար:

Արիւնը դադարեց, հրազէնքը լռեց, Ռուսաստանը նոր արթնացաւ քնից, սկսեց իր ներքին ցաւերն ու խոցերը զննել: Հասարակական կազմակերպութեան պակասութիւնները, ժողովրդի յետամնացութիւնը աւելի խիստ գծերով էին երեւան եկել ահաւոր պատերազմի ժամանակ: Այժմ, աւելի քան երբ եւ իցէ, անխուսափողական էր դարձել բարենորոգումների սուր պահանջը: Եւ Ռուսաստանի վրա ծագեց նոր կեանքի արշալոյսը:

Գահի վրա բազմած էր երիտասարդ Ալէքսանդր II կայսրը, որ տոգորված էր մարդասէր, լուսամիտ գաղափարներով: Նա կամեցաւ, եւ Ռուսաստանը մի եռանդուն գործունէութիւն սկսեց: Վերացաւ այն մռայլ յետադիմութիւնը, որ տիրել էր Ռուսաստանում 1848-ի եւրօպական յեղափոխութիւններից յետոյ եւ խեղդելով 1840-ական թւականների մտաւոր շարժումը, առաջացրել էր մի վայրենացում: Նորից լոյս եւ ազատութիւն եկաւ, հայրենիքի ճշմարիտ բարեկամ-



ները կարողութիւն ստացան խօսելու բարոյական եւ մտաւոր վերածնութեան մասին: Մամուլը, գրականութիւնը կենդանացան, առաջ եկաւ այն փառաւոր շրջանը, որ ռուսաց նորագոյն պատմութեան ամենագեղեցիկ էջերն է գրաւում «վաթսունական թւականներ» անունով: Այդ շրջանը մի տասնամեակ է, որ սկսվում է 1855 թւականից: Հասարակական բարիք, ժողովուրդ—ահա նշանաբանը, այն իդէալը, որին սկսեցին եռանդով եւ անձնուիրութեամբ ծառայել ռուս գործիչները: Ազատամտութեան ոսկեդարն էր դա. թէ հասարակութիւնը եւ թէ գրականութիւնը տոգորված էին ազատամիտ գաղափարներով, յետադիմական օրգաններ համարեա չը կային:

Ամենից շատ այդպիսի ժամանակներում ոգեւորվում էր, ի հարկէ, ուսանող երիտասարդութիւնը. եւ նա, ինչպէս պատմում են ականատեսները, նոյն իսկ իր համալսարանական պարապմունքները թողնելով, նուիրվել էր նոր, թարմ հոսանքին: Այդ գաղափարական ուսանողութեան մէջ կային եւ հայեր: Բնական է որ սրանք էլ, իրանց շուրջը եռացող շարժման ազդեցութեան տակ, մտածէին իրանց ազգի, իրանց լեզուի մասին:

Եւ հայ ուսանողութեան ամենանշանաւոր

կենտրոնը նոյն Դորպատն է։ Քառասնական թուականների վերջերում Լազարեանները իրանց ճեմարանի ընդունակ աշակերտներին սկսում են իրանց հաշուով ուղարկել Դորպատի համալսարանը։ Եւ ահա դորպատեան այդ նոր շրջանում—անուանենք նրան երկրորդ շրջան—մայրենի լեզուն սկսում է երգի լեզու դառնալ, որ երգում է ուսանողական կեանքը, գինի, ուրախութիւն, սէր, հայրենիք։ Ուժեղ, առողջ և ուրախ է այդ երգը, նա ցոյց է տալիս որ ռուսահայերի մէջ ասպարէզ է գալիս մի նոր գործօն—համալսարանական երիտասարդութիւն հասարակական գաղափարներով։

Երգը, ի հարկէ, բաւական չէր։ Պահանջվում էր աւելի հիմնաւոր, տեւողական գործ ժողովրդի համար։ Եւ այդ պահանջը զգում և իրագործում է Նազարեանցը, որին հայ երիտասարդութիւնը արդէն իր պարծանքն էր համարում։

Անտարբեր մնալ մանաւանդ մի այդպիսի գեղեցիկ ժամանակ չէր կարող Նազարեանցը։ Նա օգտվեց ժամանակի բարեյաջող հանգամանքներից և փորձեց իրագործել այն, ինչ առաջարկել էր դեռ 1846 թւին իր „Обозрѣніе Армянской Литературы" աշխատութեան մէջ, այսինքն հիմնել մի ամսա-



գիր (կամ, ինչպէս ասում էին այն ժամանակ, օրագիր) եւրոպական գիտութեան լոյսը հայերի մէջ տարածելու համար։ Այս մտքով նա 1856 թւականի մարտի 19-ին ուղարկեց ժողովրդական լուսաւորութեան մինիստր Նորովին մի խնդիրք, որով խնդրում էր թոյլ տալ իրան հրատարակել Մոսկվայում մի ամսագիր «Հիւսիսափայլ» անունով։ «Այժմուս, գրում է Նազարեանցը իր մի ծանօթին *)—նոր թագաւորի քաղցր շնորհից և ողորմութիւնից մի փոքր աւելի ազատութիւն և համարձակութիւն լինելով, և ես ոտք խաղացուցի և գլուխ բարձրացրի, մի հայկական օրագրի պրօժէկտ գրելով և մի նամակի հետ ուղարկելով ազգային լուսաւորութեան նախարար Նորովին։ Կարծիք ու յոյս կայ, որ այս մարդը բարի լինելով և ժամանակը ևս ձեռնտու լինելով, թոյլ տայ ինձ տպել այդ շատ հարկաւոր օրագիրը»։

Կառավարութեան բարի տրամադրութեան մասին կասկած չը կար։ Միակ արգելքը, որ կարող էր հանդիպանալ այս գործում, այն էր, որ Մոսկվայում չը կար հայերէն լեզուի ցէնզոր։ Նախատեսնելով այդ արգելքը, Նա-

*) Եր. Շահազիզ—«Միքայէլ Նալբանդեան», Մոսկվա, 1896, եր. 56։

զարեանցը իր խնդրագրի մէջ առաջարկում էր որ եթէ կառավարութիւնը չէ կարող յատուկ ցէնզոր նշանակել Մոսկվայում և ռոճիկ տալ նրան, այդ դէպքում նա ինքը յանձն է առնում հոգալ այդ պաշտօնեայի ռոճիկը. միևնոյն ժամանակ ցոյց էր տալիս մի հայ աստիճանաւոր, որ համաձայն էր վարել ցէնզորի պաշտօն առանց ռոճիկի։ Մասնաւոր կերպով էլ դիմումներ է անում Նազարեանցը ազդեցիկ մարդկանց, խնդրելով նրանց աջակցութիւնը։

Անցնում է ուղիղ մի տարի։ 1857 թուի մարտի 17-ին Ալէքսանդր կայսրը համաձայնութիւն է տալիս որ թոյլատրվի Մոսկվայի հայ ամսագրի հրատարակութիւնը. այդ մասին Նազարեանցին իմաց է տրվում ապրիլի վերջերին։ «Հիւսիսափայլը» ենթարկված էր Պետերբուրգի գրաքննական ատեանին։ Դա մի մեծ անյարմարութիւն էր. ամսագրի յօդուածները Մոսկվայից Պետերբուրգ պիտի ուղարկվէին քննելու համար։

Ամսագիրը կար։ Բայց կա՞ր և պատրաստութիւն, կա՞ր և յարմար հող՝ այդպիսի մի գործ կանոնաւոր կերպով տանելու համար։ Եթէ տարին կամ երկու տարին մի անգամ հեշտ էր պատրաստել մի գիրք և գրել նրա համար մի կծու առաջաբան, կարո՞ղ էր նոյն-



քան հեշտ լինել մի եւրօպական ամսագրի հրատարակութիւնը, այսինքն մի գործ, որի պահպանողը հասարակութեան համակրութիւնը միայն չը պիտի լինէր, այլ և զարգացած, ընդունակ աշխատակիցների մի խումբ։ Մենք արդէն ասացինք որ «Հանդէս Նոր Հայախօսութեան» հատորների տպագրութեան հանգամանքները հասարակական համակրանքի և աջակցութեան լաւ նշաններ էին, որոնք վստահութիւն տուին Նազարեանցին ամսագրի մասին մտածելու։ Հող, հետևաբար, կար և Նազարեանցին ներելի էր նոյն իսկ մի քիչ էլ չափազանցութեան հասնել իր ոգևորութեան, ակնկալութիւնների մէջ։

Մնում էր աշխատակիցների հարցը։ Բայց այդ կողմից էլ Նազարեանցը կարող էր յոյսեր դնել աջակցողների վրա, թէև հայերը ոչ գրականութիւն ունէին, ոչ էլ գրական ոյժեր։ Դեռ նոր պիտի դուրս գային գրական աշխատաւորներ, լցված նոր ժամանակի ոգով, ըմբռնած նրա պահանջները։ Այն շրջանը որ պիտի տար այդպիսի աշխատաւորներ, համալսարանական երիտասարդութիւնն էր։ Հայ ուսանողներից մէկը, Միքայէլ Նալբանդեան, 1857-ին տպագրած իր «Թափառական Հրէայ» թարգմանութիւնը նուիրում է Նազարեանցի «միշտ գեղեցիկ անուան»։ Այն խօսքերը, որ

երիտասարդը ուղղում է Նազարեանցին, արդէն մի գեղեցիկ վկայութիւն են թէ որպիսի հեղինակութիւն և պատիւ ունէր վերջինս ուսանողութեան մէջ. «Թո՛ղ—ասում է Նալբանդեանցը—քաղցրանայ քո ազնիւ աչքը այս փոքրիկ գործի վերայ, և քաջալեր լինի ինձ դէպի առաջ և աւելի արժանաւորը մեր շատ սիրելի Հայկական եղբայրակիցների օգտի համար»։

Եւ Նազարեանցը չէր կարող չը հաւատալ երիտասարդութեան։ 1857 թուականի մայիսի 30-ին նա հրատարակում է մի յայտարարութիւն «Հիւսիսափայլ» ամսագրի բաժանորդագրութեան մասին։ Այդտեղ նորից և նորից չեշտելով կենդանի լեզուի նշանակութիւնը և կատարելի դերը, Նազարեանցը բացատրում էր թէ ինչ պիտի անէ «Հիւսիսափայլը» հայերի մէջ։ Ամսագրի առաջին պարտքը կը լինի ժողովրդականացնել գիտութիւնը։

«Մեր օրերումը գիտութիւնը չունի այլ ևս ոչինչ նուիրական, ծածկած ու վարագուրած գաղտնիք որ պահած լինէին մի քանի առանձին եգիպտոսեան քրմերի համար», նորից կրկնում է նա։ Եւ հայերը պարտաւոր են հասկանալ իրանց պարտականութիւնը։ «Այսպիսի օրհնութեամբ լի ու առատ դարու քաղաքակից Հայը ինչպէս կարող էր ամենևին սառն մնալ, ինչ-



պէս կարող էր փակել իւր աչքը և սիրտը, կամ թէ ուրանալ իւր կեանքի խորհուրդը, և լուսաւորութեան աղբիւրի մօտ նստած, միշտ ծարաւի գտանվիլ։ Ո՞ր Հայը կարող է այսուհետև մտածել թէ նա հարազատ որդի էր տան և իններորդ դարու, առանց մասնակից լինելու դորա հոգեղէն բարութիններին, պաշտելով միայն իւր մարմնաւոր օգուտը, ուտելով, խմելով, փառաւորապէս ապրելով, որպէս թէ Աստուած ստեղծել էր մարդս նիւթական բարեկեցութեան համար»։

«Հիւսիսափայլի» ծրագիրը աւելի մի ժողովածուի ծրագրին էր նման։ Դա նոյն ծրագիրն էր, որ ունէր իր մէջ «Հանդէս Նոր Հայախօսութեան» ժողովածուն։ Չը կայ յատուկ տեղ հրապարակախօսութեան համար, որվայ կեանքը մոռացված է նրա մէջ։ Գրական և գիտական մի ամսագիր է դա, որ դաստիարակի պաշտօն ունէր։ Նալբանդեանցը իր մի նամակի մէջ գրում էր. «Մեր ցանկութիւնը այն է, որ կարողանանք ժողովրդին մօտեցնել փոքր ինչ դպրութեան հետ, նիւթ ու սնունդ դնել հայկական չոր ու ցամաք դպրութեան մէջ, և ինչպէս մի կողմից լեզուն, միւս կողմից և նոյն ինքեան դպրութեան հոգին ու ուղղութիւնը որքան կարելի է չինենք ժողովրդական, ազատելով աբե-

ղայականութիւնից»։ Համեստ ու տարրական էին Նոր ամսագրի ձգտումները, բայց նա այդ գերի մէջ փակված չը մնաց, այլ աւելի լայն թռիչք ունեցաւ կեանքի մէջ։

Նազարեանցը նկատի ունէր կազմակերպել գործը եւրօպական եղանակով, մտածում էր աշխատակիցներին վարձատրելու մասին և այդ պատճառով յայտարարում էր թէ ամսագիրը մեծամեծ ծախսեր է պահանջում, ուստի կը սկսէ հրատարակվել այն ժամանակ, երբ 600 բաժանորդ կունենայ։ Ի վերջոյ Նազարեանցը հրաւէր էր կարդում հայ գրագէտներին։ «Շատ սիրելի կը լինի մեզ տեսանել, որ մեր բանագէտ հայրենակից եղբարքը գործակից էին մեզ իւրեանց գրուածքներով որ մեծ հաճութեամբ կընդունէ օրագրի հրատարակողը, միայն թէ լինէին դոքա արժանի բաներ և յստակ լեզուով գրած»։ «Հիւսիսափայլի» ծաւալն էր 8—10 թերթ, բաժանորդագինը 8 ռուբլի, ճանապարհածախսով $9^1/_2$ ռուբլի։

Հիմա տեսնենք թէ ինչ էր պատասխանում Նազարեանցին հայկական իրականութիւնը։ Այդ յայտարարութիւնները ամեն տեղ ցրվելուց յետոյ, Նազարեանցը ամառը գնում է Դորպատ։ Այստեղ շրջապատում են նրան հայ ուսանողները, որոնց մէջ էին Վահան



Ասկարեանը, մի աշխատասէր, լաւ յոյսեր տուող երիտասարդ, և Գէորգ Դոդոխեանը, «Ծիծեռնակ» երգի հեղինակը։ Խօսք ու զրոյցը, ի հարկէ, պտտում էր Նոր ամսագրի շուրջը։ Վերադառնալով Մոսկվա, Նազարեանցը իր այդ երիտասարդ բարեկամներին հաղորդում է որ «Հիւսիսափայլի» բաժանորդագրութիւնը յուսատու չէ։ Եւ ահա հայ ուսանողները, թւով չորս հոգի, համակրական նամակ են գրում Նազարեանցին, խնդրում են որ նա չը վախենայ ժամանակաւոր դժուարութիւններից և շարունակէ սկսած գործը։

«Ցաւալի է մեզ համար—ասում են նրանք—և միանգամայն ամօթալի խոստովանել թէ Ռուսաստանի բազմաթիւ հայ ժողովրդի մէջ օրագրի պէս հասարակօգուտ մի բան մինչև օրս յոյս չունի դեռ ևս կենդանութիւն ստանալու, թէև նոյն իսկ ժողովուրդը հրատարակչին իւր այժմեան պարծանքներից մինն է համարում։ Հոգւով չափ ցանկանում ենք որ մեր ագէտ ժողովուրդը այս իւր՝ այժմեան դարումը աններելի անտարբերութիւնը վերջապէս թողնի, իւր ճշմարիտ օգուտն ու վնասը, բարեկամն ու թշնամին լաւ ճանաչի և իւր ցանկալի վերակենդանութեան ժամանակը անմեղ անդը իրանից չը հեռացնի»։

Սրանք միայն բարի ցանկութիւններ էին։ Նազարեանցը, դեռ ամսագրի հրատարակութիւնը չը սկսած, տեսնում էր որ հայերից շատ բան սպասել չէ կարելի։ Բաժանորդագրութիւնը համեմատաբար լաւ էր Ռուսաստանի հայաբնակ քաղաքներում—Մոսկվայում, Նոր-Նախիջևանում, Աստրախանում, Ղզլարում։ Իսկ Անդրկովկասի հայութիւնը համարեա միանգամայն անտարբեր մնաց դէպի «Հիւսիսափայլը»։ Պատճառը միմիայն ժողովրդի տգիտութիւնը չէր. գործում էր և այն սաստիկ թշնամութիւնը Նազարեանցի դէմ, որ ծնվել էր վաղուց։ Եւ այդ թշնամութեան բոյնը Թիֆլիսն էր։ «Թիֆլիզի հայերը—գրում էր Նազարեանցը Դորպատի ուսանողներին—ամենայն գազանական կերպով զրահաւորուելով ընդդէմ իմ օրագրին և այլ գրուածքներիս, հազիւ թէ կարողացել էր իմ գործակատար Փոնդոյեանը 10 օրինակի ստացողք գտնել բոլոր Թիֆլիզի մէջ, ուր կային գոնեայ 30,000 հայ»։

Այսպիսի վերաբերմունքը արդէն ցոյց էր տալիս որ անկարելի պիտի լինի գործը կանոնաւոր հիմքերի վրա դնել։ Տարեկան ծախսերի համար հրատարակչին հարկաւոր էր մօտ 5000 րուբլի, իսկ նայելով ամսագրի գործակալների հաղորդած տեղեկութիւննե-



րին, կարելի էր յոյս ունենալ թէ բաժանորդագրութիւնից կը ստացվի այնքան փող, որ բաւական կը լինի միայն 3—4 ամիս գործ տեսնելու համար։ Դրութիւնը անյուսալի էր։ Բայց Նազարեանցը չը հրաժարվեց իր սկսած գործից։ Նա համոզվեց որ «մեր հայերի բարոյական յօժարակամութեան վերայ դէպ ի բարին՝ բան հիմնել ու յառաջ տանել անկարելի է. դոցա համար ազգասիրական խօսքը ոչինչ է, որովհետև դոցա սրտումը չը կայ ոչինչ՝ ազգ, գոնեայ բանական ազգի գաղափար ոչ»։ Յօժարակամութիւն չը կայ, պէտք է, ուրեմն, դիմել հրամանին, վճռում է Նազարեանցը. «Պիտոյ էր մեզ դիմել դէպի գաւազանի ուժը և դրա միջնորդութեամբ ջանալ ներգործել մեր Հայերի կամքի վերայ», ասում է նա։ Ու նամակով դիմում է Կովկասեան փոխարքայ իշխան Բարեատինսկուն և նրա դիւանատան կառավարիչ Կրուզէնշտերնին, խնդրելով որ աջակցեն իրան «Հիւսիսափայլը» տարածելու։

Յայտնի է թէ իշխան Բարեատինսկի որպիսի բարեացակամութիւն ունէր դէպի հայերը և որքան աշխատում էր նրանց բարոյական և հոգևոր շահերի համար։ Ուստի զարմանալի չէ, որ նա ուշադրութիւն դարձրեց Նազարեանցի խնդիրքի վրա և կարգա-

դրեց որ Մոսկվայի հայ ամսագրի տարածման գործին մասնակցեն տեղական իշխանութիւնները։ Այդ մտքով էլ նա հրամաններ է ուղարկում նահանգապետներին։ Դիւանատան կառավարիչ Կրուզէնշտէրն մասնաւոր նամակով հաւատացնում էր Նազարեանցին որ ինքը ամեն կերպ կաջակցէ նրան՝ «Հիւսիսափայլը» տարածելու գործի մէջ։ Հաղորդելով այս մասին Դորպատի հայ ուսանողներին, Նազարեանցը աւելացնում է.

«Այսպէս ահա լուսաւորեալ բարեմիտ այլազգին աւելի օգնական է և բարեացակամ քան թէ մերայինը, թէ ամբոխ և թէ բանիմաց առանձնական։ Դուք և շատերը մեր Հայերից միշտ գանգատաւոր են եղած օտարներից. բայց ճշմարիտը պիտոյ է ասել, ամենամեծ արինարբու թշնամին Հայոց ինքեանք Հայք են, այս անբարոյական և ամարդի ժողովուրդը»։ Այս դառն խօսքերը, որոնք իհարկէ, ամբողջ ազգին չէին վերաբերվում, այլ այդ ազգի առաջաւորներին, Նազարեանցին արտասանել էր տալիս այն հանգամանքը, որ Թիֆլիսեցիները աւելի ևս կատաղել էին, լսելով թէ նա դիմել է իշխանաւորների օգնութեանը։ «Ուրեմն Թիֆլիզեցոց կամքն էր, որ մի բարեմիտ հեղինակ Հայոց ոչ Հայերից և ոչ օտարներից օգնութիւն չը գտանէր, այլ միայն



կապած սառած մնար և յուսահատվէր ու մեռանէր, և այդպէս ոչնչանար ամենայն առաքինութիւն նոյն իսկ խանձարուրքի մէջ, որովհետև հարկաւոր չէ առաքինութիւնը, այլ միայն արծաթ, կրկին արծաթ և դարձեալ արծաթ։ Աստուած, Աստուած, հալեա արծաթը և ջերմ-ջերմ թափեա դոցա կոկորդի մէջ, ինչպէս Պարթևացիք արած են Հռոմայեցոց Կրասոսի հետ»։

Որ հայերի արծաթամոլութիւնը արժանի էր մի այդպիսի պատժի, այդ չէ կարելի ուրանալ, կարծեմ, և այժմ։ Բայց որ Նազարեանցն էլ սխալվում էր, դիմելով «գաւազանին», այդ էլ հասկանալի է ինքն ըստ ինքեան։ Գրականութեան մէջ «գաւազանը» տեղ չունի. նահանգապետների աջակցութիւնը կարող էր Նազարեանցին շատ արծաթ հասցնել, բայց դա չէր լինի նշան թէ հասարակութիւնը անտարբեր չէ դէպի նրա ամսագիրը։ Յուսահատական, սառցնող ու մեռցնող էր այդ անտարբերութիւնը։ Բայց նրա դէմ կռուողը գաւազանը չը պիտի լինէր, այլ նոյն ինքն գործը, տպագրական այն խօսքը, որ այնքան արհամարհված էր հայերի մէջ։ Եւ պէտք է ասել որ «գաւազանը» շատ էլ չօգնեց Նազարեանցին. նա ուզում էր 600 բաժանորդ, բայց առաջին տարին միայն դրա կէսն ունեցաւ։

Պէտք էր անել այնքան, որքան թոյլ էին տալիս տխուր հանգամանքները։ Հասարակութիւնը միջոցներ չէր տալիս, բայց Նազարեանցը ձեռքերը չը ծալեց, յետ չը կանգնեց, այլ յոյս դնելով գլխաւորապէս իր անձնազոհութեան, աշխատասիրութեան վրա, եռանդով կպաւ գործին։ Նա ինքն էր իր ամսագրի ամենագլխաւոր և ամենաեռանդուն աշխատակիցը. ինքն էր սրբագրում, ինքն էր նիւթեր ընտրում և պատրաստում, մի խօսքով աշխատում էր օր ու գիշեր, մաքառելով հարիւր ու մի դժուարութիւնների, պակասութիւնների դէմ։ Ամսագիրը, իհարկէ, ոչինչ նիւթական օգուտ չէր տալիս բազմաչարչար խմբագրին, ընդհակառակն, մի-մի անգամ պարտքի մէջ էլ էր գցում նրան։ Չը պէտք է մոռանանք, որ նա դասատու էր Լազարեան ճեմարանում, հետևաբար ամսագրին կարող էր նուիրել միայն իր ազատ ժամերը. չը պէտք է մոռանանք և այն, որ նա ընտանիքի տէր մարդ էր և պարտաւորված էր իր հարազատների բարեկեցութիւնը մի յայտնի չափով զոհ բերել իր գործին։

1858 թուականի յունվարից սկսում է հրատարակվել «Հիւսիսափայլը»։ Ամսէ ամիս լոյս էին տեսնում բաւական հաստ, մաքուր ու-



գեղեցիկ տպագրված տետրակներ։ Ամսագիրը տպվում էր Բարֆքնեհթի տպարանում. հայերէն տառերը Վիեննայից էին բերված, ինչպէս երևում է Նազարեանցի խօսքերից, Աստրախանի առաջնորդ Մատթէոս արքեպիսկոպոսի և Նոր-Նախիջևանցի վաճառական Հայրապետեանցի հաշուով։ Նոյն Հայրապետեանցը ուրիշ օգնութիւններ էլ է հասցրել Նազարեանցին։ Սա այն Հայրապետեանցն էր, որ Նոր-Նախիջևանում մի ամբողջ կուսակցութեան պարագլուխ դարձաւ և կռւում էր այն կուսակցութեան դէմ, որի պարագլուխն էր Խալիբեան ուսումնարանի հիմնադիր Յարութիւն աղա Խալիբեանը։ «Հիւսիսափայլը», ինչպէս կը տեսնենք, Հայրապետեանցի կողմն էր պաշտպանում։

Կանոնաւոր հրատարակվող ամսագիրը մի մշտական ամբիոն էր, որտեղից Նազարեանցը կարող էր քարոզել իր մտքերը։ Բայց այդ ամբիոնի նշանակութիւնը այնքան ազդեցիկ չէր լինի, եթէ Նազարեանցը միակ լինէր, եթէ նրա դիմաց նոյն տեսակ մշտական ամբիոններ չը լինէին նրա հակառակորդների համար։ Այդ պակասութիւնը չը կար «Հիւսիսափայլի» համար. նրա հետ միասին ծընվեց և նրա առաջին հակառակորդը. նոյն 1858 թուականի սկզբից Թիֆլիսում սկսեց

հրատարակվել «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթը, որի խմբագիրն էր Ստեփան քահանայ Մանդինեանց։ Դա Թիֆլիսի «ամենայն գաղանական կերպով զրահաւորուած» ընդդիմութեան արտայայտութիւնն էր։ Մեզ համար նշանակալից պիտի լինի այն հանգամանքը, որ 1858 թուականից ռուսահայերի մէջ երեւան եկած հրապարակախօսութիւնը ունի իր բոլոր սարգ ու կարգը։ Դա միակողմանի գործ չէ. հէնց առաջին օրից գործում են երկու անհրաժեշտ ծայրերը—ազատամիտ, առաջադիմական ուղղութիւնը և նրա դէմ կանգնած պահպանողական հնապաշտ ուղղութիւնը։ Կան յարձակվողներ, կան և դիմադրողներ. միմեանց վէրք են տալիս, միմեանցից վէրք են ստանում։ «Օրհնեա՛լ է պատերազմը», բացականչում է «Հիւսիսափայլի» գլխաւոր աշխատակից Նալբանդեանցը. և պատերազմը կատարեալ է։ Չէ մոռացվել նոյն իսկ մի բնորոշ հանգամանք։ Սովորաբար առաջաւոր, նոր ուղղութիւնը մենակ է լինում կռուի դաշտում, բազմաթիւ թշնամու դիմաց։ Այդպէս էր և մեզանում։ «Հիւսիսափայլը» օրհնում էր պատերազմը, թէև այդտեղ նա իր դէմ ունէր չորս թշնամի։

Միայն «Մեղու Հայաստանի»-ն չէր նրա



կատաղի հակառակորդը։ Նոյն 1858-ին, այսինքն դարձեալ «Հիւսիսափայլի» հետ միասին, նոյն Մոսկվայում սկսեց հրատարակվել «Ճռաքաղ» անունով ժողովածուն, որի հրատարակիչներն էին Լազարեան ճեմարանի կրօնուսոյց Մսեր Մսերեանց և նրա որդի Զարմայր Մսերեանց։ «Ճռաքաղը» այդ տարին վեցամսեայ հրատարակութիւն էր և լոյս տեսաւ երկու փոքրիկ տետրակի ձևով։ Հետևեալ տարին, 1859-ին, նա ամսագիր դարձաւ և ունէր թունդ կրօնական-հնապաշտ ուղղութիւն։ Տպագրում էր հին գրաբար, գլխաւորապէս կրօնական գրուածքներ. իսկ աշխարհաբար բաժնի կողմից «Ճռաքաղը» Մանդինեանցի «Մեղուի» ընկերն էր։ Խմբագիրներից մէկը, Զարմայր Մսերեանց, «Մեղուի» թղթակիցն էր և մեծ մասամբ Նազարեանցի դէմ էր գրում։ «Ճռաքաղը» իսկոյն իր էջերը լայն բաց արաւ «Հիւսիսափայլի» հակառակորդների համար։

1860 թուին այս երկու դաշնակիցներին աւելացան երկու զինակիցներ էլ—«Մասեաց Աղաւնի» կիսամսեայ հանդէսը, որ Պարիզից փոխադրվել էր Թէոդոսիա և Գաբրիէլ վարդապետ Այվազեանի ղեկավարութեամբ էր հրատարակվում, և «Կռունկ Հայոց Աշխարհին» նոր ամսագիրը, որ լոյս էր տես-

նում Թիֆլիսում Մարկոս Աղաբէկեանի խըմբագրութեամբ։ Նայելով «Հիւսիսափայլի» այդ չորս ամսեանների բաժանորդների ցուցակին, մենք տեսնում ենք որ հասարակութեան համակրանքը դրանց կողմն էր։ Ամենքն էլ «Հիւսիսափայլից» շատ բաժանորդ ունէին. նոյն իսկ խղճուկ «Ճռաքաղ» ամսագիրը իր հրատարակութեան առաջին տարին ունէր 405 բաժանորդ, մինչդեռ Նազարեանցը, չը նայած որ իրան աջակցող «գաւազան» էլ ունէր, երբէք այդ թւին չը հասաւ։

Պէտք է բացատրել այդ երեւոյթի պատճառը։ Նազարեանցը կծու քննադատութիւններ էր անում, մերկացնում էր ազգի պակասութիւնները, իսկ նրա հակառակորդները ինքնագոհ ազգասէրներ էին, որոնք հաճելի կերպով շոյում էին հայի ինքնասիրութիւնը, գովում էին նրա բարեմասնութիւնները և ոչինչ պակասութիւն չէին տեսնում նրա մէջ։ «Հիւսիսափայլը» նոր պիտի ընթերցողներ նուաճէր, նոր պիտի գոյութեան իրաւունք ստանար կռւով։

Խօսելով «Հիւսիսափայլի» թշնամիների մասին, մենք պիտի յիշատակենք և նրա բարեկամներին։ Բարեկամներ էլ կային, բայց Ռուսաստանի սահմաններից դուրս։ Այսպէս էր Սվաճեանի «Մեղուն», որ հրատարակ-



վում էր Կ. Պօլսում. այսպէս էր Պարիզի «Արեւմուտք» կիսամսեայ թերթը, որի խըմբագիրն էր յայտնի հայ հրապարակախօս Ստեփան Ոսկանը։ Վերջինս, սակայն, երկար չը կարողացաւ իր զէնքը միացնել Նազարեանցի զէնքի հետ, որովհետեւ հարկադրված էր 1859-ին թողնել իր գործը։

Այսպէս ուրեմն, Նազարեանցը մենակ էր Ռուսաստանում։

## II

«Հիւսիսափայլի» հրապարակախօսութիւնը։—Նրա յաջողութիւնները։—Կեանքը եւ «Հիւսիսափայլը»։—Նազարեանցի վերաբերմունքը ժամանակակից դէպքերին։—Դաստիարակչական ձգտումը մոռացնել է տալիս չափը։—Հրապարակական հարցեր։—Հրապարակախօսական կրիտիկա։—Կոմս Էմմանուէլ։—Նրա «Յիշատակարանները»։—Դրանց նշանակութիւնը «Հիւսիսափայլի» համար։—Առաջին տարի։

—∞—

«Հանդէս Նոր Հայախօսութեան» մեծ ժողովածուն, ինչպէս նկատեցինք, այն նախագաղափարն էր, որ ցոյց էր տալիս թէ Նազարեանցը ինչպէս է հասկացել հայ ազգի մտաւոր կարիքները։ Այդ «Հանդէսի» և «Հիւսիսափայլի» ծրագիրը համարեա միևնոյնն է։ Այստեղ էլ Նազարեանցի առաջին և ամենագլխաւոր նպատակն էր մօտեցնել հայերին եւրօպական գիտութեան։ «Հիւսիսափայլը» կոչվում էր «Օրագիր ընդհանուր ազգային լուսաւորու-



թեան և դաստիարակութեան»․ Նրա դաւանանքը պարզված էր Նազարեանցի հետևեալ խօսքերի մէջ, որոնք առաջին տարին տպագրվում էին բոլոր տետրակների վրա.

«Այսուհետև ոչինչ Եգիպտոսեան խաւարամանկ քուրմեր, որ կամէին լինել գիտութեան միայնակ պահապանքը. այսուհետև ոչինչ Չինէական պարիսպ, որ պիտոյ է փակէր լուսաւոր գաղափարների մուտքը ազգերի մէջ։ Այսուհետև լոյս և ճշմարտութիւն և ազատութիւն խաւարի բաբելոնեան գերութենից»։

«Մեր ժամանակի հայերը համարեա թէ ամենայն բանի մէջ անփորձ երեխայք են», —այսպէս է բնորոշում Նազարեանցը հայ ընթերցողին։ Չը կայ մեզանում աշխարհական գրականութիւն. ինչ տալիս են աբեղաները, այն է միայն հայի մտաւոր կերակուրը. իսկ աբեղաների տուածը այնպիսի բան է, որ հային հարկաւոր չէ գալիս գործնական կեանքում։ Հայ ուսումնականները, աբեղայական գրականութեան այդ սպասաւորները, տալիս են ազգին «անուտելի և անմարսելի նիւթեր, բայց ոչինչ, ժամանակին յարմար սնունդ»։ Եւ ահա այդ պատճառով ընկել է գրքի նշանակութիւնը հայերի մէջ. Նրան ոչ ոք չէ կարդում, որովհետև նա անօգուտ է

համարվում։ Հայը հաւատացած է որ գիրքը միայն աբեղայի համար է, որ միայն աբեղան պիտի գիրք կարդայ։ Եւ հասկանալի է թէ ինչ կը լինի մի ժողովուրդ, որ իրական, աշխարհիկ գրականութիւն չունի, որի գրքերը ոչինչ կապ չունեն ժամանակակից կեանքի հետ։ Նազարեանցը գանգատվում է որ կոպիտ նիւթապաշտութիւն է տիրում հայ ժողովրդի մէջ, որ արծաթամոլութիւնը մի տեսակ պաշտամունք է դարձել։

«Ցաւելի, հազար անգամ ցաւելի ազգ», բացականչում է Նազարեանցը։ Այդպիսի ազգը կարօտ է դաստիարակութեան, որ պէտք է սկսել այբուբենից. դաստիարակութիւն նոր սկզբունքներով, դաստիարակութիւն, որ գիտութեան մշակած զէնքերը պիտի տայ հայ գիւղատնտեսի, հայ արհեստաւորի, վաճառականի ձեռքը։ Եւ «Հիւսիսափայլը» իր վրա է վերցնում այդ դաստիարակութիւնը. նա մոռանում, երեսի վրա է գցում շատ բան և առանձին ուշադրութիւն է նուիրում բնագիտութեան։ Յայտնի է թէ ինչ ահագին յեղափոխութիւններ է առաջացրել բնագիտութիւնը մարդկանց հասկացողութիւնների մէջ, մանաւանդ XIX դարում։ Նազարեանցը, իբրև այդ դարի զաւակ, լաւ ըմբռնում է այդ գիտութեան մեծ խոր-



հուրդը և իր ամսագիրը դարձնում է մի դասագիրք, ուր հայ ընթերցողը կարող էր իրան մատչելի, տարրական դասեր առնել աշխարհագրութիւնից, մարդակազմութիւնից, տնկաբանութիւնից և այլն։ Ինքը, Նազարեանցը, իր ամսագրի գոյութեան ընթացքում, ամենից շատ է պատրաստել այդպիսի դասեր։ «Հիւսիսափայլը» աւելի մի հանրագիտական ժողովածուի էր նման, քան մի գրական-հասարակական ամսագրի։ Ի՞նչ կարող էր անել Նազարեանցը։ Այժմ էլ հայ մամուլը պիտի տարրական գիտելիքներ տայ, ամեն ինչ սկսէ այբուբենից, որովհետև նրա ընթերցողը զարգացած դասակարգը չէ, այլ հասարակ ժողովուրդը։

Բայց եւրոպական գրականութիւնից վերցրած գիտական և գրական գրուածքների մի ժողովածուն չէր կարող այնքան կրթական նշանակութիւն ունենալ, եթէ մնար առանց ղեկավարող սկզբունքների, առանց ուսուցանողի։ Նազարեանցը—մենք այդ տեսանք—սկզբից և եթ ցոյց էր տուել որ զգում է իր մէջ ղեկավարողի, ուսուցանողի կոչում։ «Հիւսիսափայլի» մէջ էլ նա հաւատարիմ մնաց իր կոչման։ Եւ եթէ «Հիւսիսափայլը» «Հիւսիսափայլ» է, դրա պատճառը այն չէ, որ նա հանրագիտական մի ժողովածու է, այլ այն,

որ նրա մէջ կայ Նալբանդեանցի հրապարակախօսութիւնը։

Հայկական հրապարակախօսութեան հիմքը դրվեց այն ժամանակ, երբ հայերն էլ հասկացան կեանքի երեւոյթները քննադատելու անհրաժեշտութիւնը։ Մեզանում իսկական հրապարակախօսներ հանդիսացան այն անհատները, որոնք, տոգորված լինելով լայն առաջադիմական հանրամարդկային գաղափարներով, բարձրացրին բողոքի ձայն հայրենի անշարժութեան, հնամոլութեան դէմ։ Բողոքող խօսքը հայ պարբերական հրատարակութեան մէջ առաջին անգամ հանդէս եկաւ Հնդկաստանում 1848 թուականին («Բանասէր» լրագիր). այստեղ նա շատ կարճ կեանք ունեցաւ, որովհետև մերկացնող, մտրակող էր, իսկ հայերը դեռ սովոր չէին տանել ճշմարտութիւնը մերկանդամ, ուստի չտապեցին խեղդել նրան։ Դրանից յետոյ 1855-ին Պարիզում հրապարակախօսութեան ասպարէզ իջաւ զմիւռնացի Ստեփան Ոսկանը, որի հիմնած «Արեւելք» թերթը, կծու քննադատութեան այդ նոր օրգանը, նոյնպէս շատ կարճատև կեանք ունեցաւ։ Երրորդ տեղը բռնում է արդէն «Հիւսիսափայլը»։ Սա իր նախորդների վերաբերմամբ անհամեմատ բախտաւոր եղաւ ոչ միայն այն պատճառով, որ



աւելի երկար կեանք ունեցաւ, այլ և այն պատճառով, որ շատ ազդեցիկ էր, մի ամբողջ ուղղութեան հիմնադիր եղաւ, մի ուղղութեան, որ ապագայում աւելի ևս զարգացաւ, ամրապնդվեց, ահագին հեղինակութիւն ստացաւ։

Ահա թէ որքան կարեւոր դեր կատարեց մեզանում Նալբանդեանցի հրապարակախօսութիւնը։ Բայց այդ հրապակախօսութիւնը աչքի է ընկնում իր առանձնայատկութիւններով, իր պակասութիւններով։

Նախ և առաջ նրա վրա ազդում է գործունէութեան տեղը։ Հեռու էր Նալբանդեանցը հայկական կեանքից. «Հիւսիսափայլը» հրատարակվում էր մի հեռաւոր տեղ, ուր մի շատ փոքրաթիւ հայ գաղութ էր ապրում։ Հեռաւորութիւնը Նալբանդեանցի աչքից խըլում էր շատ բան, մշուշի մէջ էր թաղւում մեր իրականութիւնը և նրա մէջ տեղի ունեցող երեւոյթները իրանց իսկական նշանակութեամբ չէին ներկայանում Նալբանդեանցին։ Այդ է պատճառը, որ նրա հրապարակախօսութեան մէջ մենք չենք նկատում կեանքի անմիջական հզօր ազդեցութիւնը։

Զարմանալի երեւոյթ. «Հիւսիսափայլը» չունի ժամանակակից հայ կեանքի տարեգրութիւն. նա չէ նկատում հասարակական

շատ երևոյթներ, նա առօրեայ կեանքից չէ վերցնում նիւթ, չէ արձանագրում մեր չարն ու բարին։ Այդ կողմից «Հիւսիսափայլը» յետ էր մնում նոյն իսկ «Ծաղքաղի» պէս մի խեղճ ամսագրից, որի մէջ, այնուամենայնիւ, աւելի մեծ արձագանք էր գտնում ժամանակակից կեանքը։

Եւ չէ էլ կարելի ասել թէ ժամանակակից դէպքերը այնքան աննշան էին, որ արժանի չը լինէին ուշադրութեան։ Երբ ըսկսեց հրատարակվել «Հիւսիսափայլը», էջմիածնի կաթողիկոսական աթոռը թափուր էր. մօտ մի տարի առաջ վախճանվել էր Ներսէսը, այն մարդը, որի մասին այնքան շատ բան կարելի էր ասել։ Պատրաստվում էր նոր կաթողիկոսական ընտրութիւն, որ կայացաւ 1858 թւի մայիսի 20-ին։ «Հիւսիսափայլի» մէջ այս բոլորի մասին ոչինչ յիշատակութիւն չը կայ. Նազարեանցը չէ փորձում հասարակական հարց դարձնել կաթողիկոսի ընտրութիւնը, հասարակաց կարծիք ստեղծել և ղեկավարել։

Կեանքը, այո, հեռու էր կանգնած «Հիւսիսափայլի» խմբագրից։ Վերին աստիճանի բնորոշ է Նազարեանցի մի խոստովանութիւնը։ «Հիւսիսափայլի» յայտարարութեան մէջ, ինչպէս տեսանք, նա դիմում էր ձեռնհաս մարդկանց և խնդրում էր նրանց աշխատակցութիւնը։ Այդ հրաւէրը ապարդիւն չանցաւ. մեր հասարակութեան մէջ գտնվեցան մարդիկ, որոնք գրեցին «Հիւսիսափայլի» համար։ Այդ մարդիկ ճանաչում էին Նազարեանցին, գիտէին որ նրա դաւանանքն էր չը ծածկել արատները, այլ մերկացնել նրանց, ցաւեցնող դեղերով, հիպոկրատեան կրակով բուժել վէրքերը։ Այդ ոգով էլ գըրվում են թղթակցութիւններ Կովկասի զանազան կողմերից։ Բայց Նազարեանցը չէ հըրատակում դրանց, որովհետև «շարերի մէջ բանախօսութիւնը ցուցանում էր ամենևին մերկանդամ ճշմարտութիւն», ասում է նա *)։ Բայց ինչու հէնց այդ մերկանդամ ճշմարտութիւնը չը պիտի հրատարակվէր «Հիւսիսափայլի» մէջ։ Նազարեանցը, ի միջի այլոց, պատճառ է բռնում ցենզուրան։ Սակայն աւելի բնականը հետևեալ բացատրութիւնն է թւում.

«Արդարև պիտոյ է ինձ խոստովանել, որ մի քանի բան այդ գրուածքների մէջ որպէս ծանօթութիւնք թէ ինչ վայրենամիտ կերպով դաստիարակվում էին հայոց մանկունքը քրիստոնէական ուսման մէջ

*) «Հիւսիսափայլ», 1859, № 7, եր. 568.

և թէ ինչպէս սախական բռնակալութեամբ և անխիղճ սրբապղծութեամբ վարվում էին հոգևոր անձինք ժողովրդի հետ քրիստոնէական կեանքի զանազան դիպուածների մէջ, գերփելով և կողոպտելով քըսակները, խոստովանում եմ, այդպիսի տեղեկութիւններ մի անջնջելի տխուր տպաւորութիւն գործեցին իմ վերայ, և ես անարժան համարեցի հրապարակով երկրորդել այն բանը, ինչ որ ժողովուրդը օր հանապազ տեսանում է իւր աչքի առջև, ուրեմն և շատ լաւ տեղեակ էր դորան»:

Մի խոստովանութիւն է սա, որ ցոյց է տալիս թէ Նազարեանցը կեանքի մէջ կուռողների առջևից գնալու համարձակութիւնը չունէր, որ կեանքի շատ պահանջների վերաբերմամբ նա պահպանողական էր և աւելի լաւ էր համարում թագցնել իր հիպոկրատեան հուրը: Ո՞ւմ կարող է համոզել այն պատճառաբանութիւնը թէ հրապարակախօսը չը պիտի քննադատէ շատ անձոռնի երևոյթներ միայն այն պատճառով, որ դրանք շատ լաւ յայտնի են ժողովրդին: Ընդհակառակն, դա ցոյց է տալիս որ Նազարեանցը, շատ ճիշտ է, նոր առաքեալի, առաջնորդողի հաստատ ու տոկուն բնաւորութիւն ունէր, բայց մի առաջնորդ, մի առաքեալ էր դա, որ չատ



չէր սիրում դուրս գալ իր առանձնասենեակից· նա աւելի թէօրիայի, ընդհանուր սկզբունքների մարդ էր, քան կեանքի մէջ նետվող զինուոր:

Ինչո՞ւ էր այսպէս: Գուցէ Նազարեանցը աւելի խրատական ու հրահանգիչ համարում էր եւրոպական կեանքը և միայն նրա վրա էր ուշադրութիւն դարձնում: Բայց այդ դէպքում պէտք էր որ «Հիւսիսափայլի» մէջ գոնէ արևմուտքի կեանքը լիակատար արտայայտութիւն գտնէր: Այդ էլ չենք տեսնում. ճիշտ է, «Հիւսիսափայլը» մի-մի անգամ մեզ մտցնում է իր ժամանակի Եւրոպայի մէջ, բայց այդ բանում էլ մենք տեսնում ենք պատահականութիւն, անյաջորդականութիւն: Այսպէս, 1853-ին Նազարեանցը յանկարծ տալիս է Նապօլէօն III-ի դէմ սպանութեան փորձ կատարած Օրսինիի դատի ամենամանրամասն նկարագրութիւնը, որի մէջ չէ մոռացված ոչ մի փոքրիկ դէպք անգամ. իսկ 1859-ին, երբ Իտալիան հերոսական պատերազմ է սկսում Աւստրիայի դէմ, Նազարեանցը ոչինչ չէ գրում այդ պատերազմի մասին, որ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ուշադրութիւնն էր գրաւել:

Բերելով այս փաստերը «Հիւսիսափայլի» կեանքից, մենք չենք ուզում ասած լինել թէ

Նազարեանցը իր հրապարակախօսութեան մէջ միանգամայն անտես էր անում ժամանակակից կեանքը, բոլորովին չէր հետաքրքրւում նրա առօրեայ երեւոյթներով։ Ոչ, անարդարութիւն կը լինէր մի այդպիսի բան ասելը։ Նազարեանցը ոչինչ տպաւորութիւն չէր թողնի իր ժամանակակիցների վրա, եթէ վերացական աշխարհում միայն պտտէր, եթէ օդի մէջ կախված հրապարակախօսութեան հետեւէր։ Մենք միայն ուզում ենք շեշտել այստեղ, որ իրականութիւնը շատ թոյլ կերպով էր ազդում Նազարեանցի վրա, որ նա քարոզում էր իր սիրած գաղափարները, մեծ ջանք չը գործադրելով հիմնել այդ քարոզութիւնը կեանքի փաստերի քննադատութեան վրա։

Եւ մենք շատ լաւ հասկանում ենք այդ պակասութեան պատճառը։ Չը մոռանանք որ մերկացնող հրապարակախօսութիւնը նոր էր սկիզբ առնում մեզանում. դա դեռ մի սերմ էր, որ տնկվում էր հայութեան կոշտ ու անպտղաբեր հողի մէջ։ Միանգամից ծըլել ու ծաղկել նա չէր կարող։ Իւրաքանչիւր սկզբնաւորութիւն ունի իր մէջ թուլութեան, անկատարելութեան հանգամանքները։ Հարկաւոր է ժամանակ՝ աստիճանաբար զարգացման, բարեշրջման համար։ Եւ այդ զար-



գացման պատկերը մենք հէնց «Հիւսիսափայլի» վեց տարվայ կեանքի մէջ կարող ենք նկատել։ Հետզհետէ առաջ գնալով, Նազարեանցը, ինչպէս կը տեսնենք, սկսում է աւելի և աւելի մօտենալ ժամանակակից իրողութիւններին, նոյն իսկ թողնում է օլիմպիական արհամարհանքը իր հակառակորդների վերաբերմամբ, բանակռիւ է մղում նրանց դէմ։ Առաջադիմութիւնը այդ ուղղութեամբ այն տեղին է հասցնում, որ վերջ ի վերջոյ Նազարեանցը սկսում է հետաքրքրվել և թիւրքահայերի գործերով, մի բան, որ գոյութիւն չունէր «Հիւսիսափայլում», թէև թիւրքահայերի կեանքի մէջ այդ ժամանակները շատ խոշոր դէպքեր էին տեղի ունենում։

Շատ մեծ չէ Նազարեանցի հրապարակախօսական յօդուածների թիւը։ Լինելով «Հիւսիսափայլի» ամենաեռանդուն, բեղմնաւոր աշխատակիցը, նա համեմատաբար շատ քիչ ինքնուրոյն յօդուածներ է գրել, նուիրված հասարակական հարցերին։ Նայելով այդ տոկուն և անխոնջ աշխատաւորին, մենք տեսնում ենք որ նա աւելի թարգմանիչ է, քան ինքնուրոյն գրող։ Կարծես նրա ուշքն ու միտքը կլանել է այն հանգամանքը, որ հայ ընթերցողը չունի կարդալու նիւթ, ուստի աշ-

խառնում է տալ միանգամից որքան կարելի է շատ, որքան կարելի է բազմակողմանի բան։ Թարգմանում է նա բնագիտական զրոյցներ, վէպիկներ. «Հիւսիսափայլը» ունի շատ տետրակներ, որոնք լցված են միայն և միմիայն Նազարեանցի գրուածքներով։ Ո՛րպիսի սիրով և հետաքրքրութեամբ նա թարգմանում է Կիկերոնի ճառերը, Ներսէս Լամբրոնացու ատենաբանութիւնը, համոզված թէ հայ ընթերցողի համար դրանք են երկնային մանանան. և միևնոյն ժամանակ ո՛րպիսի տարօրինակ լռութիւն է պահպանվում այդ էջերի վրա Զէյթունի անցքերի, Թիւրքահայերի ազգային սահմանադրութեան մասին։— Ամէն ինչ չէ կարելի հանգամանքներին վերագրել. մենք պէտք է, ի միջի այլոց, նկատի ունենանք և հրապարակախօսի բնաւորութիւնը, խառնուածքը։ Մի որևէ կրօնական հարց աւելի էր հետաքրքրում Նազարեանցին, քան վառօդի ծուխով պատած Զէյթունը։ Սա շատ բնորոշ է մեր հրապարակախօսի դէմքը գծագրելու համար։

Բայց և այդպէս, այն, ինչ գրել է Նազարեանցը իր հրապարակախօսական ինքնուրոյն յօդուածների մէջ, մի կատարեալ յայտնագործութիւն էր մեր այն ժամանակվայ հասարակութեան համար։ «Հիւսիսա-



փայլը» մի մեծ, լուսաւոր երևոյթ էր. նրան սպասում էին ոչ միայն բարեկամները, այլ և թշնամիները։ «Մեղուի» թղթակիցը Մոսկվայից շտապում էր հաղորդել «Հիւսիսափայլի» ամսատետրակների բովանդակութիւնը նախ քան նրանց տպարանից դուրս գալը։ Նազարեանցը ժամանակի ամենաազդեցիկ առաջաւոր մարդն էր։ Նա միտք էր շարժում, վէճեր էր յուզում. նրան քննադատում էին անխնայ, հայհոյում էին, նրանից ահագին պահանջներ էին անում, նրա նոյն իսկ թեթև թերութիւններն էլ ուռցնում էին։

Զարմանալի ազդեցիկ էր Նազարեանցի խօսքը։ Շատերից մի օրինակ։ Լեզուագիտութիւնը գտել էր որ հայոց լեզուն սանսկրիտից է ծագում։ Նազարեանցը, հիմնվելով այդ գիւտի վրա, ասում է որ, ուրեմն, առասպել է այն ենթադրութիւնը թէ հայոց լեզուն Ադամի և Նոյի լեզուն է։ Բարձրանում է ահագին աղմուկ և աղաղակ. Նազարեանցը հրապարակվում է օտարացած հայ, դաւաճան, որովհետև խլում է ազգից նրա լեզուի փառքը։ Ոչ ոք չէ ուզում ուշադրութիւն դարձնել որ դա Նազարեանցի գիւտը չէ, որ Նազարեանցը միայն կրկնում է գիտութեան խօսքը։ Նազարեանցից առաջ նոյն բանը կրկնված էր Վիեննայում տպված մի հայերէն

գրքի մէջ *): Այդ էլ ոչինչ. հայ ազգասէրների ձեռքով քարկոծվողը միայն Նազարեանցն էր...

Եւ այդպիսի մի մարդ շատ հարկաւոր էր այն ժամանակներում: Ամբողջ Ռուսաստանը զարթնում էր խոր քնից. զարթնում էին և հայերը: Ժամանակակից նոր ու լայն, ազատամիտ գաղափարներով լի մի այդպիսի եռանդուն պատմական րոպէին կատարեալ անէծք կը լինէր հայ ժողովրդի համար, եթէ նրա մէջ ամեն ինչ շարունակվէր հին կարգով, եթէ նրա առաջնորդներն ու խրատողները Արարատեանների, Մանդինեանների և Մսերների նման մարդիկ լինէին: Ոչինչ չը գտնելով հայրենի իրականութեան մէջ, հայ երիտասարդութիւնը պիտի շուարած և անգլուխ մնար, չիմանալով ինչ անել: Նազարեանցը այդ խորհրդաւոր ժամանակում այն խոշոր անձնաւորութիւնն էր, որ կենտրոնացնում էր իր շուրջը մտածող, առաջադիմող մարդկանց գաղափարներն ու յոյսերը:

Իսկապէս, Նազարեանցը «Հիւսիսափայլի» շրջանում շատ չէ մշակել այնպիսի հարցեր, որոնց մասին նա խօսած չը լինէր մինչև այդ,

*) Հ. Յովնանեան — «Մարդկային լեզուի քննութիւնք», 1857:



իր առանձին աշխատութիւնների մէջ: Մի տեղ հաւաքելով այն նիւթերը, որոնց վրա կառուցված են Նազարեանցի հրապարակախօսական յօդուածները, մենք հիմնականի մէջ տեսնում ենք միևնոյնը, ինչ տեսանք առաջ—մայրենի լեզու և նրա հետ կապված ազգային դաստիարակութիւն, գրականութիւն. լեզուից յետոյ առաջնակարգ նշանակութիւն է տրվում եկեղեցուն և այստեղ Նազարեանցը նոյնն է, ինչ «Վարդապետարան Կրօնի» գրքի առաջաբանում:

Այո, նոր ու լայն հօրիզոններ նա չէ բաց անում «Հիւսիսափայլի» մէջ: Բայց դա մեծ նշանակութիւն չունի: Ժամանակը այնքան մանրամասն ծրագրած վարդապետութիւնների չէր կարօտ, որքան որոշ դրօշակի: Զգացվում էր հնութեան անկարողութիւնը, լուսաւոր առաջադիմութեան անհրաժեշտութիւնը. հարկաւոր էր նշանաբան՝ առաջ գնալու համար, կռւի, մրցութեան համար, պահանջվում էր մտքերի ընդհարում, իսկ այդ բոլորը կարելի էր համախմբել այն հարցերի շուրջը, որոնք արդէն նոր չէին Նազարեանցի համար, բայց որոնց կրկնութիւնները նոր և նոր առիթներ էին տալիս որ նոր միտքը, ժամանակի ոգին մի քայլ առաջ տանէ իր յաղթական ընթացքը:

Կրկնութիւններ տասցինք, բայց կրկնութիւնները պակասութիւն չեն մի հրապարակախօսի համար։ Մայրենի լեզուի հարցով սկսեց Նազարեանցը իր գրական գործունէութիւնը. նոյն հարցն էր, որով սկիզբ դրեց նա իր հրապարակախօսութեան՝ «Հիւսիսափայլի» մէջ։ Դա մի ընդարձակ յօդուած է, որի մէջ Նազարեանցը ապացուցանում է լեզուի կարևորութիւնը առաջադիմութեան գործում։ Այնուհետև էլ նա յաճախ վերադառնում էր այդ առարկային։ Հետևել այդ մանրամասնութիւններին աւելորդ կը լինի մեզ համար, քանի որ մենք գիտենք արդէն թէ որքան փայլուն կերպով Նազարեանցը պաշտպանում էր ժողովրդական հանրամատչելի գրականութեան դատը։

Գեղեցիկ են այդ յօդուածները, գեղեցիկ են մանաւանդ հայերի պէս մի ազգի համար։ Մի թեթև ակնարկ գցելով մեր պատմութեան վրա, մենք կը գտնենք բազմաթիւ դառըն ու խոշոր փաստեր, որոնք ցոյց են տալիս որ հայի լեզուն հայի խորթ զաւակն է եղել, արհամարհված շատ և շատ դէպքերում, զոհված ոչ միայն կուլտուրայով աւելի բարձր ազգերի հարուստ լեզուներին, այլ և այնպիսի լեզուներին, ինչպէս են, օրինակ, քրդերէնը, թաթարերէնը, չերքէզերէ-



նը։ Մի այսպիսի ազգի մէջ լեզուի նշանակութեան նուիրված յօդուածները, որքան էլ առատ լինեն նրանք, որքան էլ շատ կրկնութիւններ ունենան իրանց մէջ, երբէք չը պիտի աւելորդ համարվեն։ Համարեա կէս դար է անցել Նազարեանցի այդ յօդուածների վրայով։ Բայց այսօր էլ նրանք թարմ ու տպաւորիչ են, որովհետև ունեն իրանց մէջ խոր, իրական ճշմարտութիւն, որովհետև այսօրվայ համար էլ հրատապ, կեանքի և մահվան հարց է այն, ինչ այնպիսի հաստատ համոզմունքով, գեղեցիկ պատճառաբանութիւններով ապացուցանում էր Նազարեանցը։ Այսօրվայ սերունդն էլ պիտի կարդայ այդ յօդուածները, ոչ իբրև անցեալի գրականութիւն, ոչ թէ պատմական հետաքրքրութեան համար, այլ իբրև ներկայի առաջնակարգ պահանջի արտայայտութիւն...

Մասնաւոր հետաքրքրութիւն ներկայացնում է և հետևեալ հարցը։

Յիսունական թւականներից ռուսահայերի գրականութեան հաստատուն հիմքն է դրվում։ Դա մի շատ խոշոր երևոյթ է մեր ամբողջ պատմութեան մէջ։ Հինգերրորդ դարից մինչև տասնիններորդի կէսը մի և ընդհանուր էր հայկական գրականութիւնը և

ոչինչ տարբերութիւն չենք գտնի այն գրքի մէջ, որ հեղինակվում էր Կ. Պօլսում և այն գրքի մէջ, որ հեղինակվում էր Էջմիածնում կամ Կալկաթայում։ Յիսունական թւականներից տեղի է ունենում բաժանում. երևան են գալիս գրականութեան երկու մեծ հատուածներ—արևելեան և արևմտեան։ Դա արտաքին, ձևական, աշխարհագրական բաժանում չէ. բաժանողը ոգին է, ուղղութիւնն է։ Բաժանողը լեզուն էլ է։ Ի՞նչպէս էր նայում այդ բաժանման «Հիւսիսափայլը», որ ռուսահայերի գրական ուղղութեան առաջին, ամենահեղինակաւոր ներկայացուցիչն էր։

Նազարեանցը ոչինչ վտանգաւոր բան չէր գտնում այդ բաժանման մէջ։ Ընդհակառակն, նա պահանջում էր ռուսահայերի համար կատարեալ ինքնուրոյնութիւն, անկախութիւն լեզուի զարգացման մէջ։ Արևմտեան հայերը արևելեաններից շատ կանուխ էին գրական գործունէութիւն սկսել և արդէն ունէին իրանց աշխարհաբարը, որ բաւական կոկված ու մշակված էր։ Բայց դա չէր նշանակում, որ ռուսահայերը, իբրև աւելի աղքատ լեզու ունեցողներ, ենթարկվեն արևմտեան լեզուին։ Երկուսն էլ պիտի իրանց բնական ճանապարհով առաջ գնան, մինչև որ կը հանդիպեն իրար, ասում էր Նազարեանցը։ Թող



զարգանայ և կատարելագործվի Թիւրքահայերի լեզուն, մենք ժամանակին կօգտվենք նրանից։ Բայց ինչ իրաւունք մենք տալիս ենք Թիւրքիայի հայերին, նոյն իրաւունքը, արդարութեան օրէնքով, պահանջում ենք նրանցից, այսինքն որ նրանք թոյլ տան մեզ զարգացնել մեր լեզուն։ «Եւ ինչ վնաս կայ, մի ծաղիկի տեղ երկու ծաղիկ ունենալ ազգի մէջ», ասում է նա։

Գեղեցիկ նմանութիւն։ Բայց Թիւրքահայերը դեռ այն ժամանակներից տեղային ազգասիրութիւն էին ցոյց տալիս լեզուի հարցի մէջ։ Ռուսահայերի լեզուին նրանք նայում էին իբրև մի օտար լեզուի, նայում էին բարձրից, մի տեսակ արհամարհանքով, համոզված լինելով որ իրանց լեզուն է հարուստ, գեղեցիկ։ Նազարեանցը բողոքում էր այդ չօվինիստութեան դէմ, որ սպառնում էր չինական պատ քաշել ազգի երկու մեծ հատուածների մէջ։ Նա պահանջում էր որ ռուսահայերի աշխարհաբար գրքերը տարածվեն Թիւրքահայերի մէջ այնպէս, ինչպէս նրանց գրքերը տարածվում են մեր մէջ։ «Մեք Ռուսաստանի հայերս—ասում է նա—ունենք մեր իրաւունքը և կարող չենք ծառայանալ նոցա (Թիւրքահայերի) անպատշաճ, բռնաւորական պահանջողութեանը. մեք մեղաւոր

չենք, եթէ նոքա ուսել չեն դեռ ևս յարգել օտարի իրաւունքը, եթէ չգիտեն որ երկու կողմից կանգնած են իրաւունքներ միմեանց հանդէպ»։

Երկու ծաղիկների հասկացողութիւնը, պէտք է խոստովանել, մինչև այժմ էլ ռուսահայերի մէջ է աւելի հաստատված, անհերքելի ճշմարտութիւն դարձած։ Թիւրքահայ գրականութիւնը մեզ համարեա նոյնքան ընտանի և հարազատ է, որքան մեր գրականութիւնը։ Մինչդեռ պօլսական շօվինիզմը դեռ չէ հաշտվել այն մտքի հետ, որ երկու ծաղիկներ կարող են մեծանալ միմեանց կողքին. և մենք շատ անգամ ենք տեսնում որ պօլսեցիները մեր գրքերը թարգմանում են իրանց լեզուով, կարծես թէ մենք հայերէն չենք գրում...

Հրապարակախօսութիւնը «Հիւսիսափայլի» մէջ միայն յատուկ յօդուածներով չէր հանդէս գալիս, այլ և կրիտիկայի ձևով։

Գրական լուրջ քննադատութեան սկիզբն էլ մեզանում դրել է «Հիւսիսափայլը»։ Նրանից առաջ մենք հասկացողութիւն չունէինք կրիտիկայի մասին։ Բայց սկիզբ դնելուց աւել Նազարեանցի ամսագիրը մի բան չը կարողացաւ անել։ Այդ բաժինը սաղմնային դրութեան մէջ էլ մնաց մինչև «Հիւսիսափայլի» վերջը։ Ամբողջ 1858 թւականին նա



միայն երեք գրքի քննադատութիւն տուեց. իսկ հետևեալ տարիներում այդքանն էլ չարաւ։ Նոյն իսկ «Վէրք Հայաստանի» վէպի նման մի գիրքը «Հիւսիսափայլի» մէջ իր արժանաւոր տեղը չը գտաւ և միայն Նալբանդեանցը մի ծանօթութեան մէջ երկու խօսք ասեց նրա մասին։

Առաջին քննադատութիւնը գրեց Նալբանդեանցը. նա նուիրված էր «Հանդէս Նոր Հայախօսութեան» ժողովածուի առաջին հատորին։ Քննադատը հիացած է այդ գործի վրա և թեթև նկատողութիւններ անում է միայն լեզուի մասին։ Երկրորդ քննադատութիւնը, դարձեալ Նալբանդեանցի գործ, խօսում է Գամառ-Քաթիպայի թարգմանած «Ռօբինզօնի» մասին։ Իսկ երրորդը գրել է արդէն Նազարեանցը Նալբանդեանցի «Թափառական Հրէայի» մասին։ Այս յօդուածը կիսատ էլ մնաց։ Խմբագիրն էլ իր գլխաւոր աշխատակցի գործի վրա էր հիացած։ Ի հարկէ, այդ փոխադարձ հիացմունքը չինծու չէր, անհիմն չէր, բայց շատ անպատշաճ ու անտեղի էր մի ամսագրում, որի տէրերն էին այդ միմեանց գովող մարդիկ։

Հարցը սակայն այս չէ։ «Հիւսիսափայլի» կրիտիկան էլ հրապարակախօսութիւն էր։ Գրում են քննադատութիւն ոչ թէ գրքի մա-

սին, այլ գրքի առիթով։ Իր երկար յօդուածի մէջ Նազարեանցը «Թափառական Հրէայի» գրական և գեղարուեստական արժանաւորութիւնների մասին չէ խօսում, այլ դարձեալ արծարծում է այն հարցերը, որոնք հայկական նոր գրականութեան զարգացման են վերաբերւում։ Նրան այդպէս խօսեցնել է տալիս Նալբանդեանցի գրած առաջաբանը, որի մէջ նոյն հարցերն են շօշափւում։ Առհասարակ «Հիւսիսափայլի» այդ երկու ղեկավարներին հետաքրքրում է միայն քարոզչութիւնը, միայն տենդենցիան։ Նալբանդեանցը թարգմանել է «Թափառական Հրէան» գլխաւորապէս այն պատճառով որ ցոյց տայ թէ ինչ է կաթօլիկութիւնը և մանաւանդ եզուիտութիւնը։ Իսկ սա հարկաւոր էր Նալբանդեանցին՝ Մխիթարեաններին հարուածելու համար։ Իր առաջաբանի մէջ նա Մխիթարեանների հասցէին այն մեղադրանքն է ուղղում թէ նրանք չը թարգմանեցին «Թափառական Հրէան» այն պատճառով, որ իրանք էլ եզուիտների կրօնակից և համամիտ են։ Եւ Նազարեանցը իր կրիտիկայի մէջ միամտաբար կրկնում է այդ մեղադրանքը, մոռանալով որ մի կաթօլիկ միաբանութիւն իրաւունք ունի ազատ լինել իր համակրութիւնների և հակակրութիւնների մէջ, որ



պահանջել նրանից Էօժէն Սիւի վէպի թարգմանութիւնը նոյնքան կարող է իրաւացի լինել, որքան պահանջելը որ նոյն Մխիթարեանները թարգմանեն, դիցուք, Ռենանի «Յիսուսի Կեանքը»։

«Թափառական Հրէայի» առիթով գրած քննադատութեան մէջ Նազարեանցը կանգ է առնում մի նոր հարցի վրա, որ նոյնպէս սերտ կերպով կապված է գրականութեան հետ։ Դա գրավաճառութեան հարցն է։ Յայտնի է որ առանց կանոնաւոր կազմակերպած գրավաճառութեան չէ կարող առաջ գնալ գրականութիւնը։ Քրտինք ու աշխատանք է թափում հայ հեղինակը, մի կերպ միջոց է գտնում իր այդ դառն աշխատանքի պտուղը հրատարակելու, բայց յետոյ մնում է շուարած, չը գիտէ թէ ինչպէս տարածէ իր գրքերը։ «Թաթարները—ասում է Նազարեանցը—իւրեանց 10,000 թաթարների համար ունին Ղազանումը գրավաճառութեան խանութ, և իւրեանց կրօնի ուսման գրքերը տարածում են իւրեանց հաւատակիցների մէջ.մի՞թէ քրիստոնեայ Հայերը Թաթարներից վատ են»։

Մենք յիշատակում ենք գրավաճառութեան այս հարցը յատկապէս այն պատճառով, որ Նազարեանցը մի շատ բնորոշ փաստ էլ է բերում այն դրութիւնից, որ ստեղծել

էր Թիֆլիսի հակառակութիւնը նրա դէմ։ Ինչպէս պարզ երեւում է նրա ակնարկութիւններից, Թիֆլիսում արգելքներ էին յարուցվում Մոսկվայի այն գրքերի տարածման դէմ, որոնց մէջ ազատ խօսքն էր երեւում։ Դրանք, իհարկէ, Նազարեանցի և Նալբանդեանցի գրքերն էին։ Առևտրական շուկան այդ գրքերի առջև փակողը այն ճնշումն էր, որ գործ էին դնում ազատ խօսքից վախեցողները, նրա անխնայ մերկացումների մէջ իրանց պատկերը տեսնողները։ Թիֆլիսում մի հատ հայ գրավաճառ կար, բայց նա ծախում էր անտարբեր գրքեր, Վենետիկի, Կ. Պօլսի և այլ տեղերի հրատարակութիւնները. իսկ Մոսկվայի «յայտնի» գրքերը նա չէր կարողանում կամ չէր վստահանում տարածել։ Թիֆլիսը, իբրև հայաշատ կենտրոն, այդ ուղղութեամբ մեծ ազդեցութիւն ունէր և շրջակայ քաղաքների վրա։ «Այս բանը լաւ գիտեն խաւարի բարեկամները. բայց թող և լուսաւորութեան բարեկամքը անփոյթ չառնեն», ասում է Նազարեանցը և խորհուրդ է տալիս Թիֆլիսի բարեմիտ հայերին միջոցներ ձեռք առնել այդ չարիքի դէմ։

Կրիտիկան առհասարակ «Հիւսիսափայլի» ամենագնահատելի յատկութիւնն է։ Եթէ նա շատ թոյլ էր արտայայտվում գրական-գե-



ղարուեստական բաժնում, դրա փոխարէն իր ներկայութիւնը խիստ զգացնել էր տալիս ուրիշ տեղերում, մանաւանդ պատմութեան վերաբերվող յօդուածներում։ Նազարեանցը առաջինն էր մեզանում, որ գործադրեց պատմական քննադատութիւնը։ Նա բաւական չէր համարում տալ չոր ու ցամաք պատմութիւն, այսինքն դէպքերի և դէմքերի նկարագրութիւն. նա դնում էր քննական հայեացք, վերլուծում էր անցեալի հանգամանքները և լուսաբանում էր նրանց որոշ գաղափարների և հայեացքների տեսակէտից։

Այդ լուսաբանութիւնների մէջ ցոլանում են Նազարեանցի քաղաքական և հասարակական դաւանանքները։ Եւ այս կողմից նշանաւոր է նրա մի յօդուածը, որ տպվեց «Հիւսիսափայլի» առաջին տարվայ տետրակներում և որի առարկան ընդհանուր պատմութեան ամենախոշոր երեւոյթներից մէկն է —«Ֆրանսիական Րեվօլիւցիայի պատճառքը»։ Դա մեծ յեղափոխութեան փաստական պատմութիւնը չէ, այլ քննադատութիւն թէ ինչ պատճառներից առաջացաւ այդ ահաւոր քաղաքական հրդեհը։ Չը գիտենք ինչ աղբիւրներով է առաջնորդվել Նազարեանցը, նոյն իսկ չը գիտենք՝ ինքնուրո՞յն յօդուած է դա թէ ոչ, բայց փաստն այն է, որ այդտեղ վե-

րաբերմունքը դէպի Փրանսիական յեղափոխութիւնը բացասական է։ Նազարեանցը դուրս է գալիս այստեղ իբրև միապետութեան կողմնակից և հանրապետական գաղափարները անուանում է կորստաբեր։ Մանաւանդ անխնայ է նա տասնութերորդ դարի փիլիսոփաների և վերաբերմամբ. էնցիկլօպեդիստները, Վօլտէրը նրա համար աւելի չարագործներ են, քան մարդկային միտքը լուսաւորողներ։ Այդ տեսութեան մէջ երևան է գալիս հաւատացող քրիստոնեայ Նազարեանցը, որին վրդովւում է տասնութերորդ դարի փիլիսոփայութեան անհաւատութիւնը։ Եւ այդ վրդովմունքի մէջ Նազարեանցին չէ կարելի զանազանել մի հոգևորականից։ Յայտնի է որ յեղափոխութեան դարի մշակած քաղաքական իդէալն այն էր, որ իշխանութիւնը ժողովրդից է բղխում և ոչ թէ Աստուծուց։ Նազարեանցը ապստամբվում է և այս մտքի դէմ, ամեն կողմով վնասակար համարելով այդ վարդապետութիւնը։

Այնպէս որ, դատելով այս վերաբերմունքից, Նազարեանցը եւրօպական աշխարհայեցողութիւնների տեսակէտից մի շատ չափաւոր ազատամիտ էր, որին արմատական գաղափարները վախեցնում էին նոյնքան, որքան կղերական խաւարամիտ պահպանողա-



կանութիւնը։ Այդպիսի մարդը վտանգաւոր չէր համարվիլ նոյն իսկ այնպիսի ժողովրդների մէջ, որոնց կառավարողը յետադիմական ռէժիմն է։ Բայց եկէք ու տեսէք որ մեզանում Նազարեանցը համարվում էր մի անտանելի արմատական, մի կարմիր յեղափոխական, որ եկել էր քարուքանդ անելու հայրենի բոլոր կարգերը։ Այս հանգամանքը շատ պարզ ցոյց է տալիս թէ որքան յետամնաց ժողովուրդ էինք մենք, որքան սաստիկ էր տիրում մեր մէջ լուսավախութիւնը։

Նազարեանցը ձեռնարկում է գրել և հայոց պատմութիւն, բայց տալիս է միայն այդ պատմութեան նախաբանը, այն է Հայաստանի աշխարհագրութիւնը։ Դատելով «Հիւսիսափայլի» յետագայ տարեշրջաններում տպված մի քանի յօդուածներից, որոնց մէջ գտնում ենք Նազարեանցի հայեացքները մեր պատմական մի.քանի հարցերի վերաբերմամբ, մենք կարելի ենք համարում ասել թէ շատ հետաքրքրական կը լինէր այդ հայոց պատմութիւնը, գոնէ նա նման չէր լինի այն ժամանակները և հէնց մեր ժամանակներն էլ գոյութիւն ունեցող պատմութիւններին։ Նազարեանցը կը գնար ընդհանուր հոսանքի, ընդհանուր հասկացողութիւնների դէմ և շատ ինքնուրոյն, լուրջ հայեացքներ կը տար մեզ։

Չը գիտենք ինչու Նազարեանցը բաւականացաւ նախաբանով և չը դիմեց բուն պատմութեան։ Այդ նախաբանը ոչինչ արժանաւորութիւն չունի։ Կամենալով կազմել Հայաստանի աշխարհագրութիւնը, Նազարեանցը չէ յանձն առել աշխատութիւն դիմելու այլ և այլ հայ թէ օտար աղբիւրներին, այլ, ինչպէս ապացուցված է *), վերցրել է ու թարգմանել է մի ռուս աննշան հեղինակի գրուածքը։

Այդ կիսատ-պռատ թարգմանութեան մէջ մենք, իհարկէ, ոչինչ չենք որոնի։ Բայց Նազարեանցը իր այդ գործին կցել է մի գեղեցիկ առաջաբան, որի հետ ծանօթանալ արժէ։

Այդտեղ նախ և առաջ շատ սիրուն կերպով բացատրված է ազգային պատմութեան նշանակութիւնը։ Նազարեանցը չէ հասկանում մի ուռցրած, զարդարած պատմութիւն, որ ազգային սնափառութիւնը պիտի շոյէ, այլ մի պատմութիւն որ անաչառ կերպով մերկացնում է անցեալը՝ ապագայ սերունդները դաստիարակելու կրթելու համար։ «Ամենայն ազգ, թէ նորա պարծանքը և թէ նորա ամօթը, հետեւանք է նորա պատմութեան», — ասում է Նազարեանցը։ Այս հիմնական հասկացողութիւնը

*) Երիցեան — «Ստեփաննոս Նազարեանցի գրական գործունէութիւնը», «Փորձ» ամսագիր, 1879, № 11.



արդէն մի ուղեցոյց է թէ ինչպէս պիտի մըշակէր Նազարեանցը մեր ազգային պատմութիւնը։ Երկրորդ հետաքրքրական հարցը, որ շօշափված է այս առաջաբանում, հայ մատենագիրների թարգմանութիւնն է։ Այստեղ Նազարեանցը սաստիկ պախարակում է մի երեւոյթ։ Հայերը չունեն իրանց հին մատենագիրների աշխարհաբար թարգմանութիւնը, իսկ հայ ուսումնականները թարգմանում են այդ պատմագիրները ռուսերէն լեզուով։

Հարուածը ուղղված էր Մկրտիչ Էմինի դէմ, որ այդ ժամանակները հրատարակել էր Մովսէս Խորենացու պատմութեան ռուսերէն թարգմանութիւնը։ Ահա ինչ էր ասում Նազարեանցը այդպիսի ուսումնականներին.

> «Խօսք չունինք, եթէ Ֆրանսիացին կամենում է մեր Հայոց պատմութիւնը ֆըրանսերէն տալ ֆրանսիացոց ազգին. խօսք չունինք, եթէ մեր գիտնականքը Ռուսաստանի մէջ ռուսերէն թարգմանում են մի հին Հայոց պատմագիրք այն խորհրդով, որ Ռուսաց ուսումնականներին տեղեկութիւն տային Հայոց ազգի պատմութեանը. բայց Հայոց պատմութիւնը ֆրանսիական և ռուս լեզուով տալ Հայոց ազգին և Հայոց մանուկին, երեւում է մեզ մի անբնական, կարգից ու օրէնքից դուրս, մի այլանդակ բան»։ Կարելի՞ է այդպիսի օտարոտի երեւոյթը, հարցնում է Նազար-

եանցը, և պատասխանում. «Այո, կարելի է, երբոր տգէտ կամակորութիւնը և սըրտի խարդախութիւնը և հիւանդոտ պղտորութիւնը ամենևին կուրացնում են ուսումնականների միտքը ընդդէմ ազգի ներկայ պիտոյքներին և կարօտութեանը. և դոքա փոխանակ հասկանալի լեզուով խօսելու ազգի հետ, աւելի լաւ են համարում կամ լուռ մնալ, կամ թէ ռուսերէն խօսել Հայոց ազգի հետ»։

Հետաքրքրական է թէ ինչպէս է բացատրում Նազարեանցը գիտնականների (էմինի) այդ կամակորութիւնը։ Պատճառն այն է, ասում է նա, որ այդ գիտնականները չեն քարոզել աշխարհաբար լեզուի նշանակութիւնը, այլ մի ուրիշը։ Եւ որովհետև ուրիշի բերանից է դուրս եկել ճշմարտութիւնը, ուստի հէնց այդ պատճառով էլ նրանք չեն ընդունում այդ ճշմարտութիւնը։

Սակայն էմինը, ապա և Քերովբէ Պատկանեանը կարող էին ասել որ իրանք հայ պատմագիրները թարգմանում են գլխաւորապէս ռուս գիտնականների համար։ Յիշատակութեան արժանի հանգամանքն այն է, որ հայ պատմագիրների աշխարհաբար թարգմանութեան պահանջը մինչև այսօր էլ չէ կատարված բաւարար կերպով։ Ճիշտ է, կան մի քանի պատմագիրների թարգմանութիւն-



ները, բայց դրանք կցկտուր բաներ են, պահական երևոյթներ շատ կասկածելի արժանաւորութիւններով։ Մեր առաջադիմութեան դանդաղկոտութիւնը աւելի ևս յուսահատական է դառնում, երբ սկսում ենք չափել թէ ինչ ժամանակի ընթացքում ենք կարողանում կատար ածել պարզ, ամենքիս համար անուրանալի դարձած պահանջներն անգամ։

---

Նախ քան «Հիւսիսափայլի» առաջին տարվայ գումարները փակելը, մեզ վրա պարտք կայ խօսել նրա մի աշխատակցի մասին, որի հրապարակախօսութիւնը աւելի ազդու և ժողովրդական է եղել, քան Նազարեանցի հրապարակախօսութիւնը։

Այդ աշխատակիցը Կոմս էմմանուէլն է։

Ոչ ոքի համար գաղտնիք չէ որ Կոմս էմմանուէլ անուան տակ ծածկվում էր Միքայէլ Նալբանդեանցը։ Քսան երեք տարեկան երիտասարդ էր նա, երբ եկաւ Մօսկվա, մօտեցաւ Նազարեանցին։ Նա չունէր Նազարեանցի զարգացումը, գիտնականութիւնը։ Միայն հայերէնը լաւ գիտէր, չէր ստացել կանոնաւոր կրթութիւն, տիրացու էր Նոր-Նախիջևանի եկեղեցում։ Մօսկվայում նա

նոր-նոր պիտի կրթութիւն ձեռք բերէր, և սկսում է պարապել, ինքնակրթութեամբ լրացնել իր ստացած ուսման պակասութիւնները և պատրաստվել համալսարան մտնելու համար։

Բայց Նալբանդեանցը ունէր մի մեծ առաւելութիւն, որից զուրկ էր Նազարեանցը։ Նա անմիջապէս հայկական իրականութիւնից էր դուրս եկել, նա կռւի մէջ էր եղել, հալածվել էր, փախստական էր դարձել։ Կրքոտ, տաք էր այն կռիւը, որ Նոր-Նախիջևանում բորբոքված էր երկու հակառակ կուսակցութիւնների մէջ. Նալբանդեանցը այդ կռւի մէջ քաջ զինուոր էր եղել, դրա համար էլ հալածանքը նրա դէմ անխնայ էր եղել։ Ներսէս կաթողիկոսը ոստիկանութեան միջոցով էր ուզում պատժել այդ ըմբոստ տիրացուին։ Փախչելով Մոսկվա, Նալբանդեանցը ընկնում է ազատամիտ շրջանների մէջ. Նազարեանցը նրա ամենամօտիկ բարեկամն էր։ Այստեղ ահա տիրացուն կերպարանափոխվում է և դառնում է ազատութեան և առաջադիմութեան կրակոտ քարոզիչ։

Բնութիւնը տաղանդի հետ տուել էր Նալբանդեանցին կրքոտ բնաւորութիւն։ Եւ նա դառնում է «Հիւսիսափայլի» խմբի առաջապահ մարտնչող, ձեռք է բերում մեծ ժողովրդականութիւն, տիրում է մտքերի վրա։



Այստեղ Նալբանդեանցի գրական գործունէութեան մասին մանրամասն խօսելու, այդ գործունէութեան խոշոր արժանաւորութիւնները, ինչպէս նաև շատ աչքի ընկնող պակասութիւնները ցոյց տալու տեղը չէ, քանի որ մենք Նազարեանցի մասին ենք գրում։ Այստեղ միայն այն պէտք է շեշտել, որ «Հիւսիսափայլի» հրապարակախօսութիւնը այնքան ազդու չէր լինի, այնքան խոր ու հիմնաւոր տպաւորութիւն չէր գործի մեր հասարակութեան վրա, եթէ միայն Նազարեանցի յօդուածների մէջ ամփոփվէր, եթէ չը լինէր Կոմս Էմմանուէլը։

«Հիւսիսափայլի» առաջին տարվայ չորրորդ ամսատետրակից Նալբանդեանցը սկսում է ամսական տեսութիւնների մի շարք՝ «Յիշատակարան Կոմս Էմմանուէլի Օրագրական թերթերից» վերնագրով։ Դրանք հասարակական ֆելիէտօններ էին, ուր ծաղրը, խստութիւնը, թոյնը միացած էին աշխոյժ, տաղանդաւոր գրչի հետ։ Նալբանդեանցը այդ բաժնում կատարեալ տէր էր։ «Յիշատակարանները» լրացնում էին, թէև ոչ լիակատար չափով, Նազարեանցի հրապարակախօսութեան պակասութիւնները։ Սկզբունքները, դաւանութիւնները, իհարկէ, միևնոյնն էին.

խմբագրի և գլխաւոր աշխատակցի մէջ ոչինչ գաղափարական անհամաձայնութիւն չէր երևում։ Այն, ինչ Նազարեանցը յայտնում էր իր լուրջ ու ծանրախոհ, բարձր ոճով և յաճախ կաբինետային ոգով գրած յօդուածներում, Նալբանդեանցը ժողովրդականացնում էր իր թեթև ու վառվռուն գրչով։ Գրելու գեղեցիկ շնորհք էր տուած նրան։ Պատմել, խայթել, երգել նա շատ լաւ գիտէր. և ամեն տեղ—ֆելիէտոնի թէ լուրջ յօդուածի, գողտրիկ ոտանաւորի թէ անաջող վէպի մէջ երևում էր երկնային կայծը, նոր ժամանակների առաքեալի հրային շունչը։

Կոմս Էմմանուէլն էր, որ մօտեցնում էր հրապարակախօսութիւնը կեանքին։ Գրականութիւնը կեանքի հայելին է, ասում էր նա. իսկ կեանքը մեռած է առանց պատերազմի, առանց մրցումների և ընդհարումների։ Եւ իրաւ. Նրա գրուածքները ցոլացնում են իրանց մէջ կեանքը, կռիւը. այնտեղ մենք տեսնում ենք ժամանակակից դէմքեր ու դէպքեր։ Կոմս Էմմանուէլն էր, որ Նոր-Նախիջևանի հասարակական հարցերը մտցրեց «Հիւսիսափայլի» էջերի մէջ, էջեր, որոնք չէին սիրում բեռնաւորվել այդպիսի ընթացիկ տարեգրութիւններով։ Նոյն այդ ակադեմիական էջերի մէջ առաջին անգամ Կոմս Էմմանուէլն



էր, որ ծանօթացրեց ընթերցողներին արտասահմանի հայութեան հետ։

Մի հասարակական ամսագրի տեսակէտից չէ կարելի միանգամայն բաւարար համարել այդ բոլորը։ Ինչու, օրինակ, միայն Նոր-Նախիջևանն էր արժանանում այդ ուշադրութեան, մինչդեռ ամբողջ Հայաստանը շարունակում էր մի անյայտ երկիր մնալ «Հիւսիսափայլի» ընթերցողների համար։ Իհարկէ, անկարելի պիտի լինի պահանջել Նալբանդեանցից որ նա շատ հայաբնակ տեղերին վերաբերվէր այնպէս, ինչպէս վերաբերվում էր իր հայրենի Նոր-Նախիջևանին։ Բայց այստեղ, անշուշտ, պատճառը միայն դժուարութիւնը, միայն միջոցների պակասութիւնը չէ։ Իբրև կրքոտ մարդ, իբրև կռուի մարդ, Նալբանդեանցը շատ անգամ էր ընկնում ծայրայեղութիւնների մէջ, շատ էր սիրում դիմել գրական այնպիսի միջոցների, որոնք դատապարտելի պիտի լինեն մանաւանդ նրա պէս լուսամիտ, տաղանդաւոր գրողի համար։ Մի շարք պատճառներ, որոնց մասին այստեղ չենք կարող երկար խօսել, ճակատագրական կերպով հարկադրում էին նրան մնալ նեղ, մանր-մունր հարցերի մէջ։ Նա հրապարակ էր հանում այս կամ այն մասնաւոր անձի ընտանեկան կեանքը, չէր քաշ-

վում պսակվիլներից, նրա յարձակումների մէջ մեծ դեր էին կատարում անձնական հաշիւները։

Սրանք աչքի ընկնող թերութիւններ են։ Բայց և այդպէս, Նալբանդեանցը իր ժամանակի գրական աստղն էր, ամենատաղանդաւորը հայ գրողների մէջ։ «Ամսի սկզբին—ասում է նրա կենսագրողը—ամեն բաժանորդ անհամբերութեամբ սպասում էր «Հիւսիսափայլի» նոր համարը դուրս գալուն, որ կարդայ Կոմս Էմմանուէլի յիշատակարանը կամ միւս յօդուածները» *)։

Եւ դա հասկանալի է։ Նալբանդեանցի գրուածքները այժմ էլ կարդացվում են մեծ հետաքրքրութեամբ։ Կայ մի առանձին հրապոյր Նալբանդեանցի գրչի տակից դուրս եկած տողերի մէջ. լայն ու լուսաւոր հայեացքները, մանաւանդ սուր քննադատական կարողութիւնը յափշտակում են ձեր միտքը։ Դուք զգում էք որ այդ տողերը թղթի վրա շարել է լուսաւորութեան և ազատութեան զինուորի ձեռքը։ Ո՛րպիսի ոյժգին թափով նա բանակռիւ է մղում հակառակորդների դէմ, հարուածում է խաւարամիտների, «օբսկուրանտների» բանակը, մերկացնում է մեծատունների արատները։

*) «Ղազար Փարպեցու թուղթը», Պետերբ., 1868, եր. XII.



Քննադատական փայլուն կարողութեան մի ապացոյցն էլ նրա «Մխիթար և Մխիթարեանք» ուսումնասիրութիւնն է, որ տպվեց «Հիւսիսափայլի» առաջին տարվայ համարներում։ Թէև այդտեղ աչքի է ընկնում մի կանխակալ նախապաշարմունք Մխիթարեան միաբանութեան դէմ, թէև փաստերի լուսաբանութիւնը միակողմանի է և հեղինակի վերաբերմունքը ոչ բոլորովին անաչառ, բայց և այդպէս, մի ուսումնասիրութիւն է դա, որ մեր քննական գրականութեան լաւագոյն էջերից մէկն է կազմում իբրև լայն հայեացքների և կորուկ ու խիստ պահանջողութեան արտայայտութիւն։

Դժբախտաբար, այդ տաղանդաւոր գրողը և անխոնջ մարտնչողը երկար չաշխատեց «Հիւսիսափայլի» և առհասարակ հայոց գրականութեան մէջ և նրա թողած գրական ժառանգութիւնը շատ էլ մեծ չէ։ 1858 թուականի վերջերին նա գնաց արտասահման, ուր մնաց մի տարի։ Այդտեղից էլ նա շարունակում էր եռանդով աշխատակցել «Հիւսիսափայլին»։ Բայց Ռուսաստան վերադառնալուց յետոյ նրա այդ եռանդը թուլանում է։ 1860 թուականին նա շատ քիչ բան է գրում, 1861-ին

նրա մի հատ ոտանաւորն է (նշանաւոր «Մեր Հայրենիքը») տպվում «Հիւսիսափայլի» մէջ. և այնուհետև դժբախտ հանգամանքները լռեցնում են նրան, մինչև որ թոքախտը վերջ է դնում նրա երիտասարդ հասակին (1866)։ Չը խօսելով ուրիշ պատճառների մասին, մենք պիտի դառնութեամբ խոստովանենք, որ այդ վաղահաս մահը փութացնողներից մէկն էլ այն էր, որ հայոց գրականութիւնը չը կարողացաւ այդպիսի մի տաղանդի համար մի փոքր ի շատէ վայելուչ կեցութիւն ապահովել։ Նալբանդեանցը ամբողջ ժամակ ձրի էր աշխատում...

—○○—

Ձրի աշխատող էր և Նազարեանցը։ Մենք տեսանք թէ ինչպիսի ենթադրութիւններ ունէր նա ամսագրի գործը կազմակերպելու մասին և ինչպիսի պայմանների մէջ հարկադրված եղաւ սկսել այդ գործը։ Առաջին կիսամեակը լրացնելուն պէս նա շտապեց տպագրել իր բաժանորդների անունները և շնորհակալութիւն յայտնել իրան օգնողներին։ Այդ բաժանորդների հասցէին Նազարեանցը շռայլում է հաճոյական խօսքեր, իբր թէ բաժանորդ գրվելով «Հիւսիսափայլին»,



դրանք ցոյց են տուել որ կամենում են մի բան սովորել, հասկանալ իրանց ազգի դրութիւնը և այլն։ Հետաքրքրականն այստեղ այն է, որ Նազարեանցը գոհ է իր հայրենի Թիֆլիս քաղաքից։ Թիֆլիսը, ասում է նա, թէև ուշ, բայց «ճանաչեց իւր ուսումնական որդու ձայնը և յետ դնելով ամենայն թերահաւատութիւն և պղտորութիւն, որ սովոր է գոյանալ այնտեղ, ուր լինում են մոլեգուցիչ, խառնակիչ ազդեցութիւնք վատթար մարդերի ձեռքով—և իմ հայրենի Թիֆլիզը անմասն ու անբաժին չը մնաց այն պարծանքից, որ կցորդ է մի ազգասիրական գործի յառաջատարութեան»։

Այդ «պարծանքը» Թիֆլիսը ստանում էր իր տուած մօտ յիսուն բաժանորդների փոխարէն։ Բայց այդ յիսունից քանիսն են Նազարեանցի մօտ գնացել «դաւաղանի» ստիպմամբ։ Որքա՛ն քիչ բան էր հարկաւոր Նազարեանցին ոգևորելու համար...

Այդ ոգևորութիւնը սաստիկ է մանաւանդ տարվայ վերջին, երբ Նազարեանցը փակում է «Հիւսիսափայլի» առաջին շրջանը և կանգնած է երկրորդի հանդէպ։ Նորից նա տպում է իր բաժանորդների ցուցակը։ Բայց այս անգամ դիմում է նրանց մի շատ գեղեցիկ ճառով։

Ցայտնելով որ «Հիւսիսափայլը» իր ընթերցողների հետ ձեռք ձեռքի տուած անցել է տարեկան ճանապարհը, Նազարեանցը մի առ մի թւում է թէ ինչ տեսան ընթերցողները այդ ճանապարհին և բերում է իր հրապարակախօսութեան գլխաւոր հարցերը և իր դաւանանքը։ «Մի աւելի մեծ ու հոյակապ ընծայ կարող չէ մի մարդ տանել իւր ընկերին, եթէ ոչ ասելով նորան ճշմարտութիւնը»։ Այդ ընծայով է «Հիւսիսափայլը» մեծարել իր ազգը։ Հաճոյախօսութիւնների ու շողոքորթութիւնների ետևից չէ ընկել նա։ «Մեղրոտ խօսքերից, որ այդքան սիրելի էին ազգի մէջ գտնուած կարճամիտներին, որ և փուտ ապրանքի պէս շատ դիւրագին են, միայն թէ գնողք լինեն, «Հիւսիսափայլի» հրատարակողը միշտ հեռի է պահել իւր գրիչը, միտ դնելով քաղցր խօսքերի թունաւոր ներգործութեանը, միտ դնելով իւր սուրբ պարտականութեանը դէպի իւր ազգը, յարգելով իւր անձը և իւր ընկերի անձը»։

Չէ մոռանում Նազարեանցը, որ ճշմարտութեան դառն խօսքը ատամների կրճտոց և խիստ յարձակումներ է յարուցել իր դէմ։ Նա ասում է. «Փոյթ չէ Հրատարակողին, որ չէ գրաւել նա այս և այն մասնաւոր մեծատունի սիրտը, անուշահոտ խունկ ծխելով



նոցա քթին, բարի մարդիկ լինելով նոցա առջև։ Այդ պարծանքը թողել է նա հայկական եղուխաններին, որ պատրաստ են աղաւաղել ամենայն բարոյական հիմունք մարդկային կեանքի, պղտորել և մռայլել ամենայն ճշմարտութիւն, միայն թէ կարողանային հասանել իւրեանց նպատակին, որ է իշխանութիւն և հրաման ազատ հոգիների վերայ»։

Տարւայ վերջին հաշիւ ու համար տալով հասարակութեան իր արածների մասին, մեր խմբագիրը հետևեալ գեղեցիկ խօսքերն է ուղղում իր բաժանորդներին.

«Շնորհակալ եմ ձեզանից ձեր բարեսիրտ ընկերակցութեան համար, իմ ծանր և քարքարուտ ճանապարհորդութեան մէջ։ Ձեզ, իմ սրտի սիրածները, ունենալով իմ հետ, քաղցր էր ինձ շատ դժուարութիւնք յանձն առնուլ, ճանապարհ կտրել սարերի ու ապառաժների միջից, օր ու գիշեր անքուն աշխատելով ուսանել ինքս և ուսուցանել ձեզ,—ուսուցանել ձեզ առողջաբար մտածել ձեր օգուտը և բարին, ձեր ազգի հասարակաց բաղդաւորութիւնը, ճանաչել ձեր կեանքի խորհուրդը իբրև մարդ և քաղաքացի այժմեան լուսաւոր դարուս և յառաջ խաղալ մարդկային յառաջադիմութեան ասպարիզի մէջ։ «Հիւսիսափայլը», ինչքան կարելի էր մի տարեգնացքի մէջ, բացեց ձեր առջև, պա-

տուեղի պարոններ, հայկական ազգի քար ու քանդ եղած կեանքը. Նա համարձակ ձեռքով յետ քաշեց վարագոյրը, որ շատերի աչքից թագուցանում էր հայկական իրողութիւնների ստոյգ դրութիւնը, ցոյց տուեց ազգային տան սարսափելի փլատակները և վերաշինութեան հնարաւորութիւնը, քաջ չեշտելով այն մեծ, մինչև այժմ անտես ու անփոյթ արած ճշմարտութիւնը թէ մարդուս կարողութիւնը, մեծագործական զօրութիւնը բղխում է ընկերական միաբանութենից, և թէ ինչ որ մասնաւոր ձեռքեր անկարող էին յառաջացնել, հեշտ է պսակել միաբան ներգործող զօրութիւնների միջնորդութեամբ»:

Ի վերջոյ Նազարեանցը յոյս է յայտնում որ բաժանորդները «ամենայն կերպով խնամատար կը լինեն ոտքի վերայ պահպանել մի ազգային օրագիր, որ նորա իմացական փառքն ու պատիւն է թէ Ռուսաստանի և թէ Եւրօպական ազգերի առաջև»:

Վերջին խօսքերը, ինչպէս և ուրիշ տեղերում պատահող ինքնագովութիւնները, վատ տպաւորութիւն են թողնում ընթերցողի վրա, թէև նա պատրաստ է խոստովանել թէ դրանք միանգամայն ճշմարիտ են: Լաւ կը լինէր տեսնել Նազարեանցի պէս մի մարդու մէջ աւելի համեստութիւն իր կա-



տարած գործի վերաբերմամբ. լաւ կը լինէր, որ նա ինքը իրան վկայականներ չը տար: Բայց այս թուլութիւնը յատուկ էր Նազարեանցին և ոչ միայն նրան, այլ առհասարակ մեր այն նշանաւոր գործիչներին, որոնք մի ծայրայեղ սէր ու հաւատ ունէին դէպի իրանց գործը, որոնք շատ լաւ տեսնում էին իրանց հակառակորդների ամբողջ ոչնչութիւնը: Նազարեանցը իր նամակների մէջ էլ, նոյն իսկ նախ քան հայ հասարակութեան յայտնի դառնալը, խօսում էր իր մասին այդպիսի եղանակով: Եւ մենք ակամայ հաշտվում ենք դրա հետ, քանի որ համոզված ենք, որ դատարկ ու անհիմն մեծապարծութիւն չէր դա, որ նա ճիշտ էր ասում, որ նա անձնուրաց, անխոնջ աշխատող էր:

Համարձակ, շիտակ ու անկեղծ խօսքերով իր հաշիւը ներկայացնելով հասարակութեան, Նազարեանցը, աւելի թեւաւորված, աւելի յուսալից, մտնում է երկրորդ տարեշրջանը:

## III

Երկրորդ տարվայ աջողութիւնները։—Խոչընդոտներ։—«Հայերի կոչումը մարդկութեան մէջ»։—Կրօն եւ ազգութիւն։—Էջմիածնի դերը։—Հայկական թատրոն։—Հասարակական կեանք չը կայ։—Հայ վաճառականի տիպը։—Մատթէոս կաթողիկոսի հաստատութիւնը եւ ճանապարհորդութիւնը։—«Մտածող հայերի յոյսերը»։—Մատթէոսի բնաւորութիւնը։—Բողոքականութիւնը Շամախում։—1860-ի առաջին յօդուածը. փոփոխված հայեացք։—Արշաւանք կղերականութեան դէմ։—«Հիւսիսափայլի» երրորդ տարին։—Լայն ծրագիր. Նազարեանցը օգնութիւն է խնդրում։—Աշխատակիցներ. Ցակոբ Մէլիք Ցակոբեան։—Նորից հայոց պատմութեան փորձ եւ «Թարգմանիչների դարը»։

—∞—

«Հիւսիսափայլի» երկրորդ տարին աւելի յուսատու էր։ Նազարեանցը ստանում էր խրախուսական նամակներ. ամսագրի հեղինակութիւնը աւելի մեծանում է, հասարակութիւնը հետզհետէ սկսում է իր համակրանքը ցոյց տալ և գործով. բաժանորդների թիւը հասնում է արդէն համարեա 340-ի։ Բայց դա դեռ բաւարար թիւ չէ. գոնէ 400



բաժանորդ էր ուզում Նազարեանցը, որպէս զի կարողանայ փոքր ի շատէ վարձատրութիւն տալ իր աշխատակիցներին։

Ամսագրի աջողութեան հետ առաջ էին գնում և խոչընդոտները։ Յարձակումները, խիստ մերկացումները իրանց գործն էին անում։ Խայթվողները—գլխաւորապէս, իհարկէ, հոգևորականները—ջանք չէին խնայում Նազարեանցին տապալելու, նրա գործը ոչնչացնելու համար։ Բանակռիւը գնալով տաք և աղմկալի էր դառնում. «Մեղու» և «Ճռաքաղը» ձեռք-ձեռքի տուած՝ սուտ, վնասակար, ազգակործան են յայտարարում այն լուսաւորութիւնը, որի անունից խօսում էր Նազարեանցը։

Բայց այդ աղմուկը, իհարկէ, բաւական չէր թշնամիների համար։ Նրանք սկսում են գործել և ուրիշ միջոցներով։ Նազարեանցը բացարձակ կերպով ասում է որ հայ աբեղաները ամեն տեղ քարոզում են, նոյն իսկ հրամաններ են արձակում որ «Հիւսիսափայլի» տարածման խոչընդոտ հանդիսանան *)։ Եւ այդ քարոզները, հրամանները իրանց ազ-

*) Այդ տեսակ հոգևորականներից Նազարեանցը իր նամակներում յիշում է Սարգիս եպիս. Ջալալեանցին և Գաբրիէլ վարդ. Այվազեանին։

դեցութիւնն էին անում։ Յիշատակութեան արժանի փաստ է, որ «Հիւսիսափայլը» առաջին տարին բաժանորդ չունէր Թիւրքիայում և այնպիսի լաւատեղեակ լրագիր, ինչպիսին էր Զմիւռնիայի «Արշալոյս Արարատեան», ասում էր թէ ինքը չէ տեսել Մոսկվայի ամսագրի այդ առաջին տարին։ Միայն 1859 թւականին «Հիւսիսափայլը» մուտք է գործում Թիւրքիա, թէև խիստ սահմանափակ թւով, եթէ համեմատենք «Մասեաց Աղաւնի» և «Կռունկ» պարբերականների հետ։

Երկրորդ շրջանը Նազարեանցը սկսում է մի յօդուածով, որի միտքն է ցոյց տալ հայերի կոչումը մարդկութեան մէջ։

Ի՞նչ է այդ կոչումը։

Լինել Ասիան լուսաւորելու միջնորդ։ «Հայոց ազգը, վերաբերութեամբ դէպի Ասիա, ունի մի մեծ և հոյակապ կոչումն. նորան կարելի է համարել այն խմորը, որ դրած է Ասիայի եռացող նիւթերի մէջ, որ հոգեղէն կեանքի համարեա թէ մեռած ծիլերը միւս անգամ զարթեցնէ և կենագործէ»։ Բայց ինչո՞ւ անպատճառ հայերը պիտի վերցնեն իրանց վրա մի այդպիսի ահագին կուլտուրական դեր։ Որովհետև այդ ցեղը ունի ընդունակութիւն, ձիրք իւրացնելու քաղաքակրթութիւնը և տարածելու իրան շրջա-



պատող ազգերի մէջ։ Այսպէս է ցոյց տալիս նրա ամբողջ պատմական անցեալը։

Մի թեթև թռիչքով չափելով այդ անցեալը, Նազարեանցը մի շատ ինքնուրոյն և հետաքրքրական հայեացք է անցկացնում։ Հայաստանի աշխարհագրական դիրքը ստեղծել է հայերի համար այն ճակատագրական վիճակը, որ նրանք ոտնակոխ լինեն շատ աշխարհակալ ազգերից։ Փոթորիկներ շատ անցան այդ երկրի վրայով, սակայն հայերը կարողացան պահպանվել իբրև քրիստոնեայ մի ազգ։ Բայց դա քիչ է։ «Հայք քրիստոնեայք են հաւատով. այդ շատ փոքր բան է՝ մի ազգային անուն, մի ազգային պատիւ ունենալու աշխարհի երեսին, ազգերի մէջ», ասում է Նազարեանցը և շատ ճիշտ կերպով նկատում է որ չէ կարելի ցոյց տալ աշխարհի վրա որ «լուսաւորեալ, քաղաքացեալ, հզօր ու հրամայող» լինի մէկը միմիայն կրօնի զօրութեամբ, առանց քաղաքական կեանքի։

Այսպէս նայելով իրերին, Նազարեանցը բնական հետևողականութեամբ շեշտում է այն պատմական շատ խոշոր երևոյթը, որ հայերը չէին հասկանում քաղաքական անկախութեան նշանակութիւնը և այդ անկախութիւնը զոհ էին բերում կրօնական անկախութեան։ Նազարեանցը գտնում է որ

հայերը չը պէտք թշնամանային յոյների հետ, «վեհանձնութեամբ տանելով Յունաց կրօնական նեղսրտութեանը և տեղիք չը տալով մի քանի դաւանական տարբերութիւնների, որ կային Յունաց և Հայոց մէջ»։ Այս տեսակէտը, որ քարոզվում էր մի հայի կողմից, եթէ բոլորովին նոր չէր, բայց շատ համարձակ էր և միանգամայն հակառակ էր ազգի մէջ դարերից ի վեր կազմված հասկացողութեան։

«Հիւսիսափայլի» հակառակորդները այստեղ պէտք տեսնէին մի նոր ապացոյց, որ Նազարեանցը հարազատ, հայրենասէր հայ չէ։ Չէ՞ որ այդ միննոյնը քարոզում էին երկար ժամանակներից ի վեր կաթօլիկները և յոյները։ Բայց մեծ անիրաւութիւն էր Նազարեանցի այդ հայեացքը նմանեցնել կաթօլիկ և յոյն կղերականների հայեացքներին։ Նազարեանցը կրօնական հանգամանքներ չունէր ի նկատի. Նրա դատողութիւնը լոկ քաղաքական իշխանութեան շահերի շուրջն էր պտտում։ Մի րոպէ դէն դնենք այն հարցը, թէ որքան ճիշտ էր այդ հայեցակէտը իբրև պատմական իրողութիւն։ Ի՞նչ կը տեսնենք այն ժամանակ։

Դարերի ընթացքում հայերի մէջ նուիրագործվել էր այն հասկացողութիւնը թէ հայը իր եկեղեցական անկախութեամբ է



պահպանել իրան։ Բայց Նազարեանցը բաւական չէ համարում այդ բանը։ Մի ազգի ինքնուրոյն կեցութեան և զարգացման ամենամեծ նեցուկը նրա քաղաքական իշխանութիւնն է։ «Թագաւորութիւն, քաղաքական կեանք, ազգային պատիւ ու փառք ասած բաները չեն միայն մնոտի, արտաքին աշխարհական փայլողութիւն, որից և կարելի է հրաժարվիլ անվնաս. ո՛չ, այդպէս չէ. Թագաւորութիւն ասած բանը է մի ազգի խելք ու բանականութիւնը տեսանելի և զգալի կացուցած նորա քաղաքական կարգերի մէջ, նորա օրէնքների, կառավարութեան և դատաւորութեան եղանակի մէջ»։ Մի խօսքով Նազարեանցը կատարեալ չէ համարում այն ազգային կեանքը, որ միայն կրօնի վրա է հիմնվում։ Այդ տեսակ կեանքի մէջ չէ կարող լինել լայն աշխարհիկ կրթութիւն, գրականութիւն, նիւթական և իմացական բախտաւորութիւն։ Ահա այս տեսակէտից նա հասնում է այն եզրակացութեան, որ հայերը առաջին կարևորութիւնը պէտք տային իրանց քաղաքական իշխանութեան։

Ոչինչ զարմանալու բան չը կայ, եթէ այդպիսի հայեացքներով ղեկավարվող մարդը մի բոլորովին նոր միտք յայտնէր հինգերորդ դարի կրօնական պատերազմի մասին։ Յազ-

կերտի ժամանակ հայերի ցոյց տուած ընդդիմութիւնը, ի հարկէ, արժանի է մեծարանքի։ Եւ Նազարեանցն ասում է որ հայերը «անվեհեր քաջութեամբ իմացել են թափել իւրեանց արիւնը, յանձն առնուլ նահատակութիւն ու մարտիրոսութիւն իւրեանց հաւատի համար, բայց չեն իմացել պահպանել իւրեանց կեանքը իւրեանց հայրենիքի պահպանութեան համար. կրօնը ազգի համար էր և ո՛չ թէ ազգը կրօնի համար. պահպանվելով ազգը, կը պահպանվէր ու կը պաշտպանվէր և կրօնը»։ Սա մի նոր, անակնկալ հարուած էր հայ ազգասէրների համար։ Հինգերորդ դարը պաշտամունքի առարկայ էր դարձել այն ժամանակներում, երբ Նազարեանցը գրում էր այս տողերը։ Կրօնական պատերազմը համարվում էր հայ ազգի գերագոյն իմաստութեան, լուսաւորութեան և հայրենասիրութեան մի հրաշալի գործ։ Իսկ Նազարեանցը խլում էր այդ լուսատու պատմական երեւոյթից նրա ամբողջ փառքն ու պարծանքը։ Դաւաճանութեան, օտարացման մի նոր ապացոյց։ Բայց Նազարեանցի լայն ու մեծ իդէալը այնքան բարձր էր եկեղեցական ազգասիրութեան նեղ հօրիզոնից, որ ուրիշ կերպ չէին էլ կարող հասկանալ նրան։



Սակայն չը պէտք է կարծենք որ Նազարեանցը միանգամայն ճիշտ էր որոշում այն նշանակութիւնը, որ կարող էր ունենալ հայերի եկեղեցական միութիւնը յոյների հետ։ Որ այդ նշանակութիւնը մեծ կը լինէր, հազիւ թէ կարելի լինի ուրանալ. բայց որ նա շատ երկարատև չէր լինի, Հայաստանի փրկութեան խարիսխը չէր դառնայ շատ երկար ժամանակով, օրինակ հէնց մինչև տասն և հինգերորդ դարի վերջերը, — դա էլ հաստատ է։ Ահա Սերբիան, Բօլգարիան կրօնակից էին Բիւզանդիայի հետ. և սակայն մենք չենք տեսնում այդ երեք կրօնակիցների մէջ մի սերտ եղբայրական միութիւն քաղաքական բարեբախտութեան համար։ Ընդհակառակն, սլաւոնական անկախութիւնները ահաւոր հարուածներ էին ստանում Բիւզանդիայից։ Կրօնը բաւական չէ ազգերի մէջ կատարեալ համերաշխութիւն հաստատելու համար. անջատող են ոչ միայն դաւանաբանական տարբերութիւնները, այլ և ցեղական առանձնայատկութիւնները, լեզուն։ Եւ վերջապէս ինքը, Բիւզանդիան էլ, վերջ ի վերջոյ ոչնչացաւ թիւրք ցեղի հարուածների տակ։ Իհարկէ, Արևելքի դժբախտութիւնները այնքան ահռելի չէին լինի, եթէ արաբական և յետոյ թաթարական իսլամի արշաւանքների

դէմ դուրս գար մի միաբանված քրիստոնէութիւն։ Բայց դրա համար հարկաւոր էր որ ժամանակը մի քիչ լուսաւոր լինէր և մարդիկ հասկանային թէ քրիստոնէութիւնը ծէսերն ու արարողութիւնները չեն, թէ դրանցից դուրս կայ հիմնաւոր, մեծ գաղափար, որ ընդունում են ամենքը։ Ցաւն էլ հէնց այն էր, որ ինքը Բիւզանդիան, իբրև խոշոր, կենտրոնացնող ույժ, որ կարող էր մի այդպիսի միութիւն ստեղծել, այնքան թաղված էր ֆանատիկոսութեան մէջ, որ լուսաւոր մտքի տեղ էլ չէր մնում...

Բայց թողնենք անցեալը։ Ի՞նչպէս հայ ազգը պիտի կատարէր իր կոչումը, իր քաղաքակրթական դերը ներկայում։ Իհարկէ, նա նախ և առաջ ինքը պիտի ընդունէ իր մէջ եւրոպական լուսաւորութիւնը և ապա միայն լուսաւորէ ուրիշներին։ Եւ Նազարեանցը նորից հանդէս է բերում իր սիրած ծրագիրը, որ վաղուց յայտնի է մեզ — դաստիարակութիւն ազգային լեզուով և ոգով։ Այդպիսի դաստիարակութեան գլխաւոր գործօններն են դպրոց, գրականութիւն։ Ընդհանուր խօսքերով են չօշափվում այդ գործօնները. Նազարեանցը չէ ասում թէ ինչ պակասութիւններ ունեն գոյութիւն ունեցող դպրոցները, օրինակ, Ներսիսեան դըպ-



րոցը։ Ինչպէս կը տեսնենք յետոյ, նրա պահանջածը մի գիմնազիա է, որ պիտի պատրաստէ հայ երիտասարդներին գերմանական և ռուսաց համալսարանները մտնելու համար։ Հարկաւոր է, ասում է նա, և մի տպարան, հայոց գրականութիւնը զարգացնելու համար։

Բայց ով պէտք է այդ գործերի նախաձեռնող հանդիսանայ։ Նազարեանցը ցոյց է տալիս Էջմիածինը։ «Մի ազգային միաբանութիւն, գործակից ընտրելով իւրեան մի ազգասէր, սրտացաւ հոգևոր գլուխ, կարող է մեծ վաստակներ վաստակել և լուծանել այն խնդիրը, որ ժամանակը և Նախախնամութիւնը դրել է հայոց առաջև Ռուսաստանումը»։ Կար և այդ գլուխը. դա Մատթէոս կաթողիկոսն էր, որ այդ ժամանակ Կ. Պօլսում սպասում էր իր հաստատութեանը ռուսաց կառավարութեան կողմից։ Նազարեանցը մեծ յոյսեր ունէր Մատթէոսի վրա. մենք շուտով կը տեսնենք թէ ինչեր էր նա սպասում նորընտիր կաթողիկոսից և որքան սըխալված էր։ Առ այժմ յիշատակենք և այն, որ այդ ծրագրի մէջ Նազարեանցը առաջին անգամ հարց է բարձրացնում մի կրթական ընկերութեան մասին, մի հարց, որ այստեղ միայն յիշվում էր և որին Նազարեանցը վե-

բացարձակ ապացուցում աւելի մանրամասն ծրագրով։ Մնում է աւելացնել և այն, որ Նալբանդեանցը իր ծրագրած գործերը յարմար էր համարում սկսել Թիֆլիսում, որ Կովկասի ամենախոշոր կենտրոնն էր։

Սրանք դատողութիւններ էին, նոր տարվայ առիթով յայտնած բարի կամեցողութիւններ։ Բայց հայկական կեանքը գործնական հարցեր էլ էր դնում Նալբանդեանցի առաջ։ 1859 թւականի յունվարին Մոսկվայի հայ ուսանողները մի ներկայացում տուին։ Դա հայկական առաջին ներկայացումն էր Ռուսաստանում։ Ներկայացումը տեղի ունեցաւ մի մասնաւոր տան մէջ, բայց ընդհանրապէս լաւ տպաւորութիւն թողեց։ Այս առիթով Նալբանդեանցը տպագրում է «Նկատողութիւնք» վերնագրով յօդուածը, որի մէջ ցոյց է տալիս թատրոնի անհրաժեշտութիւնը հայերի համար։

Այդ անհրաժեշտութիւնը հայերը Նալբանդեանցի յօդուածից չիմացան։ Նա ինքն ըստ ինքեան ծնվել էր ժամանակից, կենդանութիւն էր ստացել նախ Կ. Պօլսում, ապա անցել էր ռուսահայերի մէջ։ Արդէն այն հանգամանքը, որ հայ ուսանողները ներկայացում էին տալիս, մանաւանդ այն, որ ներկայացրած պիեսներից մէկը նոր էր գրված



և վերցրած էր Թիֆլիսի հայոց կեանքից, մի լաւ ապացոյց էր, որ պահանջը ոչ միայն զգացվում էր, այլ և իրագործվում։ Նալբանդեանցը իր յօդուածի մէջ բացատրում է բեմի կրթիչ նշանակութիւնը. դա կեանքի հայելին է, որի մէջ հասարակութիւնը տեսնում է արատները և ազնւող գաղափարները։

Բայց մեզ համար հետաքրքրականը այն ընդհանուր դատողութիւնները չեն, որոնք խօսում են բեմական արուեստի, բեմական գրուածքների մասին։ Նալբանդեանցը մի այդպիսի յօդուած էլ գրեց յաջորդ 1860 թւականին, երբ հայ ուսանողները նորից մի ներկայացում տուին։ Հետաքրքրականը հասարակական կեանքի այն քննադատութիւնն է, որ դնում է Նալբանդեանցը, երբ թատրոնի ընդհանուր կրթական նշանակութիւնից անցնում է այն հարցին թէ ինչ կը լինի թատրոնը հայերի համար։

Հասարակական կեանք հայերի մէջ, բառի բուն նշանակութեամբ, գոյութիւն չունի։ Հանրային շահերի հասկացողութիւն չը կայ մեզանում. մենք ունենք անհատներ, որոնք մտածում են իրանց փորի և բարեկեցութեան մասին, բայց չունենք հասարակութիւն, որի առջև դրված լինէին համայնական գաղափարներ։ Նալբանդեանցը յիշատա-

կում է արհեստաւորական միութիւնները, համքարութիւնները և այդ ընկերակցութիւնների մէջ էլ չէ գտնում մտաւոր-բարոյական առաջադիմութեան նպաստող մի կազմակերպութիւն։ Ոչինչ չեն տալիս այդ համքարութիւնները. ոչ ուսումնարան, ոչ ժողովրդական գրադարան, ոչ ընթերցանութեան և այլ մտաւոր գործունէութեան ժողովներ։

Հայ հասարակութեան բացասական յատկութիւնների մէջ Նազարեանցը չեշտում է մանաւանդ կնոջ դրութիւնը։ Կինը արտաքսուած է հասարակութիւնից։ Մի որևէ ժողովում չէ կարելի հանդիպել հայ կնոջ։

«Շատ-շատ, մի քանի պառաւ մայրիկներ կարելի էր տեսանել ընկերական ժողովի մէջ, և մի քանի չոր ու ցամաք բառ խօսել նոցա հետ և մխիթարվել նոցա բարեպաշտութեամբը միայն, որովհետև մի այլ գեղեցկութիւն և գրաւիչ բան չէ կարելի գտանել նոցա մէջ, պատճառ որ ոչինչ դաստիարակութիւն ու կրթութիւն չեն ստացել դոքա, և կրթեալ հայոց տըղամարդը այդպիսի պառաւների հետ չը գիտէր ինչից խօսք սկսանէր և ինչ նիւթով յառաջ տանէր խօսքը»։

Բայց ինչու միայն պառաւները։ Հայ աղջիկներն էլ այդպէս են. հասարակութեան մէջ երիտասարդը ջահիլ աղջկայ հետ չէ էլ կա-



րող խօսել և խօսելու ինչ նիւթ կայ. նոյն տգիտութիւնը, նոյն անկրթութիւնը։ Յայտնի է թէ ինչ վնասներ է ստանում հասարակութիւնը կնոջ այս դրութիւնից։

«Եւրոպացոց բարք ու վարքի ազնուացուցիչքը եղել են միշտ կանանց ընկերութիւնք, և առանց սոցա մնալու էին նոքա նոյնպէս կոպիտ ու սոպռ, ինչպէս ասիական բարբարոսքը։ Եւ ինչ ազգի մէջ կանայք չունին ազատութիւն, և ընկերական կեանքը զուրկ է իւր համեղացուցիչ աղից, և ոչինչ բարոյական յարակցութիւնք կարող չեն յառաջանալ տըղամարդի ու կնամարդի մէջ, այնտեղ ի հարկէ բնական նեղանում է թէատրոնական բեմի ասպարէզը»։

Առաջ տանելով հայերի հասարակական կազմակերպութեան վերլուծութիւնը, Նազարեանցը մատը դնում է մի իսկապէս անճոռնի խոցի վրայ։ Դա այն է, որ հայը ամբողջապէս նուիրված է անհատականութեան և նրան հասկանալի է միայն անհատական բարեկեցութիւնը։

Հայ ազգը (խօսքը, ի հարկէ, այդ ազգի քաղաքացի դասակարգի մասին է) «համարեա թէ բոլորովին վաճառական է, ունի միայն նիւթաւոր առևտրական կապակցութիւն օտարի կամ իւր ընկերի

հետ. մի այլ հաղորդակցութիւն, իմացական առևտուրք չգիտեն Հայք. որովհետև բոլոր խօսելիքը այդ ազգի մէջ լոկ արծաթի ու շահաստացութեան վերայ է, և ամեն մարդ ունի իւր առանձին ու ջոկ օգուտը, ուրեմն և ամեն մի հայ առանձնացած ու օտարացած իւր մաքով ու սրտով, նստած է մի անկիւնում, անկարօտ մի այլ հաղորդակցութեան իւր ընկերի հետ, որ հնարաւոր էր միայն լուսաւորութեամբ և ընդհանուր գաղափարներով ազգի և մարդկութեան մասին»։

Հայ հասարակութեան այդ ճիշտ և արդարացի քննադատութեան Նազարեանցը վերադառնում է իր մի նամակում, որ տպված է «Հիւսիսափայլի» նոյն տարվայ 11-րդ համարում։ Նրանից հարցրել էին թէ ինչու ընթերցանութիւնը չէ տարածվում հայերի մէջ և նա իր փայլուն պատասխանի մէջ նորից քրքրում է թէ ինչ տարրերից է կազմված հայ հասարակութիւնը և թէ այդ տարրերի ամենագլխաւորը—վաճառականութիւնը—ինչ աստուածութեան է երկրպագում։

Հայ վաճառականը, ասում է նա, Ռուսաստանում յարաբերութիւն ունի միայն ռուս ցած և անկիրթ վաճառականների հետ։ Ի՞նչ կարելի է սովորել դրանցից։ Բայց էլի ուրախալի կը լինէր, եթէ հայ վաճառականը



ռուսից օրինակ վերցնէր։ Ռուս վաճառականը «վերջին ժամանակներս բաւական յառաջադէմ է լուսաւորութեան մէջ, գիտէ բաւական յստակ և գեղեցիկ խօսել իւր լեզուն, ուրեմն և մտածել, որ ընթերցասիրութեան և գրասիրութեան միայնակ հետևանքն է»։ Մինչդեռ հայը հեռու է փախչում գրքից։

«Սակս թէ Հայերի համար օրինակ չէ օտար ազգի լաւ բանը. լաւ ուտել, լաւ խմել, փառաւոր և յարմար ապրել, այս բաները շատ արագ և շատ քաջ ուսանում են մեր Հայերը Եւրոպէականացած Ռուսներից, բայց մի հոգևոր շնորհք, մի ազնիւ սովորութիւն, մի գովանի եռանդն ուսանելու, ընթերցանութեամբ լայնացնելու իւր հայկական տեսութեան շրջանակը, քաւ լիցի. այդ Հայի համար չէ. Հայը պիտոյ է միշտ տգէտ մնայ»։

Մարմնական պէտքեր լրացնելը—ահա իմաստութեան սկիզբը և վերջը հայ վաճառականի համար։ Բայց այդպիսի իմաստութիւնը կատարելապէս մատչելի է և անասունին։ Մարմնական բարօրութիւնը մարդու համար միջոց է և ոչ նպատակ. նպատակը հոգու պահպանութիւնն է, աճելութիւնը, կատարելութիւնը։ Հայերի մէջ այդ միջոցն ու նպատակը վեր ի վայր են դարձել և այն, ինչ միայն միջոց պիտի լինի, պաշտ-

վում է իբրև նպատակ։ Փողաւորը հասարակութեան մէջ արժանաւոր մարդ է դառնում, թէև իմացականութեամբ միանգամայն չքաւոր է։ Տխմար կարծիք, բացականչում է Նազարեանցը և ապա ասում է.

«Ոչ, ազնիւ բարեկամ. իմ կարծիքս այսպէս է, որ ամենայն մարդ, թէ Հայ, թէ Ռուս, թէ Գերմանացի, թէ Ֆրանսիացի, ինչ ազգից ես կամի թող լինի, այն ժամանակ միայն ունի իրաւունք պատիւ և յարգութիւն պահանջել մեզանից, եթէ նա զարդարված է մի լուսաւոր իմացականութեամբ»։

Գեղեցիկ խօսքեր, գեղեցիկ պատկերացում մեր անմխիթար իրականութեան։ Ահա այդ եսամոլ, անձնապաշտ, կղզիացած անհատներից կազմված հասարակութեան մէջ ահագին պաշտօն ունի կատարելու այն ընկերական կրթարանը, որ կոչվում է թատրոն։

«Մեր կարծիքը այս է, որ եթէ մի ազգային ուսումնարան պիտոյ է կարգով ու ոճով աւանդէր հայկական մանուկին այժմեան ժամանակի ուսումնական գիտելիքը, ապա թէատրոնաբեմը լինելու էր մի իմացական ու բարոյական դպրոց բոլոր ազգի համար, մեծի ու փոքրի, կնամարդի ու տղամարդի համար»։

Բայց ո՞րն է հայ բեմի պարտաւորութիւ-



նը։ Այն, ինչ համապատասխանում է նրա կոչմանը—իրականութեան պատկերը ներկայացնել։ Եւ Նազարեանցն ասում է որ հայ բեմի վրա պէտք է հանել հայերի բարք ու վարքը, նրանց դատողութիւններն ու հայեացքները աշխարհային բաների վրա, նրանց թերութիւններն ու կատարելութիւնները։ Շատ գեղեցիկ ըմբռնած մի առողջ ու իրական պահանջ։ Բայց անհասկանալի է որ այդ տեսակ բեմը, Նազարեանցի կարծիքով, դեռ ազգային չէ. և ազգայնացնելու համար պէտք է ներկայացնել նրա վրա և պատմական դըրամաներ։ Սակայն չը մոռանանք, որ այդ տողերը գրվում էին այն ժամանակ, երբ պատմական դրաման էր տիրում մեզանում և կենցաղական պիեսը դեռ չէր բաց արել իր հարստութիւնները...

1859 թուականի կէսին հայոց կեանքի խոշոր երևոյթն էր Նորընտիր Մատթէոս կաթողիկոսի ճանապարհորդութիւնը Կ. Պօլսից Էջմիածին։

Մատթէոսը հաստատվեց Ալէքսանդր II-ի հրովարտակով այդ տարվայ մարտին։ Էջմիածնի Սինօդի կողմից հոգևորական պատուիրակութիւն գնաց՝ կաթողիկոսին հրաւիրելու։ Էջմիածինը ռուսաց տիրապետութեան տակ մնալուց յետոյ Մատթէոսը ա-

ռաջին թիւրքահայ հոգևորականն էր, որ ամենայն հայոց կաթողիկոսի գահն էր բարձրանում: Կովկասեան փոխարքայ իշխան Բարեատինսկի, Ռուսաստանի քաղաքական ազդեցութիւնը Թիւրքիայում և Պարսկաստանում աւելի ուժեղացնելու համար, առանձին նշանակութիւն էր տալիս հայոց կաթողիկոսութեան: Ուստի նա էլ իր կողմից պատուիրակ ուղարկեց Կ. Պօլիս՝ Մատթէոս կաթողիկոսին ուղեկցելու համար: Այդ պատուիրակը գեներալ Լօրիս-Մէլիքովն էր, որ յետոյ այնքան հռչակվեց իբրև զօրավար և պետական գործիչ: Նրա հետ էր հայ օֆիցէր Միքայէլ Միխանսարեանց, որ բարի յիշատակ է թողել մեր գրականութեան մէջ:

Մատթէոսը չէր շտապում Կ. Պօլսից ճանապարհվելու: Երկար ժամանակ Կովկասից գնացած պատուիրակութիւնները չքեղ հիւրասիրութիւն էին գտնում Կ. Պօլսի հայերի մէջ: Ոգևորութեան ժամանակներ էին: Մատթէոսը սպասեց մինչև որ մեծ իշխան Կոնստանտին Նիկոլաեվիչը իր ճանապարհորդութեան միջոցին Կ. Պօլիս գնաց: Մեծ իշխանը սիրալիր կերպով ընդունեց կաթողիկոսին և մի յատուկ շոգենաւ նշանակեց նրան Փօթի հասցնելու համար: Գեղեցիկ ընդունելութիւն գտաւ կաթողիկոսը Կովկասի



սահմաններում: Իսկ Թիֆլիս մուտք գործելը փառաւոր էր: Իսկոյն, տեղ հասնելուն պէս, Մատթէոսին այցելութիւն տուեց իշխան Օրբէլիանի, որ Բարեատինսկիի բացակայութեան պատճառով կովկասեան փոխարքայի պաշտօնակատար էր: Թէ որքան մեծ նշանակութիւն էին տալիս Մատթէոսի ընտրութեան, երևում է փոխարքայի դիւանատան գլխաւորի, Կռուզէնշտերնի, իշխան Բարեատինսկիին գրած նամակի հետևեալ տողերից. «Կան մարդիկ, որոնք ասում են թէ (կաթողիկոսի) ներկայ ընտրութիւնը Ռուսաստանի համար մի խաղաղ յաղթութիւն է, որ իր նշանակութեամբ գուցէ բարձր է այն ամենից, ինչ ձեռք է բերել Ռուսաստանը զէնքով» *):

Բնական է որ մի այսպիսի ժամանակ հայերի մէջ ծագէին լաւ-լաւ յոյսեր և ակնկալութիւններ: Նազարեանցը արձագանք է տալիս ժամանակի տրամադրութեանը մի յօդուածով, որի վերնագիրն է «Մտածող հայերի յոյսերը և արդարացի ակնկալութիւնքը ներկայումս»: Փառահեղ հանդէսներից չէ շլանում Նազարեանցը, թողնելով

*) Зиссерманъ—„Фельдмаршалъ Кн. Барятинскій“, М. 1891, հատ. III, եր. 86:

հանդէսներով ուրախանալը «տգէտ և վայրի վերոյ աչքով նայեցող ամբոխին»։ Նա ուզում է իր ժամանակի առաջաւոր դասակարգի զգացմունքների անխարդախ թարգման հանդիսանալ։

Յայտնի են այդ զգացմունքները։ Հայը տասնիններորդ դարում է, կանգնած է եւրոպական մարդկութեան դէմ ու դէմ։ Նախախնամութիւնը բաւական է համարել այն հարուածները, որոնց թափել է հայերի վրա և որոնցով պատրաստել է նրանց հասկանալու և ըմբռնելու լուսաւորութեան և առաջադիմութեան անհրաժեշտութիւնը։

Բայց ի՞նչ դրութեան մէջ է հայոց եկեղեցին մի այսպիսի ժամանակ։ Գոնէ Ռուսաստանում նա «եղել է մինչև այժմ մի արտաքին կարգի պահպանութեան լոկ հոգաբարձութիւն, ոչ թէ մի դպրոց քրիստոնէական դաստիարակութեան և լուսաւորութեան ազգի համար, այլ մի ամբոխ տգէտ և անուսումն բարձի թողի արած պաշտօնեաների, որ քրիստոնէութեան արտաքինը միայն լըցուցանելով, ծէս, աւանդութիւն և արարողութիւնք միայն կատարելով, պահպանել են քրիստոնէութեան չոր ու ցամաք ոսկրեղէն կերպարանքը—և հոգին, որ միա՛յն կարող է կեցուցանել, վերացել է»։ Այդ պատճառով



առաջացել է հայերի մէջ նիւթապաշտութիւն. հոգևոր դասը, որ պիտի համեմատ աղ լինէր, անհամացել է։ Ժողովուրդը կամաց կամաց կրթվելով առաջ է գնում դարի հետ. իսկ հոգևորականութիւնը մնում է տգիտութեան և խաւարի մէջ։ Այդպիսով աւելի և աւելի լայնանում է այն խորոցը, որ բաժանում է հոգևորականներին և աշխարհականներին։ Խաւարի կողմից պատերազմողների շարքում են հոգևորականները։ Ողբալի՛ հակասութիւն այն պաշտօնի դէմ, որ ունեն նրանք։

Եւ սակայն եկեղեցին պիտի լինի իմացական և բարոյական կրթութեան առաջնորդը և պարագլուխը։ Եկեղեցին պիտի գնայ ժամանակի հետ, գիտութեան հետ առաջանայ։

«Հարազատ քրիստոնէական եկեղեցին—ասում է Նազարեանցը—պիտոյ է հարկաւորապէս ուրախանայ ամենայն իմացական յառաջադիմութեան վերայ, որ տալու է նորան յատկապէս ամրութիւն և հաստատուն հիմք։ Այն եկեղեցին որ ունի պատճառ վախենալու հոգու լուսաւորութենից, այն եկեղեցին որ ամենայն ջանք և հնարք գործ է դնում պահպանել մարդկութիւնը մի ցած և ստորին աստիճանի վերայ, ուրեմն կամի կործանել

մարդկութեան բոլոր նպատակը և նորա ձգտողութիւնը հասանելու այդ նպատակին, այնպիսի եկեղեցին, աստուածաբանական մտքով, չէ եկեղեցի»։

Ահա ինչպիսի լեզուով խօսել գիտէր Նազարեանցը, ահա որքան պարզ ու անողոք էր լուսաւորութեան նուիրված, խոր համոզմունքի տէր մարդու պահանջը։ Բայց վերջիվերջոյ ինչ էր սպասում նա Մատթէոս կաթողիկոսից։—Մենք այդ արդէն գիտենք։ Նորից Նազարեանցը ձևակերպում է իր ակընկալութիւնները այնպէս, ինչպէս «Հայերի կոչումը մարդկութեան մէջ» յօդուածում և նորից կրկնում է որ կաթողիկոսը պիտի լինի բոլոր դպրոցական, գրական և բարեխնամական համախմբումների առաջնորդը։

Սակայն Նազարեանցը սխալվում էր։ Մատթէոս կաթողիկոսը նրա ուզած հովուապետը չէր։ Նախ քան կաթողիկոսանալը նա ունեցել էր Կ. Պօլսում պատրիարքական գործունէութիւն և այդտեղ էլ ցոյց էր տուել իր ամբողջ գոյնը։ Դա մի բարի մարդ էր, շատ ժողովրդասէր, հայոց եկեղեցուն նուիրված։ Այդ եկեղեցու շահերը պաշտպանելու համար նա ունէր մի բեղմնաւոր գրիչ, հեղինակում էր աստուածաբանական գրուածքներ և դաւանաբանական վիճաբանութիւններ։



Միևնոյն ժամանակ նա ունէր խոշոր պակասութիւններ. նեղահայեաց էր, անհամբերող, սաստիկ աւանդապահ։ Թիւրքիայում մի ամբողջ հալածանք յարուցեց բողոքական հայերի դէմ, որոնք ստիպված եղան բոլորովին բաժանվել և առանձին, անկախ կրօնական համայնք կազմել. այնպէս որ իրաւացի կերպով Մատթէոսին են համարում բողոքականութեան պատճառ Թիւրքիայում։

Գալով Էջմիածին, նա, իհարկէ, չը փոխվեց։ Նրա վարչութիւնը թոյլ էր, աննշան։ Միայն մի բանի մէջ մեծ է Մատթէոս կաթողիկոսի մատուցած ծառայութիւնը։ Նա էր, որ ժողովրդականացրեց մեր դպրոցները, յանձնելով նրանց կառավարութիւնը ժողովրդի ներկայացուցիչներին։ Դպրոցների առաջադիմութեան և ապահովութեան համար սրանից լաւ միջոց գտնել չէր կարելի. և ապագայում Էջմիածնի կաթողիկոսները ոչ միայն չը կարողացան մի նոր լաւ բան աւելացնել այս շատ համակրելի սկզբունքի վրա, այլ և հետզհետէ սկսեցին ոտնակոխ անել նրան, կրճատել։

Սակայն Մատթէոս կաթողիկոսի այս նըշանաւոր ծառայութիւնը չը պիտի մոռացնել տայ այն ճշմարտութիւնը, որ միւս բաներում նա ցոյց չը տուեց մի վերանորոգչա-

կան եռանդ։ Կաթողիկոսական գահի վրա էլ նա շարունակեց մնալ անհամբերող, միակողմանի աստուածաբան, որ աւելի իր գրքերով և կրօնական վէճերով էր զբաղված, քան ընդհանուր եկեղեցական-վարչական բարեկարգութեամբ։ Էջմիածնում էլ նա բաւական գրքեր գրեց և դրանց մէջ պաշտպանում էր հին աւանդութիւնները, ցոյց էր տալիս որ հայոց եկեղեցին ամէն կողմով կատարեալ է և ոչինչ վերանորոգութեան կարօտ չէ։ Շամախու հայերի մէջ բողոքականութիւն սկըսվեց. Մատթէոսը, ինչպէս և Կ. Պօլսում, համոզելու, խրատելու փոխարէն խիստ միջոցների դիմեց. նա բանադրեց բողոքականութեան համակրող հայերին, և կովկասեան բարձր իշխանութիւնը իզուր էր ջանք գործ դնում որ նա վերցնէ այդ բանադրանքը ու հասկացող, արժանաւոր հոգևորականների միջոցով գրաւէ շամախեցիների միտքը, հաշտեցնող վարմունքով վերջ դնէ վէճերին ու կռիւներին։ Եկեղեցուց դուրս վռնդված շամախեցիները ստիպված եղան մտնել լիւթերական եկեղեցու ծոցը և այսպիսով ռուսահայերի մէջ էլ պաշտօնապէս հաստատվեց բողոքականութիւնը։

Շամախեցիների վերաբերմամբ զիջող չէր կարող լինել Մատթէոս կաթողիկոսը, քանի



որ նա նոյն իսկ Գաբրիէլ վարդապետ Այվազեանի ուղղափառութեանն էլ չէր հաւատում, իսկ երբ Շուշում սկսվեցան խռովութիւններ Թեմական դպրոցի տեսուչ Շանչեանցի դէմ, որին համարում էին լիւթերականութիւն տարածող, կաթողիկոսը չը պաշտպանեց Շանչեանցին և սա ստիպված եղաւ հրաժարվել իր պաշտօնից։

Եթէ մի անգամ էլ նայենք Նազարեանցի համարձակ առաջարկութիւններին, մենք կը տեսնենք որ Մատթէոս կաթողիկոսը այն իսկ մարդն էր, որ ամենից շատ այդ առաջարկութիւններին հակառակ պիտի լինէր։ Այդ բանը շատ շուտ պարզվեց Նազարեանցի համար։

Եւ ահա 1860 թուականի «Հիւսիսափայլի» առաջին համարում Նազարեանցը, նոր տարվայ առիթով գրած իր յօդուածի մէջ, միանգամայն փոխել է իր հայեացքը։ «Սրբազաներին գործ չկայ այսուհետև ազգային խընդիրների մէջ—ասում է նա.—ժողովուրդը կարօտ է այժմ այլ ուսուցիչների քան թէ կարող էր տալ նորան խուցերի մէջ փակած, մարդկութենից ամենևին օտարացած մի հասարակութիւն»։ Այդ յօդուածը առհասարակ գրված է տաք և կտրուկ ոճով. նրա մէջ Նազարեանցը թափում է իր հայրենասէր սրտի

ամբողջ ազնիւ զայրոյթը և նրա հարուածները աւելի խիստ են, անխնայ։ Երկու տարի գործելով հայկական հրապարակախօսութեան ասպարէզում իբրև բացարձակ, ազնիւ, ազատ խօսքի սպասաւոր, նա «ուրախ կը լինէր իւր ճանապարհի վերայ հանդիպել պատուաւոր հակառակորդների, վէրք հասցնել և վէրք ստանալ բաց ու արձակ պատերազմի մէջ»։ Բայց նրա դէմ դուրս եկողները են «այնպիսի հակառակորդներ որոնց զէնքը են բռնակալութիւն, դարանագործութիւն, աբեղայական նզովք և բանադրանք, խաւար դարերի խաւար մնացորդք, բայց մեր ժամանակի դատողութեամբ մի ակնյայտնի թուլութեան և տկարութեան նշան»։ Եւ Նազարեանցը միայն արհամարհել կարող էր այդպիսի հակառակորդներին։

Հայոց հոգևորականութիւնը ցոյց էր տալիս որ ընդունակ չէ ժամանակի ոգին և պահանջները հասկանալու, որ միայն խաչընդոտ պիտի հանդիսանայ ազգի առաջադիմութեան ճանապարհի վրա։ Ի՞նչ պէտք էր անել։ Նազարեանցը չէ էլ տատանվում. նա հրաւիրում է որ ազգը ինքը հոգայ իր կրթական պիտոյքները, առաջ գնայ, այլևս չը սպասելով կղերին։ Կարելի է գործել և ինքնաբերաբար, «միայն թէ ազգի հայրենասէր բանա-



գէտ մարդիկը գտնուվէին քաջութեամբ, եռային հոգով, ժողովէին իւրեանց բարոյական զօրութիւնքը մի ազգասիրական ընկերութեան մէջ և պատուի ասպարէզ բանային ազգի չնորհալից երիտասարդների առաջև»։ Պէտք է սովորել աշխատանքի։ «Զոհաբերութեամբ պիտոյ է սկսանի ամենայն ազգաշինութիւն, զրկանքի յանձնառութեամբ պիտոյ է գնվլի ամենայն ազգային յառաջադիմութիւն», ասում է նա։

Անպարտաճանաչ հոգևորականութեան դերը աւելի պարզ որոշելու համար Նազարեանցը հերքում է հայ աբեղաների այն գըլխաւոր առարկութիւնն էլ թէ հոգևորականութիւնն է եղել ազգութիւն պահպանողը։ Անցեալի վերաբերմամբ նա ասում է որ ճիշտ է, հայ հոգևորականութիւնը մինչև 14-րդ դարը իր գրասիրութեամբ, իր գործունէութեամբ կարողացել է մի արտաքին միութիւն պահպանել հայերի մէջ. բայց այդ միութիւնը եղել է մեքենական, որովհետև ժողովրդի իմացական առաջադիմութեան վըրա չէ եղել հիմնված։ 14-րորդ դարից դրութիւնը փոխվում է։ «Այդ ժամանակից յետոյ վայրենացել են և հոգևորականք և ժողովուրդը նոցա հետ միասին»։ Եւ վերջապէս, առաջադէմ մարդկանց գանգատը հօ անցած

գնացած գժբախտ ժամանակների մարդկանց դէմ չէ, այլ նրանց դէմ, որոնք ներկայ ժամանակներում զինվում են լուսաւորութեան դէմ։

«Այժմեան աբեղայական սերունդը անարժան է մեր յարգութեան և գովանից— եթէ չը կամին դոքա ուղղել իւրեանց անձը—այսօր կամ էգուց կը բաժանվի ազգը, ինչպէս այդ բանը եղած է Եւրոպայի մէջ, որովհետեւ նա պիտոյ է յառաջ գնայ և այսուհետեւ յետ մնալ կարող չէ, բայց երկուքը ընկերակից լինել միմեանց նոյն շաւղի վերայ կարող չեն, ըստ որում մինը յառաջաշարժ և միւսը յետամնաց»։

Սրանք մարգարէական խօսքեր էին։ Նազարեանցը, մնալով իր հիմնական ծրագրի վրա անշարժ, այդ ծրագիրը քարոզելիս այնքան է առաջանում ազատախօսութեան և մերկացումների մէջ, որ վէճը նրա և աբեղայական դասակարգի մէջ գնալով խորանում էր, թշնամութիւնը սաստկանում։ Այդ թշնամութիւնը պայթեց նոյն 1860 թուականի վերջերում, երբ հրատարակվեց «Հիւսիսափայլի» 10-րորդ համարը, որ շլացնող հարուածի ազդեցութիւն արաւ։ Բայց այս նշանաւոր դէպքին մենք առանձին գլուխ կը նուիրենք։ Առ այժմ հետևենք Նազարեանցի միւս յօդուածներին։



Երկու տարվայ ընթացքում Նազարեանցը, ինչպէս ինքն է խոստովանում, ձեռք բերեց հաւատ որ ճշմարտութիւնը յաղթող է։ Այդ հաւատը ներշնչում էր նրան այն համակրանքը, որ կազմվել էր հասարակութեան մի որոշ մասի մէջ դէպի «Հիւսիսափայլը»։ Ի՞նչ աւելի մեծ բարոյական վարձատրութիւն մի խմբագրի համար քան այն, երբ նա տեսնում է որ իր ամսագիրը «մտաւոր և բարոյական խմորում» է առաջացնում. դա մի նոր, կենսական շարժում էր և Նազարեանցը շատ լաւ տեսնում էր նրան։ Բայց ոգևորութիւնը, անձնուիրութիւնը չէր կարողանում ծածկել իրողութիւնը։ Դա այն ծանր դրութիւնն էր, որի մէջ գրված էր «Հիւսիսափայլի» գործը։ Խմբագիրը, որքան էլ բարոյապէս վարձատրված, որքան էլ աշխատելու ցանկութեամբ լցված, մենակ պիտի տանէր ամսագիրը։ Նալբանդեանցը հեռու էր Մոսկվայից, առաջվայ պէս չէր կարողանում աշխատել. իսկ Նազարեանցը բացի նրանից չունէր մի այլ մշտական, ամենամօտիկ աշխատակից։ Պէտք էր որ նա ինքը կատարէր այն ամենը, ինչ այդպիսի գործի մէջ կատարվում է հաւաքական ոյժերով։ Իսկ դա անհնարին բան էր։

«Հիւսիսափայլի» այդ դրութիւնը գնելով

հրապարակում, Նազարեանցը օգնութիւն էր խնդրում: «Հրատարակողը—ասում է Նա—ստիպված է գրեթէ միայն տանել իւր ուսերի վերայ հրատարակութեան բոլոր ծանրութիւնը, ոչ թէ միայն շարադրելով բոլոր տպելի գրուածքը, այլ և ինքնին սրբագրելով շարած թերթերը տպարանի մէջ»: Չեն յիշվում, իհարկէ միւս հոգսերն ու կարգադրութիւնները: Եւ սակայն, Նազարեանցը ազատ մարդ չէ. նա ունի ուսուցչական պաշտօն, մեծ ընտանիքի հայր է: Ուստի նա նորից դիմում է ձեռնհաս մարդկանց, խնդրելով աշխատակցել «Հիւսիսափայլին»: Եւ նա հրահանգներ է տալիս գրել ցանկացողներին: Այս անգամ լայն է նրա ծրագիրը. խորհուրդ է տալիս գրել ժողովրդական կեանքի զանազան երևոյթների մասին, ուշադրութիւն դարձնել ընթացիկ հարցերի վրա: Խոստանում է վարձատրել աշխատակիցներին, եթէ բաժանորդների թիւը կը հասնէ 400-ի: Մենք չը գիտենք, ստացաւ Նազարեանցը մի այդպիսի թիւ թէ ոչ. 1860 թւականից նա այլ ևս չէ տպագրում իր բաժանորդների ցուցակը, թողնում է այդ բաժանորդներին ազգասէր, պարծանք տիտղոսներով մեծարելու ցաւալի սովորութիւնը:

Դատելով «Հիւսիսափայլի» տետրակներից,



այդ հրաւէրը ազդեցութիւն ունեցել է և աշխատակիցների թիւը, գոնէ առժամանակ, մեծացել է: Մի գեղեցիկ նորութիւն, որ տեսնում ենք 1860-ի «Հիւսիսափայլի» մէջ, Թիւրքահայերի իրականութեան տխուր, յուսահատական նկարագրութիւնն է: Շատ նշանաւոր է մանաւանդ այն, որ այդ նկարագրութեան մէջ Կ. Պօլսի հայերի մասին չէր խօսքը, ինչպէս սովորութիւն էր այն ժամանակ, այլ իրական Հայաստանի, գաւառի, այն էլ մի այնպիսի հեռաւոր գաւառի մասին, որպիսին է Վանը: Նկարագրութիւնը ուղարկված էր Սալմաստից. նրա հեղինակը մի նոր մարդ էր—Յակոբ Մէլիք-Յակոբեան, ապագայի Րաֆֆին: Ո՛րպիսի մռայլ գոյներով էր նա նկարագրում Աղթամարի հոգևորականներին, ժողովրդի տգիտութիւնը: Դա զգայուն, բանաստեղծ ականատեսի հեծեծանքն էր: Այդ նկարագրութիւնից մենք, ի միջի այլոց, տեսնում ենք որ Նազարեանցի անունն ու ձայնը Թիւրքաց Հայաստանի այդ խուլ և հեռաւոր անկիւնն էլ էր հասել:

1860-ին Նազարեանցը նորից սկսում է հայոց պատմութիւնը, նորից կիսատ է թողնում նրան, գրելով միայն մի փոքրիկ առաջաբան և Հայաստանի թեթև աշխարհագրութիւնը: Այդ աշխատութիւնից մեզ հարկաւոր

է յիշատակել երկու կէտ։ Մէկն այն է, որ Նազարեանցը Հայկի գաղթը դէպի Հայաստան անուանում է առասպել. սա էլ մի փաստ էր որ թշնամիները անուանեն նրան անհարազատ հայ, ազգային փառքի թշնամի։ Երկրորդ կէտը այն կարծիքն է, որ նա յայտնում է հայոց պատմագրութեան մասին։ «Հայոց Նոր պատմագրութիւնը մինչև այժմ գտնվում է խրված աղայական կօշիկների մէջ, որովհետև դորա հեղինակքը մինչև այսօր եղած են աբեղայ մարդիկ և այն, պապական եկեղեցու աբեղայք. և այդ է պատճառը, մեր կարծիքով, որ Հայոց մարդը մինչև այժմ ոչինչ ուսած չէ մեր պատմութենից»։ Սա մի շատ ճիշտ եզրակացութիւն է. և մինչև մեր ներկայ օրերն էլ այդ պատմութիւնը մնում է աբեղայական, ոչինչ չէ ուսուցանում հայ մարդուն։ Մինչև այժմ էլ մեր պատմութեան միակ հեղինակաւոր աղբիւրը Չամչեանն է։ Նազարեանցը պատկառանքով է խօսում այդ վարդապետի գրած երեք խոշոր հատորների մասին, բայց ասում է որ այդ աշխատութիւնը «կարող էր համարվել հաւաքածոյ զանազան պիտանի տեղեկութիւնների Հայոց պատմութեան մասին, քան թէ պատմական հոգով և ոճով գրած գործ»։

Չը կարողանալով մի սիստեմաբար գրված



հայոց պատմութիւն տալ, Նազարեանցը դըրեց մի առանձին մեծ յօդուած «Հայոց ազգի լուսաւորութեան, կամ սուրբ Թարգմանիչների դար» վերնագրով, որ նոյնպէս կիսատ մնաց։ Գործի սկզբում նա մի համեմատութիւն է դնում Սահակի և Մեսրոպի դարի և ներկայ դարի հոգևորականութեան մէջ և, ի հարկէ, ողբում է ներկայ ժամանակը։ Թարգմանիչների մասին խօսում է մեծ հիացմունքով։ Դա հինգերորդ դարի գրական շարժման պատմութիւնն է, որի մէջ, սակայն, մենք չենք տեսնում ինքնուրոյն, առանձին յատկութիւններով աչքի ընկնող ուսումնասիրութիւն։ Ամենաշատը մի կոմպիլիացիա է դա, որ, ի հարկէ, չէր արգելում Նազարեանցին իր սեփական հայեացքներն էլ արտայայտել։ Եւ այդ հայեացքների մէջ գլխաւորապէս երևան է գալիս մի հրապարակախօս, որ թէև խօսում է հեռաւոր անցեալի մասին, բայց աչքի առջև ունի ներկան։ Հէնց այդ ներկայի համար էլ նա խօսեցնում է անցեալը, որպէս զի խոշոր փաստերով ցոյց տայ պապերի ուսումնական գեղեցիկ վաստակները և թոռների տգիտութիւնը, լուսավախութիւնը, ծուլութիւնը...

## IV

*Խռովութիւններ Կ. Պօլսում մի բողոքական հայի պատճառով:—«Հիւսիսափայլի» 10-րորդ տետրակը:—Ռեֆօրմ հայոց եկեղեցու համար:—Թշնամութիւնը բորբոքվում է:—Նազարեանցի հակառակորդները:—Յովսէփ Չերքեզեան:—Ստոր հակառակորդի տիպ:—Չերքեզեանի դիմումը հայոց կաթողիկոսին:—Նազարեանցի պատասխանը:—Մատթէոսի վերաբերմունքը: —Սիւնօդի վճիռը:—Նազարեանցին պաշտպանում է գրաքննական ատեանը:—Պետերբուրգի հայերի բողոքը:—Պատասխան «Կռունկին»:—Նալբանդեանցի բացատրութիւնը:—Նոր եռանդ եւ Նազարեանցի պահանջը հասարակութիւնից:—Բարբարոսական դէպք Շամախում:*

Երբեմն ինչ աննշան դէպքերից ահագին հարցեր են ծագում...

1860 թուականի յուլիսի 2-ին Կ. Պօլսի Թաղերից մէկում մեռնում էր Կարապետ անունով մի հայ բողոքական։ Հոգեվարքի մէջ նա ցանկութիւն յայտնեց որ իրան թաղեն հայոց գերեզմանատանը։ Դա մի օտարոտի ցանկութիւն չէր. բողոքականները մինչև



այդ հայոց գերեզմանատանն էին իրանց վերջին հանգստեան տեղը գտնում։ Բայց Կարապետը ֆանատիկոս բողոքական էր. իր կենդանութեան ժամանակ նա սաստիկ հակառակ էր հայոց եկեղեցուն։ Եւ ահա այդ պատճառով Թաղի հայերը վճռում են թոյլ չը տալ որ նա իրանց գերեզմանատանը թաղվի։ Երբ Կարապետի մարմինը տանում են թաղելու, մօտ երկու հարիւր լուսաւորչական հայեր թափվում են գերեզմանատուն և չեն թոյլ տալիս թաղում կատարել։ Բողոքականներն էլ յամառում են. մեռելը չեն թաղում, գանգատվում են թիւրք կառավարութեան։ Հարցը բարդվում է, քաղաքական կերպարանք ընդունում։ Հայոց պատրիարքը գերեզմանատան սեփականութեան հարց է յարուցանում. Անգլիայի և Ամերիկայի դեսպանները միջամտում են և պահանջում որ մեռելը բողոքականների ուզած տեղը թաղվի։

Հայոց պատրիարքը քաղաքական ճնշման տակ համաձայնութիւն է կայացնում դեսպանների հետ։ Բայց ժողովուրդը յամառ դիմադրութիւն ցոյց տուեց։ Գերեզմանատունը զինուորական բանակի կերպարանք ստացաւ։ Մի քանի հազար հոգուց բաղկացած ամբոխը գիշերներն անգամ չէր հեռանում գերեզմանատնից և պատրաստ էր մին-

չև վերջին չունէր դիմադրել։ Իսկ դժբախտ մեռելը, ինչպէս հաղորդում էին եւրօպական լրագիրները, ամբողջ հինգ օր ընկած էր փողոցում, բաց երկնքի տակ և ամեն կերպ խայտառակվում էր լուսաւորչականների ձեռքով։

Թիւրք կառավարութիւնը ստիպված եղաւ զինուորական ուժի դիմել։ Պատերազմական մինիստր Րիզա-փաշան անձամբ երեք հազար հետևակ և ձիաւոր զօրք տարաւ գերեզմանատունը։ Ժողովուրդը, այնուամենայնիւ, չը զիջեց։ Տեղի ունեցաւ ընդհարում. զօրքը և ամբոխը իրար վրա յարձակվեցան, հայերի կողմից մօտ 30 հոգի վիրաւորվեցան։ Արիւնահեղութիւնը աւելի մեծ չափեր կընդունէր, եթէ հայոց պատրիարքը մէջ չընկնէր և չը դադարեցնել տար պատերազմը։ Վերջապէս կարելի եղաւ թաղել բողոքականի մարմինը հայոց գերեզմանատան ծայրում և այդպիսով վերջ տալ ցաւալի խռովութիւններին։

Այդ արիւնոտ դէպքը մի շատ տխուր երևոյթ էր, որ ամենից առաջ ցոյց էր տալիս թէ որպիսի սոսկալի թշնամութիւն կարող էր առաջացնել կրօնական անհամբերողութիւնը նոյն իսկ արիւնակից եղբայրների մէջ։ Եւ սակայն, Կ. Պօլսի հայութիւնը մի-



անգամայն անծանօթ չէր այն սկզբունքին թէ ազգութիւնը այս կամ այն կրօնին չէ պատկանում, թէ հայը հայ է մնում, ինչ կրօն էլ նա դաւանէր։ Դեռ 1840-ական թըւականներից էր, որ հայ-կաթօլիկ համայնքի առաջաւոր մասը սկսեց քարոզել այս սկզբունքը և «Համազգեաց» բարեգործական ընկերութիւնը իր գեղեցիկ, լայն ծրագրով և ազատամիտ ոգով պիտի իրականացնէր կեանքի մէջ ազգայնութեան, ընդհանուր համերաշխութեան գաղափարը, հաւաքելով իր շուրջը անխտիր բոլոր հայերին՝ հայ ազգի մտաւոր և բարոյական պահանջներին նուիրվելու համար։ Բայց դա մի սիրուն գործ էր, որ վէճեր և կեղտոտ կրքեր յարուցեց և չը կարողացաւ կենդանանալ, զարգանալ։ Կրօնական հալածամոլութիւնը դեռ մի դժբախտ անհրաժեշտութիւն էր հայ հասարակութեան համար։ Թէև եղբայրութեան, համերաշխութեան գաղափարը շարունակեց ապրել գրականութեան մէջ (Պէշիկթաշլեան), բայց աղանդաւորական ֆանատիկոսութիւնը գերակշիռ հանդիսացաւ։

Այդ ֆանատիկոսութեան ծայրայեղ արտայայտութիւնը յուլիսի 2—6-ի դէպքերն էին։ Այդ հրապարակական դատաստանը մի անշունչ դիակի վրա, այդ յամառութիւնը

երկու կողմից, այդ պատերազմը Թիւրք զօրքի դէմ, որի պատճառը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ հալածանք արիւնալից եղբօր դէմ, շատ տխուր փաստեր էին հայ ազգի կեանքից։ Անգլիական դեսպան Բուլվըր հայոց պատրիարքին ուղղած մի նամակում ասում էր․

«Աւելի այն պատճառով եմ ցաւում ևս այս ողբալի դէպքի վրայ, որ ինձ հասած տեղեկութիւններին նայելով՝ տեսնում եմ, որ այս արիւնահեղութեան առաջին օրինակը դժբախտաբար եղել է ձեր եկեղեցւոյ քահանաներից մինը, որով ընդհանրապէս կարող է կոտրուիլ արևելքի քրիստոնէից անունը։

«Ահա այս պատճառաւ կամենում եմ Ձեր Բարձր Սրբազնութեանը գրով կրկնել այն՝ ինչ որ անցեալ օրն բանիւ բերանոյ ասացի և ցանկանում եմ, որ այս Տէրութեան մէջ բնակող բոլոր Յոյն, Հայ և Կաթօլիկ ժողովուրդներն իմանան։ Այսինքն թէ՝ Անգլիոյ կառավարութիւնը, որոյ Վեհապետը և ազգի մեծագոյն մասը բողոքական են, Օսմանեան հողում բնակուած քրիստոնէից վիճակին միշտ կարեկցել է։ Նա խօսացել է ոչ ի նպաստ Բողոքականների, ո՛չ Կաթոլիկների, ո՛չ Գրիգորեան Հայերի և ո՛չ որ և է քրիստոնեայ դաւանութեան, այլ ի նպաստ առհասարակ ամէն քրիստոնէից միանգամայն։



«Արդ՝ պէտք է բացայայտ կերպով իմանանք թէ արդեօք Գրիգորեան Հայերը ուզո՞ւմ են ընդունել այս համերաշխութիւնը, բողոքականներին համարո՞ւմ են իրանց հետ քրիստոնեայ, թէ ընդհակառակն իրանցից շատ ստոր և էապէս անջատված և մինչև անգամ մահուանից յետոյ ևս, ուր աշխարհիս ամեն խտրութիւններն հաւասարվում են, անկարելի են համարում իրանց մօտ հանգչելու։

«Ներեցէք ինձ ասել Ձեր Բարձր Սրբազնութեանը, որ եթէ բողոքականները ձեր դաւանութեան քրիստոնեաներից համակրութիւն չգտնեն, մեր ազգի համար էլ շատ դժուար կլինի համակրութիւն ունենալ ձեզ հետ, և ներեցէք ինձ ա՛յս ևս աւելացնել, որ աշխարհիս ամեն կողմըն գտնուող բողոքականների համար ևս շատ դժուարին կլինի եղբայրանալ այն սուտ եղբայրների հետ, որ մերժում են նրան և թշնամանում մինչև անգամ դագաղի առաջև, ուր բացի սիրոյ կիրքը պէտք է լռէին մարդկային բոլոր կիրքերն։

«Միացեալ Նահանգաց դեսպանը ևս, որոյ կառավարութիւնը խիստ ընդհանուր և խիստ լուսաւորեալ ներողամտութեան օրինակ է ցոյց տալիս, այս կերպով խօսեցաւ մեր վերջին տեսակցութեան ժամանակ։

«Համոզուած եմ, որ Պրուսիոյ, Շուեդի, Հոլլանդայի տէրութիւններն և Եւրոպայի բողոքական մասն բոլորն պէտք է

արձագանք լինին մեր ասած խօսքերին։

«Մինչև անգամ համարձակվում եմ ասել, որ կաթոլիկներն ևս, որոնց մէջ Գաղղիոյ ազնիւ ազգն ամէն հնարքներով իրան արժանի կրօնական ազատութիւն է ցոյց տալի, ինձանից պակաս սոսկումով չպէտք է տեսնեն այս նողկալի և քրիստոնէական ոգուն անպատուութիւն բերող տեսարանի պատմութիւնը, որ այս վերջին օրերումս երևեցաւ հասարակութեան մէջ մահմեդական քաղաքումս» *)։

Սարգիս պատրիարքը, պատասխանելով այս նամակին, նախ և առաջ ասում էր թէ ցաւալի դէպքը տեղի է ունեցել ազգային սեփականութիւնը պաշտպանելու համար։ Հայոց եկեղեցին աշխարհիս ամենաազատամիտ եկեղեցիներից մէկն է։ Հայ ազգի համար եկեղեցին և ազգութիւնը միևնոյն են. կրօնական բաժանումները միայն քանդում են մեր ազգը և ցանկալի է որ այս հասկանան միւս քրիստոնեայ եկեղեցիները։ Ամբոխի գրգռմունքը պատրիարքը արդարացնում էր նրանով, որ բողոքական Կարապետը իր կեանքում շատ էր հայհոյել իր նախնիքների կրօնը։

Բայց ոչ սեփականութեան իրաւունքը,

---

*) «Կռունկ» ամսագիր, 1860, եր. 660։



ոչ մեռածի անձնաւորութիւնը, ոչ հայոց եկեղեցու համբերող ոգին չէին կարողանում հերքել դեսպանի նկատողութիւնները այն անհաշտութեան, այն «նողկալի տեսարանի» մասին, որոնք բացվեցան մի դագաղի առաջ։ Կարելի էր սեփականութիւնը պաշտպանել օրինաւոր միջոցներով, կարելի էր հայոց եկեղեցու համբերող ոգին ցոյց տալ գործնականապէս հէնց նրանով, որ դիակի վրա այդպիսի վայրենի դատաստան չէր կատարվի, այլ նրան մի փոքրիկ անկիւն կը շնորհվէր հողի ծոցում։ Փաստը, թիւրքական սուինների և արիւնահեղութեան փաստը ցոյց էր տալիս, որ հայոց եկեղեցու ոգին մեռած տառ է մնացել, իսկ իրականութիւնն այն էր, որ քրիստոնեայ եկեղեցուն պատկանող ազգակիցները պատրաստ են ծուատել միմեանց դաւանական տարբերութիւնների պատճառով։ Այս ցաւալի իրողութեան մէջ լուսաւորչական հայերի ամենամեծ զէնքն այն էր թէ եկեղեցին—դա ազգութիւնն է և դաւաճանել եկեղեցուն նշանակում է դաւաճանել ազգութեան։

Այն ժամանակվայ հայոց պարբերական մամուլը թէ Թիւրքիայում և թէ Ռուսաստանում, ընդհանուր առմամբ, շատ բնական և արդարացի էր գտնում յուլիսեան արիւ-

նոտ դէպքերը։ Մի քանի յօդուածներում մենք նոյն իսկ գտնում ենք այնպիսի մտքեր թէ այդ դէպքերը ազգային ինքնաճանաչութեան յայտարարներ են, թէ հարազատ հայը պիտի պարծենայ պօլսեցիների արածով։ Մեզանում «Կռունկը», «Մեղու», «Մասեաց Աղաւնին», «Ծաղքաղը» միանգամայն համամիտ էին այս հարցի մէջ։

Միայն «Հիւսիսափայլը» բացառութիւն կազմեց, մի սիրուն բացառութիւն, որ պատիւ էր բերում հայկական ազատ ու անկախ մտքին։

Կեանքի եղելութիւնը խօսեցնել տուեց Ստեփանոս Նազարեանցին։ Մենք տեսանք որ շատ չէին այն դէպքերը, երբ նրան կեանքի առօրեայ երեւոյթներն էին խօսեցնում. կեանքի թելադրածը աւելի ուժեղ պիտի լինէր։ Եւ այդպէս էլ եղաւ։ Կ. Պօլսի դէպքերի մասին Նազարեանցը խօսեց 1860-ի «Հիւսիսափայլի» 10-րորդ ամսատետրակում։ Եւ այդ 10-րորդ համարը հռչակաւոր դարձաւ, առաջացնելով մեր գրականութեան պատմութեան մէջ մի անօրինակ երեւոյթ։

Դա մի անկախ յօդուած չէր, այլ մի յաւելուած։ Նազարեանցը «Մենդելզօն, Լեսսինգ և Լաւատեր» յօդուածի մէջ այդ երեք մարդկանց կեանքից վերցրած փաստերով



ցոյց է տալիս թէ տարբեր կրօնական հայեացքների տէր մարդկանց մէջ որպիսի հըրաշագործ ազդեցութիւն է թողնում փոխադարձ ներողամտութիւնը, համբերողութիւնը, թէ ինչպէս հրէայ փիլիսոփան յաղթում է քրիստոնեայ հոգեւորականին իր լայն հայեացքների, իր սիրոյ ուժով։ Ապա անցնում է Կ. Պօլսի դէպքերին։

Նախ և առաջ նա իրան հրատարակում է իր եկեղեցու «անվեհեր պաշտպան և ջատագով» և շտապում է յայտարարել թէ անկիրթ բազմութեան ֆանատիկոսական հալածասիրութեան համար պատասխանատու չէ հայոց եկեղեցին, որ սկզբունքով ներողամիտ է, համբերող։ Օրինակ է բերում որ Պարսկաստանում շատ կաթօլիկներ և բողոքականներ թաղվում են հայոց գերեզմանատներում։ Քրիստոնէական եկեղեցին չէ կարող այդպիսի արգելքներ յարուցանել։ Կազանում հայ լուսաւորչականները թաղվում են ռուսաց և գերմանական հանգստարաններում, իսկ Մոսկվայում կաթօլիկների և բողոքականների գերեզմանատունը մի է։

Քրիստոնէութիւնը ազատութեան օրէնք է և ոչ ծառայութեան, սիրոյ օրէնք է և ոչ ատելութեան։ Սրանից դուրս օրէնք չը կայ և ոչ ոք չէ կարող մի ուրիշ կերպ բացա-

տրել քրիստոնէութիւնը։ Այստեղից արդէն պարզ է որ ոչ ոք իրաւունք չունի հալածել իր նմանին միայն այն պատճառով, որ նա ուրիշ կերպ հաւատացող քրիստոնեայ է։ Գալով այն մտքին թէ կրօնը ազգութեան պահապանն է, Նազարեանցը ասում է. քրիստոնէութիւնը ազգութեան վրա չէ հիմնված և նրա համար մի են բոլոր ազգերը։ Կրօն և ազգութիւն ջոկ ջոկ բաներ են։ Լուսաւորչական հայը, դառնալով բողոքական, մընում է մեր եղբայր թէ ազգաբար և թէ քրիստոնէաբար.—ազգաբար՝ այն պատճառով որ բողոքական դարձած հայի մէջ չէ փոխվում հայկական արիւնը, իսկ քրիստոնէաբար այն պատճառով, որ Քրիստոսը բողոքականին էլ է պատկանում, լուսաւորչականին էլ։ Ազգութիւնը աշխարհային խորհուրդ ունի, մինչդեռ կրօնը գործ ունի ուղղակի մարդու խղճի և Աստուծու հետ։ Ուրեմն լուսաւորչական, կաթօլիկ և բողոքական հայերը միշտ մնում են արիւնակից եղբայրներ, մի ազգի որդիներ, մի լեզուի կցորդներ, մի ազգային պատմութեան ժառանգորդներ։

Ազգութիւն պահելու համար անպատճառ պէտք չէ այս կամ այն կրօնին պատկանել։ «Աստուած կամեցել է որ Հայք լինին Հայք, այսինքն մի առանձնախօս ազգ. թող և այդ-



պիսի մնան դոքա, անշարժ և անփոփոխ, թող նոքա լինեն հայրենասէր, չմիաւորվին ոչինչ ազգի հետ, ոչ Յոյնի, ոչ Գերմանացու, ոչ Ֆրանսիացու հետ»։ Բայց կրօնով հայերը կարող են միշտ տարբերվել միմեանցից։ Եւ դրանից վնաս չը կայ ազգութեան համար։ Ապացոյց՝ Գերմանիան, ուր կաթօլիկները և բողոքականները ապրում են իրար հետ հաշտ, ձեռք ձեռքի տուած զարգացնում են հայրենասիրութիւնը, ազգային առաջադիմութիւնը։

«Այսպէս ևս պարտ և արժան էր մեր Հայերին նայել միմեանց վերայ, և հրաժարվիլ կրօնական վէճերից, ջանք դնել քրիստոնէական եղբայրսիրութեամբ բժշկել ազգային մարմնի մէջ եղած ճեղքը, քան թէ հալածասիրութեամբ օրէ օր աւելի լայնացնել զորան և օրէ օր աւելի հեռի բաժանել միմեանցից սրտերը և հոգիքը։ Ազգը միապէս պատկանում է և Լուսաւորչականին և Կաթոլիկին և Պրոտեստանտին. ուրեմն թող այդ երեք ազգային բաժինները իւրեանց դըրօշի վերայ արձանագրեն միապէս այս երեք բառս որպէս նոցա կեանքի թանկագին առածք, որպէս նոցա աչքի բիբք. Եղբայրասիրութիւն, Հայրենասիրութիւն, միաբան անձնազոհութիւն հասարակաց հայրենիքի համար»։

Կրօնական պառակտումների մասին Նազարեանցը խիստ և որոշ կարծիք է յայտնում։ Նա դէմ է օտար պրօպագանդաներին հայերի մէջ, յիշեցնում է թէ երբ և ինչպէս մտան կաթօլիկութիւնն ու բողոքականութիւնը մեր մէջ և աւելացնում է. «Մօտերումս և Ռուսաստանի մէջ մի քանի վատթար, կարելի է ասել, անկրօն Հայեր, փառասիրութեան և օգտասիրութեան պատճառով աշխատում են և կը ցանկանային օր մի յառաջ Հայոց եկեղեցին տեսանել միացած Յոյն եկեղեցու հետ»։ Կաթօլիկ և բողոքական պրօպագանդաների արարքները նա չէ հաւանում, բայց հասկանում է որ դրանք «պատմական իրաւունքով վարվում էին Հայերի հետ այնպէս, ինչպէս աշխարհը վարվել է մինչև այն բանի հետ, որ ասվում է Res nullius, այսինքն մի անտէր բան որ և ամենայն մարդ կարող էր ձեռք ձգել, սեփականել, եթէ ունէր կարողութիւն և հնարագիտութիւն»։ Այդ սկզբունքը Նազարեանցը դատապարտում է իբրև մի անբարոյական, անխիղճ գործ։

Ուրեմն, հայոց եկեղեցին կեղեքվում է անտէրութիւնից, սեփական թուլութունից։ Ահա այդ կողմի վրա պէտք է ուշադրութիւն դարձնել. պէտք է բարեկարգել այդ



եկեղեցին, որպէս զի նա կենսունակ ու ուժեղ մի մարմին դառնայ։ Ի՞նչպէս պիտի կատարվի այդ բանը։—Նազարեանցը պատասխանում է.

«Մեք մտածում ենք այսպէս. եթէ Հայոց եկեղեցին պէտք է այս մեր կլանող ժամանակին դիմանայ, պահպանվի, ապա անպատճառ պիտոյ էր նորան նորոգել իւր հնացած և մաշված կենդանութիւնը, միտ դնելով յառաջադէմ մարդկութեան պիտոյքներին։ Հայոց եկեղեցին պիտոյ է մի Ռեֆորմ առնէր ոտքից մինչև գլուխ, այսինքն մի ազդու վերանորոգութիւն Աւետարանի հաստարմատ հիման վերայ. ի հարկէ ներգործելով արմատից դէպի վեր, ժողովրդի և հոգևորների դաստիարակութեամբ և կրթութեամբ մեր օրերի լուսաւոր հոգու համեմատ։ Հայոց եկեղեցին գիտութեամբ պայծառանալով, ժողովուրդը ճանաչելով քրիստոնէութեան իսկութիւնը, չինվելով և հաստատվելով աւետարանական բանի վերայ, այնուհետև ոչ մի Հայ տեղիք ունենալու չէր վազելու իւր եկեղեցուց դէպի միւս եկեղեցի, ըստ որում նոյն երանութիւնը որ խնդրում էր նա օտարի եկեղեցու մէջ, ունի արդէն իւր մայրենականի մէջ։ Ցիմար ու անխորհուրդ ուրացողներ, փառամոլ և չահախնդիր մարդիկ ամեն ազգի մէջ և ամեն ժամանակ եղած են. և Հայերի մէջ կարող են այդպիսիք

գտանվի։ Դոցա հետ գործ չունի Հայոց եկեղեցին. թող գնքա, այդ փտած Հայերը, որ մի յառաջ գնան, կորչեն, միանան որոնց հետ կամին. մեր հոգսը չէ։ Բայց Հայոց եկեղեցին, մեր ամենասիրելի մայրը որ ծնել է մեզ իւր սուրբ աւազանից, թող ինքը նախ և յառաջ նորոգվի կենդանութեամբ, զալարանայ, ծաղկի և զարդարվի արժանի պտուղներով. այնուհետև այդ ծառի մի քանի ցամաքած ու անպիտանացած ճիւղերը թող բաժանվին նորանից և միաւորվին մի օտար ծառի հետ։ Դորա վերայ ցաւելու պատճառ չունի ոչ ոք»։

Այս հատուածը մի անօրինակ աղմուկ և իրարանցում գցեց հայերի մէջ։ Կրօնը ազգութիւնից բաժանելու սկզբունքը նոր չէր քարոզվում մեր մէջ։ Դա մի սկզբունք էր, որ, ինչպէս, ասացինք, նոյն իսկ գործադրութեան փորձեր էր անում կեանքի մէջ (Կ.Պօլսում, «Համազգեաց» ընկերութիւն), քարոզվում էր առաջադէմ մամուլի մէջ (Պարիզի «Արևմուտքը»)։ Բայց հայոց եկեղեցու վերանորոգութեան հարցը բոլորովին նոր էր և առաջին անգամ նրան հրապարակ էր հանում Նազարեանցը։ Ահա այդ հարցն էր, որ ռումբի պէս պայթեց, շշմեցնելով «Հիւսիսափայլի» հակառակորդներին։ Այստեղ հարկաւոր է մի քանի խօսք ասել այդ հակառակորդների մասին։



Մինչև այժմ մենք յիշատակեցինք այդ ախոյեաններից մէկին միայն—Առաքել վարժապետ Արարատեանցին, և իմացանք որ «Հիւսիսափայլի» դէմ կանգնած էին ամբողջ չորս պարբերական հրատարակութիւններ—«Մեղու Հայաստանի», «Ճռաքաղ», «Մասեաց Աղաւնի» և «Կռունկ»։ Արդարութիւնը պարտք է դնում խոստովանել, որ «Կռունկը» հակառակորդների թւում կանգնած էր լոկ իր դաւանած սկզբունքներով. նա բանակռիւ չէր մղում Նազարեանցի դէմ, ընդհակառակն, յարգանքով էր վերաբերվում նրան, խոստովանում էր նրա մատուցած մեծ ծառայութիւնները։ Միայն 10-րորդ ամսատետրակն էր, որի առիթով «Կռունկն» էլ, ինչպէս կը տեսնենք, արշաւանք սկսեց Նազարեանցի դէմ։ Այդ կողմից «Կռունկը» իրան աւելի շատ վայելուչ էր պահում քան նոյն իսկ «Մասեաց Աղաւնին»։ Գաբրիէլ վարդապետ Այվազեանը աշխատում էր հեռու պահել իր օրգանը բանակռիւներից, տալ նրան մի լուրջ պարբերականի կերպարանք։ Դեռ Պարիզում նա ոչ մի պատասխան չէր տալիս Ստեփան Ոսկանի սուր ու անխնայ յարձակումներին, որոնք ուղղված էին նրա անձնաւորութեան

դէմ։ Բայց Թէոդոսիայում նա այլ ևս այն չէր, ինչ Պարիզում։ «Հիւսիսափայլի» հարուածներին նա պատասխանում էր հարուածներով, ինչպէս և բաց էր անում իր թերթի էջերը այնպիսի յարձակումների համար, որոնք պատիւ չէին բերում «Մասեաց Աղաւնուն»։

Այստեղ մենք չենք կարող յիշատակել այն բոլոր մարդկանց, որոնք այդ հրատարակութիւնների մէջ գրել են Նազարեանցի դէմ։ Եւ դա շատ անհետաքրքրական էլ կը լինէր, քանի որ այդ գրուածքների մեծագոյն մասը արժանի չէ լուրջ կրիտիկայի ուշադրութեան։ Եթէ Նազարեանցի բոլոր հակառակորդների մէջ կայ մէկը, որ անուն է հանել գոնէ իր եռանդով—դա Յովսէփ Ջէրբէզեանն է։ Այս մարդը «Հիւսիսափայլի» հէնց առաջին քայլերից նրա անհաշտ թշնամին հանդիսացաւ։ Դրանով էլ նա կապեց իր անունը Նազարեանցի անուան հետ, այնպէս որ Նազարեանցի մասին խօսողը չէ կարող լռութիւն պահպանել Ջէրբէզեանի մասին։ Բացի դրանից, Ջէրբէզեանը հետաքրքրական է իբրև գրական հակառակորդի տիպ։ Հայ պահպանողականութեան նոր ձևի ներկայացուցիչն ու նախահայրն էր նա. և նրա հարազատ սերունդները այսօր էլ կենդանի են մեր գրականութեան մէջ։



Ջէրբէզեանի մասին մենք շատ տեղեկութիւններ չունենք։ Գիտենք միայն որ նա աստրախանցի էր և Լազարեան ճեմարանի առաջին աշակերտներից մէկը։ «Մուսայք Արարատեան»-ի մէջ, որ հրատարակուեց 1829-ին, նա ունի երկու ոտանաւորներ, որոնցից մէկը նուիրուած է նրա ուսուցիչ Սալլանթեան վարդապետին։ Ջէրբէզեանը մինչև կեանքի վերջը հաւատարիմ մնաց Սալլանթեանի սկզբունքներին, թէև չը բաւականացաւ Լազարեան ճեմարանի տուած կրթութեամբ։ Վերջացնելով ուսումը այդտեղ, նա մտաւ Մօսկվայի համալսարանը։ 1833-ին նա, դեռ համալսարանի ուսանող, հրատարակեց «Սկզբունք Քրիստոնէական Վարդապետութեան» անունով գրքոյկը, մեծ մասամբ քաղուածք ռուսերէնից և Սալլանթեանի կրօնագիտութիւնից։ Այս գրքոյկը ինքն ըստ ինքեան շատ լաւ է բնորոշում այդ համալսարանական ուսանողին։

Համալսարանից դուրս գալով, Ջէրբէզեանը, ինչպէս երևում է, մնաց Մօսկվայում, Սալլանթեանի անփոփոխ բարեկամն էր և ուսուցչութիւն էր անում գուցէ հէնց նոյն Լազարեան ճեմարանում։ Կոմս Էմմանուէլը իր մի «Յիշատակարանի» մէջ խոստովանում է որ Ջէրբէզեանը երկար ժամանակ հայերի

մէջ լուրջ, լաւ կրթված մարդու համբաւ ունէր: Կային—ասում է նա—մի քանի մարդիկ, որոնք քիչ էր մնում Զէրքէզեանին կիսաստուածների կարգը դասէին: «Դոցա մէջ էր գտանվել և մեր բարեկամներից մինը, որ 1853 թուականից սկսած, շատ անգամ գովելով մեզ այդ անզուգական գիտնականը, յորդորում էր մեզ մօտենալ դորան. բայց մեք, վաղուց արդէն հասկացած լինելով մեր բարեկամի գովասանած մարդու որպիսութիւնը, հրաժարվելով հրաժարվել էինք այդ բարեկամի առաջարկութենից»:

Այդպէս էր Զէրքէզեանը, քանի որ լուռ ու մունջ էր, քանի որ նրա գրաւոր վաստակը միմիայն «Քրիստոնէական Վարդապետութիւնն» էր: Բայց Նազարեանցը նրան հրապարակ հանել տուեց և նա մերկացրեց ինքն իրան, ցոյց տուեց թէ ինչ է ինքը: Նազարեանցին, ինչպէս տեսանք, հակառակվում էր հին սերունդը, որ, չունենալով ուսում և կրթութիւն, երեխայական բաներ էր գրում նրա դէմ: Այդ սերունդը հարկադրված էր խոստովանել Նազարեանցի գիտնականութիւնը և իր համար փրկութիւն որոնում էր հայկական աւանդութիւնների, հին եկեղեցական հեղինակութիւնների մէջ: Ահա այդ տեսակ թոյլ ու անկարող հակառակութեան



մէջ երևան է գալիս արդէն կրթութիւն ըստացած, համալսարանական մարդը: Ոյժերը, գոնէ ձևականապէս, համահաւասար են: Զէրքէզեանը իր գրուածքների մէջ Նազարեանցի գիտնականութիւնից ընկճվող չէ, այլ տեղեակ մարդու ինքնավստահութեամբ է խօսում. գիտէ լեզուներ, համարձակ վճիռներ է կարդում Նազարեանցի ընդունակութիւնների և պատրաստութեան մասին:

Բայց համալսարանական ուսումը արգելք չէր որ Զէրքէզեանը շատ փոքր բաներով զանազանվի հին սերունդի ներկայացուցիչներից, Արարատեաններից, Մանդինեան քահանաներից: Ընդհակառակն, նա միանգամայն ձուլվում է դրանց հետ և հայեացքներով, դաւանանքներով նոյն այդ մարդկանցից մէկն է: Ուշադրութեան արժանի հանգամանք: Մեզանում էլ հաստատվում էր համատարած երևոյթը. — համալսարաններից դուրս էին գալիս թէ ազատամիտ և թէ յետադէմ ոյժեր: Բարձրագոյն ուսումը դեռ երաշխաւորութիւն չէր թէ տիրացուական ազգասիրութիւնը միմիայն հին սերունդին է պատկանում:

Բացի «Քրիստոնէական Վարդապետութիւնից», Զէրքէզեանը ունի և հայոց պատմութեան մի դասագիրք, որ տպվեց Թէոդո-

սխալում 1862 թւին։ Բայց դա էլ, ինչպէս և առաջինը, նրա սեփական աշխատանքի պըտուղը չէ. պատմութիւնն էլ Զամչեանից է համառօտել Չերքէզեանը։ Այսքան ամուլ գըրական աշխատութիւնների մէջ, Չերքէզեանը մի անսովոր եռանդ էր ցոյց տալիս յատկապէս Նազարեանցին հայհոյելու և վատաբանելու մէջ։ Նա գրում էր յաճախ, գրում էր երկար. կամ «Մեղուի» մէջ էր երեւում, կամ «Ծաղքաղի» կամ «Մասեաց Աղաւնու» մէջ։

Կարդալով այդ գրուածքները, մենք տեսնում ենք որ Չերքէզեանը ունէր և հիմնաւոր դիտողութիւններ Նազարեանցի լեզուի, հայագիտութեան դէմ։ Պատահում են և այնպիսի տեղեր, ուր նա աջող կերպով ցոյց է տալիս Նազարեանցի տեսութիւնների խախուտ կողմերը։ Բայց այս փոքրիկ դրական կողմերը միանգամայն կորչում, ոչնչանում են այն ընդհանուր ձևի, այն ուղղութեան պատճառով, որին հետևում էր Չերքէզեանը։

Կատաղի, ախտաբորբոք թշնամութիւնը միանգամայն կուրացնում էր նրան. և «Հիւսիսափայլին» հակառակվելու համար, նա պատրաստ էր, ինչպէս երևում է, սևին սպիտակ ասել։ Ոչինչ, կատարելապէս ոչինչ արժանիք նա չէր տեսնում Նազարեանցի մէջ,



նա չէր ընդունում որ Նազարեանցը մազի չափ օգուտ բերած լինի. ընդհակառակն, համարում էր նրան մի սոսկալի չարիք թէ հայ գրականութեան և թէ առհասարակ ժողովրդի համար։ Հայհոյական բառեր գործ ածելու մէջ չէր սիրում որ և է չափ, սահման ճանաչել։ Նազարեանցը նրա համար և՛ ապուշ էր, և՛ տգէտ, և՛ դաւաճան, և՛ Յուդա կամ Վասակ։

Բայց այդ բոլորը դեռ ոչինչ, համեմատած Չերքէզեանի միւս յատկութիւնների հետ։ «Երանի էր մեզ,—բացականչում է Կոմս Էմմանուէլը—եթէ ունենայինք խելացի հակառակորդք. բայց, որպէս Հայ, զրկված ենք, ներկայումս, այդ պարծանքից»։ Եւ դա ճիշտ է։ Չերքէզեանը, որի հասցէին են ուղղած այս խօսքերը, մի վատ, ստոր հակառակորդ էր։ Նրա անբարեխղճութիւնը այն աստիճանին էր հասնում, որ ոչինչ հրատարակելով Նազարեանցին, նա իսկական գիտնականների դասն էր մտցնում Առաքել Արարատեանցին, Մանդինեանց քահանային։ Եւ երբ այդպիսի բան կարդալիս դուք մտաբերում էք որ գրողը մի համալսարանական մարդ է, այն ժամանակ աւելի խիստ էք զգում թէ ինչեր կարող է անել կրքոտ թշնամութիւնը, միացած սանձարձակ անբարեխղճութեան հետ։

Նա յաճախ թողնում էր բուն հարցը, ծաղրում էր Նազարեանցի ստացած գիտութիւնը, դօկտորական աստիճանը, նոյն իսկ նրա ընտանեկան հանգամանքներն էր հրապարակ քաշում։ Այսպէս, վիճելով կրօնի մասին, նա, իբրև Նազարեանցի օտարացման նշան, բերում էր այն փաստը, որ Նազարեանցի գիմնազիստ որդին եկեղեցում, պատարագի «Ողջոյնի» ժամանակ, չիմացաւ ողջոյն տալ իր հօրը…

Քննական իւրաքանչիւր ակնարկ Յովսէփ Ջէրքէզեանի համար նշանակում էր նախատինք, անպատւութիւն։ Նազարեանցը ասել էր թէ հայ երեխան գրաբարի անհասկանալի լինելու պատճառով չէ կարողանում բան սովորել,—Ջէրքէզեանը ասում էր թէ դրանով Նազարեանցը նախատում է հայ երեխաներին։ Հայ ուսանողների առաջին թատրոնական ներկայացման առիթով «Հիւսիսափայլի» մէջ տպված էր մի համակրական յօդուած, որի մէջ, սակայն, մի քանի անպատ խօսքեր էլ կային.—և Ջէրքէզեանը ասում էր թէ Նազարեանցը անպատւել է ուսանողներին։ Մանաւանդ սաստիկ կատաղում էր նա, երբ Նազարեանցը այդ իսկ կերպով «անպատւում էր» այն մարդկանց, որոնց նա իսկական գիտականի տիտղոս էր յատկացնում, այն է՝ հայ պահպանողականներին։



Յիշենք, վերջապէս, և մի ուրիշ սուր և անազնիւ գիծ։ Ջէրքէզեանը, չը հաւատալով Նազարեանցի անկեղծութեանը, անշահասիրութեանը, մտնում էր նրա հոգու մէջ, դատաւոր էր հանդիսանում նրա զգացմունքների վրա և բարձրաձայն աղաղակում էր թէ Նազարեանցը լիւթերական է և ուզում է լիւթերականութիւն տարածել մեր մէջ։ Անբարեխիղճ, քմահաճ բացատրութիւն տալ հակառակորդի խօսքերին, նրան վնասելու համար հրէշաւոր մտքեր և անճոռնի յանցանքներ վերագրել նրան—ահա թէ ինչպէս էր Ջէրքէզեանը վիճում, ապացուցանում։ Մաքրութիւն, ազնւութիւն, օրինաւորութիւն չը կար նրա համար։ Որքան բարձր էր Նազարեանցը իր այս կատաղի հակառակորդից։ Նա շատ քիչ էր ուշադրութիւն դարձնում Ջէրքէզեանի վրա և դարձրած ժամանակն էլ խօսում էր ինչպէս վայել է ազնիւ, սեփական արժանաւորութիւնը ճանաչող մարդուն։

Ջէրքէզեանը, ճիշտ և ճիշտ ինչպէս մի Արարատեանց, պաշտպանում էր ազգային բոլոր աւանդութիւնները։ Նա ասում էր թէ սուտ է ասում Նազարեանցը որ հայոց լեզուն սանսկրիտի մի ճիւղն է. եւրոպացի գիտականներին, որոնք այդ գիւտն էին արել, նա էլ

ճանաչում էր, բայց պահանջում էր որ հաւատ ընծայվի Չամչեանին և Ինճիճեանին, որոնք հաստատել են թէ այդ լեզուն Ադամի լեզուն է։ Նազարեանցի այն խօսքերը թէ Հայկի պատմութիւնը առասպել է երևում, Չէրքէզեանը համարում էր ազգային դաւաճանութեան մեծ նշան։ Իսկ հայոց եկեղեցու վերաբերմամբ նա թոյլ չէր տալիս նոյն իսկ ամենաթեթև քննական ակնարկ։

Հասկանալի է թէ ինչ ազդեցութիւն թողած պիտի լինի նրա վրա «Հիւսիսափայլի» 10-րորդ ամսատետրակը։ Նա, իհարկէ, հրապարակ է նետվում, գրում է հերքում, լու-հայհոյում է Նազարեանցին։ Նա տեսնում է որ աղմուկ են բարձրացրել ամենքը։ Նոյն իսկ «Կռունկը» չը կարողացաւ պահվել իր բռնած դիրքում և Գ. Մուրադեանը (այժմ Մելքիսեդեկ արքեպիսկոպոս) մի մեծ յօդուած տպագրեց այնտեղ, որի մէջ պախարակում էր Նազարեանցին, ասում էր թէ հայոց եկեղեցին կարօտ չէ ոչինչ վերանորոգութեան, որ օտարադաւան հայերի համար հայութեան միակ նշանը իրանց մայրենի եկեղեցու գիրկը վերադառնալը կարող է լինել։

Այսքանը բաւական չէր Չէրքէզեանի համար, և նա դիմեց մի միջոցի, որ մի մեծ արատ էր ամեն մի օրինաւոր մարդու համար, ուր մնաց մի մարդու, որ համալսարանում էլ էր եղել։



1860 թուի դեկտեմբերի 26-ին նա մի խնդրագիր է ուղարկում Մատթէոս կաթողիկոսին, մի սուտ մատնութիւն, Նազարեանցի դէմ։ Այդ գրութեան մէջ նա յայտնում է թէ «Ստեփանոս ոմն Նազարեանց» իր գրքերի մէջ («Վարդապետարան Կրօնի» և «Հանդէս Նոր Հայախօսութեան») քարոզում է լիւթերականութիւն, իսկ «Հիւսիսափայլի» 10-րորդ տետրակում ուղղակի պարզում է իր միտքը, պահանջելով որ հայոց եկեղեցին մի ռէֆօրմ անէ արմատից դէպի վեր։ Դա նշանակում է թէ նա կամենում է բոլորովին փոփոխել մեր եկեղեցական արարողութիւնները, ծէսերը, մեր ամբողջ դաւանութիւնը։ Թէև այդ գրուածքի դէմ հերքումներ գրվեցան և գրողներից մէկն էլ ինքն է, Չէրքէզեանը, բայց մասնաւոր անձինքների խրատներն ու համոզումները չեն կարող վերացնել ամեն տեղ տարածվող ազգակործան մոլորութիւնները. հարկաւոր է որ մի բարձրագոյն իշխանութիւն իր պաշտպանութեան տակ առնէ մեր հաւատը։ Ուստի Չէրքէզեանը, իբրև հայոց եկեղեցու հարազատ զաւակ, խնդրում է «առնել ապաքէն զբարձրագոյն տնօրէնութիւն առ ի փութով ժողովել զա-

միայն օրինակս 10 համարին Հիւսիսափայլ օրագրի այսր 1860 ամի և զամենայն հատորս Վարդապետարանին Կրօնի վերոյիշեալ Ստեփաննոսի Նազարեանց և հրոյ ճարակ տուեալ զայնս՝ արգելուլ առ յապայն զտպագրութիւն Հիւսիսափայլ օրագրի և զորոյ և իցէ մատենի, յորում լինիցին բանք զհաւատոյ Հայաստանեայց մերս եկեղեցւոյ առանց նախագիտին տեսութեան և հրամանի սրբոյ Աթոռոյն Էջմիածնի և Լուսաւորչական սրբազան սինհոդոսին»։

Այս խօսքերը բացատրելու և լուսաբանելու կարիք չը կայ։ Հարցը միջնադարեան ֆանատիկոս Զէրքէզեանին չէ այնքան վերաբերվում, որքան Էջմիածնին։ Իր խաւար առաջարկութեամբ, որի ամենադարչելի կէտը ազատ մտքի համար հաւատաքննական խարոյկ պահանջելն էր, այդ մարդը թէ հայոց բարձր հոգևորականութեան և թէ մասնաւորապէս Մատթէոս կաթողիկոսի առջև դրված մի փորձաքար էր. իր վերաբերմունքով Էջմիածինը պիտի ցոյց տար թէ ճի՞շտ էր Նազարեանցը նկարագրում եկեղեցականութեան վիճակը թէ չափազանցնում էր, զրպարտում էր։ Եւ Էջմիածինը ցոյց տուեց որ միանգամայն արդարացի ու ճիշտ էին Նազարեանցի դառն խօսքերը։



Մատթէոս կաթողիկոսը անձամբ աւելի անհամբերող գտնվեց, քան սինօդի անդամները։ Ինչպէս երևում է, նա, նախքան Զէրքէզեանի գրութեան ստացվելը, կոնդակ էր ուղարկել Մօսկվա, գուցէ հէնց իրան, Նազարեանցին և այդ կոնդակի նիւթը նոյն չարաբախտ 10-բարդ ամսատետրակն էր։ Գոնէ այսպէս է ենթադրել տալիս Նազարեանցի մի նամակը *) Մատթէս կաթողիկոսին։ Մատթէոսը, ինչպէս երևում է, իր կոնդակում անուանել էր Նազարեանցին «պաշտպան անհարազատից մերումս առաքելական, ամենաբարեպաշտ եկեղեցւոյ»։ Եւ Նազարեանցը համարձակ կերպով բացատրում է կաթողիկոսին որ իր արածը հիմնված է իր դաւանանքների վրա։

Դա ժամանակի գիտութեան դաւանանքն է։ Գիտութիւնը, ասում է նա, չէ կոչված ոգէտներին հաճոյանալու և թէ անհատների, թէ բազմութեան անձնական ախտերը քաղցըր խօսքերով շողոքորթելու։ Նա պիտի ասէ ճշմարտութիւնը, ինչ էլ լինի դա։ Գիտութիւնը եղբայրատեաց չէ, այլ եղբայրասէր է և մարդասէր։ Քննադատութեամբ

*) «Լումայ» հանդէս, 1896, № 1։ Նամակը թուական չունի և այդ պատճառով նրա մասին կարելի է միայն ենթադրութիւններ անել։

հասարակաց վէրքերը մերկացնելը յատուկ է եւրոպական գրականութեան, և Նազարեանցը ցոյց է տալիս կաթողիկոսին և ռուսաց մամուլը, որ նոյն սկզբունքներին է հետեւում։ Ազգի թշնամիները գիտութեան մարդիկ չեն, այլ նրանք, որոնք չեն գալիս դէպի լոյսը, որ չը խայտառակվեն. այդ լուսավախներն են, որ զրպարտում են Նազարեանցին և նրա «Հիւսիսափայլը»։

Եկեղեցու վերաբերմամբ Նազարեանցը դարձեալ կրկնում է որ ինքը ճշմարիտ քրիստոնէական և առաքելական եկեղեցի ընդունում է այն եկեղեցին, որ ոչ միայն քարոզում է, այլ և իրապէս գործադրում է ընդհանուր քրիստոնէական եղբայրասիրութիւնը։ Գալով Կ. Պօլսի դէպքերին, Նազարեանցը ընդունում է որ իրան մասամբ կարող են սխալեցրած լինել այն աղբիւրները, որոնք տուել են նրան տեղեկութիւններ (այսինքն գերմանական լրագիրները)։ Բայց և այդպէս, չը պէտք է մոռանալ աւետարանական պատուէրը, որ հրամայում է սիրել թշնամիներին։ Այստեղ Նազարեանցը ուզում է ակնարկել որ եթէ մի բողոքական թշնամի լինի լուսաւորչական եկեղեցուն, այդ դեռ պատճառ չէ որ մենք էլ նրա թշնամին դառնանք և հալածենք նրան։



Այս տեսակ բացատրութիւններ լսողը Մատթէոս կաթողիկոսը չը պիտի լինէր, մանաւանդ երբ հարցը բողոքականների վերաբերմամբ լայն համբերողութիւն ցոյց տալու մասին էր։ Կաթողիկոսը 1840-ական թուականներին Թիւրքիայում մեծ հալածանքներ էր յարուցել բողոքականների դէմ. նա ատում էր այդ բողոքականներին և իր «Բարի Մարդ և Բարի Քրիստոնեայ» գրքում Լիւթերին և բոլոր բողոքականներին ոճրագործներ էր հռչակել։ Հալածանքները ոչինչ արդիւնք ցոյց չը տուին, ընդհակառակն տարածեցին բողոքականութիւնը։ Բայց այդ դառն փորձից Մատթէոսը չը խրատվեց։ Այդ իսկ ժամանակները բողոքականութիւնը բոյն էր դընում Շամախում. և կաթողիկոսը ուրիշ բան չէր գտնում դրա դէմ, բացի այն միջոցից, որ գործադրել էր Թիւրքիայում, իր պատրիարքութեան ժամանակ։ Կրօնական համբերողութիւն, եկեղեցական բարեկարգութիւն քարոզող Նազարեանցը թշնամի մարդ էր համարվում։ Հայ հոգեւորականութիւնը ընդունակութիւն չունէր հասկանալու երեւոյթի պարզ պատճառը. նա չէր տեսնում որ Շամախում աղէտ, արհեստաւոր դասակարգն էր բողոքականութեան ետևից գնում, որովհետև նա ծարաւ էր կենդանի խօսքի, հաս-

կանալի քարոզի, ուզում էր կարդալ և հասկանալ աւետարանը։ Իսկ հայ հոգևորականները չնորհք ու կարողութիւն չունէին այդ պահանջը լրացնելու։ Նրանք հարկաւոր էլ չէին համարում բողոքական քարոզիչների զէնքով գործելու, որպէս զի պահպանեն իրանց հօտի ամբողջութիւնը. Նրանք յոյսերը դրել էին իշխանական պատիժների, նզովքների վրա։ Եւ այն ժամանակ, երբ շամախեցի արհեստաւորը վազում էր լսելու բողոքական քարոզչին, Շամախու առաջնորդ Գէորգ եպիսկոպոսը մի մի անգամ էր բարեհաճում քարոզ խօսել վերացական, անհասկանալի բաների մասին։ Նա էր, որ գրեց Մատթէոսին թէ անհրաժեշտ է բանադրել բողոքականներին։

Կաթողիկոսը իսկոյն գործադրեց այդ՝ իրան լաւ յայտնի՝ միջոցը։ Եւ 1861 թուականին երկու խաւար գործեր կատարվեցան էջմիածնում։ Ապրիլի 25-ին Մատթէոսը կոնդակ գրեց, որով բողոքականութեան համակրող հայերը բանադրվում էին, արտաքսվում հայոց եկեղեցուց։ Այդ կոնդակը պատճառ էր դառնում որ Շամախում հաստատվի լութերական հայերի պաշտօնական եկեղեցի։ Այնուհետև այդ ուղղութեամբ մի քայլ էր մնում Զէրքէզեանի պահանջին բաւարարութիւն



տալու համար։ Եւ այդ քայլն էլ արվեց։ Մի քանի ամսից յետոյ, յուլիսի 8-ին, Սինօդը, կաթողիկոսի կոնդակի հիման վրա, դատապարտեց «Հիւսիսափայլը» վերջնական կորստի։

Ռուսահայերի մամուլի պատմութեան մէջ դա եզակի և անօրինակ մի դէպք է։ Ուստի արժէ ամբողջովին բերել այդ վճիռը, որ շամախեցիներին բանադրող կոնդակի արժանաւոր եղբայրն է։

Ահա այդ դօկումենտը *).

Հրաման Նորին Կայսերական Մեծութեան Ինքնակալին ամենայն Ռուսաց ի Լուսաւորչական Հայոց Սինօդէ սրբոյ էջմիածնի՝ հոգևոր կառավարութեան Հայոց Մոսկուայու։ Ըստ հրամանի Նորին Կայսերական Մեծութեան, ի Սինօդիս լուան նախ՝ զխնդրագիր Կօլլէժսքեյ Սեկրետար և ազնուական Յովսէփայ Զաքարեան Զէրքէզեանց ի բարձրագոյն անուն ի 26 դեկտեմբեր 1860 ամի, յորում յառաջ բերեալ զգրուածս պարոն Նազարեանցի ի 10-րորդ ամսատետրակի Հիւսիսափայլ օրագրի նորա յէջսն 312—313 հակառակ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ, զբանս նորա արտագրեալս ի Վարդապետարան Կրօնի ա-

*) «Արշալոյս Արարատեան», 1862, թիւ 667։

նուանեալ գրքի ընդդէմ եօթն խորհրդոյ Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ և այլն, խնդրէ արգելուլ տալ զտպագրութիւն Հիւսիսափայլ անուանեալ օրագրի Նորա։ Երկրորդ՝ զկոնդակ Վեհափառ Կաթողիկոսի ամենայն հայոց ի 29 Յունվարի ներկայ ամի թիւ 27, որով յառաջադրէ իսպառ խափանել զտպագրութիւն Հիւսիսափայլ վնասաբեր օրագրի, որ ի լոյս ընծայի ի գայթակղութիւն ազգիս լրութեան։ Եւ երրորդ՝ զյայտարարութիւն վերագննչաց գրուածոց Ստեփանոսի Նազարեանց Դանիէլ, Թադէոս և Եսայի վարդապետաց ի 28 Ապրիլի տարւոյս, յորում գրեն թէ՝ «համաձայն բանաւոր հրամանի Տեարց ատենակալաց Դորին վերագննեալ զզանազան գրուածս պարոն Ստեփանոսի Նազարեանց, որչափ ի ձեռս մեր անցին, ի Վարդապետարանի Կրօնի և յամսատետրակս Հիւսիսափայլի գտաք զբազում յօդուածս գրուածոց հակառակ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց առաքելական ամենամաքուր սուրբ եկեղեցւոյս և եօթն խորհրդոց նորա, և Առաքելական և Հայրապետական կանոնադրութեանց, զորս ցուցակագրեալ առանձին առանձին հատուածովք՝ ընդ այսմ խոնարհաբար շնորհ ունիմք մատուցանել ի պարտուպատշաճ տնօրէնութիւն Դորին»։ Հրամայեցին. նախ՝ զվերոգրեալ և յառաջ բերեալ թէ ի խնդրագրի պարոն Ջէրբէզեանցի, և թէ յառաջի



արարեալ քաղուածի վերագննչաց Վարդապետարան Կրօնի անուանեալ գրոց Նազարեանցի բանս գտեալ բաւական յապացոյց գրուածոց նորա հակառակ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ և եօթն խորհրդոց նորա և առաքելական և հայրապետական կանոնադրութեանց, և համաձայն կոնդակի Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց, առ ի առաջս ունելոյ վնասաբեր գրուածոց Նազարեանցի ի գայթակղութիւն պարզամտաց ազգիս՝ խնդրել զմիջնորդութիւն տեառն փոխարքային Կովկասու, զի ընդ ձեռն տեառն Նախարարին ներքին գործոց խստիւ արգելցէ նմա այժմէն իսկ զտպագրութիւն Հիւսիսափայլ օրագրի և զորոյ և իցէ մատենի՝ յորում լինիցին բանք հաւատոյ Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ առանց նախագննին տեսութեան և հրամանի Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց և Սինոդիս Էջմիածնի, և զհետևանացն խնդրել զծանօթութիւն։ Երկրորդ՝ ընդհանրօրէն հրամանագրութեամբք պատուիրել վիճակաւորաց Հայոց (ի թիւս որոց և հոգևոր կառավարութեանդ Հայոց Մոսկուայու) զի ընդ ձեռն տեղական քաղաքական իշխանութեան փութով ժողովեալ զամենայն օրինակս 10-երորդ հատորոյ Հիւսիսափայլ օրագրի 1860 ամի և զամենայն հատորս Վարդապետարանի Կրօնի վերոյիշեալ Նազարեանցի, առաքել

ի յետագայ տնօրէնութիւն Սինօդիս։ Եւ երրորդ՝ որովհետև տպագրութիւն Վարդապետարան Կրօնի անուանեալ մատենին Նազարեանցի եղեալ է թոյլտուութեամբ և հրամանաւ նախկին վիճակաւորի Հայոց Բեսսարաբիոյ (այժմեան թեմակալ առաջնորդի Հայոց Աստրախանայ) Մատթէոս արքեպիսկոպոսի, յորում որպէս տեսանի ի մակագրութենէ նորա՝ չէ գտեալ որպէս թէ բանս ինչ ընդդէմ հաւատոյ կամ փառաց և այլն, ուստի և յաղագս այս օրինակ անուշադրութեան նորա առնել նմա զսաստիկ յանդիմանութիւն, սաստկապէս պատուիրելով որպէս նմա, նոյնպէս և միւս վիճակաւորաց Հայոց՝ այսուհետև առանց կանխագոյնին վերաքննութեան և հրամանի Վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց և Սինօդիս չվստահանալ թոյլատրել զտպագրութիւն որոյ և իցէ մատենի՝ յորում գտանիցին բանք զհաւատոց Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ։ Եւ չորրորդ՝ զվերոյ գրեալ տնօրէնութեանց Սինօդիս յայտնել և խնդրագործ պարոն Ջերքէզեանցին ընդ ձեռն հոգևոր կառավարութեանդ Հայոց Մոսկուայու։

Ի սուրբ Էջմիածին, 8 Յուլիսի 1861։

Անդամ Սինօդի, Գէորգ արքեպիսկոպոս Յովբեանց.

Պաշտօնակատար ատենադպրի, Ս. Մուշեղեանց.



Բայց Էջմիածինը մոռացել էր իր իրաւասութեան սահմանները, և Նազարեանցը իմացաւ ինչպէս պաշտպանել իր իրաւունքները։ Տեղական իշխանութիւնը առաջարկում է նրան հաղորդել իր բաժանորդների ցուցակը, բայց ստանում է այսպիսի պատասխան. «Հիւսիսափայլ ամսագիրը, հրատարակվելով ռուսաց գրաքննական կանոնադրութեան ընդհանուր օրէնքների հիման վրա, գտնվում է Ս. Պետերբուրգի գրաքննական Ատեանի հսկողութեան տակ, հետևաբար չէ ենթարկվում որ և է հսկողութեան հայոց հոգևորականութեան կողմից։ Այդ պատճառով ես պարտական չեմ տեղեկութիւն տալ իմ բաժանորդների մասին»։

Միևնոյն ժամանակ Նազարեանցը դիմում է Պետերբուրգի Ցենզուրական Կօմիտեին և խնդրում է նրա պաշտպանութիւնը։ Այստեղ նա ասում է որ Յովսէփ Ջէրքէզեանը իր անձնական ոխերիմ թշնամին է և Սինօդի կարգադրութիւնը հիմնված է մի այդ տեսակ մարդու գրութեան վրա։ Եւ Սինօդի վարմունքը միանգամայն անհասկանալի չէ. «Մի այսպիսի ընդդիմադրութիւն ասիական յետադէմների կողմից, որոնց պատկանում է և հայ հոգևորականութիւնը, վաղ թէ ուշ

երևան պիտի գար»։ Եւ ահա այդ ընդդիմադրութեան պատկերը.

«Որքան էլ—շարունակում է Նազարեանցը—բնական է այն կռիւը, որ լինում է հին ու նոր կարգերի մէջ, խաւարի ու լուսոյ մէջ, ստրկական անշարժութեան մէջ յամառութեամբ գեգերող և այն սակաւաթիւ հասարակութեան մէջ, որ պայծառ կերպով հասկանում է ժողովրդի կեանքի ժամանակակից խնդիրները և անհրաժեշտութիւնը Ռուսաստանի իսկական մտաւոր շարժման շաւղի վերայ կանգնելու, սակայն, ցաւալի է ասել, հայոց բարձր հոգևորականութիւնը, որին քանիցս ոգևորուած կերպով հրաւիրել է «Հիւսիսափայլը» պարագլուխ հանդիսանալ հայերի ժամանակակից լուսաւորութեան գործում, միշտ խուլ ու մունջ է մնացել։ Այդ իսկ հոգևորականութիւնը միշտ հալածել է թէ ակներև և թէ ծածուկ դիմադրութիւններով «Հիւսիսափայլ» ամսագիրը, իսկ այժմ—sit venia dicto—յանձն է առնում կատարել ամօթալի դեր՝ կոյր գործիք դառնալ մի մասնաւոր մարդու՝ պ. Զէրքէզեանի ձեռքում, մի մարդու, որ իմ ոխերիմ թշնամին է, որ բարեմիտ հայերի կողմից դատապարտուած է արհամարհանքի»։

Ի պատիւ հայ հասարակութեան պէտք է ասել որ էջմիածնի այդ ամօթալի քայլը դժ-



գոհութիւն պատճառեց գոնէ նրա մի փոքրիկ մասին, այն է՝ Պետերբուրգի հայերին, որոնք մի բողոքով դիմեցին Մատթէոս կաթողիկոսին, ցոյց տալով նրան թէ որքան վատ բան է ազատ խօսքը խեղդելը։ Բողոքողները մի շարք սիրուն խրատներ էին տալիս կաթողիկոսին։

«Սրբազնասուրբ Հայր,—ասում էին նրանք—օրագրական հատուածը դատվում է օրագրերով, գիրքը, որ օրէնքի թոյլտուութեամբ հրատարակուել է, դատվում է քննութեամբ (կրիտիկայով). սոցա ընթերցողքը վճռում են թէ որոյ կարծիքն է իրաւացի և ընդունելի։ Այս է բնական կարգը տպագրական աշխարհի մէջ, որ և ընդունած են բոլոր լուսաւորեալ ազգերը»։ Ուստի բողոքողները խնդրում են Մատթէոսին յետ կանգնել այդ ուղղութիւնից։ «Հայաստանեայց եկեղեցին անխախտ է մնացել ո՛չ անաթեմայի և նզովքի քուլաներով, ո՛չ հրով և սրով և ո՛չ արգելական կարգադրութիւններով. Նա պահպանուել է միայն ազատութիւնով և խրատով. Նա, իբրև կրօն Քրիստոսի, զերծ է այն հնարներից, որք անարժան են ճշմարտութեան»։

Մատթէոս կաթողիկոսին չաջողվեց դադարեցնել «Հիւսիսափայլը»։ «Կաթողիկոսը—գրում էր Նազարեանցը իր նամակներից մէ-

կում—ոչինչ իշխանութիւն չունի ոչ կապելու և ոչ արձակելու «Հիւսիսափայլ» օրագիրը, թէպէտ նա շատ է ցանկացել դորան և ամենայն կարելի հնարք գործ է դրել խափանելու, բայց իզուր»։ Դրա փոխարէն նա ջանքեր էր գործ դնում որ «Հիւսիսափայլը» չը տարածվի ժողովրդի մէջ։ Իսկ թէ որքան աջողութիւն ունեցաւ այդ բանի մէջ,—յետոյ կը տեսնենք։ Յամենայն դէպս, փաստ է որ 10-բորդ ամսատետրակը «Հիւսիսափայլի» կեանքում մեծ դեր խաղաց։ Մենք առ այժմ թողնենք նրա յարուցած աղմուկը, կղերական հալածանքները և տեսնենք թէ ինչպէս էր «Հիւսիսափայլը» հասկանում իր առաջարկած եկեղեցական րէֆորմը։

Միանգամայն անտես անելով Ջէրքէզեանի հայհոյանքները, «Հիւսիսափայլը» 1861 թւականին մի երկար փաստալից յօդուածով ջարդեց «Կռունկի» առարկութիւնները *)։ Մենք երկար կանգ չենք առնի այդ պատասխանի վրա։ Յիշենք միայն որ հակառակորդներին ցնցում պատճառողը այն էր, որ հայոց

*) «Հիւսիսափայլում» գրողը մի ոմն Յակոբ Ալիշանեան էր, Թիֆլիսից. բայց ենթադրում էին որ այդ անունը մտացածին է և հեղինակը պատկանում է իրան, Նազարեանցին։ Եւ սա միանգամայն ճիշտ է երևում մեզ։



եկեղեցու կենդանութիւնը անուանված էր հնացած եւ մաշված։ Այս երկու բառերը, որոնց հետեւում էր րէֆորմ բառը (րէֆորմ ոտքից մինչև գլուխ), համարեա ամենքը հասկացել էին այնպէս թէ Նազարեանցը հայոց եկեղեցու վերաբերմամբ էլ ընդունում է նոյն դրութիւնը, որ գոյութիւն ունէր կաթոլիկ եկեղեցու մէջ Լիւթերի ժամանակ և նրա պահանջն էլ հէնց րէֆորմացիան էր։ Այսպէս հասկացել էր և «Կռունկի» աշխատակիցը։ Սակայն սարսափահար պահպանողականները չէին նկատում որ Նազարեանցը հէնց տեղն ու տեղը բացատրել էր «րէֆորմի» միտքը, աւելացնելով որ այդ րէֆորմը գլուխ կը գայ ժողովրդի և հոգևորների դաստիարակութեամբ և կրթութեամբ։ Այժմ, յիշեցնելով այդ մոռացված խօսքերը, «Հիւսիսափայլը» նորից կրկնում էր որ իր պահանջած րէֆորմը ուրիշ մի բան չէ, եթէ ոչ «ժողովրդի և հոգևորների դաստիարակութիւնը և կրթութիւնը, ինչպէս բարձրաձայն պահանջում են մեր լուսաւոր օրերի պիտոյքը· այս է ահա նորա խնդրած րէֆորմը ոտքից մինչև գլուխ (ժողովուրդ և հոգևորներ)»։

Գալով «հնացած և մաշված» խօսքերին, «Հիւսիսափայլը» նմանեցնում է քրիստոնէութիւնը մի կենդանի ծառի և ասում է.

«Եթէ այս կենդանի ծառը աճում չէ, որովհետեւ նորա ջուր տուողը չկայ, եթէ այդ անսպառելի ճոխութիւնը թաղած է հողի տակ, մշակվում չէ, որ զարդարէ մի ազգի կեանք աստուածահաճոյ վաստակներով, եթէ մի ազգ ունի աւետարան, բայց չը գիտէ նորա բովանդակութիւնը, որովհետեւ այդ ազգի մէջ չկայ քրիստոնէական դաստիարակութիւն, ուսումն և գիտութիւն—ահա դորան է ասում Նազարեանցը հնացած և մաշուած կենդանութիւն»:

Պարզ է և հասկանալի: Ուրեմն Նազարեանցը մի նոր բան չէր ասում, այլ կրկնում էր այն, ինչ ասել էր իր գրական գործունէութեան սկզբից: Նոյն ծրագիրն էր, բայց ուրիշ ձեւի մէջ դրված և հասարակական խոշոր մի երեւոյթի առիթով արտայայտված.—ահա ինչու էր նա այդքան սաստիկ աղմուկ հանել: «Հիւսիսափայլի» այդ յօդուածում միանգամայն պարզ չէ արտայայտված պահանջի էութիւնը: Ուստի, ոչինչ թիւրիմացութիւն չը թողնելու համար, դիմենք Նալբանդեանցին, որ շատ գեղեցիկ կերպով բացատրել է Նազարեանցի րէֆօրմի նշանակութիւնը իր «Երկու Տող» բրօշիւրի մէջ *):

*) Պարիզ, 1861, եր. 23:



Ահա ինչ էր գրում նա.

«Իրաւունք չունէր արդեօք «Հիւսիսափայլը» Հայոց եկեղեցու ոտքից մինչեւ գլուխ «րէֆօրմը» պահանջելու:

«Այո, մի տեսակ մարդիկ, կարծելով թէ «Հիւսիսափայլի» խնդրած վերանորոգութիւնը վերաբերվում է դաւանաբանութեան, թեւ առին ու թռան, ո՛հ, ո՛հ, «Հիւսիսափայլը» բողոքականութիւն է խընդրում գոչելով:

«Հիւսիսափայլը» կրօնական օրագիր չէ և դաւանաբանութեան հետ բնաւ վերաբերութիւն չունի: Նորան հերիք է, և իւր պարտքը լի կշռով կատարած պիտի համարի եթէ կարողանայ երկրայինը միայն քարոզել, աստղերից վեր չկայ «Հիւսիսափայլ»: Ուր թողունք որ «Հիւսիսափայլը» ասած էր թէ հարկաւոր է, որ այս րէֆօրմը կատարվի ինքնուրոյնաբար, հեռի մնալով պապական և բողոքական եկեղեցիներից:

... «Հիւսիսափայլի» խնդրած րէֆօրմը վերաբերվում էր եկեղեցական կառավարչութեան, րէֆօրմ, որով պիտի սանձահարվէին ոչ միայն Պօղոսը և Նիկողոսը, որոնց մասին «Հիւսիսափայլը» բողոքած է ժամանակ առ ժամանակ, այլեւ շատերը... այլեւ Երուսաղէմի միաբանութիւնը:

... «Այո, րէֆօրմ խնդրում ենք այն սկզբունքների մէջ, որոնցից կախված են հոգեւոր մարդերի որ և է պաշտօն ստանալը:

«Րէֆօրմ պահանջում ենք եկեղեցու տնտեսական կառավարութեան մէջ, որպէս զի այսուհետև զէթ եկեղեցական գանձերը չյափշտակվին, չգողացվին և եկեղեցական ոսկի և արծաթի սպասքը հրէայ ոսկերիչների քուրաների մէջ չհալվին...

«Րէֆօրմ պահանջում ենք հոգևոր իշխանների և առհասարակ եկեղեցականների դէպի ազգը ունեցած յարաբերութեան մէջ։ Պարտական են նոքա ուղղել իւրեանց ընթացքը. մինչև այժմ, վարձկան պորտաբոյծ և ոչ հովիւ հօտաբոյծ, մինչև այժմ նոցա համար բողոքել է մարգարէն. «Ով հովիւք, որք զանձինս արածէք և ոչ զխաշինս»։

«Րէֆօրմ պահանջում ենք եկեղեցականների կրթութեան և դաստիարակութեան մէջ։ Քահանայ ունինք, որ կարդալ չգիտէ. քահանայ ունինք, որ հայերէն չէ կարող խօսել։

«Րէֆօրմ պահանջում ենք եկեղեցականների ձեռնադրութեան պայմանների մէջ, մինչև այժմ «Առ մեզ անպէտ առ ամենայն կացութիւն մարդ, պիտանացու դատի առ հոգևորականութիւն», մինչև այժմ սիմոնականութիւնը վերջին տեղը չունի...

«Րէֆօրմ պահանջում ենք առ հասարակ եկեղեցական կառավարութեան մէջ, որ խառն ի խուռն և անկարգութեամբ յառաջանալով, մեծ մասով պատճառ է եղել ազգի դարաւոր թշուառութեան»։



Ահա ինչպիսի կենսական, կարևոր հարցեր էին տեսնում իրանց առաջ հայ ազգի առաջադիմութեան և ինքնաճանաչութեան պիօներները։ Եւ այդ պահանջները այսօր էլ նոյնքան անհասկանալի են մնում մեր հոգևորականութեան համար, նոյնքան մոռացվում և հալածվում են, որքան քառասուն տարի սրանից առաջ...

Ամսագրի գլուխը եկած այս փորձանքների մասին Նազարեանցը չը կամեցաւ կամ, աւելի ճիշտը, չը կարողացաւ մանրամասն հաշիւ տալ հասարակութեան։ Սակայն 1861-ի հոկտեմբերին բաց անելով եկող տարվայ բաժանորդագրութիւնը, նա խօսում էր այնպիսի ակնարկներով, որ ընթերցողը պիտի ենթադրէր թէ մի բան պատահել է։

Այստեղ նա յիշեցնում էր իր թշնամիներին որ մեր օրերում «սրով և բրով յարձակուիլ ճշմարտութեան վերայ զուր և անօգուտ ջանք է»։ Եթէ հայերը չունեն սեփական օրէնքներ, թող գոնէ այն հասկանան, որ նրանք հպատակ են մի պետութեան, ուր դատապարտվողը դատվում է «քննութեամբ և վերահասութեամբ և ոչ թէ այն ասիական օրէնքով, որ իսկոյն հրամայում է. «Զարկեցէք գլխին»։ Նազարեանցը սիրով ընդունում է որ իր անձը և գրական գործունէութիւնը

կարող են դուր չը գալ այս կամ այն հային, ինչպէս իրան էլ դուր չէ գալիս այս կամ այն հայը։ Բայց անձնական առնչութիւնը գործիք դարձնել և իր ազգակից եղբօրը մատնել մի «այլազգի տէրութեան մեծաւորներին»,—դա անբարոյական քայլ է։

«Հիւսիսափայլի» թշնամիքը — շարունակում է նա—կարող են այսօր ինչպէս միանգամ Հրէից անմիտ ամբոխը ձայն տալ, «Խաչ հան զդա, խաչ հան զդա». բայց թող չը մոռանան դոքա, որ այս մեր 19 դարու ռուսական առենի դատաւորը չէ թուլամիտ պոնդացի Պիղատոսը, այլ քաջամիտ, արդարասէր, բանագէտ Աղէքսանդր Նիկոլայեվիչը։ Եւ այսպիսի դատաւոր ունենալով իւր վերայ Հրատարակիչը կարող է իւր մաքուր խղճի բարձը գլխի տակ դրած, հանգստանալ խաղաղութեամբ և ձայն տալ Հայերին, իւր ամենասիրելի բարեմիտ եղբարցը, թէ «Հիւսիսափայլ» օրագիրը աւարտելով իւր չորեքամեայ ընթացքի շրջանը, մի քանի բոպէ շունչ կառնու, կը ժողովէ իւր զօրութիւնքը, որ գալոց 1862 տարու շրջանը սկսանէ դարձեալ»։

Եւ նա այնքան թեւաւորված է իր աջողութեամբ, որ պահանջներ է անում հասարակութիւնից։ Նորից նա յիշեցնում է որ



ամսագրի ամբողջ ծանրութիւնը մի մարդու ուսերի վրա է ընկած։ Պէտք է թեթեւացնել այդ մարդու աշխատութիւնը և ոչ թէ «տրորելով աղացելով» անպէտք դարձնել նրան։ Այդ մենակ մարդը մտաւոր աշխատանքի մարդ է. հասարակութեան օգուտն է կարողութիւն տալ նրան շարունակելու գործունէութիւնը, աւելի պտղաբեր դարձնել նրան և ոչ թէ մի կատարեալ մեքենայ։ Հարկաւոր է աշխատանքի բաժանում. հարկաւոր են աշխատակիցներ, որոնք յանձն առնէին որոշ վարձատրութեամբ (գոնէ 18 րուբլի թարգմանութեան և 25—30 րուբլի ինքնուրոյն աշխատութեան *) համար գրել յօդուածներ։ Հարկաւոր են թղթակիցներ, որոնք նոյնպէս պիտի վարձատրութիւն ստանան։ Նազարեանցը ցաւելով է խոստովանում որ ամսագրի բաժինները մոռացված են, չը կան. ցաւում է մանաւանդ կրիտիկական բաժնի բացակայութեան համար։ Բայց ինչ անել. մի հատ մարդը չէ կարող բոլորը կատարել։ Հար-

*) Թէ որքան է մեր գրականութիւնը առաջ գնացել Նազարեանցի ժամանակից, կարելի է դատել հէնց նրանից, որ մեր օրերում էլ վարձատրութեան չափը, եթէ միայն տրվում է վարձատրութիւն, այդ քանակութիւնից քիչ է և ոչ թէ շատ։

կաւոր է աջակցութիւն։ Եւ Նազարեանցը դարձեալ 500 բաժանորդ է խնդրում։

Աւելորդ է բացատրել թէ որքան արդարացի և համեստ էին արդիւնաւոր խմբագրի պահանջները։ Կան բաներ, որոնք ինքն ըստ ինքեան հասկանալի են։ Բայց մեր ողբալի իրականութիւնը մի դառն ծաղր էր պատրաստում անհաւասար պայքարից յաղթանակով դուրս եկած և այդ յաղթանակով ոգևորված գրական մշակի համար։ 1862 թըւականին սկսվեց «Հիւսիսափայլի» հոգեվարքը. նա պիտի մեռնէր միջոցների պակասութիւնից։

Եւ սակայն որպիսի ինքնավստահութեամբ էր Նազարեանցը, դեռ չը տեսած այդ օրհասական տարին, գրում. «Հիւսիսափայլը յառաջ կը տարուի և այսուհետև, նա յաղթութեամբ ոտք կը կոխէ 1862 թուականի մէջ, ինչքան ևս լաց և ողբ առնէին նորա թըշնամիքը, կծելով իւրեանց կուրծքը։ Աստուած այդպէս է պատժում չարախնդացներին, այրելով և տանջելով դոցա սիրտերը իւրեանց յատուկ նախանձու և ատելութեան դժոխային կրակի մէջ»։

Այդ չարախնդացները կրօնամոլութեան հերոսներն էին։ Դրանց մի բարբարոսական արարքն էլ մերկացնելու առիթ ունեցաւ



«Հիւսիսափայլը» նոյն 1861-ի վերջին համարում։ Բժիշկ Դաւիթ Ռոստոմեանը (Բագուի Հայոց Մարդասիրական ընկերութեան հիմնադիրը) նկարագրում է այն դէպքը, որ տեղի էր ունեցել Շամախում օգոստոսի վերջերին և որ Կ. Պօլսի դէպքի կրկնութիւնն էր։

Մեռնում է երկու կամ երեք տարեկան մի հայ երեխայ, որի հայրը բողոքական էր համարվում։ Քահանան հրաժարվում է թաղել երեխային, հիմնվելով Մատթէոս կաթողիկոսի բանադրական կոնդակի վրա։ Շամախու առաջնորդ Գէորգ արքեպիսկոպոսը, նա, որի խորհրդով էր կաթողիկոսը եկեղեցուց հեռացրել աւետարան կարդացող շամախեցիներին, այդ միջոցին գտնվում էր Սաղիանի վանքում։ Բժիշկ Ռոստոմեանը նամակ է գըրում նրան, յայտնում է որ երեխայի հայրը շատ լաւ լուսաւորչական հայ է, ուստի պէտք է քահանայ նշանակել թաղման կարգը կատարելու։ Եթէ այդ հայրը նոյն իսկ լիւթերական էլ լինի, շարունակում է բժիշկը, բայց կայ երեխայի մայրը, որ Լիւթերի անունն անգամ չէ լսել, դառն արտասուքով լուանում է սրբազանի ոտները, խնդրելով թոյլտուութիւն որ իր միակ որդին թաղվի հայրենի կարգով։ Եւ վերջապէս, ծնողները թող մի կողմ մնան. ինչով է մեղաւոր ինքը, հան-

գուցեալը. նա մի փոքրիկ երեխայ է, մկրտ-
ված է հայոց եկեղեցում և չէ կարող պա-
տասխանատու լինել իր ծնողների յան-
ցանքների համար և պատժվել նրանց փո-
խարէն։

Արքեպիսկոպոսը պատասխանում է որ
ինքը ի սէր Ռոստոմեանի միայն թոյլ է տա-
լիս թաղել, այն պայմանով, որ երեխայի
հայրը գրաւոր խոստում տայ թէ չի շարու-
նակի իր աղանդաւորութիւնը։ Միևնոյն ժա-
մանակ ազէտ և անմարդասէր կղերականը,
հիմնվելով հին հրէական իրաւունքի վրա,
ասում է թէ որդիները, այո, պատասխանա-
տու են իրանց ծնողների մեղքերի համար։

Սակայն երեխայի հայրը իր համար մեծ
անպատւութիւն է համարում մի այնպիսի
ստորագրութիւն տալը, ասելով թէ երբէք
լիւթերական չէ եղել և այդպիսի մի թուղթ
տալը կը նշանակէր յանձն առնել մի բան,
որ չէ եղել։ Երեխան մնում է անթաղ։ Այ-
նուհետև բժիշկ Ռոստոմեանը բերում է իր
ստացած նամակի մի սրտառուչ կտորը։ Ահա
ինչ էր գրում երեխայի թաղման մասնակ-
ցողներից մէկը.

«28-ին առաւօտ մեն կվարտալնիկ (թա-
ղապէտ աստիճանաւոր), երկու եասավուլ
ձի նստած ընկան առաջներս. լուռ քա-



ղաքիս միջով անցանք անմեղ ննջեցեալի
մարմինը հասցնել հողի։ Լալայով, Ներ-
սէսով, Կաճկաճով և ուրիշ շատ իշխան-
ներ, որոնք մի քանի տարի սորանից յա-
ռաջ Աստուծոյ պատիժ էին Շամախու ա-
ռաջնորդների համար և այժմուս հաշտ
լինելով մեր խեղճ առաջնորդի հետ, ե-
կեղեցու պաշտպանողներ են դարձել, գը-
նում են կնեազի (քաղաքապետի) մօտ,
շատ աղաչանք են գործում, և իրանք ի-
րանց կողմից բազարնիկ Գէորգ Ծատու-
րովին, երկու եասաւուլով ուղարկում են
չափով մեր ետևից, թէ հանգստարա-
նումն չթաղեն ննջեցեալն։—Բարի է, ա-
սացինք, որտեղ թաղենք, ցոյց տուէք։—
Թաղեցէք, ասացին, փոքր դուրս հանգստա-
րանից։ Երկրորդ անգամ փորեցինք հան-
դիսար, Տիրոջ անուամբ դրեցինք գերեզ-
ման, հողը ընդունեց, գոհութիւն Աս-
տուծոյ, յուսանք և ինքն ընդունի նորա
հոգին իրան խոստման պէս երկնքի ար-
քայութեան մէջ»։

Շամախու ֆանատիկոսութիւնը ճիշտ նոյ-
նըն էր, ինչ Կ. Պօլսում.—ամբոխի կոյր հալա-
ծասիրական բնազդը, հովանաւորված խա-
ւարամիտ կղերականութեան կողմից։ Եւ ի-
գուր այդ կղերականութեան կողմնակիցները
պաշտպանում էին պօլսեցիներին, մէջ բերե-
լով գերեզմանատների սեփականութեան
պատրուակը։ Շամախում այդպիսի հարց չը

կար․ և Շամախու աղաները դուրս շպրտեցին անմեղ երեխային գերեզմանատանից լոկ իբրև պղծութիւն...

Այս քստմնելի դէպքի առիթով Նազարեանցը առանձին յօդուած չը գրեց: Ի՞նչ էր պատճառը: Մեզ թւում է թէ նրան թոյլ չը տուին գրել: Շամախու մէջ յարուցած կրօնական հալածանքների առիթով նա մի խիստ և շատ արդարացի յօդուած էր գրել դեռ 1860 թւին, բայց այդ յօդուածը տպւեց նրա մահից տասը տարի յետոյ *):

«Ո՛հ—բացականչում էր Նազարեանցը այդ յօդուածում—ի՛նչ տեղ է հասել մեր թշւառութիւնը, հոգևորների վայրենաբարոյ տգիտութեամբ և անամօթութեամբ․ Քրիստոսը և Քրիստոսի աւետարանը այսօր հայհոյվում է մեր մէջ որպէս հերձւածողութիւն, հալածվում է որպէս վնասակար ուսում, պատժվում է որպէս խոտորումն ուղղափառ քրիստոնէական եկեղեցու»:

Դէպքերը իրանք-իրանք հեռացնում էին Նազարեանցին հայ հոգևորականութիւնից: «Հիւսիսափայլի» հայեացքների մէջ արմատական փոփոխութիւն է տեղի ունենում նը-

*) «Հանդէս Գրականական և Պատմական», 1889, № 2, եր. 276:



րանով, որ Նազարեանցը այլ ևս ոչինչ յոյս չունի այդ դասակարգի վրա: Մի ժամանակ նա հաւատացած էր, որ հոգևորականութիւնը կարող է առաջնորդ հանդիսանալ ժողովրդի կրթութեան և վերածնութեան գործում: Այժմ նա համոզվում էր որ պէտք է մի կողմ թողնել այդ յետամնաց, անշարժ, լոյսի թշնամի դասակարգը: Ժողովուրդը ինքը պիտի հասկանայ իր օգուտն ու փրկութեան միջոցները: Բայց ժողովուրդն էլ, ինչպէս այժմ կը տեսնենք, միայն յուսահատեցնել կարող էր իր առաջաւոր, ազնիւ գործիչներին:

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

## V

*Կեանքի փորձը։—Չը կայ զուկանութիւն առանց դըպրոցների։—Նազարեանցի մասնաւոր գիտնական եւ գործնական դպրոցը։—Հրաւէր նոյն ծնողներին, բայց անպտուղ։—Չերքեզեանի նոր ստորութիւնը։—Նազարեանցի բաց նամակը։—Երկու տիպեր մամուլի գործիչների մէջ։—Անբարեխղճութիւնը արհամարհուած։—Դիմում հասարակական դատաստանին։—Չը կայ այդ դատաստանը։—«Հիւսիսափայլի» դրութիւնը։—Պահանջներ հասարակութիւնից, դարձեալ ապարդիւն։—Բարեգործական ընկերութեան ծրագիր։—Հասարակական գործակցութեան գաղափարը։—«Հիւսիսափայլի» առաջարկութեան անմիջական հետեւանքները։—Ընկերութիւններ Բագւում եւ Նոր-Նախիջեւանում։*

«Երկար ու ձիգ տարիների կենսամաշ փորձով—գրում էր Նազարեանցը իր մի բարեկամին—վերահասու եղայ ես, որ մատենագրութիւնը մի ազգի մէջ կարող չէ յառաջադէմ լինել, ուր չկայ գրագիտութիւն, չկայ դպրոցական դաստիարակութիւն, չկայ ուսումնական կրթութիւն, մի խօսքով ուր ներ-

կայ սերունդը պատրաստած չէ մատենագրութեան համար»։

Առաջ դպրոցներ են հարկաւոր. պէտք է նախ և առաջ ընթերցող հասարակութիւն պատրաստել դպրոցներով։ Ի՞նչ միտք ունի գրականութիւնը այնտեղ, ուր գիրք կարդացող չը կայ։ Հեղինակը գրքեր տպագրում է իր տան ծակ ու ծուկերում դարսելու և մկների կերակուր դարձնելու համար։

Նախ դպրոցներ։ Եւ Նազարեանցը վճռում է մի օրինակ տալ թէ ինչ տեսակ դըպրոցների և կրթութեան է կարօտ հայ հասարակութիւնը. վճռում է մի մասնաւոր դըպրոց բաց անել Մոսկվայում։ Ստանալով հարկաւոր թոյլտուութիւնը, նա 1861 թ. «Հիւսիսափայլի» երրորդ համարում հրատարակում է այդ դպրոցի ծրագիրը և հրաւէր է կարդում որ աշակերտներ ուղարկեն։ Ինչպէս երևում է, նա վճռել էր թողնել Լազարեան ճեմարանը և առհասարակ փոխել իր գործունէութեան եղանակը։ «Ես կրակի մէջ նստած անց 10 տարի այրուեցայ, ոչնչացայ, —գրում էր նա նոյն նամակի մէջ.—Զէ, Հիւսիսափայլի հրատարակողը, ինչպէս գրեցի, պիտոյ է փոխէ իւր ասպարէզը։ Անպատճառ։ Հայոց ազգը մտածում է թէ ամեն բան կարելի է ամեն պայմանների մէջ։ Դուք, որ



փուշ ու տատասկ կը սերմանէք, վարդ ու մանուշակ բուսանել կարող չէ»։

Նազարեանցի ծրագրած դպրոցը մի մասնաւոր գիմնազիա էր, որ պիտի պատրաստէր աշակերտներ՝ համալսարան մտնելու համար։ Բայց Նազարեանցը միայն այդ չունէր ի նկատի։ Ամենքը չեն կարող և չեն ուզում բարձրագոյն կրթութիւն ստանալ. շատ են և այնպիսիները, որոնք կը կամենային հէնց այդտեղ, միջնակարգ դպրոցում, պատրաստուել կեանքի մէջ մտնելու համար։ Այդպիսիների համար Նազարեանցի դպրոցը ունէր յատուկ «գործնական բաժանմունք», ուր պիտի աւանդվէին, բացի ընդհանուր զարգացողական առարկաներից, վաճառականական գիտելիքներ։

Առանց բացատրութիւնների էլ հասկանալի է թէ Նազարեանցի այդ ձեռնարկութիւնը որքան նպատակայարմար էր։ Մի մասնաւոր գիմնազիա, որի առաջին նպատակն էր պատրաստել համալսարանական սերունդ, նա շատ ցանկալի էր համարում ամենից շատ այն պատճառով, որ նրա մէջ մեծ տեղ էր բռնում հայոց լեզուի ուսումնասիրութիւնը։ Ճիշտ է, դպրոցը զուտ հայկական չէր. այնտեղ կարող էին մտնել անխտիր բոլոր ազգերի երեխաները։ Բայց ծրագիրը ցոյց էր

տալիս որ դա առաւելապէս հայ երեխաների համար է։ Բացի կրօնից և հայերէն լեզուից, այդտեղ մի քանի առարկաներ էլ հայերէն լեզուով պիտի աւանդվէին։ Գործնական կեանքի կամ, աւելի ճիշտ ասած, վաճառականական պարապմունքների համար պատրաստվողներն էլ պիտի դուրս տանէին մի հիմնաւոր հայերէնագիտութիւն։ Հետաքրքրական է որ Նազարեանցը գործնական գիտելիքներից ընտրեց միայն վաճառագիտութիւնը։ Անշուշտ նա համոզված էր որ հայերին ամենից շատ այդ ճիւղն է հարկաւոր, քանի որ հայերը մեծ մասամբ վաճառականներ են։ Սխալ էր այդ եզրակացութիւնը. հային հարկաւոր էին և ուրիշ շատ գործնական գիտելիքներ, քանի որ այդ ժողովրդի ահագին մեծամասնութիւնը հողի վրա նըստած էր, մշակ, երկրագործ, արհեստաւոր էր։ Բայց այդ պահանջների վրա այն ժամանակները մեզանում ոչինչ ուշադրութիւն չէր դարձնվում. ժողովուրդ չը կար մեր գրականութեան մէջ, կային միայն վաճառականներ։ Եւ բացի դրանից, հօ չէ՞ր կարելի Նազարեանցից պահանջել մի բազմարուեստեան դպրոց։ Ո՞ւր էին միջոցները։ Հայ հասարակութիւնը հնարաւորութիւն չը տուեց որ նա նոյն իսկ իր այդ համեստ դիտաւորութիւնն իրագործէ։



Ծրագիրը ծրագիր էլ մնաց. և Նազարեանցին վիճակված չէր բաց անել իր դպրոցի դռները։ Ինչի՞ց էր դա։ Ամենից առաջ կար այն անյարմարութիւնը, որ դպրոցը շատ էր հեռու հայկական կենտրոններից։ Բայց դա, Նազարեանցի կարծիքով, արգելք չը պիտի դառնար։ Նոյն Մոսկվայում, զանազան մասնաւոր դպրոցներում, սովորում էին Կովկասի զանազան կողմերից բերած հայ երեխաներ։ «Այդտեղ—ասում է նա—ինչպէս տեսանում ենք և ինչպէս կարելի է սպասել, հայկական լեզուն հանդիպում է մի խորթ մօր հոգաբարձութեան. մեր մանկունքը կամ մոռանում են իւրեանց հայրենական լեզուն, կամ շատ շատ, մի չքաւոր երկրորդական կերպով ուսանում են նորան, այն լեզուն, որ մեր ազգային հարազատութեան գլխաւոր հիմքն է»։ Այս պատճառով նա կարծում է որ հայ ծնողները իրան կը յանձնեն իրանց երեխաներին։ Մի յաւելուածական յայտարարութիւն էլ տպելով, որի մէջ ասված էր թէ դպրոցը կունենայ նաև նախապատրաստական դասարան 8—10 տարեկան երեխաների համար, Նազարեանցը աւելացնում էր.

«Գուցէ ոմանց ծնողների սրտին մի փոքր ծանր կը լինէր իւրեանց զաւակները այնպիսի քնքուշ հասակում արձակել ծնո-

ղական տանից, բայց այդ ծնողներին կարող ենք յիշեցնել այսքան, որ նոցա զաւակները օտարութեան մէջ գտնելու են մի երկրորդ սիրող, սրտացաւութեամբ հոգաբարձու հայր, որ ինքը լինելով ընտանիքի և զաւակների տէր, կաշխատէր ամենայն կերպով քաղցրացնել նոցա կեանքը»։

Բայց ապարդիւն էին այդ յոյսերն ու ակնկալութիւնները։ Աշակերտներ չուղարկուեցան։ Ինքը, Նազարեանցը, այսպէս է բացատրում դրա պատճառը։ Ցանկութիւն ունեցող ծնողները սպասում էին որ դեռ դպրոցը բացվի, աշակերտներ ընդունէ, ապա և իրանք կուղարկեն իրանց որդիներին։ Ամենքը սպասողներ էին և ոչ ոք սկսող չեղաւ։

Բացի դրանից գործում էր և թշնամութիւնը։ Որքան կարելի է գտնել Նազարեանցի նամակներից, Մոսկվայի թշնամիները, որոնց մէջ և մի քահանայ, նամակներ էին գրում զանազան տեղեր, դպրոցի գործը խափանելու համար։ Այս ուղղութեամբ աշխատում էր, իհարկէ, և Յովսէփ Ջերբէզեանը։ Ծածուկ դարանները բաւական չէին և ահա առաջ եկաւ նաև ապականված տպագրական խօսքը՝ հրապարակով Նազարեանցի ձեռնարկութիւնը կասկածելի դարձնելու համար։ Այս



ապականութեան հերոսը դարձեալ նոյն Ջերբէզեանն էր։

1861 թուականի ամառը, ինչպէս տեսանք, Նազարեանցը աշխատում էր վերցնել այն վտանգը, որ սպառնում էր «Հիւսիսափայլին» Ջերբէզեանի մատնութեան պատճառով։ Ահա այդ իսկ ժամանակ «Ճռաքաղը» իր երկու տետրակներում տպեց Ջերբէզեանի մի յօդուածը, որի նիւթը նոյն 10-րորդ ամսատետրակն էր, նոյն «րէֆորմ» բառը։ Այս անգամ մի նոր անբարեխղճութիւն էլ աւելացաւ այն կեղտոտ զէնքերի վրա, որոնցով Ջերբէզեանը կռւում էր Նազարեանցի դէմ։ Այս անգամ նա բացարձակ կերպով յայտարարում էր թէ Նազարեանցը մի բողոքական միսիօնար է, որ գերմանացիների կողմից ուղարկված է հայերին կրօնափոխ անելու համար։ Եւ ահա այդ միսիօնարը խաբեբայութեան մի նոր միջոց է գտել։ «Հիւսիսափայլի» միջոցով չը կարողացաւ խաբել, այժմ դպրոցի միջոցով է ուզում նոյնն անել։

«Ո՞ր ուղղադատ և հարազատ Հայը—հարցնում էր Ջերբէզեանը—կը յանձնէ իւր որդոցը այնպիսի մին մարդու դաստիարակութեանը, որ գիշեր և ցերեկ պէտք է քարոզէ նոցա լուտերական կրօնի ուսումն՝ լուսաւորութեան անունով, պէտք է ցանէ րէֆոր-

մացիայի սերմերը մատաղ սրտերի մէջ»: Դա արդէն չափազանցութիւն էր նոյն իսկ Զէրքէզեանի պէս մարդկանց համար: Կարդալով այդ տողերը, Նազարեանցը, իհարկէ, աչքի առաջ ունէր և այն ստոր մատնութիւնը, որի հեղինակն էր Զէրքէզեանը, բայց որ յայտնի չէր հայ հասարակութեան: Երկու անբարեխիղճ արարքները, երկու մատնութիւնները հարկադրում են Նազարեանցին հրապարակ գալ իր ոխերիմ թշնամու դէմ: Եւ նա «Հիւսիսափայլի» սեպտեմբերի համարում տպում է մի բաց նամակ, ուղղած Զէրքէզեանին և հայ հասարակութեան:

Ազնիւ զայրոյթով բռնկված այդպիսի խիստ ու ազդու գրուածք Նազարեանցը շատ չունի: Նա, իհարկէ, չէ վիճում Զէրքէզեանի հետ: Հակառակորդներ կան, որոնց պատասխանել անկարելի է: Զէրքէզեանը չունէր բարոյական կանոններ, գրական գործի սրբութիւնը չէր ըմբռնում, նա ծռում, աղաւաղում էր հակառակորդի խօսքերը, արատաւորում էր իր գրիչը այնպիսի տխուր քաջագործութիւններով, որոնցից կարելի է միայն երես դարձնել: Եւ Նազարեանցը, յիշատակելով նրա այդ «անբարոյական ընթացքը», ասում է թէ նրա անծայր ու անվերջ աղճատումները չեն կարող մի րօպէ անգամ



խախտել իր ինքնայարգութեան հաւասարակշռութիւնը: Յարգելով ինքն իրան, ճանաչելով իր պատիւը, Նազարեանցն ասում էր որ աւելի հեշտ է դահիճի ձեռքով իրան կտոր կտոր անել տալ, քան անպատւութիւն յանձն առնել և արժանացնել նրան պատասխանի, քանի որ նա այդպէս անարժան է:

«Պարոն—շարունակում էր Նազարեանցը—չեմ կարող չխոստովանել հրապարակաւ, որ ես առ ի սրտէ արհամարհում եմ ձեզ, և այս պատճառով մինչև այսօր անարժան եմ համարել իմ գրչի տակ առնուլ այն մարդու անունը, որ իմ համար, կարծեմ և միւս շատերի համար, վաղուց բարոյապէս մեռած ու գետնի տակ խոր թաղած էր... Եթէ փողոցում հանդիպէի մի անառակ կնոջ կամ թէ մի արբեցած մարդու, և դոցա բերանից լսէի ամենայն տեսակ պիղծ յիշոցներ, ես սովոր եմ, միտ դնելով բանականութեան խրատին և իմ այրական պատուին, լռութեամբ անցանել դոցա մօտից և ոչ թէ վէճ բանալ, հաշիւ ու համար պահանջել մի թշուառականից, որ իւր բանական և բարոյական ազատութիւնը կորուսել էր վերայից, որ Աստուծոյ պատկերը իւր մէջ, անարգել էր գարշելի արատներով»:

Եւ այսպէս ահա մեր մամուլի հէնց առաջին օրերից որոշվում ու պարզ գծագրվում

էին երկու տիպեր։ Մէկը վերաբերվում է տպագրական խօսքին իբրև մի սրբութեան և գրողի պաշտօնը ընդունում է իբրև սրբագործութիւն, մինչդեռ միւսը սանձարձակ է, բարոյական պարտաւորութիւններ չէ ճանաչում և կեղտոտում է տպագրական խօսքը ստոր չահատակութիւններով։ Մէկը գրական ազնիւ, չիտակ, օրինաւոր գործիչն է, միւսը ներկայացնում է մամուլի մէջ այն փողոցը, ուր ամեն բոպէ կարելի է ենթարկվել Նազարեանցի յիշած անբարոյական կնոջ կամ հարբած մարդու՛ յիչոցներին։ Նազարեանցը առաջինն էր, որ մատով ցոյց տուեց փողոցային հերոսութիւնը գրականութեան մէջ. և առաջինն էր, որ խրատեց թէ պէտք է անտես անել այդ հերոսութիւնը, արհամարհել այդ հերոսներին, սեփական պատուի գրական սրբութեան տեսակէտից ստորութիւն համարել նրանց ուշադրութեան արժանացնելը։

Այսպէս դէն շպրտելով իր հակառակորդին, Նազարեանցը դիմում էր հասարակական դատաստանին, նրա վճիռն էր խնդրում։ Ջէրբէզեանը ասում էր թէ Նազարեանցը լիւթերական պիտի դարձնէ հայ երեխաներին, մինչդեռ Նազարեանցի յայտարարութեան մէջ պարզ ասված էր թէ դպրոցի



կրօնուսոյցը կը լինի Մօսկվայի հայոց եկեղեցու քահանաներից մէկը։ Դպրոցում պիտի ընդունվեն անխտիր ամեն ազգի երեխաներ, սակայն Ջէրբէզեանի ասելով, պէտք է ենթադրել որ Նազարեանցը լիւթերական պիտի դարձնէ և ռուս երեխաներին։ Դնենք թէ Նազարեանցը լիւթերական է։ Միթէ մի լիւթերականի դպրոցում սովորելը անպատճառ լիւթերական դառնալ է նշանակում։ Եթէ այդպէս է, պէտք է, ուրեմն, որ ռուսների և բողոքականների դպրոցներում սովորողները յունադաւան կամ բողոքական դառնային։ Դառնալով հայ երիտասարդներին, որոնք ծնված լինելով ռուսաց հողի վրա, դաստիարակվել են ռուսաց դպրոցներում և համալսարաններում,՝ռուս ուսուցիչների ձեռքով, Նազարեանցը հարցնում է. «Ո՞րը ձեզանից մինչև այսօր դարձած է յունադաւան, ասացէք»։

Անհեթեթութիւնը աւելի քան պարզ է։ Եւ դատաստան պահանջող Նազարեանցը դիմում է այսպիսի եռանդոտ խօսքերի.

«Եւ ինչ է Ջէրբէզեանցի ցանկութեան կամքը. ասացինք ահա, որ նա, ինչով միայն ձեռնհաս է, վնասէր, փչրէր և խորտակէր իւր ատելի թշնամին, Նազարեանցը. գաղանական կատաղութիւն, որի մէջ արդէն վերջանում է ամենայն բա-

նախանձութիւն և ամենայն բարոյականութիւն։ Գ. Չէրքէզեանցը մտածել է թէ Հայոց ախմար ամբոխին ամեն բան կարելի էր հաւատալի կացուցանել. Նազարեանցը օրագիր է տպում, «կամի լութերականութիւն տարածել». դպրոց է բաց անում Հայոց մանուկների դաստիարակութեան համար, «կամի լութերականութիւն տարածել». քարոզում է ազգին դաստիարակութիւն և կրթութիւն ուսուցարանի հոգով, «դարձեալ կամի լութերականութիւն տարածել». մի խօսքով, ինչ որ Նազարեանցը մտածում է, խօսում է և գործում է, բոլորը լութերականութիւն է։ Դատեցէք, Հայեր, Աստուած ձեզ բանականութիւն է տուել. ապա թէ ոչ, պարտական կը մնաք Աստուծոյ և մարդկութեան առաջև»։

Բայց դատող չը կար։ Գոյութիւն ունէր հասարակական կարծիք։ Եթէ նա մեռած չէր, բայց ոչնչով չէր էլ արտայայտվում։ Եւ վերջի վերջոյ ստացվում էր մի այսպիսի գրութիւն, որ նկարված է Նազարեանցի նամակներից մէկի մէջ.

«Մեր թշնամիքը ամենայն տեսակ ապականութիւն թափում են Նազարեանցի վերայ, բայց մեր բարեկամները մտածում են, թէ նոցա պիտոյ էր լուռ մնալ. և եթէ ձեզ պէս աշխարհական մարդիկ ջատագով ու պաշտպան դուրս գային մեզ,



այդ ևս հարկաւոր չէր ընդունել. ասել է՝ Նազարեանցին պիտոյ է հայհոյէ ամենայն մարդ, թշնամին իւր խօսելով և բարեկամը իւր լուռ մնալով համաձայնել նորան»։

Հասարակական կարծիքը իր դատաստանը պիտի անէր գոնէ նրանով, որ միջոց ու հնարաւորութիւն կը տար Նազարեանցին բաց անել իր դպրոցը։ Բայց այդտեղ էլ նա մի շատ վիրաւորական վերաբերմունք էր տեսնում։ Աշակերտներ չը կային, նշանակում էր որ Չէրքէզեանը և նրա նմանները հասան իրանց նպատակին։ Ասել է թէ Նազարեանցը մենակ մարդ էր։ Եւ եթէ մենք աչքի առաջ ունենանք այդ իսկապէս մենակ մարդու դրութիւնը 1861 թւականին, երբ մի կողմից ամսագիրը փակելու հարց էր յարուցված, իսկ միւս կողմից դպրոցական ձեռնարկութիւնն էր ոչնչանում անտարբերութեան պատճառով, հասկանալի կը լինի այն դառնութիւնը, որ երեւում է նրա այդ ժամանակվայ նամակներում։ Առանց այդ էլ Նազարեանցը սկզբից և եթ գանգատաւոր, բողոքողի կերպարանքով էր մտել հայկական կեանքի մէջ։ Այժմ հասարակութեան անտարբեր վերաբերմունքը ոչ միայն խոցոտում էր նրա սիրտը, այլ և թուլացնում էր

նրա հաւատը դէպի իր գործը և նա հետզհետէ գալիս էր այն եզրակացութեան, որ հայերի մէջ ոչինչ լաւ բան անել չէ կարելի:

Դառնացած սրտի թոյնն է նա թափում մի ատրախանցի հայի ուղղած իր նամակներում: Բարեկամական են այդ նամակները, նրանց ստացողը Նազարեանցի կողմնակիցներից մէկն էր. բայց խիստ յանդիմանութիւնները, թունալից գանգատները պատահում են իւրաքանչիւր տողում: Խօսքը դըպրոցի մասին է, խօսքը և այն դատաստանի մասին է, որ նա պահանջում էր հասարակութիւնից իր և Ջէրբէզեանի վերաբերմամբ:

«Չէ, ասում է նա, այժմ պիտի դուք բանաք, արձակէք և հնչեցնէք ձեր փակած բերանը, եթէ կամիք որ ձեր սերունդքը չը թքեն ձեր գերեզմանի վերայ, ինչպէս վատթար նախնիքի գերեզմանի վերայ: Այսուհետև դուք էք իմ դատաւորքը և ոչ թէ ձեր վատթար, անբարոյական ուսումնականքը»:

Բայց այդ դատաւորներից էլ գոհ լինելու պատճառ չունէր Նազարեանցը: Նա տեսնում էր համակրութիւն, բայց ոչ էական, շօշափելի օգնութիւն: Հայերը ուզում են— այսպէս է հասկանում Նազարեանցը—որ դպրոցի գործն էլ այնպէս տանվի, ինչպէս



«Հիւսիսափայլի» գործը, այսինքն առանց դըրամական աջակցութեան: Հայերը սպասում են որ Նազարեանցը 10—20 աշակերտ ունենայ, որ իրանք էլ ուղարկեն իրանց որդիներին:

«Այդ ինչ տեսակ մարդիկ էք դուք, պարոններ, Նազարեանցը ինչպէս ասէ, որ 10, 20 աշակերտ հաւաքէ իւր մօտ, եթէ ոչ մինը ձեզանից չը կամի նորան իւր զաւակը յանձնել: Խնդրեմ ասել, այդ ինչ հրաշք էք դուք պահանջում Նազարեանցից. մի՞թէ այդքան անմտութեամբ պատժել է ձեզ Աստուած, որ չէք կարող հասկանալ» թէ նախ պէտք է աշակերտներ տալ, որպէս զի դպրոցը բացվի: Հայերը այդ չեն մտածում, այլ այն որ Նազարեանցը մի քանի հազար ծախսէ, տուն վարձէ, դասատուներ գտնէ, առանց, սակայն, մի ծնողից մի աշակերտ ստանալու: Դա մի անմիտ պահանջ է, որ հաւասար է մերժողութեան: «Գուցէ Ցովսէփ Ջէրբէզեանցը լաւ ներգործել է ընդդէմ ինձ, թող հովանայ սիրտը. գոնեայ Հայերի անմտութիւնը և Ջէրբէզեանցի չարախօսութիւնքը լաւ հանդիպում են միմեանց: Եւ աւելի բան»:

Պէտք էր թողնել դպրոցի միտքը: Մնում էր դարձեալ «Հիւսիսափայլը»: Չը տեսնելով ապագայում որ և է յուսատու հանգամանք,

այդքան խոցոտված լինելով, Նազարեանցը, ինչպէս տեսանք անցեալ գլխում, բաց արեց 1862-ի բաժանորդագրութիւնը, յայտնելով որ իրան հարկաւոր են առնուազն 500 բաժանորդ, մի թիւ, որ երբէք նա չէր ունեցել։ Իհարկէ, նա ինքն էլ չէր հաւատում թէ «Հիւսիսափայլը» այդպիսի աջողութիւն կունենայ իր հրատարակութեան հինգերորդ տարում։ Բայց և այդպէս, նա ինքն էլ, երևի, չէր սպասում այն կատարեալ հիասթափման, որ բերեց 1862 թուականը։

1861 թուականը յաղթանակի տարի էր «Հիւսիսափայլի» համար։ «Փարիսեցոց քահանայապետը—գրում էր նա իր մասնաւոր նամակում—մատնեց ինձ աշխարհական իշխանութեան ձեռք. բայց—Իսրայէլացոց, Հրէից ժամանակը անցած է—խայտառակուեցաւ դարձեալ ինքը, յաղթութեան արմաւենով դուրս գնաց պատերազմից փոքրիկ Նազարեանցը»։ Այդ իսկ հանգամանքը պիտի յոյս տար թէ հասարակութիւնը կը խրախուսէ «փոքրիկ Նազարեանցին»։ Բայց դուրս էր գալիս հակառակը։

Տարւայ սկզբից բաժանորդագրութիւնը այնպէս վատ էր գնում, որ Նազարեանցը վճռեց մի առ ժամանակ էլ սպասել և եթէ գրութիւնը այդպէս շարունակվի, վերադարձ-



նել բաժանորդագները և դադարեցնել ամսագիրը։ Արդէն մարտ ամիսն էր, բայց «Հիւսիսափայլը» չէր հրատարակվում և Նազարեանցը չը գիտէր թէ ինչպէս պէտք է դուրս գալ դժուար դրութիւնից, «լաբիրինթոսից», ինչպէս նա էր ասում։

Այդ անելանելի դրութիւնը հարկադրում է նրան նպաստներ ընդունել երկու հայերից (բժիշկ Նադիրեանց և Մ. Սանասարեանց), թէև այդ նպաստն էլ մի մեծ բան չէր,— ընդամէնը 450 րուբլի։ Ապրիլի սկզբներում նա տեսնում է որ կարելի է առաջ տանել հրատարակութիւնը, փոքրացնելով ամսագրի ծաւալը։ Նախկին հինգ թերթի տեղ այժմ երեք թերթից է բաղկացած «Հիւսիսափայլը»։ Շատ էր ուզում Նազարեանցը որ հայերը, վերջապէս, հասկանային թէ «հեղինակ մարդիկ օդից միայն չէին ապրում, այլ ամենայն ադամորդու պէս ունէին իւրեանց մարմնաւոր կարիքը», թէ «և նոցա արժան էր ուտել, խմել, հագնել, մի խօսքով մարդկօրէն ապրել», բայց ինչ անէր, երբ շատ էր գրում, իսկ լսող ու հասկացող չը կար։

Սակայն ինչն էր, որ «մարդկօրէն ապրելու» փոխարէն գալիս էր վարձատրելու Նազարեանցին և քարոզելու որ միայն հացով չէ ապրում մարդը։—Այն գիտակցութիւնը,

թէ նա կատարում է մի ազնիւ, գեղեցիկ պարտականութիւն։ «Անողոքելի արդարութեան ու ճշմարտութեան սուրը դէպի աջ ու ձախ շողշողացնել, կարմրացած երկաթով այրել փտած ու նեխած վէրքեր ու սուր դանակով կտրել ու բաց ձգել»—ահա ինչն էր փոխարինում նրա հայրը։ «Ոչ եկի խաղաղութիւն արկանել, այլ հուր,—ասում է նա.—ուրեմն ինձ հանդիպել է, ինչ որ պիտի հանդիպէր հարկաւորապէս. ոչինչ աւելի և ոչինչ պակաս։ Ես անմխիթար չեմ այդ մասին, այլ ինչ որ արեցի, և կեանքս ցած դնելով արեցի, դորա վերայ շատ ուրախ եմ»։

Այդ գիտակցութեամբ վառված, նա վճռում է գրիչը վայր չը դնել և 1862 թուականին, թէև շրջապատված էր տխուր, յուսահատեցնող հանգամանքներով։

Եւ նրա խօսքը, նրա քարոզը միևնոյնն է —առաջադիմութիւն, ինքնաճանաչութիւն, քաղաքակրթութիւն, լոյս և գիտութիւն։ Մենք չենք ուզում ամեն անգամ մանրամասն պատմել այն յօդուածների բովանդակութիւնը, որ Նազարեանցը սովորաբար դնում էր «Հիւսիսափայլի» իւրաքանչիւր տարվայ առաջին համարում։ Դրանք գեղեցիկ, լուսաւոր խորհրդածութիւններ էին, որոնց մէջ փառաբանվում էր եւրօպականութիւնը և դատա-



պարտվում ու անիծվում էր ասիական խաւարը, անշարժութիւնը իբրև մայր ամեն չարիքների։ Նազարեանցը երբէք չէր մոռանում յիշեցնել հայերին որ երկու ճանապարհ կայ նրանց առջև. մէկը դէպի լոյս և առաջադիմութիւն—դա դժուար փշոտ ճանապարհն է, իսկ միւսը՝ դէպի յետադիմութիւն և մեռելութիւն, որ մեծամասնութեան սիրած ճանապարհն է, որ քաղցր, ցանկալի է ծոյլ ու անկենդանութեան դատապարտված ազգերին։ Ամեն մի դէպքում նա իր պարտքն էր համարում հարուածել և խայտառակել այն մարդկանց, որոնք ազգը տանում են այդ յետադէմ ճանապարհով։ Մենք արդէն գիտենք և այն, որ նա քարոզում էր թէ փրկութիւնը աշխարհական կրթութեան մէջ է, հոգևորականութիւնը չէ կարող առաջնորդել ժողովուրդը, որին խուցերի դաստիարակութիւնը այլ ևս բոլորովին հարկաւոր չէ։ Այդ միտքը նա 1860 թուականից շատ անգամ է կրկնել։

Ընդհանուր առաջադիմական գաղափարներ քարոզելով, Նազարեանցը 1862 թւին մի լուրջ փորձ արաւ մշակելու հայկական իրականութեան համար մի այնպիսի ծրագիր՝ որ կարողանար մեծ զարկ տալ հայերի առաջադիմութեան։ Այդ փորձի հետևանքը իս-

կոյն երևաց կեանքի մէջ, մի հանգամանք, որ ցոյց է տալիս թէ Նալբանդեանը որքան լաւ ըմբռնել էր հասունացած կարիքը։ Մենք խօսում ենք այն յօդուածի մասին, որ զետեղեց Նալբանդեանը «Հիւսիսափայլի» 7-րորդ համարում և որով առաջարկում էր հայերին կազմել մի մեծ կրթական ընկերութիւն։

Այդպիսի մի ընկերութեան անուն նա տուել էր դեռ 1859-ին, «Հայերի կոչումը մարդկութեան մէջ» յօդուածում։ Բայց այդտեղ նա միայն յիշել էր ընկերութեան անունը, միայն մի թռուցիկ միտք էր յայտնել։ Այժմ նա աւելի մանրամասն կերպով, աւելի համոզիչ պատճառաբանութիւններով ցոյց էր տալիս ընկերութեան անհրաժեշտութիւնը, բացատրում էր նրա կազմակերպութիւնը, նպատակները, գործունէութեան եղանակը։

Գեղեցիկը այդ յօդուածի մէջ այն է, որ Նալբանդեանը շատ պերճախօս փաստերով ցոյց էր տալիս թէ որքան ահագին նշանակութիւն ունի համայնական համերաշխութիւնը, հաւաքական ոյժերով գործելը։ Մարդը ամենադժբախտ անասունը կը լինէր աշխարհում, եթէ նրան տուած չը լինէր ընկերական կեանքի հասկացողութիւնը։ Այդ ընկերականութիւնից առաջացաւ մարդկային



ցեղի անդադար ուժեղանալը, կատարելագործութիւնը։ Մէկը ոչինչ է, բայց երբ հաւաքվում են մի քանի այդպիսի ոչինչ մէկեր, կազմվում է ոյժ։ Ահա ամեն երջանկութեան, ամեն առաջադիմութեան հիմքը։ Դրա վրա են տեղի ունեցել զանազան համախմբումներ՝ ընտանիք, համայնք, ցեղ, պետութիւն։

Հայերի մէջ սաստիկ թոյլ է, համարեա գոյութիւն չունի համայնական գաղափարը։ Եւ դա հետևանք է նրանց ողբալի անցեալի։ Նալբանդեանը շատ գեղեցիկ կերպով պատկերացնում է այդ անցեալի հոգեբանութիւնը։ Ասիական բռնակալութեան թունաւոր շունչը փտեցրել է մարդկութիւնը։

«Բռնակալութիւնը երբէք սիրող չէ հըպատակների միաբանութեան և մօտաւորութեան միմեանց հետ. քանի որ դոքա անմիաբան, ջոկ ջոկ, առանձնացած լինին իրեարից, այնքան ևս ձեռնտու է մի բռնակալ կառավարութեան, լցուցանելու իւր հաճոյքը։ Այդտեղ ամեն մարդ իւր համար է, ամեն մարդ իւր գլխի հոգսում. եթէ մինին զարկում են, միւսը փոխանակ օգնական լինելու իւր ընկերին, փախչում է. յաւելացրու մի այսպիսի կացութեան վերայ շատ անգամ աղքատութիւն և միշտ տգիտութիւն և անկրթութիւն, որոնց մէջ Հայը երկար դարեր ապրել է, առանց կարողանալու երբ և իցէ բարձ-

բացնել իւր գլուխը և զգալ իւր մարդկային արժանաւորութիւնը»։

Այս տեսակ տխուր պայմանների մէջ հայը իւրացրել է միայն խորամանկութիւն և խարդախութիւն։ Ցաւալութիւններ են սրանք, որոնք յատուկ են բոլոր այն ազգերին, որոնք ապրել են թունաւոր բռնակալութեան լուծի տակ։ Խորամանկութիւնն ու խարդախութիւնն են եղել այն միակ զէնքերը, որոնցով մի ստրուկ ազգ պաշտպանվում էր իրան տանջող ու կեղեքող բռնակալութիւնից։ Ամեն մէկը մտածել է իր ցաւի մասին, իր գլուխը ազատելու մասին։

«Բաւական էր, կարծել են, ամենայն մարդու իւր թշուառութեան չափը, առանց բեռնաւորուելու հոգսերով իւր ընկերի թշուառութեան վերայ. երբէք մտաբերել չեն նոքա թէ միաբանութեամբ կարողացած կը լինէին իւրեանց հասարակաց թշուառութիւնը թեթևացնել»։ Այստեղից ահա հայերի կոպիտ անձնապաշտութիւնը. ասիացին այսօր էլ չէ կարողանում հասկանալ որ մարդը ծնվում է ընկերութեան, իր ազգի կամ ժողովրդի համար։ Եւ եթէ Ասիայում ազգերը կարողացել են փոքր ի շատէ հասարակօգուտ գործեր առաջացնել, դրանց բոլորի աղբիւրը եղել է միայն կրօնական ֆանատիկոսութիւնը։ «Կրօնը այդտեղ եղել



է միշտ ժողովրդի միակ և լոկ կեանքը. իսկ կրթութիւն, քաղաքական իրաւունք և ազատութիւն, մի խօսքով բարեկարգութիւն ընկերական կացութեան, դոցա վերայ երբէք մտածել չէ Ասիան»։

Ասիայի զաւակներից մէկն է և հայը։ Ահա փոխվել են քաղաքական հանգամանքները։ Նա մտել է ռուսաց տիրապետութեան տակ, վայելում է քաղաքացիութեան իրաւունքներ, կեանքի և գոյքի ապահովութիւն։ Բայց նրա մէջ մնացել է հին արիւնը. դարձեալ նա անձնապաշտ է, դարձեալ նա մենակ ու կղզիացած ապրել է սիրում և նրա համար չը կայ հասարակական գաղափար, ընդհանուր բարիքի հասկացողութիւն։ Բոլոր հարցերը մասնաւոր են, անձնական, ընտանեկան, ամեն մէկը թող հոգայ իր գլխի ցաւը, փող վաստակէ, և պրծաւ գնաց։ Ահա մեր իդէալը։ Եւ ոչինչ հասարակական, կրթական կամ ուսումնական ձեռնարկութիւն գոյութիւն չունի այդ անձնապաշտների մէջ։

«Աստուած իմ—բացականչում է Նազարեանցը—մինչև երբ պիտի տևէ մեր հայերի մէջ այս բարբարոսութիւնը, մինչև երբ պիտի մեք ականատես լինինք այս անմխիթար կացութեանը Հայերի. մինչև երբ պիտի Երեմիայի ողբերը ողբանք

և ցաւով ու տրտմութեամբ գերեզման իջանենք։ Ես կարծում եմ, որ լցուել է մեր հայկական թշուառութեան բաժակը, մեր ժողովրդական ցաւերը հասել են արդէն մի անտանելի մեծութեան։ Ժամանակ է, մեր վերայից ասիական մարդատեաց առանձնասիրութեան և անձնապաշտութեան լուծը բաց ձգել, դուրս գալ հանդէս, սիրողապէս մօտաւորուել միմեանց, ճանաչել ընդհանուր ժողովրդական, դէպ ի երկինք բողոքող ցաւը, մեր ընկերի նիւթական ու իմացական բարին համարել մեր սեփականը, մեր սեփական բաղդաւորութիւնը չը բաժանել նորա բաղդաւորութենից, ինչպէս մինչև այժմ եղել է մեր խակութեամբ, մեր անմտութեամբ, մեր անմարդասէր ոգեղ բարքով։ Ժամանակ է հասկանալ վերջապէս, որ մեք այլապէս կարող չենք առողջ և ուրախ լինել, եթէ մեր մարմնի այս և այն անդամքը հիւանդ և ցաւագար են, կարող չենք մեր անձը բաղդաւոր զգալ, մինչ և հանապազ մեր աչքի առաջև ունենալով մի թշուառացած, բարձի թողի արած ժողովրդական կացութիւն»։

Այս բոլորից յետոյ նա առաջարկում է հիմնել մի մեծ բարեգործական ընկերութիւն «հայերի նիւթական և բարոյական կեանքը բարեկարգելու համար»։ Աղքատներին, որբանոցներին դրամական նպաստ տալը, ողորմութիւն տալը նա համարում է երկրորդական, անկարևոր բան։ Կարևորը, առաջնակարգը այն է, որ աղքատի ձեռքը գիտութիւն դրվի իբրև ամենալաւ միջոց հաց աշխատելու։ Ոչ թէ կերակրել աղքատութիւնը, այլ վերացնել նրան աշխատելու միջոցներ հայթայթելով։ Ասպարէզը շատ լայն է. պատուաւոր հացի ճանապարհ կարելի է բաց անել, ծանօթացնելով «ձեռագործ արուեստների, երկրագործութեան, բնութեան բերքերի յառաջածութեան և նոցանից վաճառելի ապրանքի պատրաստութեան կերպի և եղանակի հետ, այլ և կրթելով Հայոց զաւակներից պօլիտեխնիկաք, հմուտ վաճառականք հաշուետների մէջ, աջողակ գործակատարք և գրապահք»։ Ընկերութիւնը ընտրում է ընդունակ և տաղանդաւոր չքաւորներին, ուղարկում է նրանց ռուսաց համալսարանները, որպէս զի նրանցից ուսումնականներ, ուսուցիչներ պատրաստուեն։ Համալսարանը աւարտողներից երկու երեք հոգի ընկերութեան հաշուով ուղարկվում են արտասահման՝ կատարելագործվելու գիտութիւնների մէջ. այդ բանը, բացի կրթական նշանակութիւնից, կունենայ և այն բարերար ազդեցութիւնը, որ ասիացի երիտասարդները աշխարհ կը տեսնեն, կը ծանօթանան քաղաքակիրթ ազգերի կեանքի հետ։

Վերջապէս ընկերութիւնը հովանաւորում է գրականութեան, յատկապէս մի այնպիսի լրագրի կամ ամսագրի գոյութիւնն է ապահովում, որի հրատարակութիւնը ցանկալի է նրա ուղղութեան տեսակէտից։

Ընկերութիւնը շատ լայնարձակ ծաւալ ունի. նրա մէջ մտնում են Ռուսաստանի բոլոր հայերը։ Կենտրօնը Մոսկվայումն է, իսկ բոլոր հայաբնակ տեղերում գտնվում են նրա գործակալները։ Ենթադրվում էր որ ընկերութիւնը առաջին տարին կը հաւաքէ 100,000 րուբլի, մի գումար, որ շատ մեծ չէ, ի նկատի ունենալով որ Ռուսաստանում ապրող հայերի թիւը կէս միլիօնի է հասնում։ Այնուհետեւ կարելի էր ընկերութեան ծրագիրը ներկայացնել Թագաւոր Կայսրի հաստատութեան։ Ընկերութեան անունը պիտի լինէր. «Ընդհանուր հայկական ընկերութիւն վասն բարեկարգելու Ռուսաստանի չքաւոր հայոց նիւթական եւ բարոյական կեանքը»։

Դրամագլուխը տոկոս կը բերէր տարին 8—10 հազար րուբլի և այդ գումարը բաւական կը լինէր ընկերութեան նպատակները իրագործելու համար։ Անդամները չորս տեսակի են. 1) «հիմնարկու», տարեկան 500 րուբլի տուողները, 2) «օրինաւոր», որոնց տարեկան վճարն է 250 րուբլի. 3) «պատուաւոր», 125 րուբլի վճարով և 4) «լոկ մասնակից», տարեկան 5 րուբլի վճարող։ Ձայնի իրաւունք ընդհանուր ժողովներում ունէին միայն առաջին երեք կարգի անդամները։



Դա նախագիծ էր, վերջնական, մանրամասն կանոնագրութիւն չէր և Նազարեանցը հրաւիրում էր քննել, բարեփոխել, աւելի յարմար ձևի մէջ դնել գործը։ Գլխաւոր հարցը այդ չէր, այլ այն, որ պէտք է մի այդպիսի ընկերութիւն ստեղծել։ Եւ Նազարեանցը կնքում էր իր յօդուածը հետևեալ եռանդուն և ուժեղ տողերով։ Եթէ հայերը ընդունակ են մի հաստատուն և տևողական գործ կատարել, այդ միայն այսպիսի բարեգործական ընկերութեան միջոցով կարելի է անել։

«Իսկ եթէ հայերի մէջ մեռած է ամենայն ընկերական հոգի, ամենայն զօրութիւն կամքի, ամենայն գործողական կարողութիւն, ամենայն բարոյական և իմացական կեանք, այնուհետև պիտի մեք մեռածների ականջում խօսած լինինք. այնուհետև ոչինչ չէ մնում մեզ ասելու Հայերին եթէ ոչ, թող դոքա հոգան իւրեանց համար դագաղներ, ամփոփելու նոցա մէջ իւրեանց և տանելու ձգելու փոսը. պատճառ, այն կեանքը, որոյ մէջ չը կայ շարժողութիւն, չը կայ բա-

բոյական գործ, չը կայ յաւաջադիմութիւն —մահ է, մեռելութիւն է, և մեռածների կայարանը—դագաղ ու գերեզման»։

Բարեգործական ընկերութիւնների միտքը նոր չէր հայերի մէջ։ Թիւրքիայի հայերը, մանաւանդ Կ. Պօլսում և Զմիւռնիայում, դեռ տասնիններորդ դարի սկզբից էին հասկացել ընկերութիւններով գործելու մեծ խորհուրդը և այնտեղ կազմել էին զանազան անուններ կրող, զանազան նպատակների ծառայող ընկերութիւններ։ Ճիշտ է, դրանք բոլորը երկարատև կեանք և աչքի ընկնող լայնածաւալ կազմակերպութիւններ չունէին, բայց և այդպէս, մի մի նշաններ էին թէ հասարակութիւնը որքան գեղեցիկ կերպով ըմբռնել է ընկերական սկզբունքը։ Աչքի անցկացնելով Թիւրքահայերի բարեսիրական ընկերութիւնների ցուցակը, մենք մի գեղեցիկ տպաւորութիւն ենք ստանում այն բազմաթիւ նպատակներից, որոնց հետևում էին այդ մարմինները։ Մէկը յատկապէս գրքեր է հրատարակում, միւսը օրիորդաց դպրոց է բաց անում, երրորդը գաւառներում գրագիտութիւն տարածելն է նպատակ ընտրում, մի ուրիշը գրադարան է բաց անում և այլն։ Կան նոյն իսկ կանանց ընկերութիւններ։

Գաղափարը այնքան էր ժողովրդականա-



ցել արևմտեան հայերի մէջ, որ այն ժամանակ, երբ Նազարեանցը գրում էր այդ յօդուածը, ընկերութիւն կար կազմված և Վանի պէս յետ ընկած քաղաքում։ Կասենք աւելին։ Հասարակական ինքնագործունէութեան հորիզոնը այնքան էր լայնացած Թիւրքահայերի մէջ, ժամանակի կարիքները այնքան լաւ էին ըմբռնված այնտեղի առաջաւոր շրջաններում, որ այն ժամանակ, երբ Նազարեանցը իր ծրագրի մէջ միայն հարևանցի կերպով էր յիշատակում երկրագործութիւնը իբրև հաւաքական ոյժերով զարգացնելու և կատարելագործելու արժանի մի ճիւղ, Կ. Պօլսում արդէն կազմված և պատրաստ էր «Բարեգործական Ընկերութիւն Հայոց» անունով մարմինը, որի դաւանանքն էր թէ ազգի երջանկութիւնը հողի մէջն է, ուստի պէտք է պատրաստել ժիր, գիտութեան պաշարով զինված հողագործներ։

Սակայն այս հանգամանքը չէ նուազեցնում Նազարեանցի առաջարկութեան նշանակութիւնը։ Միտքը բոլորովին նոր էր ռուսահայերի համար։ Այստեղ չէր զգացվում ընկերական ոգու անհրաժեշտութիւնը. Թիւրքահայերի հետ համեմատած՝ ռուսահայերը շատ յետ էին մնացել հասարակական գործունէութեան ասպարէզում։ Այդ է պատ-

ճառը որ Նազարեանցի գեղեցիկ կերպով պատճառաբանված, ուժեղ և համոզիչ թափով գրված առաջարկութիւնը շատ լաւ տըպաւորութիւն գործեց հասարակութեան վրա։ Այդ տպաւորութեան մի սիրուն արտայայտութիւն կարող ենք համարել այն ընդարձակ յօդուածը, որ լոյս տեսաւ «Կռունկի» նոյն տարվայ Նոյեմբերի համարում։

Նախ և առաջ ուշադրութեան արժանի է այն ոգևորութիւնը, որով յօդուածագիրը խօսում է առհասարակ Նազարեանցի և նրա գործունէութեան մասին։ Այդտեղից մենք իմանում ենք որ Նազարեանցին «ճանաչում են և ցանկանում են ճանաչել մինչև անգամ մեր այբուբեն կարդացող երեխայքը»։ Եւ այստեղ չափազանցութիւնը շատ չէ։ Մենք ուրիշ վկայութիւններ էլ ունենք, որոնք հաւաստիացնում են թէ Նազարեանցի անունը յայտնի էր իւրաքանչիւր տեղ, ուր կային կարդացողներ։ «Դա—շարունակում է յօդուածագիրը—է Հայոց համար (եթէ բոլորի համար չէ, գոնէ Ռուսիաբնակ Հայերի համար) մի զարթուցիչ մեքենայ, մի այնպիսի հարուածք տուող զօրութիւն, որ աշխատում է սթափեցնել Հայերին իւրեանց քաղցր՝ անհոգութեան քնից»։ Այս տեսակ համակրական ցոյցեր անելով, յօդուածագիրը քննում



է Նազարեանցի առաջարկութիւնը և մի քանի հիմնաւոր առարկութիւններ անելով ծըրագրի մանրամասնութիւնների դէմ, թախանձում է հայերին սթափվել, լսել այդ ձայնը և գործադրել նրա առաջարկութիւնը։

Սակայն նախ քան այդ յօդուածի երևալը՝ Նազարեանցի առաջարկութիւնը արձագանք էր գտել կեանքի մէջ։ Ամբողջ Ռուսաստանի հայերի մասնակցութիւնը մի բարեգործական ընկերութեան մէջ դժուար էր և ցանկալի էլ չէր։ Մնում էր սպասել որ միտքը իրագործվի առանձին առանձին տեղերում։ Այդպէս էլ եղաւ։ Նազարեանցի այդ յօդուածի ազդեցութեան տակ երկու ընկերութիւններ կազմվեցան. Նոր Նախիջևանի Բարեգործական Ընկերութիւնը և Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութիւնը *)։ Վերջինիս հիմնադիրն էր բժիշկ Դաւիթ Ռոստոմեանց, որին մենք տեսանք «Հիւսիսափայլի» էջերում բողոքելիս Շամախու կրօնական հալածանքների դէմ։

Այսպէս, հրապարակախօսութիւնը սկսում էր մեզանում էլ պտուղներ տալ, թէև կաշկանդված էր, թէև առաջին մեծամասնու-

*) Ա. Գալստեանց—«Պատմական համառօտ տեսութիւն Բագուայ Հայ. Մարդ. Ընկեր.» Բագու, 1891, եր. 4։

թեան համար դեռ անհասկանալի մի բան էր։ Եւ անշուշտ «Հիւսիսափայլի» ազդաձայնը կամաց կամաց կը թափանցէր մեր հասարակական գիտակցութեան մէջ, ինչպէս ջրի կաթիլը, որ ծակում է քարը. բայց տարօրինակ ճակատագիր. հէնց այստեղ էլ, այս յուսատու հանգամանքների մէջ, մենք տեսնում ենք այդ հրապարակախօսութեան հոգեվարքը, օրհասը...

---

## VI

Անաջողութեան տարի մեր մամուլի համար։—Նազարեանցի յայտարարութիւնը «Հիւսիսափայլի» դադարման մասին։—Դադարման պատճառները։—Դրանք միմեանց առնչական չեն։—Միւս պարբերական հրատարակութիւնների վիճակը։—Նազարեանցի վերջին ցանկութիւնները։—«Հիւսիսափայլի» վերակենդանանալը։—Կ. Պօլսի «Մեղուի» յօդուածը։—Թիֆլիսի «Մեղուն»։—Պահպանողական նոր սերունդը հաշտված Նազարեանցի հետ

—∞—

Վերևում, «Կռունկի» յօդուածից մենք իմացանք որ Նազարեանցին ճանաչում են և ուզում են ճանաչել այբուբեն կարդացող երեխաներն անգամ, որ դա մի «զարթուցիչ մեքենայ» է Ռուսաստանի հայերի համար։ Բայց ահա նոյն այդ Նազարեանցը, «Կռունկի» այդ յօդուածից մի ամիս առաջ, յայտարարում էր «Հիւսիսափայլի» մէջ, որ եկող 1863 թ. ամսագիրը չը պիտի հրատարակվի բաժանորդների քչութեան պատճառով։

Ի՞նչպէս բացատրել այս տարօրինակ ե-

րնոյթը։ Մի մարդ, գոնէ շատերի կողմից, համարվում է պարծանք. խոստովանում են որ այդ մարդը 19-րորդ դարի երկրորդ կէսում ամենաարդիւնաւոր հայ մատենագիրն է, որ նրա անունով պիտի զարդարվի մեր գրականութեան պատմութիւնը, որ երեք-չորս տարվայ ընթացքում նրա արածները մի ուրիշը չէր կարող կատարել 8—10 տարվայ մէջ։ Եւ յանկարծ այդ մարդը այնքան ընթերցողներ չէ գտնում հայերի մէջ, որ կարողանայ շարունակել իր գործը։ Տարվայ վերջում հրատարակած ծանուցումից երեւում է որ «Հիւսիսափայլը» 1862-ին ունէր ընդամենը 170 բաժանորդ...

Կէս միլիօն ժողովրդի տուած այդ չընչին, ողորմելի թիւը վերին աստիճանի յուսահատական մի երեւոյթ էր։ Նա ցոյց էր տալիս որ հայ ազգը իր մայրենի գրականութեան վերաբերմամբ խիստ անբարեխիղճ է։ Նազարեանցը մի քանի խօսքերով նկարագրում է հայ խմբագրի մաշեցնող տանջանքները։ Հինգ տարի էր, նա ամսագիր էր հրատարակում, բայց երբեք չէ տեսել մի լաւ օր։ Ամէն տարի նա բացատրել է թէ հարկաւոր է բաժանորդների աւելի մեծ թիւ, որպէսզի կարելի լինի այնպէս առաջ տանել գործը, որ խմբագիրը չընա-



հատակվի։ Այդ թիւը ոչ միայն երբէք չը ստացվեց, այլ և եղած փոքրաթիւ բաժանորդներն էլ ժամանակին չէին հասցնում փողը, այնպէս որ «Հիւսիսափայլի» իւրաքանչիւր տարվայ առաջին համարները, անորոշ դրութեան պատճառով, շատ ուշ էին հրատարակվում։

«Ջուր և անօգուտ եղան մեր բոլոր բանական խօսք ու զրոյցը Հայերի հետ—ասում էր Նազարեանցը իր յայտարարութեան մէջ։—Մեր բարեմիտ հայրենասիրական աշխատասիրութիւնը շինեցին մեր համար մի յանցանք և ձգեցին մեզ մի կատարեալ տանջարանի մէջ. փոխանակ թևեր տալու մեզ, օրէ օր աւելի ազատութեամբ դէպի վեր թռչելու, ամենայն կերպով կտրատեցին մեր թևերը, ջարդեցին մեր զօրութիւնքը, անոտք ու անձեռք անդամալոյծ շինեցին մեզ, սողալով գետնի վերայ»։

Ո՞վ էր այդ թևեր կտրատողը։

Ամէն անգամ, երբ ուշանում էր «Հիւսիսափայլի» հրատարակութիւնը, ընթերցող հասարակութեան մէջ լուր էր տարածվում թէ նա արգելված է հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ։ Այսպէս հասկացվեց և 1863-ի դադարումը։ Բայց սա ճիշտ չէ։ Ինքը, Նազարեանցը, իր մի նամակի մէջ ան-

ունում է այդ լուրը «սուտ և խաբերայ խօսք»: Մատթէոս կաթողիկոսը արդէն մի անգամ փորձով տեսել էր որ իր գործը չէ մի ամսագրի մասին վճիռներ կայացնելը և երկրորդ անգամ չը կրկնեց այդ փորձը: Եւ ինչ կարիք կար այդպիսի ենթադրութիւններ անելու, քանի որ Նազարեանցը բացարձակ կերպով յայտարարում էր որ «Հիւսիսափայլի» դադարման իսկական պատճառը հասարակութեան անտարբերութիւնն էր: 170 բաժանորդ—սա մի լաւ ապացոյց էր, որ ամսագիրը պիտի դադարէ, չէ կարող շարունակվել:

Մնում էր բացատրել այդ անտարբերութեան պատճառները: Թէ իր յայտարարութեան և թէ իր նամակների մէջ Նազարեանցը հասկացնել էր տալիս, ինչպէս և նախընթաց տարիները «Հիւսիսափայլի» մէջ, որ այդ անտարբերութիւնը ստեղծվում է արհեստական միջոցներով, թշնամիների իշխանական հրամաններով: Այդ խօսքերն ասելով՝ նա նկատի ունէր հոգևոր իշխանութիւնը, որ՝ նրա ասելով, ամեն տեղ աշխատում է արգելք հանդիսանալ «Հիւսիսափայլի» տարածման դէմ: Ո՞րքան ճիշտ էր այս պատճառաբանութիւնը:

Մենք կասկածելու առիթ չունենք թէ հոգևոր իշխանութիւնը և առհասարակ հայ-



կական պահպանողականութիւնը դիմում էր այդպիսի միջոցների՝ «Հիւսիսափայլի» ազատ ու համարձակ ձայնը լռեցնելու համար: Այո, շատ և շատ հաւանական է որ գործադրվում էին ամեն հնարաւոր արգելքներ: Նազարեանցը, յամենայն դէպս, առանց փաստերի չէր խօսում: 1862-ի վերջերում, ցենզուրայից արգելված մի յօդուածի առիթով նա գրում էր այդ յօդուածի հեղինակին. «Ինչպէս յայտնի երևում է, կաթողիկոսը պիտոյ է առանձին կերպով խնդրագործ եղած լինի Ցենզուրեան կոմիտետում, թոյլ չտալ որևիցէ կրօնական հայեացքով բան տպել Հիւսիսափայլի մէջ, խառնելով դորան, ինչպէս սովոր են մեր Հայերը, դաւանաբանութեան հետ, որովհետև այդպէս միայն կարող են իւրեանց խաւար չարեացակամութիւնը լցուցանել»:

Այդ իրողութիւնը—եթէ միայն իրողութիւն է—լցնում է Նազարեանցի սիրտը մեծ դառնութեամբ: Արգելված յօդուածը *) նա խորհուրդ է տալիս ուղարկել Կ. Պօլսի «Մեղուին», որովհետև ռուսահայերի միւս պարբերական հրատարակութիւնները—«Կռունկ» (որի խմբագիր Ազաբէկեանին նա անուա-

*) Պէտք է ասել որ յօդուածը գրված էր Նազարեանցին անիրաւ յարձակումներից պաշտպանելու համար:

նում էր «տխմար») և «Մեղու Հայաստանի» (որա նոր խմբագիր Սիմէօնեանցին անուանում էր «Թոյլ») չեն վստահանայ տպագրել այդ գրուածքը, «մանաւանդ որ—ասում էր նա—Տէր Բաբան, պաշտպանը Ջէրքէզեանցի, կանգնած է նոցա դէմուդէմ։ Ի՛նչ ճշմարտութիւն, ինչ աւետարան, ինչ Նազարեանց. Տէր Բաբան այսպէս կամի, ուրեմն և այսպէս ևս պիտի լինի»։

«Դուք կարող էք հասկանալ—շարունակում էր Նազարեանցը—թէ ինչ դրութեան մէջ է իմ սիրտը նայելով մեր Հայերի այս որպիսութեանը, ես անյոյս եմ այսուհետև և անմխիթար, քանի որ պիտի տեսանէի և լսէի այս խայտառակութիւնքը, այս բարբարոսութիւնը մեր ազգի, այս բարոյական մեռելութիւնը մեր մէջ»։ Թէև այսքան գանգատվում է Նազարեանցը իր թշնամիների մեքենայութիւնների դէմ, բայց հաստատապէս կարելի է ասել որ այնքան այդ մեքենայութիւնները չէին «Հիւսիսափայլի» կործանման պատճառը, որքան ժամանակը, հանգամանքները։ Բաւական է մի թեթև ակնարկ գցել այն ժամանակվայ մեր մամուլի վրա, և մենք կը տեսնենք որ Նազարեանցը մենակ չէր գոնէ այս բանի մէջ։

1862 թուականը մի զարմանալի տարի էր



ռուսահայ մամուլի համար։ Հայ հասարակութիւնը, ինչպէս գիտենք, հինգ պարբերական հրատարակութիւններ ունէր։ Ապրում էին դրանք, մի քանիսները նոյն իսկ բաւական գոհ։ Բայց 1862 թուականը ծանր հարուածներ է բերում համարեա ամենքի համար։ Ցանկարծ յայտնի է դառնում ամենքին որ շարունակել այլ ևս անկարելի է, որ հասարակական անտարբերութիւնը անյաղթելի է։ Եւ ահա ինչ փոփոխութիւններ են առաջանում դրանից։ 1862-ի ամառը վերջնականապէս դադարում է «Ճռաքաղը», պահելով իր «Համբաւաբեր Ռուսիոյ» թերթը միայն։ Նոյն հոկտեմբերին, երբ Նազարեանցը յայտարարում էր թէ «Հիւսիսափայլը» չի հրատարակվի, «Կռունկի» հրատարակիչ Հ. Ընֆիաճեանը յայտնում է ամսագրի մէջ թէ ինքը այլ ևս չէ կարող իր վրա վերցնել հրատարակութեան վնասները, որոնք առաջանում են այն հանգամանքից, որ ընթերցող չը կայ, որ հայ հասարակութիւնը չէ սիրում կարդալ մայրենի լեզուով տպված բաները, թէև կարող էր հազարաւոր բաժանորդներ տալ ամսագրին կամ լրագրին։ Այդ պատճառով Հ. Ընֆիաճեանը, մնալով անունով հրատարակիչ, ամսագրի ամբողջ գործը յանձնում էր խմբագիր Մարկոս Աղաբէկեանին, որ մի անապահով մարդ

էր և ինարկէ չէր կարող իրանից փող դնել ամսագրի հրատարակութեան համար։ Դա արդէն պարզ նշան էր որ «Կռունկն» էլ չի ապրի. և իրաւ շատ քիչ նա դրանից յետոյ ապրեց։

Աւելի վատ էր «Մեղուի» դրութիւնը։ Եթէ ճիշտ էր որ հոգևորականութեան ջանքերն էին «Հիւսիսափայլին» վնասում, պէտք էր, ուրեմն, ենթադրել որ այդ հոգևորականութեան սիրելի «Մեղուն» մեղր ու կարագի մէջ էր ապրում։ Իր հրատարակութեան առաջին տարին, 1858-ին, «Մեղուն» ունէր 600 բաժանորդ։ Բայց ահա ինչ էր գրում Ստեփան քահանայ Մանդինեանը նոյն չարաբաստիկ 1862 թւականի վերջում.

«Ահա տարին վերջանում է և լրագրի փողն դեռ շատերից չենք առացած, և այս քանի շաբաթ է, որ տպագրութիւնը յետ է ընկնում. և պատճառը ծախսի փող չունենալն է որ գոնէ տպարանի և թղթի փողը տալ։ Դեռ տարեկան փողը չը տուողներին թէ Թիֆլիզ և թէ դուրսը թուղթ գրելով դադրեցայ, Թիֆլիզումը մարդ ուղարկելով բեզարեցայ, չը առացայ չվճարողներից, ահա այս է խմբագիրներին նորա օգնական լինելը. ահա երևում է մեր ազգի եռանդի առած լինելն, որ ոչինչ ազգային գործ առաջ չէ գնում, խտալիանսկի օպերա պէտք է որ յօժեր առնեն, և ոչ թէ լրագիր կամ օրագիր ազգային յառաջադիմութեան։ 1858 թուից սկսել եմ մինչի այսօր, որ է հինգ տարի, և հինգ տարուան էլ նիսիէք կան, մանաւանդ 1861 և էս 1862 թուերումը. տեսայ ազգի սէրն ու եռանդը և ձեռք քաշեցի, միայն կխնդրեմ, կաղաչեմ, կպաղատեմ որ մնացած նիսիէքը ուղարկեն»։



Ճգնաժամը, ուրեմն, ընդհանուր էր. Նա միատեսակ խեղդում էր թէ ազգի արատները հարուածողին և թէ ազգի հակումները շողոքորթողին, թէ բարձր գիտնականութեան, եւրոպականութիան անունից խօսողին և թէ վերոյիշեալի պէս գրողին և մտածողին։ «Մեղուն» անցաւ «Կռունկի» հրատարակիչ Էնֆիաճեանցին, նոր խմբագիր և աշխատակիցներ ունեցաւ, բայց մնաց նոյնը և եթէ պահվում էր, պատճառը մեծ մասամբ այն էր, որ տպարանատէր հրատարակիչ ունէր։

Ինչ և իցէ, Նազարեանցը վերջ էր դնում իր հրապարակախօսական գործունէութեանը։ Ահա ինչ խօսքերով էր նա հրաժեշտ տալիս իր ընթերցողներին.

«Հիւսիսափայլի» պաշտօնը Հայերի մէջ կը վերջանայ շուտով, խաղաղութիւն տալու իւր յարգելի բարեկամներին, խաղաղութիւն տալու իւր թշնամիներին, խաղաղութիւն տալու իւր յատուկ բազմաչարչար անձին։ Հրատարակողը չկամէր

այսուհետև ընդունել այն հայրենասիրական զրկանքը իւր բարեկամներից, որ մինչև այժմ յանձն էին առել նոքա, փոքր ի շատէ օգնելով հրատարակողին, առանց թեթևացնելու այն բեռը, որ միշտ ծանրացել է մի հատ մարդու ուսերի վերայ։ Իւր թշնամիներին—ոհ, իւր մոլորուած սիրելիներին, թշնամիք չունի Հիւսիսափայլի հրատարակողը—կամէր նա խաղաղութիւն տալ, այդ խղճալի մարդերին որ մինչև այժմ իւրեանց մի հատ պարծանքը որոնել են այն բանի մէջ, որ հրատարակողի ամենայն խօսքը, ամենայն գաղափարը թիւր մեկնեն, կեղտոտեն և աղաւաղեն ակարամիտ ժողովրդի առաջև, խռովութիւն ձգեն դորա մէջ, դորան յարուցանեն ընդդէմ հրատարակողին—որպէս և արդարև յարուցին իսկ մի մասնով, բայց ամօթ և խայտառակութիւն հնձելով թէ ինքեանք և թէ իւրեանց պարագլուխքը։ Փառք և պարծանք Ռուսաստանի արդարութեանը»։

Դնելով իր գործունէութեան գումարները, նա ասում է որ աշխատել է իր ազգի առաջադիմութեան համար, աշխատել է «գոնեայ մի քանի կենսական կայծեր ներս փչել նորա պաղած ու սառած երակների մէջ»։ Եւ եթէ նա, այնուամենայնիւ, չէ հասել իր նպատակին, այդ նրա մեղքը չէ։ Այժմ նա հեռանում է, տանելով իր հետ այն մխիթարութիւնը, որ իր հոգու և սրտի ամբողջ զօրութեամբ ձգտել է մի գեղեցիկ նպատակի



—հաւատացել է, յուսացել է եւ սիրել է։ «Եթէ այսուհետև կարող չէ նա իւր սիրելի ազգի համար աշխատել, գոնեայ կամի նորա վերայ աղօթել»։

1863-ին «Հիւսիսափայլ» չը կայ. և Նազարեանցի մտածմունքների մասին մեզ տեղեկութիւններ տալիս են նրա մի երկու նամակները։ Նա, իհարկէ, դառնացած է, նրա գրչի ծայրից թոյն է կաթում։ Եթէ չէ կարելի ապրել ազգի համար այնպէս, ինչպէս ինքն է ցանկացել, այսուհետև նա կապրի իր համար, իր անձնականի, իր զաւակների, իր ընտանիքի համար։ Շատ ուրախ կը լինէր նա, եթէ այն, ինչ անկարելի եղաւ նրա համար, կարելի և հնարաւոր լինի ուրիշների համար։ Թող Նազարեանցին վիճակված լինի հայոց գրականութեան մէջ փուշ ու տատասկ քաղել, իսկ ուրիշներին վիճակվի վարդեր քաղել։

«Թող վերանայ միջից Նազարեանցը, որ մինչև այսօր քար գայթակղութեան է եղել հայերի մէջ, թող այլք քարոզեն այսուհետև ազգին մի ճշմարտութիւն, մի ազգային օգուտ և շահ, որ Հիւսիսափայլը մինչև օրս քարոզել չէ. գուցէ այդպէս հաշտուին Հայերի միտքը և սրտերը մեր

հետ, վրէժխնդիր լինելով մեր նոցա հասուցած անիրաւութեանը և վնասին։ Կամ թէ միևնոյն ճշմարտութիւնը քարոզուելով այլ մարդերի բերանով, գուցէ գտանելու էր աւելի լսող և ընդունական սըրտեր, քան թէ Նազարեանցի ատելի և զայրացուցիչ գրչից»։

Մի ուրիշ նամակագիր հարցնում էր նըրան թէ կաթողիկոսը ինչ հիման վրա է խափանել «Հիւսիսափայլը»։ Նազարեանցը, հերքելով այդ լուրը, ասում էր.

«Մեղաւորը դուք էք, հայ ժողովուրդքըդ, և ապա ձեր կաթողիկոսը. մինդ միւսին արժանի։ Ի՞նչ առնէ ողորմելի հեղինակը ձեր պէս ժողովրդի մէջ. եթէ ամեն մի տգէտ և յիմար չարեացակամ մարդ կարող է ձեզ մոլորեցնել, ճանապարհից հանել, ձեր սիրտը և հաւատը խլել ձեր հայրենասէր աշխատաւոր հեղինակից, այս ձեր հեղինակը որոց ուսերի վերայ պիտի գործ կատարէ։ Դուք չունիք պատճառ գանգատաւոր լինելու ձեր կաթողիկոսից, ձեր արիւնարբու թշնամին ձեր տգիտութիւնըն է, ձեր բարոյական և մտաւոր մեռելութիւնը. և այդպիսի դրութեան մէջ ոչ թէ մի կաթողիկոս, այլ նորանից տասնապատիկ աւելի փոքր մարդ կարող է ձեզ վնասել իւր կոնդակներով և ձեզանով ևս ինձ»։

Այստեղ Նազարեանցը արդէն յայտնում



է որ «Հիւսիսափայլը» պատրաստ է ամեն ժամանակ նորից լոյս աշխարհ գալ, եթէ հասարակական ձեռնտուութիւն լինի։

Այդ ձեռնտուութիւնը եղաւ, բայց միայն մի քանի անհատների կողմից։ «Հիւսիսափայլին» դեռ մի տարի կեանք էլ էր վիճակված։ 1864-ին Նազարեանցը նորոգեց իր ամսագրի հրատարակութիւնը, սկսելով բաժանորդագրական տարին նախընթաց 1863-ի դեկտեմբերից, որ, ինչպէս ասում էր նա, «ունէր իւր առանձին խորհուրդը»։

Մի տարվայ լռութիւնը բաւական զգալի էր եղել ընթերցող հասարակութեան համար, այնպէս որ երբ Նազարեանցը 1864-ի յունվարի 20-ին լոյս հանած ծանուցումով յայտնեց թէ նորից սկսում է իր հրապարակական գործունէութիւնը, լսվեցին անկեղծ ուրախութեան ձայներ։ Կ. Պօլսի «Մեղուն», «Հիւսիսափայլի» այդ անփոփոխ բարեկամը, աւետելով այդ լուրը, աւելացնում էր թէ նոր «Հիւսիսափայլին» առաջվայ պէս պիտի աշխատակցէ Միքայէլ Նալբանդեանցը։ Բայց այդ լուրը չը ճշտվեց. Նալբանդեանցը այդ միջոցին չէր էլ կարող մասնակցել ամսագրին։ Տպագրելով Նազարեանցի վերոյիշեալ ծանուցումը, «Մեղուն» այսպէս էր ողջունում «Հիւսիսափայլի» երևան գալը մեր հօրիզոնում.

«Պ. Նազարեանց, Հայ ազգին հազուագիւտ անդամներէն մէկը իր հմտութիւններովը, տաղանդովը, ճշմարտասիրութեամբն ու հայրենասիրութեամբը՝ հրապարակախօսութեան ասպարէզն իջնելէն ի վեր նուազ տառապանք, նուազ ցաւեր կրեց իր հարազատ եղբայրներէն, անոնց մասնութեանը ենթակայ եղաւ. սակայն ազգին սէրը չը վհատեցուց զինքը այս վատ թշնամիներուն առջև և դարձեալ կը նուիրէ իր ծառայութիւնը ազգին աննկուն և անյողդողդ արիութեամբ յամօթ և ի յուսահատութիւն այն անհոգի հայերուն, որոնք իրենց խելքին կարճութեամբը և տեսութեան տկարութեամբը ազգին կեանքն ու փրկութիւնը հին գաղափարներու իշխանութեան մէջ կը կարծէին: Պ. Նազարեանց ասոնց ամէն ճգանց ամէն թշնամութեանց հակառակ պատռեց լուսոյ դէմ ձգված տգիտութեան սև վարագոյրը և այսօր գէթ Ռուսիաբնակ հայազգիք երախտագիտութեան խոստովանութիւնն ի բերան դէպ ի լուսոյ աղբիւրը կը դիմեն՝ միշտ առաջնորդ խնդրելով զանի՝ որ զիրենք մութէն լոյսը հանեց, անգիտութենէ ի գիտութիւն առաջնորդեց անոնց»:

Կ. Պօլսի «Մեղուից» պակաս համակրանքով չը վերաբերվեց Նազարեանցին և... Թիֆլիսի «Մեղուն»: Ժամանակը այդքան կարճ միջոցում մի այդպիսի հրաշագործութիւն առաջ բերեց. այնտեղ, ուր մի երկու տարի առաջ Յովսէփ Չէրքէզեանի նահատակութիւններն էին տեղի ունենում, այժմ խունկ էր ծխվում Նազարեանցի անուան: Ի՞նչ էր պատահել:



1863-ին Ստեփան քահանայ Մանդինեանցին յաջորդել էր Պետրոս Սիմէօնեանցը: Դաւանութիւններով նոյն Մանդինեանց, նոր խմբագիրը, այնու ամենայնիւ, ներկայացնում էր պահպանողականութեան թարմ սերունդը: Պ. Սիմէօնեանցը նոյնպէս Դօրպատի ուսանողներից էր և համակրում էր Նազարեանցին: 1863 թուականին Սիմէօնեանցի «Մեղուն» գրում էր. «Շատերին մեծ ցաւ պատճառեց «Հիւսիսափայլ» պատուական օրագրի խափանվիլը այս տարի»: Իսկ երբ Նազարեանցը վերսկսեց ամսագրի հրատարակութիւնը, նոյն Սիմէօնեանցը շտապեց յայտարարել թէ ինքն էլ ընդունում է «Հիւսիսափայլի» բաժանորդագրութիւնը: Միևնոյն ժամանակ նա տպում էր հետևեալ տողերը. «Ամենից աւելի փայլեցաւ Հայոց գրականութեան հորիզոնի վերայ Հիւսիսափայլը իբրև ճշմարտախօս և աւելի ազատամիտ օրագիր»:

Այսպիսի վերաբերմունք կարելի էր սպասել մի գաղափարակից խմբագրից. բայց Պետրոս Սիմէօնեանցը իր գրական գործու-

նէութեան երկար ժամանակամիջոցում ցոյց տուեց որ նա չէ ընդունում Նազարեանցի սկզբունքներից և ոչ մէկը։ Եւ եթէ կարելի է հասկանալ այս տարօրինակ համակրութեան պատճառը, այդ հնարաւոր է միայն մի ենթադրութիւն անելով.—պահպանողական նոր սերունդը հաշտվում էր առաջադէմ ուղղութեան նախապետի հետ։ Բայց երբ առաջ եկաւ այդ առաջադէմ ուղղութեան նոր սերունդն էլ (Գրիգոր Արծրունի), նոյն այդ պահպանողական սերունդը զինվեց նրա դէմ ամենայն կատաղութեամբ...

## VI

Վերջին տարին։—Անհատական ձեռնտւութիւն եւ ժողովրդական ընդհանուր գործակցութեան գաղափար։—«Հիւսիսափայլի» ուղղութիւնը։—«Ազգային մտածութիւնք»։—Դարձեալ լեզուի, կրթութեան, դպրոցական կազմակերպութեան հարցեր։—Գրական կեանք։—«Ազգային թշուառութիւն»։—Կ. Պօլիսը, Սահմանադրութիւնը, արդարութիւնը։—Երկրորդ կիսամեակ, մահվան նշաններ։—Շիլլերի «Կասսանդրան» իբրեւ «Հիւսիսափայլի» վերջաբան։—Վերջին հառաչանք։—Աշխատակիցներ հրապարակախօսական բաժնում։—Յակոբ Մկրտիչ-Յակոբեան. «Աղթամարայ Կղզին»։—Միքայէլ Միանսարեան. դպրոցական սահմանադրութիւն, ժողովրդական կրթութիւն, մանկավարժական հարցեր։

«Հիւսիսափայլը» վերանորոգվեց անհատական ձեռնտուութեամբ։ «Փառք և պատիւ մի քանի ազնուամիտ և լուսաւոր Հայերի հոգաբարձութեան», ասում էր Նազարեանցը իր յայտարարութեան մէջ։ Այդ «մի քանիսները» քաջալերական հրաւէր են կարդում, օգնում են Նազարեանցին և նա նորից լսեցնում է իր ձայնը։

Հասարակական ձեռնտուութիւն դարձեալ չը կայ. անհատների օգնութիւնը այնքան նշանաւոր չէ, որ «Հիւսիսափայլի» դրութիւնը բարեփոխվի: Ամեն ինչ նոյն կարգով է գնում: Քաջալերութեան արժանացած Նազարեանցը ոչնչով չէ զանազանվում 1862-ի Նազարեանցից: Նա դարձեալ մենակ է. դարձեալ գործի ամբողջ ծանրութիւնը նրա ուսերի վրա է: «Հիւսիսափայլի» համարները դարձեալ փոխր են, լցվում են մեծ մասամբ Նազարեանցի թարգմանութիւններով. ամսագրական բաժինները դարձեալ չը կան: Մի խօսքով—ոչինչ բարեփոխումն: Ամեն ինչ ցոյց է տալիս որ գործը նոյն անբնական դրութեան մէջ է և չէ կարող երկարատև լինել…

Անհատական ձեռնտուութիւնը, որի շնորհիւ, լաւ թէ վատ, մի տարի էլ ապրեց «Հիւսիսափայլը», առիթ է տալիս Նազարեանցին արծարծելու այն միտքը, թէ փրկութիւն սպասել միայն հայ հարուստներից՝ անմտութիւն է. անապահով դասակարգերը միահամուռ գործակցութեամբ կարող են աւելի շատ և արդիւնաւոր գործեր կատարել քան այս կամ այն մեծատունը: Բացատրվում է ժողովրդի ինքնագործունէութեան մեծ սկզբունքը: Ազգային լուսաւորութիւնը պիտի նեցուկ ունենայ ժողովուրդը:



Հարուստ դասակարգը անպարտաճանաչ է, մեռած է հասարակաց բարիքի համար: Բայց «մի՞թէ դորանից հետևում է, որ և հասարակը պիտի յուսահատուի, ձեռքը գոգումը դնէ և բերանը բացած սպասէ միշտ. եթէ մեծատունը, որ կարող էր, չկամի բարեգործութիւն, չկամի ճանաչել ազգային օգուտը, ուրեմն մեք, աղքատ մարդիկս, ով և ինչ կարող ենք յառաջացնել մեր թոյլ կարողութեամբ: Ամենևին սխալ դատողութիւն: Մի ազգի գլխաւոր ուժը և զօրութիւնը հասարակի մէջ է, որովհետև հասարակի բազմութիւնը հարիւր հազարաւոր, իսկ մեծատունների թիւը տասն ու քսան է. բացի դորանից, աշխարհիս բոլոր ականաւոր գործերը իմաստութեան և ճարտարութեան մէջ, յառաջացած են ժողովրդի միջակ և չքաւոր դասակարգերից. աշխարհաշէն գիւտերը և յայտնագործութիւնքը արած են ժողովրդական կարգի մարդերի ձեռքով, որովհետև դոցա մէջ են ամփոփուած մի ազգի երևելի քանքարքը և շնորհքները»:

Ժողովրդական այսպիսի գեղեցիկ մտքեքերով է Նազարեանցը սկսում իր հրապարակախօսութիւնը 1864 թւականին: «Հիւսիսափայլը», այո, ունէր նոր-նոր ասելիքներ: Հինգ տարվայ գործունէութիւնը նրան հասունացրել էր, աւելի մեծ փորձառութիւն

էր տալ նրան. աջող հանգամանքների մէջ նա կարող էր այնքան առաջ գնալ, որ միանգամայն կը մօտենար կեանքի առօրեայ հարցերին և կը մշակէր նրանց աւելի բազմակողմանի կերպով: Նազարեանցի հրապարակախօսութեան պակասում էր երկարատեւութիւնը. այդ պատճառով էլ մենք նրա մէջ տեսնում ենք գեղեցիկ սկզբնաւորութիւններ, փայլուն, բայց չը զարգացրած կէտեր...

Այն յօդուածը, որից մենք բերում ենք այս խորհրդածութիւնները, կրում է «Ազգային Մտածութիւնք» վերնագիրը: Նա շատ ընդարձակ է և տպվեց «Հիւսիսափայլի» չորս համարներում: Հետաքրքրական է այն վերաբերմունքը, որ այդտեղ Նազարեանցը ցոյց էր տալիս դէպի միւս պարբերական հրատարակութիւնները: Խաղաղութեան և հաշտութեան խօսք է նա ասում իր եղբայրակիցներին: «Թո՛ղ չտրտմին դոքա ասիական նախանձով. ինչ եմ ասում, թող հիւրասէր մըտքով և եղբայրական ողջունով հանդէպ գան նորան»: Ո՛չ ոքին վնասել չէ ուզում «Հիւսիսափայլը». ընդհակառակն, նրա ձգտումն է իր եղբայրակիցների հետ մի շարքում կըռւել տգիտութեան և արատների դէմ: Կարծիքների տարբերութիւնը չը պիտի խանգա-



րէ, թշնամացնէ: «Ամենայն ծաղիկ ունի իւր գոյնը և իւր հոտը, ամենայն ծառ իւր տերևները և իւր տեսակ տեսակ համով պտուղները և ամենեցուն համար բաւական տեղ ու օդ կայ Աստուծոյ լայն ու արձակ աշխարհի վերայ»: Տեսակների, համի, հոտի այդ տարբերութիւնները հարկաւոր են, բնական են: Բայց ինչ է դա նշանակում: Մի՞թէ այն, որ լաւ է ամեն ինչ, մի՞թէ այն, որ ամեն տեսակ տարբերութիւն, ամեն տեսակ հակառակութիւն բարերար ու օգտակար է:

Ո՛չ, ասում է Նազարեանցը: «Հիւսիսափայլը» կը չարունակէ իր ուղղութիւնը: Նա պատրաստ է ընդունել հակառակ ուղղութիւնների օրինաւորութիւնն էլ: Բայց ինչ դէպքում: «Մտածող մարդերի կարծիքի զանազանութիւնը հարկաւոր և օգտակար է գիտութեան մէջ, եթէ դա հիմնաւորվում է օրինաւոր փաստերի և պատճառների, և ոչ պղտոր անձնական ախտերի կամ թէ հասարակ ամբոխի վեր ի վերոյ տեսութեան վերայ»: Ամբողջ հարցը հէնց այն հանգամանքի մէջ է որ մեզանում կարծիքի զանազանութիւնը թշնամական ախտ է դառնում: Նազարեանցի վերաբերմամբ դրա ապացոյցը Զէրքէզեանցն էր:

Սկսելով իր «Ազգային Մտածութիւնքը»

ընդհանուր խորհրդածութիւններով, Նազարեանցը գանգատներից ու պախարակումներից անցնում է գործնականին։ «Այժմ—ասում է նա—տխուր խորհրդածութիւնների ժամանակ չէ. մեր ժամանակը կարօտ է ուրիշ բաների քան թէ ողբի և արտասուքի մեր ազգային անբաղդութեան վերայ»։ Պէտք է դեղ գտնել այդ անբախտութեան դէմ։ Իսկ այդ դեղը ուսումն է։ Եւ Նազարեանցը երկար ու մանրամասն բացատրում է մի «կենտրոնական մայր դպրոցի» անհրաժեշտութիւնը, տալիս է այդ դպրոցի ծրագիրը, առանձին առանձին խօսելով աւանդելի գլխաւոր առարկաների մասին։

Կարիք չը կայ որ մենք դիմենք այդ ծրագրին։ Մեզ յայտնի են արդէն Նազարեանցի գաղափարները դպրոցական կազմակերպութեան մասին։ Միջնակարգ մի դպրոց՝ կլասիկական լեզուներով, հայերէն դասաւանդութիւն, ռուսերէնի առանձին լուրջ ուսումնասիրութիւն, բնական գիտութիւնների ուսուցում լայն չափերով—ահա այդ «մայր դպրոցը». այդպէս է միշտ ներկայացրել Նազարեանցը ժամանակի կրթական անխուսափելի պահանջը և մենք, որ հետևել ենք նրա գրուածքներին սկզբից, կարող ենք հեշտ եզրակացնել որ «Ազգային Մտածութիւնքը»



մանրամասնութիւններ շատ են պարունակում, բայց նորութիւն—ոչ։ Աւելացնենք միայն այն, որ ազգի փրկութեան միակ միջոց համարվող այդ «մայր դպրոցը», Նազարեանցի կարծիքով, պէտք էր բաց անել Նոր-Նախիջևանում։ Ինչու այդտեղ և ոչ թէ Թիֆլիսում կամ Արարատեան նահանգում։ Ինչպէս երևում է, Նազարեանցը այդ տեղերի վրա յոյս չունէր. Դպրոցի առաջին թշնամին կը լինէր ասիականութիւնը և այդ կողմից Նոր-Նախիջևանը, երևի, նման չէր հայաբնակ միւս տեղերին։ Որքան լաւ կը լինէր, եթէ Նազարեանցը ճանապարհորդած լինէր հայաբնակ տեղերում։ Այն ժամանակ նա աւելի լաւ տեղեակ կը լինէր ժողովրդի իրական կարիքներին։ Բայց գուցէ «մայր դպրոցը» պէտք էր Նախիջևանում բաց անել յատկապէս այն նպատակով, որ նա լինի Թէոդոսիայի Խալիբեան դպրոցի հակակշիռը, մի դպրոցի, որի ղեկավարն ու կազմակերպութիւնը Նազարեանցի համակրութիւնները վայելել չէին կարող։

Ինչ և իցէ։ «Ազգային Մտածութիւնքը» Նազարեանցը վերջացնում էր այսպիսի խօսքերով.

«Իմ վերջին խօսքը առ մերայինքը, այսպէս է. Ժամանակը դրել է Հայերի առա-

ջև կրակ և ջուր, մահ և կեանք. որին կամին, թող մեկնեն իւրեանց ձեռքը: Հայերի առաջև դրած է այսօր մի երկճիւղ հերակլէսեան ճանապարհ, դէպի առաքինութիւն և արատ, դէպի փրկութիւն և կորուստ: Թող ընտրեն, որը հաճոյ է նոցա: Մեք անպարտ ենք»:

Սրանք, ճիշտ որ, Նազարեանցի վերջին խօսքերն էին, ուղղած հայերին «Հիւսիսափայլի» էջերից, նրա, այսպէս ասած, գրական կտակը: Հրապարակախօսական յօդուած ազգի ցաւերի և կարիքների մասին նա այլ ևս չը գրեց: Բայց այդ կարապի երգից առաջ նա ունէր մի այլ յօդուած, որ արժանի է խորին ուշադրութեան: Դա տպված է փետրվարի համարում և կրում է «Ազգային Թշուառութիւն» վերնագիրը: Այդ Թշուառութիւնը այն դրութիւնն էր, որ ներկայացնում էին Թիւրքահայերի գործերը:

«Հիւսիսափայլի» կեանքի մէջ առաջին անգամն էր որ Նազարեանցը այդքան պարզ ու երկար խօսում էր Թիւրքահայերի մասին: Մենք իր տեղում նկատեցինք այն տարօրինակ հանգամանքը որ Նազարեանցի համար, կարծես, գոյութիւն չունէր Թիւրքիայի հայութիւնը, մինչդեռ «Հիւսիսափայլը» հրատարակվում էր մի այնպիսի ժամանակամիջո-



ցում, երբ Թիւրքահայերի մէջ կատարվում էին խիստ նշանաւոր պատմական դէպքեր. Զէյթունի ապստամբութիւնը, Ազգային Սահմանադրութեան հաստատվելը և այդ առիթով բռնկված կատաղի մաքառումները այն աստիճան նշանաւոր երևոյթներ էին Արևելքի կեանքում, որ նոյն իսկ եւրօպական լրագրութեան առանձին ուշադրութեան առարկայ էին դարձել: Սահմանադրական երիտասարդութիւնը, ոգևորված 1848-ի ֆրանսիական յեղափոխութեան սկզբունքներով, ժողովրդի վեհապետական իրաւունքներն էր պաշտպանում, մոռացված ու հարստահարված գաւառների ձայնն էր հնչեցնում. այդ երիտասարդութեան դէմ դուրս էին եկել խաւար ոյժերը, որոնք մատնութիւնների, աղմուկների միջոցով ուզում էին սպանել սկսված գործը: Եւ Մոսկվայի հայկական ազատամիտ ամսագրի համար գոյութիւն չունէին այդ բոլոր անցքերը: Կարծես զգալով այդ աններելի պակասութիւնը, Նազարեանցը հէնց յատկապէս իր սխալը ուղղելու համար էր որ 1864-ին վերսկսեց իր ամսագրի հրատարակութիւնը: Եւ արժէր հէնց միմիայն այդ «Ազգային Թշուառութիւն» յօդուածի համար հրատարակել:

Կ. Պօլսի Հայոց սահմանադրութիւնը, ինչ-

պէս յայտնի է, դեռ հազիւ ծնունդ առած ենթարկված էր վտանգների։ Յետադէմ, հընամոլ տարրերի ույժը այնքան բարձրացել էր, որ ազգային ինքնավարութիւն սահմանողները հարկադրված եղան զիջումներ անել, որովհետև թիւրք կառավարութիւնն էլ սահմանափակումների կողմն էր։ Ահա այդ կատաղի պայքարին էր նուիրված Նազարեանցի յօդուածը։ Մի յօդուած, որի նմանը չէք գտնի Նազարեանցի գրուածքների մէջ։ Ժողովրդական իրաւունքի, ազատութեան և առաջադիմութեան սկզբունքները այստեղ նըկարագրված և պաշտպանված են մի անսովոր եռանդով ու գեղեցիկ տրամաբանութեամբ։ Նոյն իսկ ոճն էլ այստեղ ուրիշ է և Նազարեանցի լեզուին, գրելու ձևին վարժ մարդը դժուարութեամբ է կարողանում հաւատալ թէ այդ յօդուածն էլ պատկանում է նրա գրչին, այնքան թեթև է նա, ազդու իր կարճ նախադասութիւններով, իր խստութեամբ, ոգևորութեամբ։ Այստեղ այլ ևս անորոշ, վերացական հրապարակախօսութիւն չէ. այստեղ կան անուններ, դէպքեր, որոնց վերաբերմամբ Նազարեանցը բռնում է որոշ դիրք, կամ պաշտպանում է կամ յարձակվում։

Ահա ինչպէս է նա նկարագրում հայ ժողովրդի դրութիւնը Թիւրքիայում.



«Մեք սարսափում ենք, երբ աչք ենք ձգում այն անչքացած, անապատացած աշխարհի վերայ, ուր երբեմն փողփողում էր Արշակունեաց յաղթակիր դրօշակը, ուր այժմ մեր խեղճ, անտէր և անօգնական ժողովուրդը միլիոնաւոր բազմութեամբ թշուառութեան, հարստահարութեան և յուսահատութեան մինչև հընարաւոր ծայրը հասած, փոխանակ արտասուքի, արիւն է քամում աչքերից, երբ լաց է լինում, և ուր, դարձեալ, հայակերպ և գիշերադէմ վամպիրները տակաւին չեն կշտանում անմեղ զոհի—խեղճ ժողովրդի—արիւնը ծծելուց։

«Մանր և յամրաշարժ էր ազգային լուսաւորութեան ընթացքը Տաճկաստանի մէջ և այդ ընթացքն ևս անհիմն և սայթաքելի. յայտնի է թէ այն թշուառ հանգամանաց մէջ ուրիշ կերպ չէր ևս կարող լինել։ Դարեր անցան, շատ ու շատ սերունդներ ահ ոհ քաշելով եկան գնացին, շատ իրաւունք ոտնակոխ եղան, մինչև որ սորանից մի քանի տարի յառաջ «Սահմանադրութիւն» բառը մեր ազգայինք արտասանեցին։

«Սահմանադրութիւն, կրկնեց հարստահարուած և կիսաշունչ ժողովուրդը. Սահմանադրութիւն, լսուեցաւ եգիպտական բուրգերից մինչև Վարագայ սարը. Սահմանադրութիւն, աղաղակեցին և հրճուեցան կենդանի երիտասարդները»։

Այդ սահմանադրութիւնը հաստատվեց,

ժողովուրդը իր իրաւունքների տէրը դարձաւ: Բայց լուսավախութիւնը չը վերացաւ, ազատութիւնը իր պատշաճաւոր յարգանքը չը գտաւ: Ազգային վարչութեան առաջին գործերից մէկը եղաւ Կ. Պօլսի «Մեղու» ազատախօս և համարձակ թերթի բերանը կապել, որովհետև նա քննադատում էր գործիչներին, մերկացնում էր արատները, ցոյց էր տալիս սահմանադրութեան պակասութիւնները: Ազգային վարչութիւնը խնդրեց Թիւրք կառավարութիւնից փակել «Մեղուն»: «Փառք Աստուծոյ, ի՞նչ է եղեր, օրէ օր ազգերնիս կը յառաջադիմէ կոր, քիչ մը պակասութիւնք կան եղեր... ուր տեղ չկայ, անոնք ալ կամաց կամաց կը շտկվին... հիմակու հիմայ սա չափով գոհ ըլլալու է, խոհեմութիւնը անանկ կը պահանջէ»: Ահա ինչպէս էր մտածում ազատ քննադատութեան բերանը փակող վարչութիւնը: Բայց Բ. Դուռը ազգային վարչութիւնից աւելի համբերող և ազատամիտ եղաւ և «Մեղուն» շարունակեց իր գոյութիւնը...

Ահա այս առիթով էր Նազարեանցը բարձրացնում իր ձայնը վամպիրների, լուսավախութեան, ազգային ինքնագոհութեան դէմ: Սահմանադրութիւնը նա յարգում փառաբանում էր, բայց ի՞նչ օգուտ մի օրէնքից, որ



մեռած տառ է մնում: Նազարեանցը խօսում է «Մեղուի» փաստերով և «Մեղուի» հետ միասին, իր ամբողջ կարողութեամբ պաշտպանելով «Մեղուն»:

Գաւառների դրութիւնը նկարագրեց Մեղուն, Վասպուրականի անայցել թըշուառութիւնքը ստորագրեց Մեղուն, Իգնատիոսի դիմակը վերայից հանեց Մեղուն, Տօրոսի խռովութիւնքը պատմեց Մեղուն, արժ. Խրըմեան Մկրտիչ վարդապետին պաշտպանեց Մեղուն, նորա վերայ, գիշերային լռութեան մէջ, հրացան դատարկողների ընդդէմ բողոքեց Մեղուն. գաւառ չթողեց, քաղաք չթողեց, գեղ չթողեց, թաղ չթողեց, ամեն ծակ ու ծուկ մտաւ ելաւ Մեղուն. թող մեռնի Մեղուն:

«Ազգի զաւակները սրիկաների մատնուած, սրախողխող են լինում իւրեանց մահիճների մէջ, Իգնատիոս եղ ծախելու շահաւէտ առևտրով է պարապում, նորա արբանեակը շինականի վերջին եզնը առաջ ձգած դէպի Իգնատիոսի ագարակն է գնում: Քաղաքական ժողովը Մեղուի քամակից ընկած, միջոց չունի այն արիւնաշաղախ տեսարանների վերայ մի րոպէ իւր աչքը ձգելու, «ազգերնիս կը յառաջադիմէ կոր»:

Ազգի աղջիկները և կանայքը կը տառապին և կը բռնաբարուին անօրինակ և անլուր ժպրհութեամբ. «ազգերնիս կը յառաջադիմէ կոր»: Մի քանի կին, մի

քանի աղջիկ «կը տառապին եղեր... ինչ
կըլլայ եղեր... ասդին ալ մխիթարական
տեսարանք պակաս են մի. Շողեր հանը-
մը, Դօրօթիա տուտուն թուղթն ու թաւ-
լուն առջևնին առած իրենք զուարճանա-
լէն զատ, ուրիշներուն էլ դաս կուտան»...
«Այո, ասում է Մեղուն, Մշեցոց կա-
րաւանը յառաջ է գնում։
«Այո, ասում է Մեղուն, թշուառութեան
և հարստահարութեան երեսից տխրու-
լով, գաղթական այրին հաց չունի իւր
լացող որդեկին տալու և արտգլին է ե-
րանի տալիս, որ նորա ձագերը կուշտ են.

«Մամի՛կ, պատառ մի հա՛ց...
—Հոգցա, յի՞նչ տեղից քըզ հացիկ ճարեմ...
Մէրիկդ թաղես, վա՛հ, անօթի ես...
Արգի՛լ, հօրի՞ն զթեւերդ թափ տուիր,
Հօրի՞ն զիմ Մոսոն քնից զարթ տուիր.
Արգիլ, քու ծագեր կուշտ են ու հանգիստ.
Մոսոն հաց կուզէ. Հըկա՜յ... կը քաղուի՛ հոգիս։

«Ասացին լացին, լացին ասացին... վեր
կացին երեանին խաչակնքեցին. Աստուած
կանչեցին, ձեռք ձեռքի բռնեցին, սկսան
քալել կարաւանի ճամփով։
«Ազգերնիս կը յառաջադիմէ կոր»։

Ահա ինչ տեսակ լեզուով էր խօսեցնում
թշուառութիւնը։ «Սուրբ բռնութիւն», այսօր
այս խօսքն ենք մրմռքելով տեսանում
ազգային վարչութեան դրօշի վերայ», ասում



է Նազարեանցը և բացականչում. «Ազգերնիս
կը յառաջադիմէ կոր»։
Այդ մորմոքն է հաղորդել Նազարեանցի
գրչին այնքան անսովոր սրութիւն, հեգնանք,
սուրբ ու աղնիւ վրդովմունք։ Ինչէր չէր ա-
նի այդ գրիչը, եթէ շարունակէր այդպէս
շարժվել։
Բայց շարունակել չը կար։ Անցնում է
«Հիւսիսափայլի» առաջին կիսամեակը։ Երկ-
րորդ կիսամեակում այլ ևս չէ կարելի ճա-
նաչել մեր Նազարեանցին։ Նա այլ ևս չէ
նայում մեր իրականութեան. միակողմանի
ու անտարբեր են ամսագրի տետրակները,
աւելի ևս նիհար, փոքրացած։ Խմբագիրը ըն-
ման է մի մարդու, որ պարտաւորութիւն
ունի յանձն առած և շտապում է մի կերպ
կատարել, վերջացնել այդ պարտաւորութիւ-
նը։ Բաժանորդագրութեան ժամանակն է գա-
լիս, բայց նա մի բառ անգամ չէ ասում յա-
ջորդ տարվայ մասին։ Այլ ևս ոչ դիմում, ոչ
ակնկալութիւն։ Յայտնի է որ ոչինչ չի լինի։
Այս մի տարին դրա մի աւելորդ ապացոյցն էր։
Հրատարակվում է 1864-ի նոյեմբերի հա-
մարը, վերջինը։ Եւ այդտեղ, վերջերում, Նա-
զարեանցը գնում է Շիլլերի «Կասանդրա»
թարգմա-
բանաստեղծութեան իր կատարած
նութիւնը, բայց իրանից աւելացնում է մի

նոր վերնագիր—«Վերջաբան Հիւսիսափայլի»։ Վեց տարի ամսագրի գործը տանելով, Նազարեանցը աւելորդ համարեց վերջին հրաժեշտի խօսքը ասել իր ընթերցողներին։ Շիլլերը պիտի ասէր այդ խօսքը։ Եւ սրտառուչ, տխուր ու միանգամայն իրաւացի էր մեծ բանաստեղծի այդ խօսքը։

Հէնց կարելի է հասկանալ որ Շիլլերի բանաստեղծական հանճարը «Կասանդրայի» մէջ դրել է Նազարեանցի նման մարդկանց վիշտն ու գանգատները։ Հին յունական պատմութիւնից է վերցրած այդ քրմուհի աղջկայ անձնաւորութիւնը։ Կասանդրան գուշակող էր, մարգարէուհի. տեսնում էր իր հայրենիքի կորուստը, ասում էր, քարոզում, բայց ոչ ոք չէր լսում նրան։ Եւ նա դափնիների անտառում գանգատ է անում աստուածներին։ Շուրջը անտարբերութիւն, իսկ նա պարզ տեսնում է գալոց օրերը։ Չեն լսում, դրանից աւելի վատ բան են անում.

*«Եւ այդ մարդիկ հայհոյում են իմ ողբ ու լաց,*
*Արհամարհում ցաւ եւ կսկիծ ճնշուած սրտիս.*
*Դէպ անապա՛տ պիտի տանեմ, առանձնացած,*
*Իմ տանջուած սիրտ, իմ վիրաւոր, անյոյս հոգիս։*

Եւ հեծում է նրա սիրտը, վիրաւորված անողոք ճակատագրից։ Ինչո՞ւ է տուած այդ ճակատագիրը, ինչո՞ւ նա էլ ուրիշների պէս չէ։



*Քո պատգա՛մը քարոզելու, է՞ր ձգեցիր*
*Դու ինձ քաղաք այս յաւիտեա՛ն, մի՛շտ կոյրերի,*
*Իմ աչքը բաց, հոգիս արթուն եւ կամքս ժիր,*
*Մարդերի մէջ, անմտութեամբ ապրողների:*
*Է՞ր տուեցիր ինձ տեսութիւն ապագայի,*
*Որ չեմ կարող դարձուծանել ոչինչ կերպով.*
*Ճակատ՚գիրը այսօր էգուց պիտի լցուի,*
*Զարհուրելին մօտենում է շտապ քայլերով:*
*Ի՞նչ օգուտ է վերացնել քօղ թագնութեան,*
*Երբ մօտահաս է սոսկալի ծախորդութիւն.*
*Մարդուս կեանքը մոլորութիւն է լոկ, միայն,*
*Եւ մեռուցիչ մահ է նորան գիտակցութիւն:*
*Վե՛ր կալ, վե՛ր կալ պայծառութիւն այն տրտմական*
*Եւ իմ աչքից այն արիւնոտ, խիստ երեւոյթ.*
*Մի ահաւոր պաշտօն է Քո ճշմարտութեան*
*Մահկանացու եւ հողեղէն լինել անօթ:*

*Իսկ կուրութիւն տո՛ւր ինձ դարձեալ, ով դու Պիւթեան,*
*Եւ դորա հետ իմ խնդամիտ մռայլ հոգի.*
*Երբէք տաղեր չերգեցի ես ուրախութեան,*
*Քանի որ ես ձայն բարբառող եմ Քո կամքի.*
*Դու ապագայք տուեցիր ինձ, գալոց օրեր,*
*Բայց խլեցիր դու ինձանից րոպէն ներկայ,*
*Դու խլեցիր կեանքի մին մին զուարճ ժամեր—*
*Քո սուտ պարգեւ, միայն ցաւեր, վե՛ր կալ ահա։*

Հրաժեշտի, այո, մի աննման խօսք։ Եւ Նազարեանցին մնում էր միայն մի բան աւելացնել։ Խօսելով դրանից յետոյ բանաստեղծ Ս. Շահազիզի նոր հրատարակած «Լեւո-

նի Վիշտը» գործի մասին, մի գործ, որի մէջ Լևոնը պատկերանում է մեր խաւար իրականութեան դէմ բողոքող, Նազարեանցը ասում է. «Աստուած տայ, որ այդ սուրբ հոգեզմայլութեամբ յափշտակուած բանաստեղծի բարբառը չլինէր դարձեալ ձայն բարբառոյ յանապատի, ինչպէս հազարաւոր այդպիսի ձայներ մինչև օրս անլսելի ցնդուած են հայկական կեանքի տրտում անմխիթար անապատի մէջ»:

Աստուած տայ... Դա հօրիզոնից անհետացողի վերջին հառաչն էր: Այդպէս հառաչեց «Հիւսիսափայլը» և յաւիտեան փակեց իր աչքերը...

Մենք վերջացրինք «Հիւսիսափայլի» հրապարակախօսութեան տեսութիւնը: Բայց այստեղ մեզ վրա պարտք կայ գոնէ մի քանի խօսքով յիշատակելու ամսագրի այն աշխատակիցներին, որոնք աջակցել են Նազարեանցին հրապարակախօսութեան բաժնում:

Շատ քիչ են այդպիսիները. վեց տարվայ ընթացքում մենք հազիւ հանդիպենք մի երկու-երեք մարդկանց, որոնք անվախ կերպով մշակել են հասարակական հարցեր: Դր-



րանց մէջ գլխաւորը, առաջնակարգը, իհարկէ Նալբանդեանցն է: Մենք այստեղ, սակայն, չենք խօսի նրա մասին: Այնքան նշանաւոր է նրա գործունէութիւնը այդ ասպարէզում, որ պէտք է առանձին, մանրամասն խօսել նրա մասին: Բաւականանանք, ուրեմն, այնքանով, ինչ մինչև այժմ ասել ենք Նալբանդեանցի վերաբերմամբ և անցնենք միւս աշխատակիցներին:

Մենք հնարաւոր ենք համարում վերցնել «Հիւսիսափայլի» փոքրաթիւ աշխատակիցների շարքից միայն երկու անուն—Յակոբ-Մէլիք Յակոբեան և Միքայէլ Միանսարեան: Մէլիք-Յակոբեանին մենք արդէն յիշատակել ենք. մնում է այստեղ ծանօթանալ այն հրապարակախօսական տարրերի հետ, որոնք գտնվում են նրա առաջին գրուածքում: Թէ Մէլիք-Յակոբեանը և թէ Միանսարեանը աչքի են ընկնում «Հիւսիսափայլի» էջերում գլխաւորապէս այն պատճառով, որ երկուսն էլ իրականութեան հարցեր էին շօշափում իրանց գրչով: Բացի դրանից, երկուսն էլ «Հիւսիսափայլից» յետոյ էլ հետքեր են թողել մեր գրականութեան մէջ, մէկը հռչակված իբրև Րաֆֆի, իսկ միւսը իբրև համեստ աշխատաւոր:

Յակոբ Մէլիք-Յակոբեանը, ինչպէս յայտ-

ՅԱԿՈԲ ՄԵԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆ

նի է, Սալմաստի Փայաջուկ գիւղից էր, վաճառականի որդի։ Ճակատագիրը այնքան բա-



րեհաճ եղաւ դէպի նրան, որ նա պատանեկութեան հասակում բախտ ունեցաւ դուրս գալ Պարսկաստանի խաւարից և մի կտոր կրթութիւն ստանալ Թիֆլիսում։ Հայրն էր նրան Թիֆլիս բերել իր վաճառականական ճանապարհորդութեան ժամանակ։ Հայրը համաձայնվեց թողնել նրան Թիֆլիսում մօտ ութ տարի. նոյն հայրն էլ չը թողեց որ Յակոբը վերջացնէ ուսումը Թիֆլիսի գիմնազիայում և 1856-ին կանչեց նրան իր մօտ, Սալմաստ, առևտրական գործերով զբաղվելու համար։ Բայց այդ երիտասարդ վաճառականը այլ ևս կորած չէր. դպրոցը բաց էր արել նրա աչքերը, ծանօթացրել էր եւրոպական հորիզոնների հետ և, որ գլխաւորն է, վառել էր նրա մէջ բնատուր տաղանդը։ Ահա այդպիսի կայծեր կրելով իր մէջ, նա 1858 թւականին առևտրական գործերով գնում է Թիւրքիա, ճանապարհորդում է Վասպուրականի կողմերում։

Հայկական այդ հին, այնքան նշանաւոր նահանգի չքնաղ բնութիւնը, անցեալի բազմաթիւ անուանի յիշատակարանները, պատմական վայրերը, ուր դեռ շարունակում էր ապրել մի ստուար նահապետական ժողովուրդ, յափշտակում են երիտասարդ վաճառականին, վառում են նրա սրտում մի հայ-

բնասիրութիւն, որ յետոյ այնքան գեղեցիկ կերպով պիտի պատկերանար «Կայծերի» մէջ։ Նա տեսնում է, զգում է, բայց ամեն ինչ պահում է սրտի մէջ։ Ինքնագոհ հայրենասէրներից չէր, որոնք հրճւում են մի որ և է հռչակաւոր վանքի, հին բերդի տեսքից և միայն դրա մէջ էլ տեսնում են հայրենասիրութեան փախճանական նպատակը։ Մելիք-Յակոբեանին տանջում է ներկան, որ մի անշունչ դիակ էր ներկայացնում։ Ո՞ւր խօսել այդ դիակի, այդ վէրքերի մասին։ 1859 թւին նա ստանում է «Հիւսիսափայլը», մեծ հաճութիւն է զգում։ «Երկար ժամանակ փափագում էի տեսնելու մի այդպիսի օրագրի հրատարակութիւն, որի մէջ ճշտութեամբ պատկերանային Հայոց ազգի վէրքը և նոցա բժշկութեան համար գործադրելի հնարները», ասում է նա։

Եւ ինքն էլ գրիչ է վերցնում, նկարագրում է այն հեռաւոր, գեղեցիկ, բայց դժբախտ երկրում իր աչքով տեսած վէրքերը, ուղարկում է «Հիւսիսափայլին»։ «Աղթամարայ Վանքը»—այսպէս է կոչվում Մելիք-Յակոբեանի այդ առաջին գործը։ Նրա մէջ արդէն բաւական որոշ երեւում է ապագայ Րաֆֆին. բնութեան սիրուն նկարագրութիւններ, կէս-վիպական պատմուածք։ Բայց Մէ-



լիք-Յակոբեանին այդ գրաւիչ, թեթև ոճը, նկարագրական տաղանդը շնորհված էին ոչ թէ գեղեցկութիւն և վայելչութիւն երգելու, այլ քարոզելու, բողոքելու համար։ Դա մի տաղանդաւոր հրապարակախօս էր՝ վիպագրողի, բանաստեղծի մէջ նստած։

«Աղթամարայ Վանքը» լոկ նկարագրութիւն չէ, այլ և խորհրդածութիւն «ազգային լուսաւորութեան վերայ»։ Որքա՜ն թանձր գոյներով է նկարում Մելիք-Յակոբեանը այն դժբախտ դրութիւնը, որի մէջ թաղված էր Վասպուրականը։ Խաւար և խաւար ամեն տեղ. երիտասարդ ճանապարհորդը պատմում է իր խօսակցութիւնը Աղթամարի գլխաւոր վարդապետի հետ և դուք յուսահատութիւն էք զգում այդ հոգևորականի դատողութիւններից։ Վարդապետի հետ են մի քանի տեղացիներ, որոնց միամիտ, խեղճ աշխարհայեացքները սգալի են։ Չորս կողմում դուք լոյսի նշոյլ չէք տեսնում։ Միայն երիտասարդ վաճառականն է, որ հնութեան այդ մութ աւերակների վրա հնչեցնում է առաջադիմութեան, քաղաքակրթութեան, գիտութեան խօսքը։ Նա պաշտպանում է Խրիմեան վարդապետին, որ այդ ժամանակ լոյս էր ածում վառել Վասպուրականում և հէնց այդ պատճառով էլ հալածվում էր տգէտ հոգևորա-

կաններից։ Դա ժամանակի ամենանշանաւոր հարցերից մէկն էր։ Եւ Մէլիք-Յակոբեանը, դատապարտելով հոգևորականութեան արատները, գիտութիւն և լուսաւորութիւն կանչելով, ի վերջոյ իր սրտի թախիծը յանձնում է Աղթամարի ծովին «Ջա՛յն տուր, ով ծովակ» բանաստեղծութեան մէջ, որ այժմ շատ տարածված երգ է...

Այսպիսի գրուածքներ Մէլիք-Յակոբեանը շատ չը տուեց «Հիւսիսափայլի» ընթերցողներին, թէև կարող էր՝ նրա ճանապարհորդութիւնները Պարսկաստանում և Թիւրքիայում՝ ժողովրդի կեցութիւնը նկարագրելու գեղեցիկ միջոցներ էին։ Յաջորդ 1861 թւականին «Հիւսիսափայլի» մէջ տպվում է նրա մի նամակը, որի մէջ տեղեկութիւններ է հաղորդում Պարսկաստանի ասօրիների մէջ գործող կաթօլիկ և բողոքական միսիօնարների մասին։ Հետաքրքրականը այստեղ այն է, որ նրա համակրութիւնը բողոքականների կողմն է, որովհետև այս քարոզիչները Սալմաստում հիմնել էին բարեկարգ դպրոց, տպարան ասօրիների համար։

«Հիւսիսափայլի» միւս աշխատակիցը— Միքայէլ Մեսրոպեան Մինասարեանց, մի շատ ինքնուրոյն, հետաքրքրական դէմք է մեր գրականութեան մէջ։ Մինասարեանցը օֆիցեր

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍԱՐԵԱՆՑ

էր. բայց զինուորական ծառայութիւնը չէր արգելում նրան լինել մի լաւ ազգասէր հայ, տոգորված առաջադիմական գաղափարներով։ Հայոց գրականութիւնը, հայ ժողովրդի կըրթութիւնը այն նուիրական գործերն էին, որոնց ծառայելու համար նա չը խնայեց իր համեստ գրական ընդունակութիւնները և անշէջ եռանդը։

Միանսարեանցը, որքան մենք գիտենք, սկսեց գրել «Մեղուի» մէջ։ Բայց այստեղ էլ Մանդինեան քահանայի հնապաշտական շըրջանում, նրա գրուածքի մէջ երևում է թարմ առաջաւոր հոսանքների ազդեցութիւնը։ «Հիւսիսափայլի» մէջ Միանսարեանցը տպեց նախ մի գեղեցիկ յօդուած հրապարակախօսութեան մասին։ Այստեղ նա անգլիական ազատ մամուլի օրինակով ցոյց էր տալիս թէ որպիսի մեծ նշանակութիւն ունի քաղաքակրթութեան գործում անկախ և համարձակախօս հրապարակական քննադատութիւնը։ Մերկացնող ուղղութիւնը այն փըրկութիւնն է, որ պէտք է սպասել մամուլից. մերկացնել ազգի պակասութիւնները չէ նշանակում անպատուել, կործանել ազգը, այլ ծառայել նրան ազնւութեամբ, բարեացակամութեամբ։

1861 թւականին Մատթէոս կաթողիկոսը



հաստատեց Ներսիսեան դպրոցի այն կանոնադրութիւնը, որ մշակել էին Թիֆլիսի հայերը գեներալ Երեմիա Արծրունու ղեկավարութեամբ։ Կանոնադրութիւնը ստեղծում էր դպրոցական ինքնավարութիւն, հիմնված ժողովրդական ընտրութեան վրա։ Դպրոցի ղեկը յանձնվում էր հոգաբարձական մարմնին, որ ընտրվում էր ժողովրդի քուէով. այսպիսով ինքը, ժողովուրդն էր հանդիսանում դպրոցի տէր և հոգևոր իշխանութեան մնում էր վերահսկողի դերը։ Նոյն այդ սկըզբունքը Մատթէոս կաթողիկոսը մտցրեց և միւս հայ դպրոցների կառավարութեան մէջ։ Դա մի շատ խելացի և կենսատու կարգադրութիւն էր. նոր կազմակերպութեան շնորհիւ մեր դպրոցների համար բացվեց զարգացման և առաջադիմութեան փայլուն շրջան։

Միանսարեանցը կաթողիկոսի այդ կարգադրութեան առիթով տպագրեց «Հիւսիսափայլի» մէջ մի ուրիշ գեղեցիկ յօդուած, որ բացատրում էր դպրոցական սահմանադրութեան մեծամեծ բարիքները. ժողովրդի մասնակցութիւնը դպրոցների վարչութեան մէջ նա համարում էր կրթական գործի յառաջադիմութեան ամենալաւ գրաւական և խորհուրդ էր տալիս աւելի ևս զարգացնել այդ բարերար սկզբունքը, բաց անելով ժողովըր-

ղական դպրոցներ, տարածելով գրագիտութիւնը ամբոխի մէջ։ Մի ժողովուրդ, ասում էր նա, դրանով միայն կարող էր իր կենդանութիւնը պահպանել. չը պէտք է մոռանալ, որ, ինչպէս ասել է մի նշանաւոր անգլիացի, «վարժապետի այբուբենքը աւելի կարող ու զօրաւոր են քան թէ պատերազմողների նիզակները»։

Բայց «վարժապետի այբուբենքը» այդքան հրաշագործ լինել կարող են այն դէպքում միայն, երբ դպրոցը համապատասխանում է ժամանակի պահանջներին և ազգի պէտքերին։ Եւ Միանսարեանցը ուշադրութիւն էր հրաւիրում երկու գլխաւոր գործօնների վերա—դասագիրք և մանկավարժ։ Լաւ դասագրքեր պատրաստելու և տարածելու համար նա առաջարկում էր կազմել մի ընկերութիւն, որ հարկաւոր դրամը կը հաւաքէր, և մի յատուկ յանձնաժողով, որ դասագրքերի ընտրութիւն կանէր և կը հրատարակէր։ Թէ Միանսարեանցը որքան ահագին նշանակութիւն էր տալիս դասագրքերին, այդ երևում է նրանից, որ նա հարկաւոր էր համարում յոյս չը դնել գործի գլուխ անցածների սեփական ոյժերի վրա, այլ առաջարկում էր որ յանձնաժողովը դիմումներ անէ եւրոպական յայտնի համալսարանների պրոֆէսորներին



և խնդրէ նրանց խորհուրդները։ Իսկ մանկավարժներ պատրաստելու համար Միանսարեանցը առաջարկում էր հայ երիտասարդներ ուղարկել Եւրոպա՝ յատկապէս մանկավարժութիւն ուսումնասիրելու և ապա բաց անել մի դպրոց, որի նպատակն ու կոչումը կը լինէր ուսուցիչներ պատրաստել ժողովրդական դպրոցների համար։

Ահա թէ ինչպիսի լուսաւոր մտքերի և դաւանութիւնների մարդ էր հեծելազօրքի կապիտան Միքայէլ Միանսարեանցը, որ ունէր և համալսարանական կրթութիւն։ «Հիւսիսափայլում» նա երկար չաշխատեց, բայց այդ համակրելի գործիչի պատկերը մենք կը կամենայինք այստեղ ամբողջացնել մեր ընթերցողների առաջ, աւելացնելով որ նա վաթսունական թւականների երկրորդ կէսից Պետերբուրգում սկսեց հրատարակչական և մատենագրական մի գործունէութիւն, որ այժմ էլ շատ գեղեցիկ տպաւորութիւն է թողնում իր յատկութիւններով։ Գնելով հայերէն տառեր, նա մի շարք գրքեր տպագրեց։ Ո՞ւմ չէ յայտնի նրա «Քնար Հայկականը»։ Նա թարգմանեց Լաբուլէի «Ազգային Կրթութիւնը», Կոմբի «Խնամատարութիւն Մանկանց». կանոնաւոր և վայելուչ գրութեան ձեռնարկներ հրատարակեց և իր այդ բոլոր աշխա-

ատութիւնների մէջ դրեց հետաքրքրական և խելացի յօդուածներ, նուիրված ժամանակակից գրական-հասարակական հարցերին. իւրաքանչիւր գրուածքի մէջ նկատվում է ձգտում մի բան սովորեցնել ժողովրդին, մի օգտակար տեղեկութիւն հաղորդել նրան։ Աւելացնենք այդ բոլորի վրա նրա կազմած „Bibliographia"-ն, մի լուրջ աշխատութիւն, որի մէջ հաւաքված են այն բոլոր գրուածքների անունները, որոնք վերաբերվում են Կովկասին և Անդրկովկասին։

Հասարակական գաղափարների այն եռանդոտ, փայլուն ժամանակի մի գեղեցիկ երեւոյթն էլ այդ գինուորականն է, որ նուիրված է իր ազգի մտաւոր վերածնութեան գործին։ Այդպիսի երեւոյթ մեզանում շատ քիչ է տեղի ունեցել...

# IX

«Հիւսիսափայլը» իբրեւ գրական ամսագիր:—1. Թարգմանական գրականութիւն:—Նազարեանցի մասնակցութիւնը. տարօրինակութիւններ ընտրութեան մէջ:—Կիկերոն, Ներսէս Լամբրոնացի, Բոկլ:—Եւրոպական գլուխ-գործոցներ. Շիլլեր, Շատոբրիան, Քալդերոն, Ալֆիերի:—Թարգմանիչ աշխատակիցներ. Նալբանդեանց, Համասփիւռ, Ռափայէլ Պատկանեան, Գէորգ Բարխուդարեան, Մանուկ Սաղաթեան:—2. Ինքնուրոյն գրականութիւն:—Վէպ. «Մեռելահարցուկ» Նալբանդեանցի, «Տէր Սարգիս» Գ. Տէր-Յովհաննիսեանցի:—Թատրոնագրութիւն. «Հայոց ազգի լուսաւորիչը» Ա. Սուլթանշահի:—Բանաստեղծութիւն. Նալբանդեանց, Ռեւսկի, Սմբատ Շահազիզ, Գ. Բարխուդարեան:—Եզրակացութիւններ:

«Հիւսիսափայլի» գլխաւոր ոյժը հրապարակախօսութեան մէջ էր։ Դրանով էր նա զարթեցնում քնած միտքը, հասարակական և քաղաքակրթական գաղափարներ յուզում, ազգային ինքնաճանաչութեան հիմքը դնում։ Բայց «Հիւսիսափայլը» կարեւոր դեր է կատարել մեզ համար և իբրև եւրոպական ու-

գով խմբագրվող մի հրատարակութիւն։ Հըրապարակախօսութիւնից անհամեմատ մեծ տեղ բռնում էր նրա մէջ գրական-գիտական բաժինը. Նազարեանցը անդադար այս բաժնի վրա էր աշխատում, այնքան շատ, որ վեց տարվայ ընթացքում նրա տուածը կարելի է հարստութիւն անուանել։

Գիտական բաժնի վերաբերմամբ մենք այստեղ այնքանը կասենք, որ դա շատ լաւ հասկացված մի պահանջի արտայայտութիւն էր։ Ժողովրդականացնել բնական գիտութիւնները, մարդկային ազգի պատմութիւնը —դա մի գործ էր, որ դեռ չէր տեսել ռուսահայը և որին նա կարօտ էր իբրև լուսաւոր ժամանակի մի բոլորովին անպատրաստ զաւակ։ Չէ կարող լուսաւորութիւն լինել առանց ժողովրդականացրած գիտութեան. և եթէ մինչև այժմ էլ մեզանում շատ քիչ բան է արված այդ ուղղութեամբ, պատճառը պարզապէս այն միայն կարող է լինել, որ Նազարեանցի պէս մշակներ են պակասում մեզ։

«Հիւսիսափայլի» գիտական բաժնի մէջ կարելի է գտնել և շատ թերութիւններ։ Դատելով մեր այժմեան պահանջների տեսակէտից, այդ բաժինը նախ և առաջ հանրամատչելի չէր. ժողովուրդը նրան հասկանալ չէր կարող։ Շատ տեղերում մենք տեսնում ենք



որ «Հիւսիսափայլը» խօսում է, կարծես ոչ մի կասկած չունենալով թէ ընթերցողները պատրաստված են, ծանօթ են շատ բաների և կը հասկանան գիտական բացատրութիւնները առանց դժուարութեան։ Դա սխալ էր. հայ ամսագիրը պիտի ի նկատի ունենար որ իր ընթերցողները են և կարող են լինել ամենամեծ մասամբ այնպիսինները, որոնք ոչինչ պատրաստութիւն չունեն, որոնք միայն հայերէն են կարդում և հետևաբար կարօտ են այբուբենական ճշմարտութիւններին։ «Հիւսիսափայլը», այո, այս դրութիւնը մոռանում էր։ Բայց կան նրա համար և շատ արդարացուցիչ հանգամանքներ. ի նկատի ունենանք գործի նորութիւնը, հայերէն անմշակ լեզուի աղքատութիւնը, վերջապէս հէնց այն, որ գիտութիւնը ժողովրդականացնելու համար էլ մասնագիտական տաղանդ է հարկաւոր։ Մեծ պատիւ է նրա համար և այն, որ նա բազմակողմանի կերպով հայացրեց գիտութիւնը։ Այդ մեծագործութեան նշանակութիւնը հասկանալու համար, բաւական է, օրինակի համար, տեսնել թէ ինչ բաների մասին է խօսել «Հիւսիսափայլը»։ Բացէք ամսագրի 1858 թւականը. այդտեղ դուք կը տեսնէք Նալբանդեանցի մի յօդուածը, որ խօսում է տիեզերքի կազմութեան մասին։ Դուք այդտեղից

տեղեկութիւններ էք ստանում մամօնտի,
մաստոդօնի, մեգաթերիոնի և այլ հանքային
(հողի տակ գտնված) նախնական կենդանի-
ների մասին։ Փակեցէք այնուհետև «Հիւսի-
սափայլը» և մտքով առաջ եկէք մինչև մեր
օրերը։ Գիտութիւնը 1858 թուականից ինչ
հսկայական առաջադիմութիւններ արաւ, ինչ
լայն հօրիզօններ բացեց։ Բայց մեր գրակա-
նութեան մէջ ոչինչ չը կայ այդ մասին։ Եւ
եթէ այսօր հարկաւոր լինի ցոյց տալ հայ
ընթերցողին մի աղբիւր, որից նա կա-
րող լինէր իմանալ թէ ինչ է Իխթիօսաւ-
րոսը կամ Պլեզիօսաւրոսը, դուք ուրիշ բան
չէք ունենայ ձեռքի տակ, բացի Նալբանդ-
եանցի այդ յօդուածից։

Այո, կէս դար առաջ մարդիկ հասկանում
էին թէ ինչպէս պէտք է կրթել ժողովուրդը։
Նրանք շատ լաւ էին ըմբռնել թէ ինչ պէտք
է տալ, և նրանց մեղը չէ, եթէ նրանց տուա-
ծը շատ չէր, սիստեմով չէր, շատ քիչ կար-
դացողներ ունէր։ Չը մոռանանք այդ ժամա-
նակները։ Մենք ունէինք մի ժողովուրդ, որի
մէջ դեռ նոր պէտք էր տարածել ընթերցա-
նութեան սէր։ Ընթերցող չունէր Իխթիօ-
սաւրոսի մասին խօսողը։ Եւ նրա վրա պար-
տաւորութիւն կար ոչ միայն պատմել թէ
ինչ են հանքային ահագին կրիաները, այլ և



գրաւել գրագէտներին դէպի գիրքը, դէպի
ամսագիրը։ Իսկ դրա միակ միջոցն էր տալ
ժողովրդին թեթև ընթերցանութեան նիւթ,
գեղարուեստական գրականութիւն։ Մեզա-
նում չը կար և չէր կարող լինել այդպիսի
բան, ուստի պէտք էր դիմել թարգմանու-
թիւններին։ Այդպէս էին անում թիւրքահայ-
երի մէջ շատերը, այդպէս էր անում և «Հիւ-
սիսափայլը» մեզ համար։ Նազարեանցը մեծ
ուշադրութիւն է դարձնում և թարգմանա-
կան վէպի վրա։ Նա է այդ ասպարէզում ա-
մենից շատ աշխատողը։ Վեց տարվայ ըն-
թացքում նա քրքրում էր եւրօպական գրա-
կանութիւնը, ընտրութիւններ էր անում իր
թարգմանութիւնների համար։

Մեծ տարօրինակութիւն է երևում այդ
ընտրութիւնների մէջ։ Շատ են այնպիսի
պատմուածքներ, վէպեր, յօդուածներ, որոնց
Նազարեանցը կարող էր և չը պիտի թարգ-
մանէր։ Բայց կան և այնպիսի թարգմանու-
թիւններ, որոնք աւելորդ չեն ոչ մի գրա-
կանութեան մէջ։ Մարդ զարմանում է,
մօտիկից ծանօթանալով «Հիւսիսափայլի»
թարգմանութիւնների կոյտի հետ։ Մեր առ-
ջև երևան են գալիս այնպիսի գործեր, որոնք
կարող են մեզ ուղղակի թելադրել թէ Նա-
զարեանցը գրական ոչինչ ճաշակ չունի. ա-

պա հանդիպում ենք այնպիսի գործերի, որոնք ցոյց են տալիս թէ Նազարեանցը ոչինչ հասկացողութիւն չունի իր ընթերցողի պահանջների մասին։ Սակայն գալիս են և այնպիսի գործեր, որոնք պարզ ապացուցանում են որ Նազարեանցը շատ լաւ ծանօթ էր եւրոպական գրականութեան և գիտէր պատուաբեր ընտրութիւններ անել նշանաւոր հեղինակութիւններից։

Այս հակասութիւնները խիստ որ զարմանալի են։ Զարժէր թարգմանել, օրինակի համար, «Շէյխը և նրա դուստրը» (1858, № 1) և դրա նման ուրիշ շատ բաներ, որոնք ցըրված են «Հիւսիսափայլի» տետրակներում։ Դրանք ճաշակի պակասութիւն են ցոյց տալիս։ Ընթերցողների պահանջները չը հասկանալու արդիւնք են այնպիսի ահագին թարգմանութիւններ, ինչպէս են «Մարկոս Տուլլիոս Կիկերոնի ատենական ճառերը ընդդէմ Լ. Կատիլինայի», «Ատենաբանութիւն Կիկերոնի վասն Ամերիացի Սեքստոս Ռոսկիոսի», «Կիկերոնի Լելիոսը կամ վասն բարեկամութեան ճառ», «Ներսէս Լամբրոնացու ատենական խօսքը Տարսոնի Տիեզերական (?) ժողովի մէջ»։ Դրանք մեռած ու անպտուղ նիւթեր էին, ոչ ոքի հետաքրքրութիւն չարժել չէին կարող և ապահովապէս դատապարտ-



ւած պիտի լինէին անուշադրութեան, թէև այնքան մեծ տեղ էին գրաւում «Հիւսիսափայլի» նիհար տետրակների մէջ։ Բայց ահա այդպիսի անպտուղ թարգմանութիւնների շարքում ձեր աչքին են ընկնում Շիլլերը, Ալֆիերին, Բայրոնը և դուք խմանում էք որ Նազարեանցը գրական լայն զարգացում ունի, գոհարներ ընտրել էլ գիտէ։

Փորձենք բացատրել այս տարօրինակութիւնների պատճառը։ Ինչու այդքան վայրիվերոյ են թարգմանութիւնները, ինչու այդքան պատահական բնաւորութիւն են կրում և թռիչքը աննշանից դէպի լաւը, հարկաւորից դէպի անպէտքը այնքան աչքի ընկնող է։

Այս հարցերը լուծելու համար մենք պիտի ի նկատի ունենանք մի շարք հանգամանքներ։ Ամենից առաջ յիշատակենք այն, որ անպտուղ թարգմանութիւնները պատահում են «Հիւսիսափայլի» առաջին տարիներում, երբ Նազարեանցի հրապարակախօսութիւնն էլ աւելի վերացական բնաւորութիւն ունի, աւելի ընդհանուր քարոզչական կնիք է կրում, առանց կեանքի փաստերին շատ մօտենալու։ Հետզհետէ առաջ գնալով, Նազարեանցը, ինչպէս տեսանք, մօտենում էր ժամանակակից հարցերին. աշխարհայեցողութեան զարգացում էր դա, որ ազդեց և

թարգմանութիւնների վրա։ Եւ մենք տեսնում ենք որ Ներսէս Լամբրոնացու թարգմանիչը 1864-ին տալիս է կտորներ Բօկլի «Պատմութիւն Քաղաքակրթութեան Անգլիայում» հռչակաւոր գործից։ Այդ գեղեցիկ գիրքը մինչև այսօր էլ անծանօթ է մնացել հայ ընթերցողին. և միայն Նազարեանցն է ձեռնարկում, որ գոնէ մի քանի բան թարգմանել է նրանից։ Աստիճանաբար զարգացման, դէպի ժամանակակից կեանքը դիմելու նշաններ են և ժամանակակից հերոսների—կամ Կավուրի և Գարիբալդիի կենսագրութիւնները, որոնք տպագրվեցին «Հիւսիսափայլում»։

Գեղարուեստական գրուածքների ընտրութեան մէջ Նազարեանցը ղեկավարվում էր այսպիսի սկզբունքով. տալ նախ և առաջ այնպիսի գրուածքներ, որոնք կարող են աւելի հասկանալի լինել հայերին. այս է պատճառը որ Նազարեանցը աւելի ուշադրութիւն էր դարձնում արևելեան կեանքից վերցրած գրոյցների և պատկերների թարգմանութեան վրա։ Բացի արևելեան լինելուց, այդ գրոյցներն ու պատկերները Նազարեանցի համար այն առանձին նշանակութիւնն էլ պիտի ունենային, որ դրանց մէջ սովորաբար գրված է լինում բարոյական-խըրատական անեկդոտներ։ Նազարեանցը իր



ամբողջ գործունէութեամբ ցոյց էր տալիս որ գրողի առաջին պարտքն է այդպիսի տենդենցիաներ տարածել։ Լինելով խիստ պահանջների տէր, լինելով մանաւանդ և ամենից շատ մի քրիստոնեայ մարդ, նա վարդապետել, կրօնի հզօր ազդեցութիւնը բարձրացնել էր սիրում։ Սաստիկ դատապարտելով ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը այն պատճառով, որ նրանից առաջ և նրա ժամանակ «անաստուածութիւն» էր քարոզվում, Նազարեանցը, բնականաբար, պիտի մեծ համակրութեամբ վերաբերվէր յեղափոխութիւնից յետոյ երևան եկած այն գրականութեան, որ ձգտում է մարդկային միտքը նորից տանել դէպի հինը, աւանդականը, մանաւանդ բարձրացնել քրիստոնէութեան նշանակութիւնը։ Եւ նա թարգմանում է Շատօբրիանի «Աթալան», «Ռենէն», թէև հռչակաւոր ֆրանսիացու՝ կաթոլիկութիւնը և քրիստոնէութիւնը գովաբանող այս գործերից առաջինը արդէն երեք անգամ թարգմանված էր հայերէնի։

Քրիստոնէական բանաստեղծութեան ամենանշանաւոր ներկայացուցիչներից մէկն էր սպանիացի կաթոլիկ հոգևորական Կալդերոնը, որ ապրում էր XVII դարում։ Նրա բազմաթիւ հեղինակութիւնների մէջ շատ

նշանաւորներից մէկն է «Հաստատամիտ Արքայազն» ողբերգութիւնը, որի մի մեծ մասը Նազարեանցը թարգմանել է ոտանաւորով: Ուշադրութեան արժանի է հետևեալ խիստ բնորոշ հանգամանքը: Ընդհանուր գրականութեան պատմութեան յայտնի հեղինակ Շէրր, խօսելով Կալդերոնի այդ երկի մասին, բերում է գերմանացի Շաքքի կարծիքը թէ այդ զարմանալի ողբերգութեան պէս մի բարձր բան դեռ չէր տուել քրիստոնէական բանաստեղծութիւնը: Շէրրը համաձայն է այդ կարծիքի հետ, եթէ «քրիստոնէական բանաստեղծութիւն» անունը հասկացվի ինչպէս հարկն է: Նազարեանցն էլ բերում է Շաքքի կարծիքը, բառացի կրկնում է (սակայն իբրև սեփական դատողութիւնը) Շէրրի խօսքերը, որոնք կարող են ընդունվել իբրև անպայման գովասանութիւն: Մինչդեռ Շէրրը բոլորովին այդպէս չէ վերաբերվում սպանիացի բանաստեղծին. Նա բացատրում է և այն, թէ ինչպէս պէտք է հասկանալ «քրիստոնէական բանաստեղծութիւն», ասելով. «միայն յատուկ կաթօլիկական բանաստեղծութիւնը կարող է գեղեցիկ և բարձր համարել այն, որ հաստատամիտ արքայազնը, իր հաւատի պատճառով, ողջ-ողջ փտում է աղբակոյտի վրա»: Այդ տեսարանը նա ուղղակի անուանում է



«զզուելի»: Նազարեանցը ոչ միայն բաց է թողել Շէրրի այդ բացատրող խօսքերը, այլ և թարգմանել է «զզուելի տեսարանը», ցոյց տալով որ ինքը համաձայն չէ ողջամիտ քննադատութեան հետ և, ընդհակառակն, շատ գեղեցիկ է համարում այն, ինչ զզուելի է գերմանացի նշանաւոր պատմաբանի համար: Չէ որ աղբակոյտի վրա ողջ-ողջ փտող արքայազնը քրիստոնէական գաղափարն էր բարձրացնում:

Բացի Կալդերոնից, ոտանաւորով թարգմանութիւններ արել է Նազարեանցը և ուրիշ յայտնի հեղինակութիւններից: Այսպէս, նա ունի յայտնի իտալական բանաստեղծ Ալֆիերիի յայտնի ողբերգութիւններից մէկը, «Փիլիպպոս Երկրորդ», ինչպէս նաև քիչ յայտնի Կաստիի (նոյնպէս իտալացի) «Խօսուն Անասունքը», մի այլաբանական գործ, որ տեղ է գտել գրականութեան պատմութեան մէջ, իբրև մարդկային բացասական յատկութիւնների աջող պատկերացում: Ալֆիերիի և Կաստիի այդ գործերն էլ ամբողջովին չեն թարգմանված, ոտանաւորը անյանգ է:

Գերմանական երկու հռչակաւոր բանաստեղծները — Գէօթէ և Շիլլեր, իհարկէ, ամենից շատ պիտի սիրելի լինէին Նազարեանցին: Նա տալիս է յօդուածներ այդ երկու

մեծ բարեկամների մասին, բայց Գէօթէից ոչինչ չէ թարգմանվում «Հիւսիսափայլի» մէջ, մինչդեռ Շիլլերը մեծ տեղ ունի այնտեղ։ 1859-ին Նազարեանցը տալիս է Շիլլերի «Թուրանդօթը»։ Բայց դա Շիլլերի սեփական հեղինակութիւնը չէ, այլ մշակութիւն իտալացի Գոցցի անունով հեղինակի մի գրուածքի։ Տալ հայ ընթերցողին միայն այդ փոխառութիւնը կը լինէր մի միրաւորական անուշադրութիւն դէպի գերմանացի հանճարը, որ այնքան գեղեցիկ գործեր ունի ստեղծած։ Եւ Նազարեանցը այդ վիրաւորանքը չէ հասցնում ազատութեան մեծ երգչի յիշատակին։ 1861 թւականի յունվարի համարում նա, սովորականի պէս, նոր տարվայ զրոյց է սկսում իր ընթերցողների հետ, զրոյց, որ ինչպէս և միշտ, հրաւիրում էր նրանց առաջ գնալ, քաղաքակրթվել։ Բայց այս անգամ նա կարճ է կտրում իր խօսքը և ասում է. «Չեմ կարող արձակել ձեզ իմ մօտից, առանց մեծարելու ձեզ, իմ սրտի սիրածքը, մի եղբայրսիրական ընծայով»։ Եւ այդ ընծան Շիլլերի «Մեսինական Հարսն» է, թարգմանված ամբողջովին, ոտանաւորով։ Արժանաւոր ընծայ։ Նորից Նազարեանցը խօսում է Շիլլերի և յատկապէս իր թարգմանած երկի մասին, խոստանում է շուտով տալ Շիլ-



լերի ամենագեղեցիկ գործն էլ, «Վիլհելմ Տէլլը», բայց այդ խոստումը չէ կատարում։

Այդ ոտանաւոր թարգմանութիւնների արժանիքների հարցին դիմելով, մենք աչքի առաջ ենք բերում այն, որ Նազարեանցը բանաստեղծ չէր, որ նա առհասարակ ունէր մի ծանր, արհեստական լեզու, սիրում էր երկար, մանուածապատ նախադասութիւններ և պարբերութիւններ, նոյն իսկ արձակ թարգմանութիւնների մէջ էլ շատ էր ենթարկվում բնագրին, շատ էր հետևում բառացիութեան։ Այս բոլոր անաջող հանգամանքների մէջ մենք նրա ոտանաւոր թարգմանութիւնները համարում ենք բաւական աջողված։ Շատ են այնպիսի տեղեր, ուր Նազարեանցը աւելի պարզ հասկանալի, աւելի ազդու ու տպաւորիչ լեզու ունի, քան նոյն իսկ արձակ ինքնուրոյն գրութիւնների մէջ։ «Մեսինական Հարսի» առաջաբանի մէջ Նազարեանցը խոստովանում է որ ինքը, գոնէ առայժմ, անկարող է չափով, յանգաւոր ոտանաւորով թարգմանութիւն կատարել և այդ բանը թողնում է իրանից աւելի ճարտարներին։ Բայց աւելի ճարտարները չեղան մեզանում մինչև այսօր. կլասիկները թարգմանվել են և պիտի թարգմանվեն նոյն արձակ ոտանաւորով. մեր լեզուի աղքատու-

թիւնը երբէք չէ էլ կարող թոյլ տալ քանաստեղծական մեծ գործերի յանգաւոր թարգմանութիւնը։ Նոյն իսկ անհամեմատ հարուստ ու կանոնաւորված գրաբարը ձեռքի տակ ունեցող այնպիսի մի տաղանդ, որպիսին էր Հ. Արսէն Բագրատունին, Միլտօնը թարգմանում էր «հայկական չափով», առանց յանգերի։

Եթէ չենք մոռանում այն հանգամանքը, որ «Հիւսիսափայլի» առաջին աշխատակիցը ինքը, Նազարեանցն էր, եթէ աչքից չենք գցում որ ամսագրի շատ տետրակներ միայն և միայն Նազարեանցի յօդուածներից էին կազմվում, այն ժամանակ կը տեսնենք որ տանաւոր թարգմանութիւնները, որոնց վըրա պէտք էր ահագին աշխատանք գործ դընել, աւելորդ զարդեր էին այդ զարմանալի աշխատաւորի համար։ Նոյն այդ հանգամանքները արդարացնում, հասկանալի են դարձնում նրա տարօրինակութիւնները գեղարուեստական երկերի ընտրութեան գործում։ Մարդը չէր կարող բաւականաչափ ազատ ժամանակ ունենալ աւելի լաւ ընտրութիւններ անելու համար. Քալդերոնի, Շատոբրիանի, Շիլլերի, Ալֆիերիի գործերը լաւ ապացոյցներ են որ նա կարող էր լաւ ընտրութիւններ անել, բայց հնարաւորութիւն չունէր անելու. ամսագիրը հրատարակվում



էր, պէտք էր նիւթ հասցնել նրան, իսկ հասցնողը գլխաւորապէս նա էր. էլ երբ և ինչպէս ընտրութիւն անել։ Կիկերոնի թարգմանութեան համար Նազարեանցը շատ անգամ է յանդիմանութիւններ լսել *). բայց պարզ չէ, որ եթէ նա տուել է Կիկերոն, պատճառն այն է, որ լատիներէնի ուսուցիչ էր Լազարեան ճեմարանում. աշակերտների հետ անցածը նա, երևի, թարգմանում էր ձեռաց հայերէնի։ —1864 թուականին համարեա բոլորովին մենակ մնալով, կորցնելով յոյսը թէ կարող պիտի լինի շարունակել ամսագիրը, Նազարեանցը սկսում է մեծ մեծ թարգմանութիւններ տալ Ֆրանց Հօֆմանից։

Մենք յիշեցինք այստեղ և կարող էինք յիշել միայն գլխաւոր թարգմանական գործերը, այնպիսիները, որոնք իրաւ որ արժանի են ուշադրութեան։ Զանց ենք անում ուրիշ բազմաթիւ թարգմանական յօդուածներ, կենսագրութիւններ և այլն, որոնք վկայում

---

*) Պատասխանելով մի այդպիսի յանդիմանութեան, Նազարեանցն ասում է թէ Կիկերոնի ճառերը հոյակապ են և «ընտիր արուեստահիւս բանախօսութեամբ» էլ կրթվում, դաստիարակվում է մի ժողովրդի սիրտը։ Խընդիրը, սակայն, ճառերի հոյակապ և կրթիչ լինելու մասին չէ, այլ այն մասին, որ դրանք աւելորդ, անհասկանալի էին մի ժողովրդական ամսագրում…

են Նազարեանցի անդուլ աշխատասիրութեան մասին։ Ի միջի այլոց, կը յիշատակենք այստեղ մի սիրուն գործ էլ—«Ամենայն ինչ աղտութիւն և խաբէութիւն (անցած ու ներկայ օրերից առած պատկերներ)», որի մէջ կեանքի բազմաթիւ տխուր ու ողբալի հակասութիւններն են պատկերացած բանաստեղծական ոճով*)։

Այժմ քիչ էլ խօսենք թարգմանիչ-աշխատակիցների մասին։

«Հիւսիսափայլի» մէջ թարգմանիչ հանդիսացողները թւով, բնականաբար, աւելի շատ էին, քան ինքնուրոյն գրողները։ Մենք կը յիշենք դրանցից մի քանիսին։

Միքայէլ Նալբանդեանցը թարգմանական գործով օգնել է ամսագրին միայն առաջին տարում («Դքսուհի դը-Շեվրեօզ», արտատպված և առանձին գրքով)։ Նոյն առաջին տարում հանդէս է գալիս իբրև թարգմանիչ

*) Թարգմանութիւնների թւում ենք դնում այս գործը, թէև չէ յիշված թէ դա թարգմանութիւն է։ Պէտք է նորից շեշտել որ Նազարեանցը և նրա ուրիշ ժամանակակիցները միշտ չէին ցոյց տալիս թէ այս կամ այն գրուածքը թարգմանութիւն է. այնպէս որ շատ դէպքերում ընթերցողը տարակուսանքի մէջ է ընկնում և ինքը պիտի հաւանականօրէն որոշէ թէ որն է թարգմանութիւն և որը՝ ինքնուրոյն գրուածք։



Ստեփան Ստեփաննոսեան անունով մի ուսանող. դա յետոյ «Հայկական Աշխարհ» ամսագրի խմբագիր և յայտնի հոգևորական Խորէն Ստեփանէն էր, որ աչքի ընկնող մասնակցութիւն ունէր թէ «Հիւսիսափայլի» յետագայ տարիներում և թէ «Կռունկ» ամսագրի մէջ (բացի թարգմանութիւններից գրում էր ոտանաւորներ էլ, երբեմն «Իշխան Բագրատունի» կեղծ անունով)։

«Հիւսիսափայլի» աշխատակիցների թւումն էր և Ռափայէլ Պատկանեանը («Միքայէլ Վայելչեան» կեղծ անունով). նա տուել է տաղանդաւոր գրող Հաուֆի «Ուխտաւորք» վէպի թարգմանութիւնը, որ յետոյ լոյս տեսաւ և առանձին հրատարակութեամբ. բացի դրանից, Վայելչեանը տպագրեց և Նապօլէօն Մեծի մանրամասն կենսագրութիւնը։

1859 թւականին Նազարեանցը ստանում է Հին-Նախիջևանից, իրան անծանօթ մի մարդուց, մի քանի ոտանաւորներ, որոնցից երկուսը թարգմանութիւն Շիլլերից։ Անծանօթ պարոնը, Գէորգ Բարխուդարեան անունով, յայտնում էր իր նամակի մէջ որ իր բանաստեղծական փորձերը տպել էր «Մեղուի» մէջ, բայց այժմ այնքան զզուած է այդ Լրագրից որ կարծում է թէ ոտանաւորներ գրելու կամ թարգմանելու շնորհք չունի

ՌԱՓԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ



հէնց միայն այն պատճառով, որ «Մեղուն» է նրանց տպագրում։ Ուստի ուղարկում էր նոր բանաստեղծութիւնները Նազարեանցին, խնդրելով նրա դատաստանը, որից կախված կը լինէր այն հարցը թէ պէտք է շարունակել թէ ոչ։ Եւ Նազարեանցը արդար դատաստան է անում։ Հրատարակելով այդ բանաստեղծութիւնները, նա պարտք համարեց հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել «այդ մտածող և քանքարաւոր հայի վերայ»։ Խորհրդաւոր էր Նազարեանցի համար մանաւանդ այն, որ այդ հայը գրում էր Հին-Նախիջևանի պէս մի հեռաւոր ասիական անկիւնից։ Բայց Գէորգ Բարխուդարեանը այդ քաղաքից չէր. նա Դորպատի ուսանողներից էր և Հին-Նախիջևանում գտնվում էր ուսուցչութեան պաշտօնով։ Ինչ և իցէ, Գէորգ Բարխուդարեանը այնուհետև դառնում է «Հիւսիսափայլի» եռանդուն աշխատակիցներից մէկը, իսկ ապագայում անուն է վաստակում իբրև Շիլլերի և Լեսսինգի գործերի թարգմանիչ։

1864 թւականի «Հիւսիսափայլի» գեղարուեստական բաժնի զարդը կազմում է Լերմոնտովի չքնաղ «Դև» պօէմայի ամբողջական թարգմանութիւնը։ Մի փոքրիկ առաջաբանի մէջ Նազարեանցը ցաւ էր յայտնում որ «Հիւ-

սիսափայլը» մինչև այդ չէ կարողացել ծանօթացնել իր ընթերցողներին ռուսաց գրականութեան հետ։ Եւ իրաւ, դա մի մեծ պակասութիւն էր. եթէ չը հաշւենք Կարամզինի «Թշուառ Եղիսաբէթը», ամսագրի էջերում տեղ չը գտաւ այն գրականութիւնը, որ ունէր Տօլստօյ, Տուրգենեվ, Դօստօևսկի, Գօնչարօվ, Օստրօվսկի։ Այդ պակասութիւնը լրացնվում էր այժմ Լերմօնտօվի պէս մի նշանաւոր բանաստեղծի ամենագեղեցիկ գործերից մէկի թարգմանութեամբ։

Թարգմանիչը մի շնորհալի երիտասարդ էր, Մանուկ Սադաթեան, Մօսկվայի Լազարեան ճեմարանից։ Լերմօնտօվի այդ վերին աստիճանի վսեմ բանաստեղծական երկի թարգմանութիւնը Սադաթեանը կատարել է այնպիսի մեծ շնորհքով, որ կարելի է մի գեղեցիկ յաղթանակ համարել մեր թոյլ ու աղքատիկ լեզուի համար։ Այսօր էլ այդ թարգմանութիւնը լաւագոյնն է համարվում մեզանում, թէև «Դևը» ունի մի քանի հայերէն թարգմանութիւններ։ Ափսոս որ մահը վերջ դրեց այդ յուսատու երիտասարդի ծաղիկ հասակին. Նա վախճանվեց 1866 թւականին Երևանում։

ՄԱՆՈՒԿ ՍԱԴԱԹԵԱՆ

Այս գեղեցիկ գործի յիշատակութեամբ էլ վերջացնենք «Հիւսիսափայլի» թարգմանական մասը և դիմենք ինքնուրոյն գեղարուեստական գրականութեան։

Տեսնում ենք այդ գրականութեան երեք ճիւղերն էլ—վէպ, թատերագրութիւն և բանաստեղծութիւն։ Վէպը բոլորովին նոր բան էր մեզանում և իր առաջին քայլերն էր անում «Հիւսիսափայլի» էջերում, մինչդեռ բանաստեղծութիւնը վաղուց գոյութիւն ունէր, իսկ թատերագրութիւնը սկիզբ էր առել «Հիւսիսափայլից» դուրս։

Ասելով վէպի մասին թէ նա բոլորովին նոր էր, առաջին քայլն էր անում, մենք չենք ուզում ասել թէ «Հիւսիսափայլից» առաջ վէպեր չը կային։ Մենք մի րոպէ անգամ չենք մոռանում Աբովեանի «Վէրք Հայաստանին», որ գրված էր 1840-ական թւականների սկզբում և տպագրութեամբ լոյս տեսաւ 1858-ին։ Չենք մոռանում նաև Մեսրոպ Թաղիադեանի վէպերը, որոնք հրատարակվեցին Հնդկաստանում, ինչպէս չենք մոռանում և այն, որ Վիեննայի Մխիթարեաններն էլ մի քանի ինքնուրոյն վէպիկներ էին տպագրել։ Բայց ինչ բաներ էին դրանք։

«Վէրք Հայաստանին» առաջին հայկական վէպն է ժողովրդական լեզուով. դա անկասկած է։ Բայց չը մոռանանք և այն, որ իսկական վէպ լինելուց առաջ Աբովեանի երկը «հայրենասէրի ողբ» է։ Այս բառերը ինքն ըստ ինքեան շատ լաւ բնորոշում են գրուածքը։ Աբովեանը վերցրել է հայ ազգի պատմական սև ճակատագրից մի սև գիծ և դրա վրա թափել է իր սրտի ամբողջ կրակը, ամբողջ զգացմունքները։ Իբրև իր հայրենիքի ցաւերով տոչորվող մի մարդու հառաչանքներ՝ «Վէրք Հայաստանին» աննման է։ Նա զուտ ժողովրդական մի արտայայտութիւն է։ Ժողովուրդն ասում է. «Դարդ ունեցողը աշուղ կը կտրի»։ Այս ասացուածքի մէջ մի նահատակ ազգի ամբողջ հոգեբանութիւնն է դրած։ «Աշուղ կտրել» նշանակում է խօսել, անվերջ խօսել ու կրկնել, նկարագրել մի ցաւ, մի արկած, սրտի մի գործ։ Եւ Աբովեանը ճիշտ որ մի այդպիսի աշուղ էր։ Գերագոյն յափշտակութեան մի առարկայ ունի նա, և այդ առարկան—արիւնոտ, հարստահարված, դարաւոր խեղճութիւնից թշուառացած ժողովուրդն է։



Այդ առարկան խօսեցնում է Աբովեանցին մի տարերային ոյժով. նա պատմում է երկար, անվերջ, նկարագրում է, գոյներ, բառեր է կուտակում, ժողովրդական չափազանցութիւններ է դիմում։ Բազմաթիւ են այն

էջերը, որոնք չատախօսութիւն են ներկայացնում, մի չատախօսութիւն, սակայն, որ կրակոտ զգացմունքների բուռն արտայայտութիւն լինելով, աւելորդ չէ համարվում ընթերցանութեան ժամանակ։ Ով մի անգամ կարդայ «Վէրք Հայաստանին», նա չի մոռանայ սրտի արիւնով գրած այդ պատմութիւնը։ Բայց մի անգամ կարդացողը հազիւ թէ կարողանայ երկրորդ անգամ կարդալ նրան ծայրէ ծայր, այնքան շատ են աւելորդութիւնները։ Գեղարուեստական համաչափութիւն չը կայ, զգացմունքները, լեռնային յորդ վտակի պէս ոչինչ արգելք ու սահմանափակում չը ճանաչելով, ողողել են երկար էջեր, կուտելով շատ աւելորդաբանութիւններ, աշուղական ազատութիւն, չեղումներ։

Մեզ համար դրանք թանգ են, որովհետև հոգու խորքից են բղխած և մեր հոգու խորքըն են թափանցում, մեր սեփական զգացմունքներն են։ Բայց գեղարուեստի պահանջների տեսակէտից դրանք արդէն թուլութիւններ են, միամիտ ու անտեղի աւելորդութիւններ, որոնք իզուր ծանրաբեռնում են պատմուածքը, վնասում են ամբողջութեան։ Եթէ «Վէրք Հայաստանին» իր բոլոր պակասութիւններով հանդերձ ոգևորում ու յուզում է, դրա պատճառն այն է, որ նրան



ստեղծողը գտնվել է իսկական յափշտակութեան մէջ, ամբողջովին գերի իր մաքուր, սքանչելի հայրենասիրական զգացմունքներին, որոնք տարածվել, լայնանալ, ծովանալ են ուզեցել և դարձել են այնքան երկարաբան, կրկնութիւններով, բառակոյտերով այնքան հարուստ։ Յափշտակող, վերացնող ոգևորութեան անմիջական, կուսական, համարեա տարերային արտայայտութիւն—ահա դիւթող ոյժը։ Բայց դա մի դրութիւն է, որին միշտ չէ արժանանում ստեղծագործողը։ Ապացոյց—Աբովեանի միւս վէպը, «Օվսաննա»։ Դժուար է հաւատալ թէ այդ խեղճ ու կրակ գործը Աբովեանի գրչից է դուրս եկել. այդտեղ կրակված սիրտ չը կայ, այդտեղ ամեն ինչ սառըված է. թէև բառերը, նկարագրութիւնները մի և նոյն են, բայց տպաւորութիւն չեն գործում։

Եւ այսպէս, «Վէրք Հայաստանին» իր ամբողջութեան մէջ դեռ իսկական վէպ չէ եւրոպական մտքով, այլ հայրենասիրական զեղումների մի եռացող յորձանք է, դարերով լացած մի ժողովրդի ողբն ու կոծը, որի համար հարկաւոր էլ էր շատախօսութիւնը, քանի որ անհուն տառապանքները մի սախական ժողովրդի բերանում չեն կարող կարճ լինել, առանց չափազանցութիւնների,— ա

ռանց խիտ գոյների։ Դա մի կրակված մետէօր էր, որ յանկարծ երևաց մեր հօրիզոնում և այլևս չը կրկնվեց։ Չէր էլ կարող կրկնվել, որովհետև այնպիսի բարձր, որքան յափշտակութիւն, որ թելադրեց Աղասու պատմութիւնը, շատ հազուադէպ, շատ բացառիկ երևոյթ է. նա միւս անգամ չայցելեց նոյն իսկ Աբովեանին, ուր մնաց թէ ուրիշներին։ Իբրև այդպիսի բացառիկ գրութեան արգասիք, «Վէրք Հայաստանին» մինչև այժմ էլ մի հատիկ է մեր գրականութեան մէջ—բանաստեղծական մի ըմբոստ զեղմունք, որ կապրէ միշտ իր պակասութիւնների հետ, բայց իբրև գեղարուեստական գործ՝ անմշակ ու թոյլ կը մնայ։

Գալով Թաղիադեանցին և Վիեննայի Մըխիթարեաններին, որոնք մի քանի վէպեր կամ գոնէ վիպանման գրուածքներ հրատարակեցին Աբովեանի վէպի տպագրութիւնից առաջ, մենք դժուարանում ենք դրանց մէջ որ և է ինքնուրոյնութիւն գտնել։ Նախ և առաջ դրանք բոլորը, առանց բացառութեան, վերցրած են պատմական հեռաւոր, մութ, չուսումնասիրված անցեալից և երկրորդ՝ գրված են յատուկ ազգասիրական նպատակով. լի են երկար ու բարակ, արհեստական մենախօսութիւններով, չինծու, անհետաքր-



քրական դրութիւններով։ Թաղիադեանցը, բացի դրանից, գրում էր գրաբար լեզուով։

Ահա թէ ինչու ենք ասում որ «Հիւսիսափայլի» մէջ մեր վիպագրութեան առաջին քայլերն ենք տեսնում։ Թոյլ, դողդոջուն են այդ քայլերը. վեց տարվայ ընթացքում «Հիւսիսափայլը», չը նայած որ իր շուրջն ունէր մեր այն ժամանակվայ կրթված, առաջաւոր երիտասարդութիւնը, տուեց երկու վէպ, երկուսն էլ կիսատ։ Առաջինը տպվեց 1859 թւականին. դա Միքայէլ Նալբանդեանցի «Մեռելահարցուկն» էր։

Նշանաւոր է որ ռուսահայերի մէջ ժամանակակից վէպի սկիզբը դնողը Նալբանդեանցն էր։ Դեռ 1857 թւականին, երբ «Վէրք Հայաստանին» չէր հրատարակված, Նալբանդեանցը տպագրել էր տալիս «Մինին խօսք, միւսին հարս» վէպը, որի նիւթը վերցրած էր Նոր-Նախիջևանի ժողովրդական կեանքից։ Նա լաւ էր ըմբռնել որ վէպի համար պէտք է դիմել ժողովրդին և դիմեց, նկարագրելով նրա սովորութիւնները։ Բայց այդքանը բաւական չէր. Նալբանդեանցը վիպական ըստեղծագործութեան ընդունակութիւն չունէր և «Մինին խօսք, միւսին հարս» գործը շատ թոյլ դուրս եկաւ, այնպէս որ ոչ մի քննադատութեան չէր դիմանայ։ Նոյն փորձը ա-

րաւ Նա երկու տարուց յետոյ, բայց նրա «Մե-
ռելահարցուկը» աւելի ևս թոյլ ու աննշան
մի բան էր։

Վէպի արտաքին նշաններ, այո, տեսնում
ենք. կան նկարագրութիւններ, խօսակցու-
թիւններ, կայ ինտրիգա, մի քանի կտորներ
ցոյց են տալիս թէ հեղինակը միտք է ունե-
ցել ժամանակակից քաղաքային կեանքից
պատկերներ հանել։ Բայց դրանք բոլորը խա-
բուսիկ նշաններ են. ամբողջութիւնը մի վայր
ի վերոյ գրուածք է, որ արժանի չէ վէպ
կոչվելու։ Զարմանալի է, որ տասնաւորի
ֆելիէտօնի մէջ տաղանդ ունեցող Նալբանդ-
եանցը բոլորովին բոբիկ էր վիպագրութեան
մէջ. տաղանդը չը կարողացաւ գոնէ ծածկել
այն խոշոր պակասութիւնները, որոնց նկա-
տելու համար բաւական էր լինել մի շատ
կարդացած, զարգացած մարդ։ Գործողու-
թիւնը անվերջ ձգձգված, անկապ, բազմա-
թիւ շեղումներով և մանրամասնութիւննե-
րով ձանձրալի դարձրած։ Չը գտենք ում և
ինչի համար ամբողջ գլուխներ են նուիրված
կախարդական գործերի նկարագրութիւննե-
րին, երկար դատողութիւններ են գրված
փիլիսոփայական քարի, Ալխիմիայի մասին։
Հեղինակը հրապարակախօս է և իւրաքան-
չիւր քայլափոխում հասարակական երևոյթ-



ների, ազգային պակասութիւնների վրա եր-
կար ու բարակ ճառեր է կարդում։

Ընդհանուր տպաւորութիւնը այնպէս է
որ միշտ մարտնչող, միշտ վառվռուն հոգու
տէր Նալբանդեանցը կամեցել է վէպի մի-
ջոցով էլ մերկացնել մեր կեանքի արատնե-
րը, բայց ոչինչ աջողութիւն չէ ունեցել. և
այն մարդը, որ հրապարակախօսութեան մէջ
այնքան ինքնավստահ էր, այնքան ուժեղ իր
զէնքերով և բարձր իր հակառակորդներից,
վէպի մասին ունի վերին աստիճանի միա-
միտ - երեխայական հասկացողութիւն. Նա
կարծում է թէ այդտեղ կարելի է խօսել և եր-
գի մասին, և Սեբովեանի ու նրա վէպի մա-
սին, ինչպէս նաև դնել Մեսրոպ Թաղիա-
դեանի կենսագրութիւնը, չը նայելով որ ոչինչ
կապ չը կար այդ առարկաների և վէպի մէջ։
Պակասը լրացրել է այն, որ Նալբանդեանցը
չէ կարողացել զսպել իր կրքերը և նկարել
է իր վէպի մէջ կենդանի դէմքեր։ Այսպէս,
մենք տեսնում ենք Մօսկվայի մի յայտնի
հայ հարուստի ընտանեկան կեանքը, ներ-
կայացրած ամենավատ գոյներով։ Հայկական
վիպագրութիւնը, դեռ իսկական գեղարուես-
տի ծաղիկներ չը տուած՝ աճեցնում էր պակ-
վելի որոմները։ Հայ մեծատունը, իհարկէ,
անտարբեր չը մնաց. Նա էլ իր ճիրանները

որոնց «Հիւսիսափայլի» դէմ։ Նազարեանցի մի քանի ակնարկներից պարզ կարելի է հասկանալ որ Յովսէփ Չերքէզեանը այդ հարուստի գործիքն էր…

«Մեռելահարցուկը» կիսատ էլ մնաց, չը վերջացաւ։ Ոչինչ կորուստ չունէր դրանից հայոց աղքատիկ գրականութիւնը։ Քաղաքային կեանքից վերցրած վէպը կատարելապէս անաջող էր. մնում էր գիւղական կեանքին դիմել։ Գիւղական վէպի ճանապարհը բաւական հարթել էր Աբովեանը։ Եւ այդ ճանապարհով առաջին գնացողը Պերճ Պռօշեանցն էր, որ 1860-ին «Կռունկի» մէջ տպեց իր «Սօս և Վարդիթերը»։ Այդ «ազգային վիպասանութիւնը» լաւ ապացուցանում է այն, ինչ վերևում ասացինք «Վէրք Հայաստանի» մասին։ Պռօշեանցը հետևում էր Աբովեանին, բայց դա մի վտանգաւոր ճանապարհ էր։ Աբովեանին նմանվելու համար պէտք էր լինել Աբովեան, այն էլ «Վէրք Հայաստանի» Աբովեան։ Իսկ աշակերտը չունէր ուսուցչի յափշտակութիւնը, հայրենասիրական բուռն, կրակոտ տենչերը։ Աբովեանը իր հիմնական, մեծ գաղափարը — ազատասիրութիւնը զարգացրել էր գիւղական աշխարհի մէջ, որը նկարագրել էր մանրամասնօրէն, իբրև միջնավայր։ Պռօշեանցը



կարծեց թէ ամենագլխաւորը հէնց այդ միջնավայրն է և մի կողմ թողնելով իր ուսուցչի գլխաւոր, կենտրօնական գաղափարը, սկսեց ամենայն բարեխղճութեամբ նկարագրել գիւղական նիստ ու կացը, սովորութիւնները, հաւատալիքները։ Այդ շատախօսութիւնն է միակ նմանութիւնը Աբովեանին։ Եւ մեր վէպը դարձաւ ազգագրութեան սորուկ։ Զուտ վիպականը մի ողորմելի, աղքատիկ սիրահարական միամիտ արկած է, որի վրա բեռնաւորված է ժողովրդի կեանքի մանրամասն տարեգրութիւնը։ Ծանր է այդ բեռը, ոչինչ կապ չունի վէպի հետ, և ընթերցողը մի խեղճ Սօսի սիրահարական պատմութիւնը իմանալու համար պիտի կուլ տար այդ բարեկենդանների, վարդավառների երկար, մեծ պասից էլ երկար նկարագրութիւնները…

Ժողովրդական վէպը մի շատ ցանկալի ու գեղեցիկ երևոյթ էր, բայց նա պէտք է լինէր վէպ և ոչ ազգագրութիւն, գեղարուեստ և ոչ արուեստական վարքագրութիւն։ Գիւղի կեանքը տալիս է տիպեր, բնաւորութիւններ, երևոյթներ, որոնց նկարագրութեան վրա պիտի կենտրօնանայ գրողի ուշադրութիւնը։ Այդ կողմից առանձին հետաքրքրութիւն է ներկայացնում «Հիւսիսափայլի» 1861 թ. հա-

մարներում տպված «Տէր-Սարգիս» վիպասանութիւնը, հեղինակութիւն Գաբրիէլ Տէր-Յովհաննիսեանցի։ Մի ուսանող էր այս հեղինակը, գիւղից դուրս եկած մի երիտասարդ։ Եւ ո՛րքան պարզութեամբ, ո՛րքան նուրբ հումորով է նկարագրում նա գիւղական աշխարհը։

«Տէր-Սարգիսը», իսկապէս, վէպ չէ, այլ պատկերների մի շարք, որոնք պտտում են գիւղի քահանայի և ժամկոչի շուրջը։ Այդ կենտրոնական անձինքը նկարագրված են շատ լաւ։ Տէր-Սարգիսը մի ագէտ, ծոյլ գիւղական քահանայ է, որի համար այս աշխարհում ուրիշ շահ ու ձգտում չը կայ, բացի ուտելուց, խմելուց և փող դզլելուց։ Եւ այդ որովայնային իդէալը պաշտվում է ամեն տեղ և ամեն հանգամանքների մէջ։ Հեղինակը տալիս է բոլոր փաստերն ու գծերը գիւղական այդ տիպը ամբողջովին հասկանալու համար։ Ամենագնահատելի հանգամանքն այն է, որ հեղինակը երկար ու բարակ դատողութիւնների մէջ համարեա չէ ընկնում, նա միայն նկարագրում է հեգնութեամբ, շատ չէ շեղվում պատմութեան թելից։ Տէրտէրից լաւ է դուրս եկել գիւղական ժամկոչ Ծիտուլին, մի ճարպիկ փորապաշտ, որ, չը նայած իր ստոր պաշտօնին, իր մարմնական արատին,



կարողանում է մի լաւ ապրուստ ստեղծել գիւղական աշխարհում։ Նայելով այս երկու մարդկանց, որոնք ամբողջ գիւղի մէջ միակ են իբրև գրքի և գիտութեան ներկայացուցիչներ, նայելով նաև միամիտ, ագէտ ու հաւատացող ժողովրդին, որ այս երկու մարդկանց նախիրն է կազմում, դուք յուսահատական տպաւորութիւն էք ստանում այդ գիւղական պարզ, յաւիտեան անփոփոխ իրականութիւնից։

Դժբախտաբար, հեղինակը իր ուշադրութիւնը միայն հոգևորականութեան վրա է կենտրօնացրել. գիւղի աշխարհականները ըստուերի մէջ են մնացել. եթէ չը լինէր այս պակասութիւնը, մենք «Տէր-Սարգիս» վէպի մէջ պիտի ողջունէինք առաջին հայերէն իրական վէպը։ Չէ կարելի այժմ էլ վառ հետաքրքրութեամբ չը կարդալ գործակալի գիւղ գալը։ Այդ առիթով հեղինակը բաց է անում մեր առջև այդ փոքրիկ իշխանաւորների մի շարք քաջագործութիւնները։ Ամեն տեղ հեղինակի ծաղրն է ընդգծում այլանդակութիւնները. ամբողջ գրուածքը տոգորված է «Հիւսիսափայլի» ոգով. խիստ աչք ծակող, խիստ խայտառակ գոյներով են ներկայացրված հոգևորականութեան պակասութիւնները. որքան հրէշաւոր չափերի է հասցրած ձրիակե-

րութիւնը, որքան շատ կաշառքներ են ուտում, որքան անգթութեամբ է մեծը իրանից ստորին ճնշում։ Այն տեսարանները, ուր գիւղական միամիտ ու ագէտ, բայց մի և նոյն ժամանակ կեանքի փորձից խորամանկութիւն, ստութիւն, հաճոյախօսութիւն և գողութիւն սովորած քահանայ Տէր Սարգիսը հանդիպում է իր իշխանաւոր գործակալին, նկարված են զարմանալի գեղեցիկ ու բնական կերպով. երևում է որ այդտեղ շատ քիչ է մտացածինը, որ անմիջապէս իրականութիւնն է եղել թելադրողը։

«Տէր-Սարգիսն» էլ, ինչպէս ասացինք, չէ վերջացրած։ Եւ շատ ափսոս։ Նա ցոյց էր տալիս որ հայկական վէպն էլ պիտի գտնէ բնականութեան, գեղարուեստական ճշմարտութեան ճանապարհը։ Գաբրիէլ Տէր-Յովհաննիսեանցը ոչ միայն չը վերջացրեց այդ «ազգային վիպասանութիւնը», այլ և այնուհետև էլ, որքան մենք գիտենք, չը փորձեց շարունակել այսպիսի գրուածքներ։ Աւարտելով իր ուսումը և գաւառական բժշկի պաշտօնով ման գալով մեր երկրի շատ կողմերը, նա գրեց «Ճանապարհորդական տպաւորութիւններ», որոնք, Քաջբերունի ստորագրութեամբ, տպագրվեցին մեր պարբերական հրատարակութիւնների մէջ. այդտեղ



շատ հետաքրքրական և գնահատելի տեղեկութիւններ կան ժողովրդի կացութեան, մեր հնութիւնների մասին։ Այսքանն էր «Տէր-Սարգիս» վէպի հեղինակի գրական գործունէութիւնը *)։

Դժուար, ծանր էր զարգանում մեր վիպագրութիւնը. գլխաւորապէս ազգագրական նպատակներին ստրկացած մնալով, նա երկար տարիներ քարշ էր տալիս մի խղճուկ ու անփառունակ կեանք, մինչև որ երևաց հայկական վէպի իսկական ծնող Րաֆֆին։

Աւելի լաւ բախտի տէր էր գեղարուեստական գրականութեան միւս ճիւղը—թատերագրութիւնը։ Նա անհամեմատ շուտ զարգացաւ, իր աջողութիւններով մոռացնել տուեց նոյն իսկ վէպը։ Սկզբից ևեթ թատերագրութիւնը ռուսահայերի մէջ ընտրում է իր իսկական զարգացման ճանապարհը, չինծու, անբովանդակ պատմական ողբերգութիւնների հետ ոտքի է կանգնում և առաջ է ընկնում կենցաղական կատակերգութիւնը. ժողովրդական կեանքից նա ընտրում է ծաղրելի և ծիծաղեցնող փաստեր ու հանգամանքներ, որոնք շօշափում են հասարակա-

*) Ներկայումս նա շարունակում է ծառայել իբրև գաւառական բժիշկ։

կան և կուլտուրական հարցեր. հայը թատերագրութեան մէջ աւելի սուր գիտող էր, աւելի ընդունակ վերարտադրող, քան վիպագրութեան մէջ։

Այդ ճիւղից «Հիւսիսափայլը» միայն մի գրուածք է տուել—«Հայոց ազգի Լուսաւորիչքը», գործ Ս. Սուլթան-Շահի։ Գրուածքը անուանված է «ազգային կեանքից առած նկարագիր». հեղինակը, նոյնպէս մէկը առաջադիմական գաղափարներով ոգևորված ուսանող երիտասարդներից *), առաջաբանի մէջ ասում է թէ իր գործի մէջ ոչինչ մտացածին բան չը կայ, իւրաքանչիւր անձնաւորութիւն «մաքուր խղճմտանքով առված է բուն ազգի անդամներից, որոնց ձեռքում էր այս րոպէիս մեր ազգի զաւակների կրթութիւնը»։ Տարաբախտաբար, այդ «մաքուր խղճմտանքով առվելը» այնքան պարզ և ճիշտ է կատարված, որ ներկայ ժամանակներում էլ ոչ մի դժուարութիւն չը կայ իսկոյն հասկանալու թէ այդտեղ Սուլթան-Շահը նկարագրել

*) Անանիա Սուլթան-Շահ, բժշկութիւն սովորելով, մտաւ կեանքի մէջ իբրև «Հիւսիսափայլի» դաւանանքների նուիրված հասարակական համակրելի գործիչ։ Մինչև կեանքի վերջը նա հաստատ մնաց իր համոզմունքների մէջ։ Վախճանվեց Ղզլարում երկու տարի առաջ։



է Գաբրիէլ վարդապետ Այվազեանին, նրա հիմնած Խալիբեան ուսումնարանը։

Մեզ յայտնի է թէ «Հիւսիսափայլի» խումբը որքան հակառակ էր այդ նախկին Մխիթարեան վարդապետին։ Հակառակութիւնը, իհարկէ, բղխում էր գաղափարական հիմքերից։ Այվազեանի կղերական-փառասիրական հակումները չէին կարող դուր գալ ազատ ու անկախ հայեացքների տէր նոր սերունդին։ Պարիզում նրա դէմ զինված էր և անողորմ արշաւանքներ էր մղում Ստեփան Ոսկանը. Ռուսաստանում նոյն անհամակրութիւնը, հակառակութիւնը ցոյց էր տալիս «Հիւսիսափայլի» խումբը։ Բայց Ռուսաստանը Ֆրանսիա չէր. այստեղ Այվազեանը ունէր դիրք, ոյժ և կարողանում էր թոյլ չը տալ որ իր հակառակորդները ազատ կերպով խօսեն իր մասին։ Նա հայերէն գրքերի գրաքննիչ էր Թէոդոսիայում. այս պաշտօնը արդէն բաւական շատ յարմարութիւններ էր տալիս նրան Պետերբուրգում, «Հիւսիսափայլի» գրաքննութեան վրա ազդելու։ Միքայէլ Նալբանդեանցը իր «Երկու Տող» բրօշիւրի մէջ բացարձակ կերպով յայտարարում էր թէ ինքը Այվազեանի կողմից քանի անգամ ամբաստանվել է ներքին գործերի մինիստրի առջև «որպէս անկրօն, որպէս ան-

բարոյական, որպէս ապստամբ և խռովեցուցիչ ժողովրդեան»։ Բացի դրանից նա խընդրել է կառավարութիւնից դադարեցնել «Հիւսիսափայլը», և սա, աւելացնում է Նալբանդեանցը, մի յայտնի իրողութիւն է։ «Հիւսիսափայլի» այն յօդուածները, որոնք վերաբերվում էին Այվազեանին, խիստ քննութիւնների էին ենթարկվում, մինչդեռ ինքը, Այվազեանը, ազատ էր գրել ինչ կամենում է։ Մնում էր արտասահմանի մամուլի այն մասը, որ համակրում էր «Հիւսիսափայլին». բայց դրա դէմ էլ միջոցներ էր ձեռք առնում Այվազեանը։ Իր նամակներից մէկում, պատմելով որ Կ. Պօլսի «Մեղուն» շատ դըժուար է հասնում Ռուսաստան, այն էլ իբրև կոնտրաբանդ, Նազարեանցը աւելացնում էր. «Փառք և պարծանք Այվազեան վարդապետի ջանասիրութեանը...»։

Հասկանալի է որ այսպիսի մի հակառակորդի դէմ կռուելը «Հիւսիսափայլի» խմբի համար պիտի լինէր այնքան կարևոր մի բան, որ նոյն իսկ միջոցների խտրութեան մասին երկար ու բարակ մտածելն էլ աւելորդ էր։ Անանիա Սուլթան-Շահի գործը այդ կռուի միջոցներից մէկն էր. այդտեղ հիւսիսափայլականների համար այնքան ատելի կղերականը դուրս էր բերված ուրիշ անուան տակ։



Գործը նուիրված էր Միքայէլ Նալբանդեանցին։

Եթէ մոռանանք այս խոշոր պակասութիւնը, «Հայոց ազգի Լուսաւորիչքը» կը ներկայանայ մեզ իբրև մի բաւական աջող պատկերացում կղերական կրթութեան սիստեմի։ Անկասկած, Գաբրիէլ վարդապետ Այվազեանը այն ժամանակվայ մեր հոգեւորականութեան մէջ մի խոշոր դէմք էր, որ աչքի էր ընկնում իր եռանդով, զարգացմամբ։ Մխիթարեան Միաբանութեան մէջ էլ նա շատ յայտնի էր իբրև գրող, մանաւանդ իբրև հայերէնագէտ. ուրեմն որքան մեծ պիտի լինէր նրա համբաւը մեր լուսաւորչական հոգեւորականութեան մէջ, որ առհասարակ մտաւոր անապատ էր ներկայացնում։ Այդ բոլորը, սակայն, չէ արգելում ասելու որ Այվազեանը, իբրև կաթօլիկ վանքում կղերական ոգով կրթված մարդ, իր գրական և դպրոցական գործունէութեան մէջ յետադէմ մտքեր էր դաւանում։ Խալիբեան դպրոցը նա ենթարկեց համարեա նոյն կանոններին, որոնք գոյութիւն ունէին Մուրադեան և Հայկազեան վարժարաններում։ Դա մի փակ, վանական դպրոց էր. ամեն ինչ կարգադրված էր այնպէս, որ աշակերտները միայն այն սովորեն, ինչ հարկաւոր է կղերական



ԱՆԱՆԻԱ ՍՈՒԼԹԱՆ-ՇԱՀ



տեսակէտից. սահմանված էր խիստ հսկողութիւն աշակերտների վրա, բանը նոյն իսկ այն տեղին էր հասնում, որ աշակերտները պիտի լրտեսէին իրար։ Առարկաների դասատուութիւնը յանձնված էր այնպիսի ուսուցիչների, որոնք համապատասխանում էին գլխաւոր ղեկավարի վանական հասկացողութիւններին։

Ահա մի այդ տեսակ դպրոցում տիրող մթնոլորտը շատ աջող կերպով գծագրել է Ա. Սուլթան-Շահը։ Բծնող ուսուցիչներ, լրտեսութիւն, մտքի ճնշում, շողոքորթութիւններ բարերար Խալիբեանցի և առհասարակ հարուստ և ազդեցիկ մարդկանց առաջ, վանական կարգեր դպրոցի մէջ, լուսավախութիւն —այս բոլորը նկարագրված է շատ լաւ։ Եւ որովհետև նեղ կղերական կրթութիւնը միայն Խալիբեան ուսումնարանին չէր յատուկ, այլ և առհասարակ մեր դպրոցներին, մանաւանդ որ նա շարունակվում է մեզանում մինչև այսօր էլ, ուստի «Հայոց ազգի Լուսաւորիչքը», իբրև իրականութեան մի հարազատ նըկարագիր, աչքի ընկնող մի աշխատութիւն պէտք է համարել, եթէ, կրկնում ենք, կարելի կը լինի մոռանալ նրա պասկվիլական բընաւորութիւնը։

Վիպագրութիւնից և թատերագրութիւ-

նից անհամեմատ բախտաւոր էր մեզանում նոր բանաստեղծութիւնը։ Հէնց սկզբից նա երևան է գալիս վայելուչ, գեղեցիկ կերպարանքով. նրա մէջ լիուլի արտայայտվում է հայկական տաղանդը և նա նոր ժամանակների ու նոր, թարմ տենչանքների քաղցրախօս, ազդու լեզուն է դառնում։ Մեր մտաւոր արշալոյսի եռանդուն, սրտաբուղխ ձայները սկսում են հաւաքվել «Հիւսիսափայլի» մէջ ու այնտեղ էլ ամփոփվում են։ Բացառութիւն է կազմում Ռափայէլ Պատկանեանը, որ իր գեղեցիկ երգերը նախ տպագրում էր «Գամառ-Քաթիպայի աշխատութիւններ» անունով տետրակներում, որոնք սկսեցին հրատարակվել Պետերբուրգում 1856-ից, ապա և «Կռունկ» ամսագրի մէջ։

Շատ բնական էր որ «Հիւսիսափայլի» պէս մի ամսագիրը դառնար մեր նոր բանաստեղծների ժողովատեղին, որովհետև դրանք անտարբեր երգիչներ չէին, սիրոյ և գինու, վարդի և սոխակի վրա հիացած պարնասականներ չէին։ Ո՛չ, յիսունական թւականներից ծնունդ առած մեր բանաստեղծութիւնը վերանորոգութեան, դարաւոր գերեզմանից յարութիւն առնելու երգ էր։ Այդ երգող երիտասարդները մի-մի հրապարակախօսներ էին. հասարակական ցաւերն էին տանջում



նրանց, ժողովուրդը, հայրենիքն էր ոգևորում նրանց։ Եւ նրանք պիտի խմբվէին «Հիւ-



Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ (1865)

սիսափայլի» դրօշակի տակ. երգը չէ կարող փառաբանել խաւարը, աղջամուղջը, գերեզ-

մանային փառութիւնը. երգը ըմբոստ է, խենթ է, նա առաջնորդում է մարդուն դէպի պատերազմի դաշտ, կեանքի ամեն տեսակ արկածների դէմ է զինում։ Այն սուրբ պատերազմը, որ «Հիւսիսափայլն» էր սկսել, կարօտ էր ռազմական երաժշտութեան։ Եւ ահա կոկ, հնչիւն ոտանաւորը գալիս է նրա թեւ ու թիկունք հանդիսանալու։

Առաջին քնարահարը, իհարկէ, Նալբանդեանցն է։ Առաջին ոտանաւորը, որ նա տպագրեց «Հիւսիսափայլում», «Վայր ընկնող աստղեր» գեղեցիկ բանաստեղծութիւնն է, երկրորդը՝ «Ցուրտը փչեց» թարգմանութիւնը, որ մի ժամանակ շատ տարածված ժողովրդական երգ էր։ Իսկ երրորդը—«Հայ մարդու հայրենիքը»—արդէն չանթեր է արձակում փորապաշտութեան, կեղծ ազգասիրութեան դէմ։ Այնուհետև «Առօրեայ աշխարհը» պատկերացնում է Նալբանդեանցի պէս գրողների ամբողջ անմխիթար դրութիւնը։ Ո՜րպիսի դառնութեամբ է նա արձանագրում աշխարհի այն իմաստութիւնը, որ ասում է թէ ով մոլութեան դահիճ է ուզում դառնալ, նա մարդկութեան դահիճ է...

Եւ այսպէս, մի շարք զգացված բանաստեղծութիւններ «Հիւսիսափայլի» մէջ։ Այստեղ տպվեցին «Ազատ Աստուածն», «Մեր



հայրենիք», «Մանկութեան օրեր»։ Առհասարակ, Նալբանդեանցին աջողվում էին սահուն, իմաստալից ոտանաւորներ, որոնց մէջ փայլում էր նրա տաղանդը։ Սէր չերգեց նա, որովհետև իր մէջ չէր զգում իր անձը սիրած աղջկան զոհելու պատրաստականութիւն. ուրիշ բան էր նրա բուն ոգևորութեան աղբիւրը—պատերազմ խաւարի դէմ, ազատութեան համար։ Ամեն տեղ ոտանաւորը գեղեցիկ էր դուրս գալիս նրա գրչի տակից, որովհետև սրտի խօսք էր։ Վերցրէք «Մեռելահարցուկը»։ Դժգոյն, ձանձրացուցիչ երեսների վրա ձգձգվում է մի արհեստական վիպասանութիւն. բայց ահա գալիս է մի օրիորդի երգ, և Նալբանդեանցը կերպարանափոխվում է և այսպիսի տողեր են ցայտում նրա գրչի տակից.

«Ո՛հ, լոկ երազ էր, մի՛ խռովէք ինձ,
Իմ մոլորութեան քաղցր պատկերներ.
Ինձ չէ թոյլ տուած երկաթի կեանքում
Խնդալ, վայելել ոսկի րոպէներ...

Բանաստեղծութիւնը թռիչք էր տալիս մեր երիտասարդներին, պատկերներ էր ըստեղծում, լի խորհրդաւոր գեղեցկութեամբ։ Ահա մի մեծ բանաստեղծութիւն—«Հայաստանի Աղջիկ» (1858, № 7)։ Նրա տակ դրված

է «Բեատէն» *) ստորագրութիւնը։ Մի խորհրդաւոր ամուսնութիւն է պատմվում այդտեղ։ Հայաստանի աղջիկը—դա գիտութիւնն է։ Նրա հետ ամուսնացողը Արամ Նահապետն է, որ, Խորենացու պատմելով, հայոց լեզուի տարածողն է եղել և իր անունը տուել է մեր աշխարհին։ Հարսանիքը կատարվում է մեծ հանդէսով. նա տեղի ունի մի հին վանքում, հանդիսականները դարաւոր գերեզմաններից վեր կացած հայեր են։ Հայաստանի աղջիկը խոստովանում է ամենքի առաջ որ սիրում է փեսային. բայց երբ հանդէսը վերջանում է, բոլոր հանդիսականները նորից մտնում են իրանց գերեզմանները, տիրում է խաւար։ Այդ ժամանակ նորահարսը նկատում է որ իր սիրած փեսան էլ մի ցուրտ կմախք է. և երբ հրաւիրում է նրան մտնել իր հետ առագաստ, Արամը պատասխանում է թէ իրանց առագաստը կը լինի այն սև դագաղը, որ դրված է այդտեղ։ Արամը ազգն է, որ իմաստութիւն և գիտութիւն չէ որոնում. և ահա նա գիտութեան չէ կարող մի այլ տեղ պարգևել, բացի մութ, խոր ու խոնաւ գերեզմանից։ Նա ասում է.

*) Եթէ չենք սխալվում, Քերովբէ Պատկանեանն է։



Թո՛ղ որ ասեն թէ գիտութիւն հարսնացաւ,
Քաջ փեսայի սիրով վառեալ գիրկն ընկաւ,
Բայց փոխանակ ուրախութեան հարսանեաց,
Փեսայն հարսին մահու պատանք պարգեւեաց»։

Եւ շատ ճիշտ է այս գեղեցիկ այլաբանութիւնը։

1861 թւականից «Հիւսիսափայլի» էջերում երևան է գալիս մի երիտասարդ բանաստեղծ, որ կրթվել ու կազմակերպվել էր Նազարեանցի և նրա շրջանի անմիջական ազդեցութեան տակ և որին հէնց այդ պատճառով էլ կարելի է անուանել «Հիւսիսափայլի» պտուղ։ Այդ երիտասարդը, դեռ այն ժամանակ Սմբատ Շահազիզեանն Լազարեան ճեմարանի ուսանող էր։

Յիսունական թւականների սկզբում, Շահազիզեանը, դեռ 10 տարեկան երեխայ, իր հայրենի Աշտարակ գիւղից գնում է Մոսկվա, մտնում Լազարեան ճեմարանը, ուր ուսումը աւարտում է 1862 թւականին։ Դեռ դպրոցական նստարանի վրա նա սկսում է գրել ոտանաւորներ։ Սկզբում թունդ գրաբարական էր և նրա առաջին ոտանաւորները, որոնք տպագրվեցին 1859-ի «Ծառաքաղի» մէջ, գրաբար էին։ Բայց այդ սկզբնական մեղքից շուտ ազատվեց Շահազիզեանը, թողնելով թէ գրաբարը և թէ մանաւանդ «Ծառաքաղը»։ Ա-



ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆ



ռաջին աշխարհաբար ոտանաւորների մէջ կային շատ թոյլերը, բայց «Հանգիստ իմ անոյշ»-ի պէս երգը ցոյց էր տալիս որ երիտասարդի մէջ կայ աստուածային կայծ։ Այդ կայծը հետզհետէ արծածվեց. 1864 թուականը բանաստեղծի գեղեցիկ շնորհքի առատութեան տարին էր, որ, աւաղ, այլ ևս չը կրկնվեց։ Այդ տարին Շահազիզեանը գրեց բազմաթիւ մեծ ու փոքր ոտանաւորներ, ինչպէս նաև «Լևոնի Վիշտը» պօէման։

Բանաստեղծը գրաւում է հաստատ, մնայուն տեղ մեր գրականութեան մէջ։ Դա մի ինքնուրոյն դէմք է, ունի իրան միայն յատուկ բանաստեղծական արտայայտութեան ձևը. Նրա ոտանաւորը ունի իր առանձին համն ու հոտը և կատարել է մի դեր, որ շատ բանաստեղծութիւնների չէ վիճակված։

Իսկ ինչն էր նրա քնարի հոգին։ Ինքը Շահազիզեանը, ամենից լաւ է բացատրում թէ ինչ է ինքը։ «Նախ քաղաքացի, և ապա պոյէտ», ասում է նա։ «Քաղցր մեղկութեան և անգործութեան», գինու և սիրոյ երգիչ չէ նա, այլ «բաժանորդ է ազգի ցաւի հետ»։ Այսպէս էր այն ժամանակը, այսպէս կարող էր լինել այն շրջանների բանաստեղծը։ Եւ ահա ինչ է անում այդ «Նախ քաղաքացի և ապա պոյէտը»։ 1864-ին լռում է Նազար-

եանցի ձայնը. վաղուց լռել էր և Նալբանդեանցը։ Գրական փայլուն համաստեղութեան մի երրորդ ներկայացուցիչը, Գամառ-Քաթիպան, ժամանակաւոր դադար է առնում և նրա քնարը այլ ևս առաջվայ նման չէ հալածում մտաւոր խաւարը, չէ ծաղրում տգիտութիւնը և բարոյական անկումը։ Մեր արշալոյսը, կարծես, արագ խաւարում էր։ Ահա այդ միջոցին Շահազիզեանը լոյս է հանում իր «Լևոնի Վիշտը»։ Նազարեանցի վերջին խօսքը, ինչպէս տեսանք, այդ բանաստեղծութեան մասին էր. նա անհետացաւ ասպարէզից, «Լևոնի Վիշտը» յանձնելով հայ ազգին իբրև կտակ։

Եւ իրաւ. դա «Հիւսիսափայլի» ամբողջ գործն էր, ծրարված բանաստեղծական գեղեցիկ հիւսուածքի մէջ։ Այստեղ պիտի ապրէր նոր միտքը թուլութեան, անշարժութեան այն շրջանում, որ եկաւ առ ժամանակ տիրելու մեր մտաւոր ասպարէզում՝ «Հիւսիսափայլի» մեռնելուց յետոյ։ Մեր վերածնութեան, ինքնաճանաչութեան գաղափարը չը կարողացաւ ապրել առօրեայ հրապարակախօսութեան մէջ, որպէսզի կարողանայ միշտ սթափեցնել, միշտ կայծեր արծարծել. տըխուր հանգամանքները հարկադրեցին որ այդ գաղափարը առժամանակ հեռանայ, լռէ. բայց



նա երգ դարձաւ, մտաւ ժողովրդի մէջ. դա «Լևոնի Վիշտն» էր։ Եւ փոքրիկ ճրագը, որ վառվել էր հայրենի տունը լուսաւորելու համար, չը մարեց այդ «Վշտի» ծոցում։

Մեր հասարակական կեանքի զարգացման պատմութիւնը դրա համար չնորհապարտ կը մնայ «նախ քաղաքացի, և ապա պոյէտ» Շահազիզեանի մուսային...

Ահա «Հիւսիսափայլը»։

Մենք աշխատեցինք որքան կարելի է լիակատար կերպով ներկայացնել նրա պատմութիւնը, մի պատմութիւն, որի մէջ արժանաւորութիւնների հետ պակասութիւններն էլ դրված լինէին։ Կարելի էր աւելին անել.— «Հիւսիսափայլի» ամբողջ բովանդակութիւնը, բոլոր աշխատակիցները—մենք այս խոստովանում ենք—չը կարողացան և չէին կարող տեղ գտնել այս կենսագրութեան մէջ։ Մենք բաւական համարեցինք տալ ամենագլխաւորը, այն ամենը, ինչ, մեր կարծիքով, արժանի էր ուշադրութեան և յիշատակութեան։ Եւ այժմ, պատրաստվելով փակել «Հիւսիսափայլի» գլուխը, ինչ եզրակացութիւններ ենք կարող անել։

Ժամանակը պահանջներ էր անում հայ հասարակութիւնից։ Այդ պահանջները հասկացան հասարակութեան առաջաւոր, երիտասարդ ոյժերը, որոնք սկսեցին գործել։ Առաջ եկաւ «Հիւսիսափայլը»։ Նա պէտք է առաջ գար, եթէ մեր հասարակութեան մէջ կար կենսունակութիւն։ Ժամանակը ստեղծեց նրան, եւրոպական միտքը նրա միջոցով գալիս էր մեզանից տեղ ու հպատակութիւն պահանջելու։ Բայց մենք դեռ պատրաստ չէինք նրան հասկանալու, մենք չուզեցինք հպատակվել։ Ու սկսեցինք պատերազմը։ Այժը ժողովրդի պահպանողականութեան կողմըն էր և նա չը տուեց եւրոպական մտքին ապրելու, զարգանալու միջոց ու հնարաւորութիւն։ Նոր-նոր էր սկսել մեզանում փայլ տալ հանրամարդկային ազատ առաջադիմութեան փոքրիկ բոցը և ահա հայրենի անապատներից բարձրացած փոթորիկները հանգցրին նրան, թողնելով որ փոքրիկ կայծեր մնան նորից տիրած խաւարի մէջ։ Բացվեց մի սև գերեզման, որի մէջ իջաւ «Հիւսիսափայլը»։ Անժամանակ, ցաւալի գերեզման։ Նա իր գործը կատարում էր մի այնպիսի ժամանակ, երբ դեռ նոր-նոր էր թևաւորվում «Հիւսիսափայլը», նոր-նոր էր փորձ ու հմտութիւն ձեռք բերում։ Հարկաւոր էր այդ



նախապատրաստական շրջանը. չէ՞ որ նրանից առաջ ոչ ոք ռուսահայերի մէջ փորձ չէր արել, հետքեր չէր թողել, որոնց հետևելով, գնար «Հիւսիսափայլը»։ Նա ինքը պիտի ճանապարհ բանար փշոտ ու մացառոտ դաշտում, մենակ, անպաշտպան, բոբիկ ոտներով։ Մահը վրա հասաւ կէս ճանապարհին, երբ դեռ միայն ուղղութիւնն էր որոշվում, երբ դեռ շատ բան կար անելու այդ ճանապարհը պնդացնելու և հարթելու համար։

Այսպէս է «Հիւսիսափայլի» ճակատագիրը։ Նա սկսեց և սկզբում էլ մահացաւ։ Նա միայն թեթև նուաճումներ արաւ. պատերազմի դաշտը դեռ անձուկ էր։ Փառաւորվեց Նազարեանցի անունը, բայց նեղ շրջաններում. նրա գործը լայն ժողովրդականութիւն չը գտաւ։ Սակայն այդքանն էլ մեծ գործ էր և մեր գրականութիւնը երբէք չի մոռանայ նրան։ Չի մոռանայ այն պատճառով, որ ինքը հէնց այդտեղից է սկսվում. չի մոռանայ այն պատճառով, որ «Հիւսիսափայլի» դաւանանքների վրա է դրել իր հիմքերը։

Եւ «Հիւսիսափայլի» հիմնադիր-խմբագիրը միշտ կը պահպանէ իր փայլուն, ոգևորիչ դէմքը երախտապարտ սերունդների յիշողութեան մէջ։ Շատ են աշխատել խլել նրանից այդ նախանձելի փայլը և դրա համար անա-

դին պահանջներ են դրել ու այդ պահանջ-
ների տեսակէտից նսեմացրել են այդ անմո-
ռանալի երախտաւորի գործունէութիւնը։
Բայց կայ արդարադատութեան կչիռը։ Կա-
րող են ապացուցանել որ Նալբանդեանցը ա-
մենագէտ չէր, որ նա շատ բան մոռացել է
անել, որ նրա արածը կարող էր անել մի
ուրիշը։ Բայց խնդիրը հօ դրա մէջ չէ։ Ոչ ոք
չի որոնի պատմութեան մէջ հրաշքներ, որ-
պէսզի միայն նրանց երկրպագէ։ Կա՞ն արդ-
եօք հրաշագործներ։ Եւ ի՞նչ է հրաշքը, եթէ
ոչ երկաթի կամք, անյողդողդ համոզմունք,
սէր, անհուն սէր դէպի գործը, չարքաշու-
թիւն, գրկանքներ յանուն գաղափարի։

Այդ բոլոր յատկութիւնները մենք գըտ-
նում ենք Նալբանդեանցի մէջ։ Նա մի հսկայ
աշխատող էր. նրան չէր վախեցնում աշխա-
տութիւնը ամենածանր, յուսահատական հան-
գամանքների մէջ անգամ։ Այո՛, այդ մարդը
գիտէր որ գրական աշխատաւորը օդով չը
պիտի կերակրվի, բայց և այդպէս, աշխա-
տում էր օր ու գիշեր, յոյս չունենալով նոյն
իսկ աղքատիկ, գրօշանոց վարձատրութեան
վրա։ Նա գիտէր որ բարեկեցութիւնը ձեռք
է բերվում մարդկանց հաճոյանալով, բայց
շարունակում էր կռուել, կեղեքվել գաղափա-
րի համար։ Եւ նրա անձնազոհութեան, նրա



սուրբ սիրոյ, անսահման հաւատի պտուղը
մեր առջև է.—մի ամսագիր, որի մէջ մենք
գտնում ենք մեր նոր գրականութեան բոլոր
ճիւղերի սկզբնաւորութիւնը—հրապարակա-



„ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼԻ“ ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ

խօսութիւն, գիտութիւն, վիպագրութիւն,
բանաստեղծութիւն։ Վարդեր չէին փռված
նրա ճանապարհի վրա. փշերն էին ծակո-
տում, ցաւեցնում նրա զգայուն սիրտը, մեծ

խորհուրդներով լի հոգին։ Դա մի նահատակութիւն էր։ Բայց իւրաքանչիւր նահատակութիւն մի որևէ գաղափարի յաղթանակ է։ Նազարեանցի ետևում կանգնած էր ինքնաճանաչութեան ճանապարհը մտած, աշխատելու կորովով լի սերունդը։

Հէնց այդ էլ ուզում էր Նազարեանցը· հէնց այդ սերունդն էլ միակ գեղեցիկ վարձատրութիւնն էր նրա համար...

---

## ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

### «ՀԻՒՍԻՍԱՓԱՅԼԻՑ» ՅԵՏՈՅ

### (1865—1879)

### I

*Հրաժեշտ գրականութեան։—Գործունէութեան նոր ասպարէզ։—Ղզլարցիների նամակը։—Նազարեանցի ցանկութիւնները։ — Ճանապարհորդութիւն դէպի Թիֆլիս։—Գէորգ կաթողիկոսը Մոսկվայում։—Ընտանեկան դժբախտութիւն։—«Լապտեր Հայաստանի»։—Նազարեանցը Թիֆլիսում։—Թիֆլիսը իբրև կայսրեան քաղաք։—Ներսիսեան դպրոց։—Բարեկարգութիւններ և հիասթափումն։—Վերադարձ Մոսկվա։*

---

Թողնելով հրապարակախօսութեան ասպարէզը, Նազարեանցը չը թողեց իր ժողովրդին ծառայելու գաղափարը։

«Հիւսիսափայլը» դադարեցնելը միևնոյն ժամանակ մի հրաժեշտ էր, որ նա տալիս էր հայոց գրականութեան։ Ճիշտ է, ինչպէս շուտով կը տեսնենք, նա մի քանի անգամ փոր-

ձեց նորից վերադառնալ իր թողած ասպարէզը, բայց այդ փորձերը երբէք չիրագործվեցան: Նոյն իսկ առանձին գրքեր հրատարակելն էլ այլ ևս չաջողվեց նրան: Մենք տեսնում ենք որ մի մարդ է դա, որ կամենում է, բայց չէ անում, ունի նոյն եռանդը, բայց գործադրելու յարմարութիւն և հնար չէ գտնում: Մի ինչ-որ բան, կարծես, կոտրվել էր նրա մէջ: Միթէ մաքառումները, ճիշտ որ, տապալել էին այդ հաստատամիտ իդէալիստ մարդուն:

Ո՛չ, իդէալը, հասարակական գործիչի իդէալը, դեռ անխորտակելի էր նրա մէջ: Բայց «Հիւսիսափայլից» յետոյ Նազարեանցը ուրիշ ասպարէզ է ընտրում իր գործունէութեան համար: Նրա նոր ձգտումները մենք իմանում ենք այն նամակից, որ նա գրել է ղզլարցի հայերին:

Հայ հասարակութիւնը կամ գոնէ նրա մի մասը շուտ չը մոռացաւ իր քաջարի հրապարակախօսին: Թէև լռել էր Նազարեանցը, բայց նրա հեղինակութիւնը ապրում էր մտածող հայերի մէջ. «Հիւսիսափայլի» խմբագիրը առաջաւոր, լաւագոյն, բազմակողմանի զարգացած հայն էր համարվում: 1866 թուականի սկզբում Ղզլարի հայերը դիմում են նրան մի նամակով, որի մէջ իրանց շնորհաւորութիւն-



ներն են մատուցանում տօների առիթով և իրանց յարգանքն են յայտնում վաստակաւոր գրական գործիչին: Համակրողները խոստովանում են այն մեծ ծառայութիւնները, որ 1848 թուականից Նազարեանցը մատուցել է հայ ժողովրդին իր գրական երկերով, որոնց մէջ շարունակ արծարծվում էր մտաւոր վերածնութեան գաղափարը: «Եւ այս պատճառով—աւելացնում էին ղզլարցիները—ձեր փառաւոր և քաղցր անունը մնալու է մեր և մեր հայկական սերունդի սրտերի մէջ յաւէրժ անմահ, յաւէրժ փառաւոր և տօնելի»:

Պատասխանելով այդ նամակին, Նազարեանցը ասում էր ղզլարցիներին, իր «սիրելի և մեծարելի հայերին», հետևեալը.

«Իմ պարծանքս մինչև այսօր եղած է, և այսուհետև լինելու էր այն, որ ես փոքրը ի շատէ կարողացել եմ և այսուհետև կարողանայի պիտանի լինել Հայկական հասարակութեանը, իբրև մատակարար աշխարհաշէն գաղափարների, իբրև վարող և մշակ ազգային լուսաւորութեան գործի: Որովհետև, նոյն չափով միայն կարող է երջանիկ լինել իմ սիրտը, որչափով ես կարող էի օգտաբեր լինել մարդկութեանը, և նախ և յառաջ, այն մարդկային ընկերութեանը, որոյ մէջ Նախախնամութիւնը կամեցել է դնել իմ մանկութեան օրօրոցը»:

Այսպէս, մի անգամ էլ օգուտ քաղելով առիթից, Նազարեանցը յայտնում էր իր ազգին թէ ինչ է ինքը և ինչ պիտի լինի ամեն մի ազնիւ գործիչ։ Ծառայել ընդհանուր մարդկութեան՝ իր ժողովրդին ծառայելու միջոցով—ահա առաջին գործը, նպատակների նպատակը։ Մինչև այժմ Նազարեանցը ծառայել էր այդ համամարդկային գործին գրականութեան միջոցով. բայց «Հիւսիսափայլի» գոյութեան ընթացքում եկել էր այն համոզմունքին, որ գրականութիւնը դեռ պիտի թողնվի, որ անհրաժեշտը, անյետաձգելին ժողովրդի կրթութեան գործն է, որ առաջ պէտք է դպրոց հիմնել և ապա գիրք տպել։ Նոյն այս միտքը նա յայտնում է և ղզլարցիներին, աւելացնելով որ ինքը վճռել է նուիրվել հայ սերունդի կրթութեան գործին։

Մենք արդէն գիտենք որ նոր չէ և այս վճիռը։ Նազարեանցը հէնց այս մտքով էլ կամենում էր դպրոց բաց անել Մոսկվայում 1861-ին։ Բայց նորութիւնը այժմ այդ վճռի գործադրութեան մէջն էր։ Մինչև այդ՝ Նազարեանցը չէր ուզում հեռանալ Մոսկվայից, թէև ամեն մի դէպքում տեսնում էր որ հեռաւոր Մոսկվայում պակասում են շատ և շատ առաջնակարգ յարմարութիւններ՝ գործ կատարելու համար։ Այժմ Նազարեանցը պատ-



րաստ էր հեռանալ Մոսկվայից, գնալ մի որ և է հայաբնակ տեղ և նուիրվել դպրոցական գործին։

1867 թւականին լրանում էր նրա պետական ծառայութեան 25 ամեակը։ Այդ բանը իրաւունք էր տալիս նրան թողնել պրոֆէսորական պաշտօնը Լազարեան ճեմարանում, ստանալով կենսաթոշակ։ Եւ Նազարեանցը վճռում է թողնել իր պաշտօնը, միայն թէ կարողանար տեղ գտնել մի որ և է հայաբնակ քաղաքում։ Այդպիսի տեղ պատրաստելու համար նա 1866-ի գարնանը ճանապարհորդում է դէպի Կովկաս։ Ճանապարհին նա այցելում է Նոր-Նախիջևանը, Ղզլարը և խորհրդակցում է իր նպատակի մասին։ Նոր-Նախիջևանում այդ միջոցին արծարծվում էր գիմնազիա բաց անելու հարցը. դրամական միջոցներից մէկն էլ այն գումարի տոկոսներն էին, որ բերել էր Նալբանդեանցը Հնդկաստանից։ Նոր-Նախիջևանի քաղաքագլուխը դիմում է Նազարեանցին և խնդրում է կազմել գիմնազիայի համար ծրագիր, նկատի ունենալով տարեկան 20,000 րուբլի ծախս։ Նազարեանցը կատարում է այդ առաջարկութիւնը, բայց գիմնազիան չէ բացվում *)։

*) Գիմնազիայի փոխարէն բացվեց թեմական դըպրոց, որի համար էլ շատ աշխատել է Նազարեանցը։

Յուլիս ամսին Նազարեանցը հասնում է Թիֆլիս: «Վաճառական» շաբաթաթերթը այսպէս էր յայտնում նրա գալուստը. «Էս մէկ քանի օր առաջ եկաւ Մոսկովից Թիֆլիս մեր ժամանակակից հայոց գրականութեան կատարելագործելու համար գիշերը ցերեկ անող և ցերեկը գիշեր անող մտաւոր մշակը: Մեր խօսքն է պ. Ստեփաննոս Նազարեանցի վերայ, որի գրականական աշխատութիւնները յիշելիս կամայ ակամայ մէկ առանձին զուարթութիւն է գալիս նրա յարգը իմացող մարդկանց»: Իր հայրենի քաղաքում Նազարեանցը լաւ ընդունելութիւն գտաւ: Յուլիսի 20-ին նրան յարգողները մի հանդիսաւոր ճաշ սարքեցին Օրթաճալայի այգիներում: Նազարեանցը ճառ ասաց, որի մէջ յայտնեց թէ ինքը պատրաստ է նորից վերսկսել իր գրական գործունէութիւնը:

Այս խօսքերից երեւում է որ նրան չաջողվեց Թիֆլիսում դպրոցական գործունէութեան ասպարէզ գտնել իր համար: Խօսք կարող էր լինել, իհարկէ, միայն Ներսիսեան դպրոցի մասին. բայց այդ դպրոցը այդ ժամանակ վարչական անորոշ դրութեան մէջ էր գտնվում: Լրացել էր հոգաբարձութեան լիազօրութեան ժամանակը, բայց նոր հոգաբարձական ընտրութիւն չէր նշանակվում. Մատ-



թէոս կաթողիկոսը վախճանված էր, սպասում էին նոր կաթողիկոսի ընտրութեան: Ուստի և հոգաբարձութիւնը, իբրև մի ժամանակաւոր մարմին, հաստատուն տեսուչ չէր նշանակում, այլ բաւականանում էր տեսուչի պաշտօնակատարութիւնը այս կամ այն անձին յանձնելով:

Նազարեանցը չէր կարող այդ խախուտ դրութեան վրա յոյս դնել: Վերադառնալով Մոսկվա, նա շարունակում է իր պաշտօնը Լազարեան ճեմարանում, յաջորդ տարին 25 ամեայ ծառայութեան համար ստանում է կենսաթօշակ, բայց դարձեալ թողնվում է ճեմարանում իր պաշտօնի մէջ:

1866-ի սեպտեմբերին կաթողիկոս է ընտրվում Գէորգ չորրորդը: Նոր կաթողիկոսը 1867-ին իր ճանապարհորդութեան ժամանակ մտաւ Մոսկվա և այդտեղ փառաւոր ընդունելութիւն գտաւ: Գէորգը Մատթէոսի պէս չը վերաբերվեց Նազարեանցին. ընդհակառակն, նրան մօտեցրեց իրան, խորհրդակցում էր նրա հետ մանաւանդ այն ճեմարանի մասին, որ նա կամենում էր բաց անել Էջմիածնում: Ի պատիւ կաթողիկոսի տրված մի ճաշկերոյթի ժամանակ Նազարեանցը արտասանեց մի ճառ, որ վերջացրեց հետեւեալ խօսքերով.

«Վեհագոյն Տէր, այս րոպէիս Դու կանգնած ես մի Հերքիւլեան երկճիւղ պողոտայի վերայ. մինը տանում է դէպի անջան վայելք և հեշտութիւն, միւսը դէպի վաստակ և ճգնութիւն առաքինութեան հանդէսի մէջ։ Բայց քո ոսկի չրթունքը Աստուծոյ տաճարի մէջ այս մայրաքաղաքումս առաջին անգամ բացուելով, հնչեցուցին դէպի մեր ականջը այսպիսի խօսքեր. «Ես չունիմ այսուհետև մի սեփական կեանք, իմ կեանքս պիտի նուիրուած լինի իմ ազգի բաղդաւորութեան հոգսերին»։ Ահա դոյն այդ խօսքերը գործով և արդեամբք լցուցանելով, կարող ես դու քո մահկանացու մարդկութիւնը անմահացուցանել քո սեփական ազգի պատմագրութեան վերայ և քո անունը ոսկէ տառերով դրոշմել հասարակաց մարդկութեան բարերարների տախտակի վերայ»։

Չափազանցութիւններ այս ճառի մէջ չենք գտնի, եթէ յիշենք թէ որքան մեծ նշանակութիւն էր տալիս Նազարեանցը կրթված և արժանաւոր հոգևորականութեան։ Այդպիսի հոգևորականութիւն պիտի պատրաստէր էջմիածնի ճեմարանը, մի դպրոցական հիմնարկութիւն, որի անհրաժեշտութեան և կազմակերպութեան մասին Նազարեանցը, ինչպէս գիտենք, գրում էր Ներսէսին՝ դեռ նրա կաթողիկոսութեան առաջին տարին։ Ճեմա-



րանը էջմիածնում ուշ բացվեց և Նազարեանցը չը տեսաւ նրա տուած պտուղները. բայց նա միշտ ոգևորութեամբ էր խօսում այդ կրթարանի մասին, քանի նա դեռ նոյն իսկ ենթադրութիւն էր, ծրագիր միայն։

1868 թւին Նազարեանցին հարուածեց ընտանեկան մի շատ ծանր դժբախտութիւն. մեռաւ նրա Ֆրիդէրիկ որդին երիտասարդ հասակում։ Այդ իսկ տարին Ֆրիդէրիկը վերջացնում էր Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտէտը և արդէն պատրաստվում էր դօկտորական քննութիւն տալու, բայց հիւանդանոցում պարապելիս՝ վարակվեց տիֆով և մեռաւ փետրվարի 18-ին։ Այդ մահը վիշտ պատճառեց ոչ միայն ընկերակից ուսանողներին, այլ և պրօֆէսօրներին. Ֆրիդէրիկը յայտնի էր իբրև մի շատ ընդունակ և յուսատու երիտասարդ։ Յուղարկաւորութեան մասնակցում էին բժշկական ֆակուլտէտի հինգերորդ կուրսի բոլոր ուսանողները, ի պատիւ հանգուցեալի այդ օրը ֆակուլտէտում դասախօսութիւններ չը կային։

Իսկ թէ ինչ կը լինէր Նազարեանցի պէս մի քնքոյշ որդեսէր հօր դրութիւնը, բացատրելու կարիք չը կայ։ Եկեղեցում այդ վշտահար ծնողը մի անօրինակ գործ է կատարում. նա ճառ է արտասանում իր որդու վրա։

ճառեր, մանաւանդ դամբանական ճառեր, շատ էր սիրում Նազարեանցը. սիրում էր և տպագրել դրանց: Բայց դա, իհարկէ, մի արհեստ չէր Նազարեանցի համար. խօսում էր նա գլխաւորապէս երիտասարդ հասակում մեռածների, ուսանողների մասին: Իր մի այդպիսի ճառի մէջ նա բացատրում է մահուան խորհրդներից մէկը: Մահը, ասում է նա, լուսապայծառ կերպարանքով պայծառացնում է մեռածին կենդանի մնացողների սրտում: «Մեք աշխատում ենք աւելի խոր և խոր տպաւորել մեր սրտի մէջ այն նազելի պատկերը, որ թևեր առած փախչում է մեր աչքի տեսութիւնից. այո, մեք աշխատում ենք դարձեալ ջերմացնել մեր սիրոյ գրկախառնութեան մէջ այն պաղ մարմինը, որ երբեմըն չնչաւորուած և հոգևորուած, զմայլեցնում էր մեր բոլորեցուն սիրտը, խօսելով, մտածելով և զգալով մեր հետ միասին»:

Այս հզօր հանգամանքները հարկադրում են Նազարեանցին ճառ խօսել Ֆրիդէրիկի վրա: «Երբ ուրիշները—ասում է ականատեսը *)—առաջարկում էին որ իւրեանք կարդան այդ ճառը, նա ասում է. «Ոչ, իմ սիրելիք, դուք չունէիք այն հոգին, որ ես ունիմ»:

*) Ս. Ճահագիգ, «Հրապարակախօս Ձայն», եր. 21:



«Եւ ահա ազաւոր բազմութեան առաջ Նազարեանցը մօտենում է գրքակալին, դողդոջուն ձեռներով հանում է ծոցից երկու երես գրած ճառը և սկսում է իւր ատենախօսութիւնը: Խորհրդաւոր բոպէ և զարմանալի տեսարան. Նազարեանցը այն խօսքերն է ասում, որ աշխարհը մարդուս միտքը չէ գալիս. ում սիրտը այն բոպէին կարող էր դիմանալ, որ չը ճաքէր. ահա մի փոքր ես—և կարծում էինք որ հայրը կը թուլանայ. բայց նա, թէև արդարև շունչը կտրուած, գոչում է. «Որ մի երիտասարդ դուրս է խլվում այս կեանքի միջից առանց վճարելու հասարակութեանը իւր կրթութեան պարտքը, առանց կարողանալու չահեցնել իւր մտաւոր և բարոյական քանքարը»: Եւ ապա լսում ենք նրա բերանից. «Եւ դու, իմ յաւերժացած զաւակ, ընդունիր իմ շընորհակալութիւնը այն որդիական սիրոյ և մեծարանքի փոխարէն, որով դու զարդարած ես քո ծնողների կեանքը: Բարեաւ մնաս մինչև ցկրկին երանաւէտ տեսութիւնը մի աւելի լաւ հանդերձեալ աշխարհում»: Միայն այստեղ—շարունակում է ականատեսը—բնութիւնը պահանջում է իւր իրաւունքը.—որդեկորոյս ողամարդի աչքերը լցվում են դառն արտասուքով, և Նազարեանցը մորմոքելով ընկնում է իւր սիրասուն զաւակի դագաղի վերայ»:

Տպաւորութիւնը շատ խոր էր. հայրական

ճառը արտասունքներ կաթեցրեց շատ ուսանողների աչքերից։ Նազարեանցը ռուսերէն լեզուով շնորհակալութիւն յայտնեց այն ռուս ուսանողներին, որոնք անքուն գիշերներ էին անցկացրել իրանց ընկեր Ֆրիդէրիկի մահվան անկողնի մօտ։ Այդ սարսափելի դժբախտութիւնը առիթ եղաւ, որ հայ երիտասարդութիւնը իր սէրն ու երախտագիտութիւնը յայտնէ Նազարեանցին։ «Հայկական Աշխարհը» սև շրջանակի մէջ գրում էր հետևեալ տողերը.

«Ձեզ հետ, սգազգեաց և սրտակիզված Հայր, կողբան «Հայկական Աշխարհը» և Թիֆլիսի երիտասարդները հայկական երիտասարդի մահը։ Այս Ձեր կորուստը մեր ընդհանուր կորուստ է։ Բայց տվեց Աստուած և Աստուած առաւ. ուստի եթէ իմաստուն որդին պիտի ուրախացնէ հօրը, Թիֆլիսի երիտասարդները կհամարձակեն մխիթարել Ձեզ, Հայր առաքինի, յիշեցնելով Ձեզ, որ նոքա աշխատում են և աշխատելու են անդադար սիրելի որդուդ յիշատակն ևս սրբութեամբ պահելու, միշտ իրագործելով, որպէս Հայերիս սրբազան աւանդ, այն մտքեր և ցանկութիւններ յօգուտ ազգիս և մարդկութեանը, որ սիրել է միշտ զարգացնել իւր մէջ և Ձեր ազնիւ ծնունդը—ազգիս զաւակը»։

Ինչպէս տեսնում էք, ինքը, տարաբախտ



հայրը, ողբում է իր դառն կորուստը հասարակական բարիքի տեսակէտից և նրան էլ մխիթարում են հէնց նոյն այդ գաղափարով։ Նազարեանցի համար հարուածը սարսափելի էր աւելի այն պատճառով, որ իր որդին չը կարողացաւ ծառայել իր ազգին։ Այս զգացմունքը նա շատ լաւ շեշտել է իր այն պատասխանի մէջ, որ ուղղած է Պետերբուրգի հայ ուսանողներին, որոնք նամակով իրանց ցաւակցութիւնն էին յայտնել Ֆրիդէրիկի մահվան առիթով։ Այդ նամակը այնքան լաւ բնորոշում է Նազարեանցին թէ իբրև հօր և թէ իբրև հասարակական գաղափարներով լցված մի մարդու, որ մենք բերում ենք նրան ամբողջապէս։ Ահա ինչ էր գրում Նազարեանցը *).

«Հայազնեայ աշակերտք Ս. Պետերբուրգեան համալսարանի, իմ ազնիւ բարեկամներ.

«Անշնորհակալութիւնը չէ իմ բնաւորութիւնը. մանաւանդ առ այնպիսի քաղցըր, առ ի սրտէ ցաւակցական նամակը որով դուք մեծարում էք այս բոպէիս մի գերօրինակ ցաւից խոնարհեցուցած հայրս։ Վասն որոյ շտապում եմ հատուցանել ձեզ երախտագիտութեան պարտքը և ասել

*) «Մշակ», 1879, № 83։

ձեզ, որ ես հոգեպայծառ սրտով ընթերցայ և դարձեալ ընթերցայ ձեր նամակը ոչ թէ այն պատճառով, որ դուք քաղցրացուցած էիք իմ հայրական պատուասիրութիւնը, գովելով իմ յաւերժացեալ զաւակը և վշտակից լինելով իմ անձնական ցաւին, այլ որ ձեր մէջ սաստիկ զօրութեամբ զարթած է այն ազնիւ ընկերսիրութեան և եղբայրսիրութեան աշխարհաշէն հոգին, որով դուք ձեր իւրաքանչիւր ազնիւ և պիտանի ընկերակցի վաղահաս վախճանը համարում էք և արտասվում էք իբրև մի ընդհանուր հայկազեան գերդաստանի զաւակի վախճանը, իբրև մի ցաւ և զրկանք որ չէր պատկանում միայն մի առանձնական հօր, այլ բոլոր բարեմիտներին ազգի լուսաւոր հասարակութեան մէջ։ Եւ այս հայեացքով ես չեմ անձնասիրաբար արտասվում իմ ծաղկափթիթ երիտասարդի վաղաթարշամ վերջը, որովհետև ես, հայրս, կորուսած էի դորանով իմ ծերութեան նեցուկը, այլ որ յաւերժացեալը հրաժարվեցաւ այս աշխարհից առանց հատուցանելու հասարակութեանը իւր կրթութեան պարտքը, առանց ճաշակելու կեանքի պատուականութիւնը, առանց ստուգելու փորձով որ կեանքը գործ ու աշխատութիւն է, որով միայն կարելի էր բաղդաւորել թէ իւր անձը և թէ իւր ընկերը։ Նա չեղաւ ոչ ինքը բաղդաւոր և ոչ իւր ընկերի բաղդաւորութեանը ձեռնտու, ահա իմ



անմխիթար ցաւի աղբիւրը։ Հոգեղէն վաստակք և ստացուածք, որ մնացին կեանքի համար անպտուղ և անարդիւն. կենդանութեան նաւը, մեծագին բարութեամբք բեռնաւորուած, լայնատարած ծովի ալիքների հետ յաղթողաբար պատերազմելով և արդէն մօտենալով, այո դէմ յանդիման կանգնած ցանկալի նաւահանգըստի առաջև, որոյ մէջ փոքր մի ևս՝ և պիտիտի ներս վազէր,—և ահա յանկարծակի, պայծառ երկնակամարից մի կատաղի փոթորիկ յարձակվելով նաւի կայմի վերայ, ջախջախում է զգա, աւեր ու անապատ դարձուցանելով երիտասարդի բազմամեայ ստացուածքը, հողի մէջ բնակեցնելով նրա երկնաքաղաքացի մանկական յոյսերը և ակնկալութիւնները ապագայ օրերի գործնականութեան հանդէսի մէջ։

«Այս առաջին հասարակաց կորուստը չէ, որ ողբում եմ ես. այդպիսի շատերը լացին և ողբացին իմ սիրող աչքերը մինչև այսօրեան օրս. և ես այդ ազնիւ հայկազեան վաղաթարշամ պատանեակների գերեզմանի վերայ այս բոպէիս դադարեցնելով իմ հայրական և բարեկամական արտասուաթոր աչքը, իմ սուրբ տրտմութեամբ սգաւոր մտածութիւնը, միակ բան ունիմ խնդրելու ձեզանից, իմ մանուկ հայազնեայ բարեկամներ, իմ որդիք և զաւակներ, դուք ծաղիկներդ և յոյսերդ հայկական կեանքի, միակ բան եմ խնդրում ձեզանից, որ և լցուցանել դժուարին չէ,

միայն թէ կամէիք. երդուեցէք ձեր վաղամեռիկ ազնիւ եղբայրակիցների սուրբ գերեզմանով սիրել զմիմեանս, պատուել զմիմեանս, օգնել միմեանց ամենայն ընկերսիրութեամբ և անարատութեամբ, և սոքա ամենալաւ ծաղիկներ են, որով դուք, ազնուասիրտ եղբայրքդ, կարող էիք զարդարել ձեր հանգուցեալ հայրենակիցների գերեզմանքը։ Դարձեալ ասեմ ձեզ, թէպէտ և դուք աշխարհիս բոլոր գիտութիւնքը ուսած լինէիք, թէպէտ և դուք հրեշտակի լեզու խօսէիք, ոչինչ էք առանց սիրոյ առ ընկերը, առ մարդկութիւնը։ Այլ կտակ չունի ձեզ կտակելու, սորանից աւել սուրբ և սրբազան, ձեզ սիրող հայր, բարեկամ

Ս. Նազարեանցը։

1868, մարտի 10-ին։

Այսպէս վերաբերվելով իրան վիճակված դառն վշտին *), Նազարեանցը չը յուսահատ-

*) Նազարեանցը ամուսնացել է երկու անգամ։ Երկրորդ կնոջից նա ունեցաւ մի արու զաւակ, որին տուեց Էմմանուէլ անունը։ 1870 թւին նա Թիֆլիսից հետեւեալն էր գրում իր բարեկամ Ս. Ճահ-Ազիզին այդ նորածին Էմմանուէլի առիթով. «Միշտ մտածում եմ ես մի բանի վերայ. մի Էմմանուէլ (խօսքը Ֆրիդէրիկի մասին է) իբրև յաւերժացած, իբրև պայծառակերպուած պատկեր իմ հոգու առաջև, միւս Էմմանուէլ իբրև թանձրացեալ կենդանի պատկեր իմ աչքի առաջև. երկուքն ևս մի անկո-



վեց, չը կորցրեց աշխատելու եռանդը։ Հէնց այդ ժամանակները նա վճռում է նորից հրապարակախօսութեան ասպարէզ իջնել, հիմնելով մի նոր ամսագիր։ Չը գիտենք, ինչու այդ միտքը միտք էլ մնաց. արդեօք Նազարեանցին չաջողվեց թոյլտուութիւն ստանալ, թէ կար այդ թոյլտուութիւնը, բայց ամսագիրը չը հրատարակվեց ուրիշ պատճառներով, —այդ մեզ հաստատապէս յայտնի չէ։ Մնացել է նոր ամսագրի հրատարակութեան այն յայտարարութիւնը *), որով Նազարեանցը կամենում էր դիմել հասարակութեան՝ բաժանորդագրութիւն բաց անելու համար։ Ամ-

ղոպտելի սեփականութիւն հայրական սրտին. մինը հաւատաւոր սրտի երկնքում—այլ երկինք չկայ—միւսը այս հողեղէն—հոգեղէն աշխարհումս։ Եւ ո՛րպիսի զգացմունք մի օր պիտի շարժուին և ալեկոծուին երկրորդ Էմմանուէլի սրտում, երբ որ նա մի օր հանդիպէր իւր անուանակից եղբօր առաջին Էմմանուէլի գերեզմանին Վագանկովսկիյ գերեզմանատնում։ Դուք կը ներէք ինձ, հօրս, այսպիսի մտածութիւնք. պիտոյ էր լինել հայր, որ հասկանայինք կեանքի խորհուրդը—մարդկային սրտի ցաւերը, կեանք ու մահ, այս երկու խորհրդաւոր ամոլքը, որ մինը միւսը լրացուցանելով և պսակելով, այո պսակելով, կացուցանում են կեանքը նորա լիովին մտքով»։ Ինչպէս երևում է, Ֆրիդէրիկը անուանվում էր և Էմմանուէլ։

*) «Հանդէս Գրականական և Պատմական», 1889, երկրորդ գիրք, եր. 282։

սագիրը պիտի կրէր «Լապտեր Հայաստանի» անունը։

Ի՞նչ ունէր Նազարեանցը ասելու այս անգամ։

Չորս տարի է,—ասում է նա այդ յայտարարութեան մէջ,—ինչ լռել է «Հիւսիսափայլի» ձայնը։ Թէ ինչ էր այդ ամսագրի հիւանդութիւնը, որ գերեզման տարաւ նրան, Նազարեանցը չէր ուզում բացատրել։ Նա միայն յայտնում էր որ ինքը չէ յուսահատուել։ Ի՞նչ կը լինի մի մարդ կամ ժողովուրդ, որ մի սաստիկ թնդիւնից զարթնում է երկար ժամանակի քնից, սկսում է ուշքն ու միտքը հաւաքել, յետ ու առաջ նայել։ Այդ մարդը կամ ժողովուրդը չէ կարող երկար միջոց արթուն մնալ, որովհետև «նոր լուսացած աշխարհի սաստիկ տպաւորութիւնքը իւրեանց բազմութեամբ և բազմօրինակութեամբ հեղեղի պէս թափվելով նորա վերայ, անտանելի են նորան. նոքա պիտի ճնշեն, բթացուցանեն, թմրեցուցանեն նորա թոյլ ջիղերը, դարձեալ դէպի քուն գլորեն նորան»։

Սա, իհարկէ, հայ ժողովրդի պատկերն է։ Ի՞նչ պարտք ունի այսպիսի մի ժողովրդի մէջ ուսուցիչը, քարոզիչը, գրողը։ Պէտք է մի մի ձայն տալ, քնածներին դուրս հանել այդ վիճակից, «որովհետև չափազանց երկարաձիգ



քունը վնասակար է առողջութեանը, ապականում է մարդուս կենդանական հիւթերը, մանաւանդ երբ որ արեգակը բարձրացած հորիզոնի վերայ մօտենում է միջօրէական շրջանին»։ Ահա այդ է ուզում անել Նազարեանցը։

Չորս տարվայ լռութիւնը բաւական է համարում նա և ասում է. «Չափազանց երկար քունը վնասակար է. ուրեմն և մեզ Հայերիս ժամ է արդէն զգաստանալ և գօտին պնդած մէջքերին դիմել դէպի դաշտը, ուր սպասում են մեզ վար ու ցանք, վաստակելու մեր օրավաստակը, մինչև երեկոյացած չէր մեր կեանքի օրը»։ Սրտառուչ է այն հանգամանքը, որ Նազարեանցը զգում էր թէ ինքը արդէն ծեր է, որի տարիքը «օրէցօր յիշեցնում են նորան թէ անտեղի էր յապաղել»։

Բայց միայն ծերութիւնը չէր, որ կեանքի կարճութեան խորհուրդը հասկացնելով, հարկադրում էր նրան նորից հրապարակ գալ իբրև խմբագիր։ Կար աւելի ուժեղ շարժառիթ, որը նա շատ գեղեցիկ կերպով նկարագրում էր իր մօտիկ բարեկամ Յովհաննէս Քուչուբէկեանցին *) գրած մի նամակում (1868, յունիսին)։

*) «Հիւսիսափայլի» աշխատակից, Ղզլարում։ Գրում էր գլխաւորապէս ոտանաւորներ, որոնք յետոյ տպագր-

«Ժամանակը հարկեցուցիչ է,—բացականչում է Նազարեանցը.—ազգի հրապարակը ամենևին դատարկ է մնացել։ Լուռ են աշխարհականք, և հոգևոր դասու անբանութիւնը կամի կռանել տգիտութեան և ստրկութեան շղթայք մեր ժողովրդի համար։ Ես վաղուց և շատ վաղուց ասած եմ Ձեզ իմ վերջին վճռական կարծիքը, թէ վա՜յ այն ժողովրդին, որոյ կրթութեան և լուսաւորութեան յոյսը դրած է իւր հոգևոր դասու և եկեղեցական իշխանների վերայ. Նոյն կարծիքի վերայ կամ և մնամ այսօր իսկ հաստատ. և իմ օր ըստ օրէ անմիջական փորձերը ասում են ինձ, որ մեր ազգային և ժողովրդական լուսաւորութեան շաւիղն ու ընթացքը ա՛յլ է և ա՛յլ պիտի լինի, քան թէ կամէին մեր տըգէտ հոգևորականք իւրեանց տգէտ և անուս պարագլուխներով գծագրել մեր առաջև։ Ոչինչ խորհուրդ չունի իմ աչքում այն կռապաշտական մեծարանքը որ մի սխալի ժողովուրդ սովոր է ցուցանել միշտ իւր նորընտիր մեծաւորներին, առանց քննութեան տակ ձգելու դոցա մըտաւոր և բարոյական արժանաւորութիւնը։ Այդ տեղ մեծարողը և մեծարուածը

---

վում էին «Մեղուի», «Հայկական Աշխարհի» մէջ։ Հանգուցեալ Քուչուբէկեանցին գրած նամակները մենք ստացանք, դժբախտաբար բաւական ուշ, պ. Հմայեակ Մաժինեանից, Արմաւիրից։



հաւասարապէս թշուառ և արհամարհելի են. մեծարողը, որ գիտէ միայն պատիւ դնել արտաքին մեծութեանը առանց աչք ու հասկացողութիւն ունենալու ներքին մեծութեան համար, իսկ մեծարուածը, յիմարութեամբ մտածելով, թէ բոլոր մարդկային արժանաւորութիւնը պարունակուած էր արտաքին մեծութեան, արտաքին փառահեղութեան և ամպ հովանիքի մէջ։

«Ի՞նչ ասեմ, իմ ազնիւ որդի, իմ պատուական եղբայր Քուչուբէկեանց։ Ինչու համար մեր մէջ մի օրինաւոր բան չէ ծընանում, չէ աճում, չէ զարգանում, չէ ծաղկում, չէ պտղաբերում. դորա պատճառքը շատ բացայայտ են. այնուամենայնիւ ոչ ոք ժողովրդականներից չէ տեսանում զնոսա։ Ո՜հ մարդկային կուրութիւն, դատապարտելի հեղգամտութիւն և անխորհուրդ պատիւ ու պաշտօն անարժաններին։ Այդ կարգը, իբրև անկարգութիւն, պիտի ամենևին փոխուի, եթէ մեր ազգի մէջ ցանկալի էր, որ բան յառաջանայ։ «Լապտեր Հայաստանին» կը կառուցանուի Արարատի գագաթի վերայ, Ռուսաց արծուի թևերը հովանաւորելով նմա. բայց թէ նորա ճառագայթները որչափ տարածութիւն մեր հայկական կեանքի մէջ լուսաւորելու էին, կը ցուցանէ քեզ և ինձ իրական փորձը»։

Եւ այսպէս խօսողը այն մարդն է, որ

զգում է արդէն ծերութեան լուծը։ Որքա՜ն նախանձելի ծերութիւն. նա հանգստութիւն չէ որոնում, նա անպտուղ գանգատներ չէ անում, անշարժութեան սիրահար չէ, այլ գործ, ծանր, դժար, զրկանքներով, յուսահատական դժուարութիւններով լի գործ է կանչում։ «Ասպարէզը դատարկ է մնացել»... սա հին, փորձված զինուորի աղաղակն է, զինուորի, որ մինչև գերեզմանի ափը ճանաչում է իր պարտականութիւնը—ծառայել, միշտ ծառայել, ինչպէս էլ լինի ծառայել գործին։

Սուրբ ոգևորութիւն։ Դեռ նկատի ունեցէք, որ այս տողերը նա գրում էր իր Ֆրիդերիկի մահվանից երեք ամիս միայն անցած։ Դեռ սևեր հագած, դեռ արտասուքը աչքերում՝ նա կարծես յանկարծ նկատում է որ ասպարէզը դատարկ է մնացել և դուրս է նետվում հասարակութեան ծառայելու...

Եւ սակայն նոյն այդ Նազարեանցը ինչ էր ասում դրանից մի երեք տարի առաջ նոյն Քուչուբէկեանցին։ «Հիւսիսափայլի» վերջին օրերն էին։ Խմբագիրը, դառնացած, շուարած այն գերեզմանական սառնութիւնից, որի մէջ պիտի թաղվէր իր վեց տարվայ սիրելի գործը, գրում էր իր մտերիմ բարեկամին հետևեալը.



«Այդ ճառի մէջ *) դուք նուիրել էք մի քանի երեսներ իմ իբրև թէ արդիւնագործութեանս հայոց նոր դպրութեան հանդիսում։ Իբրև թէ, ասացի, որովհետև մի վայրենի ազգի մէջ մի անխորհուրդ բան է որևիցէ այրական առաքինութիւն. հասկացողն ո՞վ, գնահատողն ո՞վ, պահպանողն ո՞վ։ Երկրորդ, Ձեր գրուածը Ձեր տխմարների աչքում, պիտի երևի մի բարեխօսութիւն իմ համար ամբոխի առաջև, որ պահպանէին Հիւսիսափայլը, բայց դա կարող չէ այսուհետև պահպանուիլ, այլ յաւիտեան կը վերջանայ և կը մեռանի ներկայ տարուս հետ։ Փորձածը դարձեալ փորձել, կրկին փորձել—մեք վեց անգամ փորձեցինք—յիմարութիւն է։

... «Ես չ'գիտեմ, թէ ինչ գեղեցիկ նիւթով, ինչ հոյակապ գաղափարներով կարելի էր տևողական տպաւորութիւնք գործել այդ մարդերի վերայ. ինչ որ այսօր ազնիւ ու պատուական էր, էգուց թառաւ ու չքացաւ, այնպէս որ նորա հետքը չէ մնում։ Այս բանիս փորձը «բազում մասամբք և օրինակօք» առայ ես Հիւսիսափայլի գործում. և այդ տխուր փորձերի հիման վերայ պիտի միշտ ասեմ, որ պրոգրեսը անկարելի և անմտածելի բան է մեր Հայերի մէջ։

---

*) Խօսքը մի յօդուածի մասին էր, որ ուղարկել էր Քուչուբէկեանցը տպագրելու և յետոյ, Նազարեանցի խորհրդով, տպվեց «Մեղուի» մէջ 1865 թւին։

«Հիւսիսափայլը կը վերջանայ. Նորա լեզուախօսութիւնը և նորա գաղափարները նոյնպէս գերեզման կ'երթան, միտ դնելով ասիական ազգերի կեանքի այն պայմանին, որ միշտ մի հատ մեծ և զօրաւոր մարդ յանկարծ վեր կենալով այդ տեղ, առ ժամանակ մի խառնել է փտած ու նեխած կեանքի ջուրը, մի տեսակ կեանք է յառաջացուցել, բայց յետոյ թատրոնական բեմից ոտքը յետ դնելով, ազգերը դարձեալ մտել են իւրեանց ոչնչութեան և մեռելային կեանքի գերեզմանի մէջ: Այսպիսի է Ասիայի ճակատագիրը. Հայերինը ևս կարող չէ այլապէս լինել, իբրև ասիական հողի ծնունդների: Տխուր և անմխիթար խօսքեր. բայց ինչ օգուտ մեզ մեր անձը խաբելուց անհիմն գեղեցիկ յոյսերով: Թող մեր ազնուամիտ, մեր մի քանի շատ սակաւաթիւ ընտիր եղբարքը մտածեն և հոգան իւրեանց փրկութիւնը ընդհանուր հայկական նաւաբեկութեան փորձանքի մէջ, որ այսօր, էգուց անյեղլի բնական և բարոյական օրէնքով պիտի վերայ հասնէ, թէ ինչպէս, այդ գուշակելու հարկաւոր չէ մի մարգարէական հոգի»:

Այսքան մռայլ յուսահատութիւնը, ըստ երևոյթին, այլ ևս բոլորովին չը պիտի թոյլ տար այդ մարդուն երևալ հասարակական գործերի ասպարէզում: Դուք տեսնում էք



թէ որքան խորը համոզված է նա, որ ոչինչ չի լինի, որ աւելորդ ու անպտուղ բան է հայերի համար աշխատելը: Նոյն նամակի ըսկզբում նա ասում է.

«Դուք, ես և մի քանի այլ ազնուամիտ և փոքր ի շատէ բանագէտ եղբարք կարող են գեղեցիկ գաղափարներ շատ, ազնիւ ցանկութիւններ անհամար յղանալ իւրեանց մէջ և այս կամ այն ոճով բացայայտել թղթի վերայ, խօսել ամբոխի հրապարակում, բայց դոքա բոլորը զուր և անօգուտ բաներ են, որովհետև մեք Հայերս այն քաջ շինող ճարտարապետը (չենք), որ շինութեան առաջարկութիւնը աչքի հանդէպ պահելով, և հասկանալով ազգաշինութեան հոյակապ խորհուրդը, վճռաբար, կատարեալ սրտով ու կամքով ձեռք տար գործին:... Բայց ինչ ունինք մեք աւելի, քան թէ մի բաբելոնեան խառնակ ոգէտ և անբարոյական ամբոխ. ինչ ունինք մեր աչքի առաջև աւելի, քան թէ լոկ արգելք, խափանք, հալածօղք և թշնամիք ամեն ազնիւ բանի: Վերակենդցաղութիւն, վերանորոգութիւն, յառաջխաղացութիւն ամենևին անկարելի բաներ են այնտեղ, ուր չկայ կեանք, կեանք ընկերական և հասարակաց, ուր իւրաքանչիւր անձը իւր վերայ միայն մտածելով, արջի պէս ապրում է իւր վայրենութեան մէջ:

...«Դուք սխալվում էք Ձեր ազնիւ և գեղեցիկ մտածութեամբ, որպէս մինչև այսօր սխալուել է Հիւսիսափայլի հրատարակողը, որովհետև նա միշտ ազնուաբար մտածել ու զգացել է, գեղեցիկ գաղափարներով և յոյսերով սնել է, առանց միտ դնելու դոցա իրագործութեան պայմաններին ասիական կեանքի մէջ—բայց այսօր պիտի անյոյս կորնչի։ Եւ ինչ խորհուրդ ունին գեղեցիկ մտաւորական գաղափարներ, այն երկնաքաղաքացի յոյսեր, եթէ նոցա իրագործելու, կատարման հընարաւորութիւնը չը կայ մեր կեանքի, հայկական կեանքի պայմանների մէջ։ Մարդն է, որ իւր այրական հոգով և իւր այրական քաջագործութեամբ շինում է և զարդարում է աշխարհը. մարդկային ընկերութիւնն է, որ իւր ամենակարող բարոյական զօրութեամբ անհնարինը առանձնականի համար, հնարաւոր է կացուցանում հասարակաց զօրութեամբ։ Բայց Հայերի մէջ ոչ մարդը կայ եւ ոչ մարդկային ընկերութիւնը։... Միթէ այսպիսի հանգամանքի մէջ կարելի է յուսալ որ և իցէ յառաջախաղացութիւն, որ և իցէ ազնիւ բանի իրագործութիւն մեր մէջ։ Նախ պիտի վարել հողը, ապա թէ կարելի է ցանել նորա վերայ։ Բայց ասիական կեանքի և մարդերի կեցութեան ներկայ պայմանքը փոխել Աստուած ես կարող չէր, ուր մնաց դու և ես»։

Եւ այս սարսափելի վհատութիւնը րոպէի



ազդեցութիւն չէր։ «Հիւսիսափայլի» մահից մի տարի էր անցել և Նազարեանցը դեռ կարծում էր թէ ինքը հարկաւոր չէ հայոց ազգին և հէնց այս պատճառով է որ աջողութիւն չունի։ Եւ նա գրում էր Բուչուբէկեանցին թէ ինչ է մնում իրան անել.

«Կամ իմ աշխատութիւնքս նուիրել իմ ազգի օգտին—այսինքն եթէ դորան հաճոյ էր արժանաւոր կերպով գրաւել ինձ իւր դրօշակի տակ զինուոր լինելու—կամ թէ ամենևին հեռանալու մեր Հայերից, որովհետև անօգուտ և անշահ էի նոցա։ Իմ կեանքիս բաղդաւորութեան պայմանքը ես արդէն բացայայտել եմ Ձեզ. դոքա դրած են իմ համար այն օգտաբերութեան մէջ, որ ես տակաւին կարող էի հասուցանել Հայերին, դոցա յատուկ կամելով և օգնականութեամբ. բայց անօգուտ և մեռած լինելով Հայերի համար—որովհետև դոքա չկամէին ճանաչել իւրեանց պիտանի մարդը—այնուհետև իմ կողմից ես չկար ոչինչ խելացի պատճառ մնալու այն տեղ, ուր ես աւելորդ էի, դուցէ շատերին գայթակղութեան քար ես»։

Ահա այսպիսի ժամեր էլ են գալիս մենակ մնացած, իրանց միսսիայի, իրանց առաքելութեան մասին պարզ հասկացողութիւն չունեցող գործիչների վրա։ Նազարեանցը ինքն իրան չէր ճանաչում։ Որքան

միամիտ էր նա, որքա՜ն սխալված, կարծելով թէ ազգը պիտի կանչէր նրան։ Այդպիսի օրինակներ ո՞ր ազգի պատմութեան մէջ էր նա գտնում։ Լինել ժողովրդի արատների դէմ մարտնչող մի զինուոր, սուր և կրակ ունենալ ձեռքում հասարակաց միտքը զարթեցնելու համար, անողոք ճշմարտութիւնը, կծու արդարութիւնը դնել դատաւորի սեղանի վրա ու այդպէս դատել—և ապա պահանջել որ իրան ընդունեն ամէնքը, որ հասարակութիւնը թեթևացնէ իր փշոտ ճանապարհը... Ո՞ւր էր, եթէ մարդկութիւնը այսպէս եղած լինէր. այն ժամանակ աշխարհում ինչո՞ւ պիտի թափվէր նահատակների, մարտիրոսների արիւնը...

Նազարեանցը յուսահատվել գիտէր. և յուսահատութեան րոպէներին մոռանում էր, որ իր ամբողջ ոյժը, իր ամբողջ նշանակութիւնը հէնց այդ մենակութիւնն էր, հէնց այդ տանջանքներն էին, որ կրում էր նա իր սրտի մէջ իբրև արհամարհվող զինուոր, մի զինուոր, որ կանգնած էր հայկական կեանքի անապատում և նայում էր իր շուրջը, լաւ զգալով որ իրան չը պիտի լսեն, որ ինքը անհարկաւոր է ներկայ րոպէին...

Յուսահատութիւնը—մենք այս շատ անգամ տեսանք—յատուկ էր Նազարեանցին ըս-



կզբից և եթ։ Բարեբախտաբար, այդ յուսահատութիւնը չէր կարողանում խլացնել նրա ներքին կոչումը. և գանգատների, հառաչանքների մէջ Նազարեանցը շարունակում էր լինել նոյն լուսաւոր մշակը, նոյն մարտնչողը։ Այսպէս էր և այս դէպքում։ «Հիւսիսափայլի» մահը մի սարսափելի հարուած էր, որ իջնում էր այդ զգայուն, սիրող սրտի վրա։ Հարուածի ազդեցութեան տակ նրա համար այլ ևս ոչ մի կասկած չը կայ, որ ի զուր և ապարդիւն է գործ շարունակելը հայերի մէջ, որ ոչինչ չի լինի, պէտք է թափ տալ ձեռքը և մի կողմ քաշվել։ Բայց անցնում են ամիսներ, անցնում է կարճ ժամանակ, և Նազարեանցը մոռանում է ամեն ինչ, եռանդով, երիտասարդական ոգևորութեամբ նորից հրապարակ է իջնում։ Ասպարէզը դատարկ է... Եւ նա շտապում է իր «Լապտեր Հայաստանին» դնել Արարատի գագաթի վրա...

«Լապտեր Հայաստանի»-ն նոյն ծրագիրն ունէր, ինչ «Հիւսիսափայլը», միայն նա աւելի էր շեշտում ժամանակակից հրապարակախօսութիւնը և մանկավարժութիւնը։ Նազարեանցը այս անգամ աւելի մեծ ուշադրութիւն պիտի նուիրէր հայկական կեանքին և դպրոցական հարցերին։ Նոր ամսագրի կոչումն էլ, «Հիւսիսափայլի» պէս, ամենից շատ

աշխարհաբարի մշակման գործը պիտի լինէր։ Մենք պէտք է ասենք, որ Նազարեանցը, ինչպէս ցոյց է տալիս և այդ յայտարարութիւնը, հետզհետէ աւելի էր հակվում դէպի գրաբարի ձևերը. Նրան չէր աջողվում մի պարզ ու կանոնաւոր աշխարհաբար մշակել իր համար։ Բայց և այդպէս, նա սաստիկ վրդովվում էր ուրիշների գործ ածած աշխարհաբարի դէմ։ Ատելով ատում էր նա մանաւանդ գաւառաբանութիւնները։ Եւ պէտք է խոստովանել, որ նա, ժողովրդական հանրամատչելի լեզուի այդ եռանդուն պաշտպանը, բաւական արդէն յետ էր մնացել աշխարհաբարի մշակման գործում։ Լեզուն այժմ կազմվում էր ոչ թէ Մոսկվայում, այլ Թիֆլիսում։ Այստեղ հայ մամուլը, գրականութիւնը ընդունում էր բազմաթիւ ոճեր և դարձուածներ թէ բուն ժողովրդից և թէ ռուսաց լեզուից։ Նազարեանցը հակառակ էր այդ բոլորին և ասում էր թէ իր «Լապտերով» պիտի զինուի «աւերագործ հայազգի վանդալների» դէմ։

Չէ կարելի ուրանալ և այն, որ Թիֆլիսի վերանորոգիչները չափազանցութիւնների, և յաճախ անհեթեթ չափազանցութիւնների մէջ էին ընկնում։ Դրա ամենապարզ ապացոյցն է Ստեփանէի «Հայկական Աշխարհը», որի ընդունած ուղղագրական ձևերը, կէտադրու-



թիւնը (մանաւանդ 1867-ին) ուղղակի անկարելի էին դարձնում ընթերցանութիւնը։ Նազարեանցը թէև չէ տալիս «Հայկական Աշխարհի» անունը, բայց ակնարկութիւններով պարզ հասկացնում է որ իր կռիւը գլխաւորապէս լինելու է այդ «վանդալի» դէմ։ «Ոչ նորութիւնք, նոր կէտադրութիւն, նորանշան չեշտեր և նոր կանոնք, կամ ուղիղ ես ասել, անկանոնք յարմարագրութեան, որպիսի անօգուտ, վնասակար իսկ բաներ էին, հաւանեցաւ այս կամ այն անձը օտարուստ ներս մուծանել հայկական լեզուի մէջ, այլ վերանորոգութիւնք մի քանի հին ձևերի, որ տալու էին աշխարհաբարին աւելի համառօտութիւն, աւելի որոշութիւն և ճշտութիւն — աւելի պատուականութիւն»։ Ահա Նազարեանցի դաւանութիւնը։ Ժողովրդից հեռու ապրող մի մարդ, նա արհամարհում է ժողովրդի ստեղծագործական ոյժը և հին ձևեր վերանորոգելով է ուզում նոր լեզու սարքել։ Սա էլ մի մեռած ձգտում էր, ինչպէս «Հայկական Աշխարհի» ձգտումը կանոնաւորել լեզուն եւրոպական կէտադրութեան միջոցով։—Հետաքրքրական է որ Նազարեանցը խոստանում էր գործածութեան մէջ մտցնել Թիւրքահայ բարբառի մի քանի ձևերը։

Եթէ «Լապտերին» վիճակված լինէր լոյս աշխարհ գալ, մենք կը տեսնէինք թէ Նազարեանցը ինչպէս է կատարել իր խոստումները։ Բայց «Լապտերն» էլ, իր ծրագիրն էլ ինչպէս ասացինք, լոկ դիտաւորութիւն մընացին։ Մի քանի տեղեկութիւններ էլ այդ չը ծնված ամսագրի մասին, և մենք կը վերջացնենք։

Նազարեանցի աշխատակիցները այս անգամ պիտի լինէին. Գէորգ Քանանեանց (Լազարեան ճեմարանի տեսուչ), Կարապետ Եզեան, Սմբատ Շահազիզ։ Սրանց մէջ միայն Շահազիզն էր յայտնի իր որոշ գոյնով, դաւանութիւններով. Գէորգ Քանանեանցը իր կեանքի ամբողջ ընթացքում ցոյց չը տուեց թէ ինչ սկզբունքների տէր է, ոչ էլ գրեց հայերէն լեզուով *)։ Իսկ Կարապետ Եզեանը

*) 1868 թւի մայիսին Նազարեանցը նամակով խնդրում էր Գէորգ Քանանեանցին աչքի անցկացնել «Լապտեր Հայաստանի»-ի ծրագիրը և յայտնել իր կարծիքը· ուրախութիւն յայտնելով որ Քանանեանցը պիտի աշխատակցէ ամսագրին, Նազարեանցը գրում էր. «Ես մինչև այժմ աշխատած, քրտնած և տապակուած եմ միա՛յն, մեր ազգի մտաւոր և բարոյական օգուտների համար։ Այդ փոքր է և շա՛տ փոքր, և միշտ մնալու է անյաջող, գոնեայ անտեւողական, որովհետև մի հատիկ մարդ, որչափ ևս քանքարաշատ լինէր նա, անբաւական է տանել բոլոր ծանրութիւններին այնպիսի մի ձեռնարկութեան,



ապագայում յայտնի դարձաւ իբրև անհաշտ թշնամի այն սկզբունքների, որոնց քարոզում էր Նազարեանցը։ Կայ այդ աշխատակիցների թւում մի անուն էլ, որ նոյնպէս զարմանք է յարուցանում։ Դա Մսեր մագիստրոսն էր, այն իսկ Մսերը, որ կռւում էր «Հիւսիսափայլի» դէմ, Չէրքէզեանցի կեղտոտ գրութիւններին տեղ էր տալիս, իսկ Արարատեանցին հանճար էր անուանում. «Հիւսիսափայլն» էլ անուանում էր Մսերին ապէտ, անհասկացող։ Այժմ նա Նազարեանցի հետ էր։ Ի՞նչ էր սա նշանակում։ Եւ ինչ պիտի լինէր «Լապտեր Հայաստանին» այդպիսի աշխատակիցների հետ։ Դժբախտաբար, բայց գուցէ և բարեբախտաբար, մենք այդ չը գիտենք…

որպիսի է հրատարակութիւնը մի արժանաւոր օրագրի· բայց միացեալ և միաբանեալ զօրութիւնքը, ընկերութեան ոյժը, որոյ մէջ պարունակուած է և մարդուս մեծագործութեան կարողութիւնը, ինչպէս քաջ յայտնի է խոհականից, սովոր են հեշտացնել ամենայն դժուարութիւնք, այս հնարաւոր կացուցանել այն բանը, որ անհնարին է առանձնական անհատների»։

## II

*Տեսչական պաշտօն Ներսիսեան դպրոցում։—Թիֆլիսը, նրա թողած տպաւորութիւնը։—Նազարեանցը չէ կարողանում գործել։—Ի՞նչ էր նրա տեսչութիւնը դպրոցի համար։—1869-ի դպրոցական հանդէսը։—Դժգոհութիւններ։—Նազարեանցի կազմած դասագիրքը։—Հրաժեշտ Թիֆլիսին, վերադարձ Մոսկվա։—Գրական ծրագիր։—Վերջին գրուածք։—Ճանապարհորդութիւն դէպի Եւրոպա. Գերմանիայի թողած տպաւորութիւնը։—Մահ։*

—oo—

Ներսիսեան դպրոցի համար նոր հոգաբարձութիւն ընտրվեց 1868-ի գարնանը։ Ընտրվածները առանձին ուշադրութիւն դարձրին դպրոցի դրութեան վրա։ Աննախանձելի էր այդ դրութիւնը թէ տնտեսական և թէ ուսումնական կողմերից։ Պակասել էին դըպրոցի արդիւնքները և նոր հոգաբարձութիւնը կարգ ու կանոն հաստատեց, վերանորոգեց դպրոցի հին, խարխուլ շինութիւնը, աւելացրեց անշարժ կալուածների և այլ նիւթական աղբիւրների շահաւէտութիւնը։



Բայց աւելի ողբալին ուսումնական մասի դրութիւնն էր։ Մենք տեսանք որ դպրոցը կառավարվում էր ժամանակաւոր տեսուչների ձեռքով։ Պաշտօն վարողների դրութիւնը այնքան անհաստատ էր և խախուտ, որ ոչ-ինչ բարեկարգութիւն չը կար դպրոցի մէջ։ 1868 թւի մայիսին ուսուցչական ժողովը, նկատի առնելով աշակերտների պատրաստութեան չափը, վճռեց բոլոր աշակերտներին թողնել միենոյն դասարաններում, բացառութեամբ մի քանիսի, իսկ բարձր, հինգերորդ, դասարանի աշակերտներին իրաւունք տուեց մի տարի էլ մնալ։ Աւելորդ համարվեց նոյն իսկ տարեկան հարցաքննութիւններ նշանակել։ Հոգաբարձութիւնը չը համաձայնվեց այս որոշումների հետ. նա կամենում էր հըրապարակական հարցաքննութիւնների միջոցով պարզել դպրոցի ուսումնական մասի դրութիւնը։ Հարցաքննութիւնները տեղի ունեցան և տուին շատ ողորմելի հետևանքներ. դպրոցից արձակվեցին 53 աշակերտներ, յետ տարվեցին 12, պատրաստականից և առաջին դասարանից փոխադրվեցին 14 աշակերտ միայն. միւս դասարաններից փոխադրվողներ չեղան *)։

*) Ստ. Մալխասեանց—«Համառօտ Պատմ. Ներսիս. դպրոցի», եր. 128։

Դժգոհութիւնը ընդհանուր էր. «Հայկական Աշխարհը» մերկայցնում էր դպրոցի այդ թշուառութիւնը, պահանջում էր բարեկարգութիւն։ Հոգաբարձութիւնը վճռեց մի փորձված տեսուչ հրաւիրել և կանգ առաւ Նազարեանցի վրա։ Գէորգ կաթողիկոսը իր հաւանութիւնը տուեց և հոգաբարձութիւնը բանակցութիւններ սկսեց Նազարեանցի հետ։ Նոր տեսչի ընտրութիւնը, ինչպէս իմանում ենք «Հայկական Աշխարհից», կայացել էր դեռ 1868-ի վերջերում, բայց բանակցութիւնները ձգձգվեցին մինչև հետևեալ տարվայ օգոստոս։ Նազարեանցին առաջարկվում էր տեսչական ռոճիկ 1600 րուբլի և դասերի համար առանձին 400 րուբլի։ Ընդունելով այդ պայմանները, Նազարեանցը 1869-ի սեպտեմբերին, թողնելով իր պաշտօնը Մոսկվայում, տեղափոխվեց Թիֆլիս։

Նրա վաղեմի տենչանքը իրագործված էր։ Դեռ Կազանից գրած իր նամակների մէջ նա անդադար գանգատվում էր թէ մարգարէն իր գաւառում պատիւ չունի, թէ հայերը չեն իմանում յարգել իրանց ուսումնականներին։ Այժմ այդ գանգատները վերանում էին. Նազարեանցին տրվում էր գործելու լայն ասպարէզ։ Եւ նա այժմ այն չէր, ինչ Կազանում—անյայտ մի երիտասարդ, որ նոր էր



մտնում կեանքի մէջ։ Այժմ նա ունէր պատկառելի անուն, հեղինակութիւն։ Ներսիսեան դպրոցը, հայ աղքատ դասակարգին ծառայող այդ կրթական հիմնարկութիւնը, կարօտ էր մի անձնուէր, հասկացող ղեկավարի. նա թշուառ էր իր անմխիթար դրութեամբ և նրան պէտք էր փրկել, կենդանացնել։

Ոչ ոք չէր կասկածում թէ Նազարեանցը այդպիսի մի փրկիչ կը լինի. նրա վրա մեծ յոյսեր էին դրված։ Դպրոցի կարգերը անխնայ քննադատող «Հայկական Աշխարհը» գրում էր. «Մեծ. պ. Նազարեանը ուսումնարանի տեսուչ ընտրվեցաւ ձայների բազմութեամբ և երբ Հայ քաղաքացին կընդունէ հրաւէրը և շնորհ կբերէ դէպի մեզ, ուսումնարանի նոր ժամանակամիջոց (էպօք) սկսվելու է այս» *)։

Նազարեանցի Թիֆլիս գալը, իհարկէ, միայն Ներսիսեան դպրոցի տեսակէտից չունէր նշանակութիւն։ Պակաս նշանաւոր չէ այն հանգամանքը, որ նա, իբրև գրական գործիչ, իբրև հասարակութեան արատները և պակասութիւնները մերկայցնող, բնակութիւն էր հաստատում Թիֆլիսի պէս մի հայա-

*) 1868, № 11։

շատ կենտրոնում, ուր թանձրացած էր հայկական իրականութիւնը և ուր միայն հնարաւոր էր կազմակերպել այդ իրականութեան դէմ կռուելու, նրան ղեկավարելու և բարեկարգելու գործը։ Կար մրցութեան մեծ դաշտ, կար հասարակական և գրական ձեռնարկութիւնների մեծ պահանջ։ Նազարեանցին վերապահված էր մի աչքի ընկնող դեր։ Բայց նա չը կատարեց այդ դերը, չը կարողացաւ իր դպրոցի սահմաններից դուրս գալ։ Ապրելով Թիֆլիսում համարեա երկու տարի, նա բաւականացաւ միայն իր պաշտօնով։

Թիֆլիսը ճնշում է Նազարեանցին։ «Շատ բան հեռուից տեսած, պսպղուն և գրաւիչ է —գրում էր նա Գէորգ Քանանեանցին՝ Թիֆլիս հասնելուն պէս,—բայց որ մօտից քննում ես և շօշափում ես, ոսկի կարծեցածդ ստուգվում է մի շատ հասարակ մետալ»։ Եւ այսպիսի դառն յուսախաբութիւն պատճառողը մի օտար, անսովոր տեղ չէր, այլ այն քաղաքը, ուր նա ծնվել և մեծացել էր։ Տասնեակ տարիներով հայրենիքից հեռու ապրած մարդը ընկնում է հայկական կեանքի մէջ, նայում է նրա կերպարանքին և զգում է որ դա իր տեղը չէ, զգում է որ ոչինչ չէ կարելի անել այդտեղ։ Ահա ինչ է նա գրում



1870 թւին իր նախիջևանցի բարեկամին *)․

«Ահա մի տարի է, որ Թիֆլիսում եմ, բախտի անյաջող բերմամբ ընտրելով ինձ ասպարէզ գործունէութեան մի հեռաւոր ասիական աշխարհ, որ թէպէտ և իմ հայրենիքն է, բայց այս րոպէիս, փոքր ինչ մօտուց տեսնելով և քննելով իրը, ամենևին անհաւանելի է երևում ինձ։ Ձեր քաղաքում արդարև մարդիկը, ժողովուրդը, աւելի տգէտ են, բայց Թիֆլիսեան հայերի լուսաւորութիւնը մի ամենևին օտար բան է․ լեզուների հետ և սիրտն ու միտքը փոխուած, ոչ հայկական, այլ այլազգական միանգամայն։ Ձեր քաղաքում չը տեսայ փողոցում կեանք ու շարժողութիւն, մինչ այստեղ Թիֆլիսում երևելի, եւրոպական փառաւորութեամբ շինած մաղազիններ և գեղեցիկ հագնուած մարդիկ ամենայն տեղ հանդիպում են ձեզ, մանաւանդ նոր քաղաքում․ բայց այս բոլոր կեանքը և շարժողութիւնը մի շատ նիւթական և էգոյիստական բան է․ հայրենասիրութիւն, հասարակաց հոգի և կեանք չը կայ, ամենայն ինչ օտար և հեռի իմ սրտի ցանկացածներից։ Հայերը ունին այստեղ փառաւոր տներ, ոմանք դրսանից ասիական փառահեղութեամբ զարդարած, բայց ձեր տները, ինչպէս նկատեցի ես, աւելի յարմարութիւնք և

*) «Տարազ» շաբաթաթերթ, 1900, № 9։

կոմֆորտ ունին, քան թէ Թիֆլիզեանքը։ Հասարակ ժողովուրդը աղքատութեան անդունդքի մէջ կորած, ապրում է ամենևին թշուառաբար, հին պապական և մայրական չաւիղներից ոչ մի քայլ առաջ չը գնացած։ Այստեղ կան մի տեսակ աղքատք, որ գրեթէ մերկ ման են առնում փողոցի մէջ։ Ոչ, Թիֆլիսեան հարստութիւնը կարող չէ կաշառել իմ աչքը, մինչ ժողովրդի թշուառ կեանքը զզուանք է բերում մարդու վերայ, երբոր կարեկցութիւնը ամենօրեայ կրկնութեամբ թուլացած էր»։

Շարունակելով համեմատութիւնը Թիֆլիսի և Նոր-Նախիջևանի մէջ, Նազարեանցը գտնում էր որ ազգի առաջադիմութեան գործը կարող է աւելի Նոր-Նախիջևանում յարմար և նպաստաւոր պայմաններ գտնել։ Ահա թէ ինչու։

«Ձեր մէջ—ասում է նա—մարդիկ անմիաբան են և հակառակ միմեանց, բայց հասարակաց գործի մէջ, պիտի ասել արդարութեամբ, և վասն ձեր պարծանքի, դուք կարող էք փոքր ի շատէ մոռանալ ձեր անձնական ախտերը և կիրքը. բայց այդպէս չէ Թիֆլիսում, այստեղ ազգային օգտի հոգաբարձուք բազմագլխանի չար վիշապներ են, ու նրանց միայնակ ջանքը և հաճութիւնը այն է, որ միշտ հակառակ դուրս գան մինը միւսին և այդպէս



ոչինչ խնդիր լուծումն չը ստանայ, ամենայն բան մնայ անորոշ և տարտամ։ Սարտափելի վիճակ իրերի, որոյ մէջ ոչինչ բարի գործ յառաջ գնալ կարող չէ, և իմ ամենալաւ գաղափարքը զօրաւոր կամքի հետ միասին իզուր ջախջախուելու են այստեղ և արդարև ջախջախվում են։ Ինչ որ այս պարոնները երեկոյին վճռած ու կնքած էին, վաղուան առաւօտումն արդէն մերժած ու քայքայած է, ոչ մի բանի վերայ հաստատութիւն և դադար չը կայ, մի օր այսպէս, միւս օր այլպէս, ով խելք ունէր, պիտի խելակորոյս լինէր սրանց հետ և այդպէս գործը յետ մնար միշտ»։

Այսպէս էր իրականութիւնը։ Եւ նա, ինչպէս տեսնում էք, չէ լցնում Նազարեանցի սիրտը գործելու, ոյժեր լարելու ցանկութեամբ, այլ, բոլորովին հակառակը, յուսահատեցնում է նրան հէնց առաջին քայլերից, վախեցնում է, փախցնում։ Մի ժամանակ կար, երբ այդ գործիչը բոլորովին իրաւացի հպարտութեամբ ասում էր. «Ոչ եկի խաղաղութիւն արկանել, այլ հուր»։ Այժմ նա «բախտի անյաջող բերմունք» էր համարում այն, որ ընկել էր մի տեղ, ուր հէնց այդ աստուածային «հուրն» էր հարկաւոր, ուր հունձը այնքան առատ էր, բայց մշակները սակաւ։

Մի ուրիշ նամակի մէջ նա այսպէս էր նկարագրում Թիֆլիսի հայերին.

«Վաճառականութիւնը շատ ծաղկած է այստեղ և հայոց ձեռքում գրեթէ միայն... Մի բան իսկոյն գրաւում է այստեղ մարդուս ուշադրութիւնը. ճոխութիւնը և հարստութիւնը և տմարդի ագահութիւնը այս տեղի մարդերի. խիղճ, պատիւ, կարեկցութիւն, ազնիւ զգացողութիւն ոչինչ նմանապիսի բան չկայ այստեղ։ Ձեզ պիտոյ էր տեսանել թէ ոմանք հարուստ Հայեր ո՛րպիսի շքեղազարդ տներ ունին այստեղ, ոսկեզարդ, կէս մի ասիական և կէս մի եւրոպական ճաշակաւոր փառահեղութեամբ, կարասիքով և այլն և այլն»։

Նազարեանցի նկարագրած իրականութիւնը մեզ վրա հէնց այն տպաւորութիւնն է թողնում, որ այդտեղ, Թիֆլիսում, էր նրա տեղը, որովհետև Նազարեանցը ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ բողոք ու մտրակ, կռիւ ու պահանջ։ Բայց դրա փոխարէն մենք տեսնում ենք նրա մէջ կատարեալ յուսահատութիւն. դեռ Թիֆլիսում մի բան չարած՝ նա արդէն մտածում է Նախիջևան տեղափոխվելու մասին։ Եւ կարելի չէ կասկածել, որ այնտեղ էլ նա պիտի գտնէր նոյն յուսահատեցնող, հեռու փախցնող իրականութիւնը։

Ի՞նչպէս հասկանանք Նազարեանցի այս անկարողութիւնը։

Ամենից առաջ նկատի ունենանք մի հան-



գամանք.—Նազարեանցը իր նամակներում յաճախ է խօսում իր ծերութեան մասին։ Տարիները իրանցն էին պահանջում. և նրանք, իհարկէ, չէին կարող թոյլ տալ Նազարեանցին նորից նոր սովորել վաղուց թողած ու մոռացված հայրենի միջավայրին, ապրել նրա հետ, յամառ ու տոկուն մաքառողի դերը բռնել։ Դրա համար արդէն ուրիշ հասակ էր պահանջվում։ Բացի դրանից, այստեղ էլ խօսում էր Նազարեանցի հին պակասութիւնը, այն, որ նա իրականութեան մարդ չէր, կեանքի հետ անմիջապէս չէր շփվում։ Աւելի թէօրիայի, վերացականութեան մարդ, քան կեանքի ասպարէզում կռւող զինուոր, նրան ճնշում էր մանաւանդ այն, որ Թիֆլիսում մի անկախ դիրք չունէր գրաւած, այլ հպատակված էր հասարակութեան և նրա պաշտօնը, ինչպէս կը տեսնենք, իրաւունք էր տալիս ամեն մէկին դատաւոր հանդիսանալ նրա վրա։ Ո՛չ, այդ իրականութեան համար ուրիշ տեսակ մարդիկ էին հարկաւոր։ Հէնց այդ իսկ ժամանակ Թիֆլիսում գործում էր «Հայկական Աշխարհի» խմբագիր Ստեփանէն։ Նոյն աննպաստ հանգամանքները խեղդում էին նրան. նա էլ ուսուցչութեամբ էր մի կտոր հաց աշխատում իր համար, բայց շնորհիւ իր եռանդի՝ խմբագրում էր մի ամ-

տագիր, որ այն ժամանակվայ մեր կեանքի միակ փոքր ի շատէ մխիթարական երևոյթներ էր։

Մի կողմ թողնելով հասարակական գործունէութեան ասպարէզը, մենք տեսնում ենք որ Նազարեանցը դպրոցական գործում էլ առանձնապէս աչքի ընկնող, խոշոր բան չը կարողացաւ անել։

Ներսիսեան դպրոցի դրութիւնը նա այսպէս է նկարագրում իր նամակների մէջ. «Իմ տեսչութեանը յանձնած ուսումնարանը տակաւին շատ պակասաւոր դրութեան մէջ է. շինութիւնը և դասատունքը կեղտոտ և անկարգ։ Վարժապետները լաւ մարդիկ են և աշխատում են ազգասիրական ջերմեռանդութեամբ, բայց ըստանում են փոքրիկ վարձատրութիւն. 50 մանէթ տարեկան դասին, որ շատ փոքր է Թիֆլիզի պէս թանգ տեղում։ Ծխական ուսումնարանները, որ էին պատրաստողականքը դպրոցի համար, ամենևին բարձի թողի արած. ուսումնական հնարները, դպրոցական մատեանք և գիտնական հանդերձանք գրեթէ չկան ամենևին»։

Իր գալուց յետոյ նա անմիջապէս հանդիսաւոր ակտ կատարեց (հոկտեմբերի 12-ին), որի ժամանակ մի թեթև հաշիւ ներկայացրեց ժողովականներին հոգաբարձութեան



կողմից։ Նոյն այդ հանդէսում ուսուցիչներից երկուսը և ինքը, Նազարեանցը, կարդացին ճառեր զանազան առարկաների մասին։ Նազարեանցի ճառն էր «Պատմութիւն Պեդագոգիկայի, որպէս դա կերպարանագործուած է համաշխարհական պատմութեան մէջ և ներքին, օրինապատշաճ կերպով շաղկապուած է ազգերի կրթութեան հետ», մի գործ, որ թարգմանված էր գերմանացի Շմիդթի «Մանկավարժութեան Պատմութիւն» յայտնի աշխատութիւնից։ Այդ բոլոր հաշիւները և ճառերը Նազարեանցը հրատարակեց Թիֆլիսում 1870 թւականին մի մեծադիր տետրակի մէջ, կցելով նրան նաև այն դամբանական ճառը, որ արտասանել էր ինքը հոկտեմբերի 18-ին դպրոցի հոգաբարձու բժիշկ Տէր-Գրիգորեանի դագաղի վրա։ Տետրակի վերնագիրն էր. «Ճառախօսութիւն և Համարատուութիւն Ներսիսեան Ազգային Հոգևոր դպրոցի հանդիսաւոր գործողութեան մէջ 1869 թւականի հոկտեմբեր 12-ին»։

Սակայն չէ կարելի ասել թէ Նազարեանցի տեսչութիւնը բոլորովին աննկատելի անցաւ Ներսիսեան դպրոցում։ Քայքայված հիմնարկութիւնը մի շարք ներքին բարեկարգութիւններ ստացաւ իր նոր տեսչի ձեռքից։ Սկզբից և եթ Նազարեանցը կազմակերպեց

և կանոնաւոր հիմքերի վրա դրեց մանկավարժական ժողովը, որ մինչև այդ անուանով գոյութիւն ունէր, մոռացված ու քայքայված էր։ Այդ մարմինը, որ ամենից մօտ ծանօթ էր դպրոցի կարիքներին, սկսեց կանոնաւոր նիստեր ունենալ, քննել հիմնարկութեան պակասութիւնները, որոշումներ կայացնել, որոնց իրագործումը Նազարեանցը աջողեցնում էր հոգաբարձութեան նիստերում։ Ցիշենք այդ որոշումներից մի քանիսը. գնել կարեւոր գրքեր և կազմել Փիզիկական կաբինէտ. ընտրել այդ ուսուցիչների ընթերցանութեան համար յօդուածներ և ամսագրեր ռուսերէն և եւրոպական լեզուներով։ Աշխարհաբարի դասաւանդութիւնը մտցնել դպրոցի առաջին և երկրորդ դասարաններում, իսկ գրաբարը սկսել երրորդից։ Մինչև այն ժամանակ, ի նկատի առնելով որ Թիֆլիսի զանազան եկեղեցիների մօտ բացված ծխական դպրոցները համարվում էին Ներսիսեան դըպրոցի նախապատրաստական դասարաններ, մանկավարժական ժողովը վճռում է ենթարկել նրանց իր հսկողութեան։ Դպրոցը չունէր վեցերորդ դասարան. և որովհետև նա չէր բացվում միջոցների պակասութեան պատճառով, ուստի Նազարեանցը 6 ուսուցիչների հետ դիմում է հոգաբարձութեան, խնդրելով բաց անել վեցերորդ դասարանը. նա և ուսուցիչները առաջարկում էին ձրի դասեր վերցնել այդ դասարանում։ Բայց հոգաբարձութիւնը չընդունեց այդ առաջարկութիւնը։



Ուսուցչական խումբը գործում էր համերաշխութեամբ և դպրոցի առաջադիմութիւնը արդէն զգալի էր, թէև «Հայկական Աշխարհը» շարունակում էր դժգոհ մնալ ուսումնական մասի դրութիւնից և քննադատում էր նրա պակասաւոր կողմերը *)։ Նազարեանցը աշխատում էր անդադար. և եթէ նրա [illegible] բոլոր դիտաւորութիւնները չէին իրագործվում, դրա մէջ մեղաւորը նա չէր։ Ահա ինչ էր նա գրում իր նամակներից մէկում.

«Մենք Հայերս Թիֆլիզում ունինք ուսումնարան, բայց ոչինչ ուսումնական ատնօթ, ոչինչ ուսումնական լեզու, ոչինչ դպրոցական մասեանք. պիտոյ է ուսու-

---

*) Պէտք է սակայն նկատել որ Ս. Ստեփանէի այդ տեսակ վերաբերմունքը մի քիչ էլ անձնական հանգամանք ունէր։ Երբ Նազարեանցը Թիֆլիս եկաւ, Ստեփանէն նրան ցանկութիւն յայտնեց մտնել դպրոցը ուսուցչի պաշտօնով, բայց նրա այդ ցանկութիւնը չը կատարվեց։ Այդ ժամանակից «Հայկական Աշխարհի» մէջ մենք նկատում ենք մի սառն վերաբերմունք առհասարակ դէպի Նազարեանցը։

ցանել, բայց ոչինչ ուսանելի նիւթ մշակած չկայ, որպէսզի դա ըմբռնելի և տպաւորելի լինէր ուսանողի մտքում: Գռեհկաբանութեան և բաբելոնեան խառնակութեան մէջ կորած է բոլոր դպրոցը, ասողը խուժ և լսողը դուժ: Ես այս ողբալի վիճակը իրերի մի սաստիկ ճառախօսութեամբ Հոգաբարձական ժողովի մէջ ազդեցի մեր պարոններին. վճիռ հաստատուեցաւ տարին 1000 ման. կարգել տպագրելի դպրոցական մատեանքի համար. ուստի պիտի հոգացուին վարձատրութիւն և տպագրութիւն գրուածքների, 25 ման. տպած թերթին նշանակելով. այս արծաթով կարելի է միայն տպել 20 թերթ բան, ոչ աւելի, 500 ման. վարձ գործին և 500 ման. տպագրութեանը. գիրքը դառնում է սեփականութիւն Հոգաբարձական ժողովի»:

Սակայն պէտք 'է խոստովանել որ այս միտքը Նազարեանցին չէր պատկանում և Ներսիսեան Դպրոցի հոգաբարձութեան համար նորութիւն չէր դպրոցի հաշւով դասագրքեր հրատարակելը: Դեռ 1865-ին Ներսիսեան դպրոցը հրատարակել էր Ս. Պալասանեանի «Պատմութիւն Հայոց Գրականութեան», տալով հեղինակին վարձատրութիւն 150 ռուբլի, իսկ 1868-ին նոյն Պալասանեանը և Ստեփան քահ. Մանդինեանը դիմել էին հոգա-



բարձութեան, առաջարկելով տպագրել իրանց կազմած դասագրքերը: Իր «սաստիկ ճառախօսութեան» ազդեցութեան տակ կայացրած հոգաբարձական որոշումից օգտվողը ինքը, Նազարեանցը եղաւ: 1870 թուի յունիսի 18-ից նա գրում էր Ս. Շահազիզեանին.

«Թիֆլիսը այրվում է այժմ կրակի տօթի մէջ և մեք, տեսուչ և վարժապետքս ճենճերվում ենք բաբիլոնեան հնոցի մէջ հարցաքննելով աշակերտքը. հարցաքննութիւնքը չատ անագան սկսան մեր ուսումնարանում և աւարտելու 'են ոչ յառաջ քան թէ 25 ամսուս. մեր հոգաբարձուք այսպէս կամեցան որպէս թէ չկամենալով մեզ անգործ թողուլ!! Խելօքներ:

«Իմ կեանքի մասին ինչ գրեմ Ձեզ. դա անպարագրելի է. աշխատութիւն, ճգանք, քրտինք և դարձեալ քրտինք, ճգանք և աշխատութիւնք, աչք բանալ կարելի չէ. եթէ փոքր ի շատէ վաստակք պիտի պատրաստուին գալոց ուսումնական տարւոյ համար — դպրոցական մատեանք, որովք մեք ամենեին աղքատ և չքաւոր եմք, ապա կայ մեր ձեռքում երկու ամիս և ինչ կարելի էր այդպիսի կարճ միջոցում վճարել, թէև առաւօտից մինչև երեկոյ, մեքենայ դարձած, գրէիր և թարգմանէիր. թշուառ ազգ, թշուառ աշխատաւորք. մանաւանդ մեր ապերախտ, տգէտ և անմիտ մարդերի մէջ, որ Աստուած նա կը հայ-

հոյեն իւրեանց անսանձ բերանով, ում թէ մարդ»։

Այս տողերից մենք նկատում ենք որ Նազարեանցի մէջ կենդանի է հին, թանկագին յատկութիւնը—աշխատասիրութիւն։ Չը նայած ամառվայ տօթերին, նա պատրաստում վերջացնում է ռուսերէն լեզուի մի մեծ դասագիրք և սեպտեմբերին ներկայացնում է հոգաբարձութեան։ Գիրքը յանձնվում է մանկավարժական ժողովին, որ քննում է և հաւանութիւն տալիս, այնուհետև յանձնվում է տպագրութեան. իսկ Նազարեանցը ստանում է 500 ռուբլի վարձատրութիւն, գուցէ միակ վայելուչ վարձատրութիւնը նրա ամբողջ գրական գործունէութեան ընթացքում։ Այդ դասագիրքը տպվեց Թիֆլիսում 1871 թւականին և կրում է «Տեսական և Գործնական Առաջնորդ ռուս լեզուի» անունը։ Մի բաւական ստուար հատոր է դա, բաղկացած 320 երեսից։ Բայց այդ դասագիրքը ընդունելութիւն չը գտաւ մեր դպրոցական աշխարհում։ Նկատենք իբրև հետաքրքրական փաստ, որ Նազարեանցը այդտեղ իր աշխարհաբար հայերէնի մէջ ընդունել է գրաբարի շատ ձևերը և նոյն իսկ հոլովները (Նմա, զայս և այլն)։



Հազիւ էր Ներսիսեան դպրոցը մի տարի խաղաղ կեանք վարել, հազիւ էր սկսել կամաց կամաց իր պակասութիւնները դրստել, և ահա երկրորդ տարում սկսվում են մեր դպրոցներին այնքան յատուկ անկարգութիւնները։

Սկզբից և եթ Նազարեանցի և դպրոցի հոգաբարձութեան մէջ հաստատվեց մի յարաբերութիւն, որի մասին Նազարեանցը այսպիսի վկայութիւն է տալիս իր նամակներում.

«Թէպէտ իմ առաջարկութեամբք և խըթանմամբ ոտքը ու ձեռքը Հոգաբարձուների սկսած են շարժուիլ ու արիանալ. բայց մեր յարակցութիւնքը դեռ ևս ըստացած չեն այն բարեացակամական և յարգողական ուղղութիւնը, որ կարելի լինէր ինձ այժմ շատ պտղաբերութիւն յառաջացնել։ Ես չկամէի լոկ վարձկան լինել, բայց նոքա, ինչպէս երևում է, չեն հասկանում այդ բանը և այդ պատճառով չկամին վերահասու լինել իմ նեղեալ կացութեանը և օգնել ինձ վասն իւրեանց յատուկ օգտին»։

Բայց այդպիսի «բարեացակամական» յարաբերութիւններ ստեղծել անկարելի եղաւ և Նազարեանցը, ինչպէս երևում է, միշտ ըղձում էր որ դպրոցում ինքը մի վարձկան է։

Ուստի նրա դժգոհութիւնը գնալով աւելի և աւելի սաստկանում է և Լազարեան ճեմարանի տեսուչ Գէորգ Քանանեանցին գրած նամակներում նա անդադար խնդրում է որ էլի իր նախկին պրօֆէսօրական պաշտօնը տան իրան։ Ահա ինչ էր գրում նա 1870 թ. սեպտեմբերին.

«Ես ամենևին սխալուեցայ, յղանալով անգամ այն խորհուրդը, թէ կարելի էր որ և իցէ օգտակար գործ յառաջ տանել Կովկասի մէջ, մեր սիրելի սախամիտ Հայերի հետ, յանուն ազգային դաստիարակութեան և լուսաւորութեան։ Ես սխալուեցայ յանձն առնելով այդպիսի, ահագին զրկանքով լի տեղափոխութիւն և կենակցութիւն այնպիսի մարդկանց, որ ինքեանք լինելով իւրեանց թշնամիք, ամենևին տգէտ և անփոյթ ժամանակի յառաջաշարժ ընթացքին (պրօգրեսին) ամենայն քայլափոխում և գիս կալ և կապ կաշկանդելով, ոչնչացնում են իմ բոլոր ոյժը և զօրութիւնը, այնպէս որ ստիպուած եմ վստահութեամբ առ Ձեր ազնուամտութիւնը, ասել Ձեզ, թէ ես խաղալիք եմ դարձած այս անմիտների և անբարոյականների անմտութեանը և անբարոյականութեանը։ Եւ այլապէս ես կարելի չէ մի հոգաբարձական ժողովի մէջ, ուր նստած է տասներկու գլխանի վիշապ, մի գլխանի վիշապապետով։ Եւ սո-



ցա ջանքը և փոյթը այն չէ, որ ազգի մանկունքը ժամանակի հետ յառաջ գնան, այլ վայր ի վերոյ, անկարգ ուսմամբ անմտանան միանգամայն։ Իմ հայրենասիրութիւնը — ո՛հ, իմ հայրենասիրութիւնը, որով միայն մոլորուած և յափշտակուած ես, ձգեցի իմ անձը այս խորխորատի մէջ — իմ հայրենասիրութիւնը ոչինչ է, ունայն է այստեղ, որովհետև հանդիպում է մի անմիտ և թշնամական հայրենատեցութեան։ Մի սարսափելի անմիաբանութիւն, մի բթամիտ անհոգութիւն տիրապետած է այստեղ. ոչ մի խնդիր, ոչ մի առաջարկութիւն իմ կողմից, պատկանեալ ուսումնարանի թէ արտաքին և թէ ներքին բարեկարգութեանը, մինչև այժմ գտած չէ ուշադրութիւն. վայր ի վերոյ շատախօսութիւն և վիճաբանութիւն և կորուստ ժամանակի շատ, բայց վճիռ որոշումն և գործադրութիւն ոչ մի։ Ո՜չինչ հաստատուն բան. որչափ գլուխք, այնչափ կարծիք. Հոգաբարձուների ժողովումը շատ անկանոն. երկուքը կան, չորքը պակաս են, չորքը կան, ութը պակաս են. և ատենապետը (предсѣдатель) գրեթէ միշտ բացակայ։ Ահա Ձեզ, համառօտիւ, այս մեր հայկական ուսումնարանի կառավարութեան պատկերը, ողբալի պատկերը. և ես, անբաղդ քաղաքացիս եւրոպէական լուսաւոր հասարակութեան, ես, անբաղդ աշակերտս եւրոպէական դպրոցի, ամենայն շաբաթ ունիմ ականա-

*տեմ լինելու այս ամարդի խաոտիկական անմիտ տեսարանիս»:*

*Այս բոլորի վրա շուտով աւելացան և անձնական վիրաւորանքները:*

1871 *թւի մարտին հոգաբարձու Իզմիրեանը հոգաբարձութեան մի գրաւոր յայտարարութիւն տուեց, որի մէջ քննում էր ուսուցիչների գործունէութիւնը և շատ պակասաւոր էր գտնում տիրող կարգերը, իսկ դպրոցի կառավարութիւնը առ հասարակ շատ թոյլ էր համարում: Հոգաբարձութիւնը վճռեց նկատողութիւն անել ուսուցիչներին և տուգանքի ենթարկել նրանց՝ բաց թողած դասերի համար: Նազարեանցը լաւութեամբ տարաւ այդ կարգադրութիւնը. նա մինչև իսկ չը մասնակցեց այն բողոքին, որ ուսուցիչների մեծամասնութիւնը ներկայացրեց հոգաբարձութեան այդ վճռի առիթով և որով ապացուցանում էր իր բարեխղճութիւնը: Մի կերպ շտկվեց այս միջնադէպը, ծանր տպաւորութիւն թողնելով Նազարեանցի վրա:*

*Բայց ահա աւելացաւ երկրորդ հարուածը, այս անգամ ուղղած տեսչի դէմ: Նազարեանցը դաս էր տալիս հինգերորդ դասարանում հայոց լեզու և մատենագրութիւն:*



*Տարեկան քննութիւններից յետոյ մի այլ հոգաբարձու, իշխան Մ. Բեհբուդեան, զեկուցում տուեց հոգաբարձութեան և այդտեղ, ի միջի այլոց, յայտնեց թէ հայերէն լեզուն* 1—4 *դասարաններում գերազանց է եղել, իսկ Նազարեանցի դասարանում, հինգերորդում, ոչ համապատասխան: Նազարեանցը, լսելով այդ նկատողութիւնը, իսկոյն հրաժարական տուեց* *):

*Այս ընդհարումը, սակայն, թշնամութիւն չէ գցում հրաժարված տեսչի և հոգաբարձութեան մէջ: Նազարեանցը սպասում էր այսպիսի ելքի, մենք գիտենք որ նա դեռ* 1870 *թւին էր որոնում մի այլ տեղ, ուր չէր լինի Թիֆլիսի իրականութիւնը: Բացի դրանից, նա, իբրև մեղմ և խաղաղասէր բնաւորութեան տէր մարդ, քրիստոնէական ներողամտութեամբ վերաբերվեց իրան վիրաւորողներին և Թիֆլիսից հեռացաւ իբրև բարեկամ: Հոգաբարձութիւնը Վէրայի այգիներից մէկում հրաժեշտի ճաշ տուեց նրան: Այդտեղ Նազարեանցը մի բարեկամական ճառ ասաց, իր շնորհակալութիւնը յայտնեց հոգաբարձուներին, անուանելով նրանց իր «ազնիւ բարեկամներ, ընտրեալք և ծաղիկներ*

*) «Համ. պատմ. Ներսիս. դպր.», եր. 138:

Հայկական հասարակութեան Թիֆլիզի»: Բայց այդ բարեկամական խօսքերի մէջ չը մոռացաւ քաղաքավարի, անուշ խօսքերով երեւան



**ԲԺ. ԴԱՒԻԹ ՌՈՍՏՈՄԵԱՆՑ** (ԵՐ. 147)

հանել այն բացասական յատկութիւնները, որոնք նրա հրաժարականի պատճառ էին դարձել:



«Այս րոպէիս—ասաց նա—այս եղբայրսիրական աղուհացը վայելելով Ձեր հետ, ես ունիմ կտակելու Ձեզ մի սուրբ կտակ և կամիմ յուսալ, թէ Դուք լինելու էք ինձ հաւատարիմ կտակակատարներ: Արծաթ և ոսկի չունիմ Ձեզ կտակելու, և դուք կարօտ իսկ չէք դոցա, որովհետև այդ մասին ամենեքեանքդ քան զիս հարուստ էք: Իմ կտակս առ ձեզ, այս է. Մօտեցէք միմեանց, որոնեցէք զմիմեանս, սիրեցէք զմիմեանս, յարգեցէք իրեար, եթէ կամիք որով և իցէ չափով չինել և բարեկարգել այն ազգի տունը, որոյ անտեսութիւնը այս րոպէիս յանձնած է ձեր հոգաբարձութեանը: Հակառակասիրութեան հոգին, որ մեր հին ազգային կործանական ախտերից մինն է եղած, և որոյ տխուր հետևանքը արիւնոտ տառերով դրոշմած են մեր ազգային պատմութեան տախտակների վրայ—հակառակասիրութեան հոգին, որոյ թունաւոր շնչից թառամում է, ցամաքում է, մեռանում է ամենայն ազնիւ առաջարկութիւն և գործ, թող հեռի մնայ ձեզանից. այդ չար վիշապի գլուխը դուք աշխատեցէք ջախջախել մի լուսաւոր այրական համակցողութեամբ, մի մաքուր և զօրաւոր կամքով: Հասարակաց խնդիրների մէջ եղիք ազգասէր աւելի քան թէ անձնասէր: Ձեր միակ պատուասիրութիւնը և փառասիրութիւնը թող լինի յառաջադէմ կացուցանել հասարակաց բարին: Յաղթե-

ցէք ձեր անձնական ախտերին, որովհետև այդ յաղթութիւնը ամենագեղեցիկն է բոլոր յաղթութիւնների մէջ»։

Այդ դասը աւելի ևս զգալի են դարձնում ճառախօսի հետևեալ խօսքերը.

«Խնդրեմ ներել ինձ, եթէ ես իբրև հասարակաց գործակատար, յանուն իմ սուրբ պաշտօնիս, յանուն գիտութեան, անաչառապէս ծառայելով իմ խղճիս, ստիպուած եմ գտանուած ընդդիմախօսել ձեզ և յարուցանել ձեր տհաճութիւնը իմ վերայ»։

Թողնելով Թիֆլիսը, Նազարեանցը այլ ևս չը փորձեց մի ուրիշ հայաբնակ քաղաքում գործել, այլ նորից բնակութիւն հաստատեց Մօսկվայում և ստանձնեց իր նախկին պրօֆէսօրական պաշտօնը Լազարեան ճեմարանում։

Այսպէս վերջացաւ ժողովրդի մէջ և ժողովրդի համար գործելու կարճատև փորձը։ Մեր կեանքը իսկոյն դուրս շպրտեց Նազարեանցին իր միջից, որովհետև Նազարեանցը սովոր չէր նրան, շուտ սկսեց խեղդվել նրա իրականութիւնից, որովհետև Նազարեանցը, «անբաղդ քաղաքացի եւրոպէական լուսաւոր հասարակութեան», մեր ասիականութեան մէջ միայն այն զգաց, որ ապրել այդ-



տեղ անկարելի է և պէտք է շտապով թափել ոտների փոշին ու հեռանալ։ «Նախախնամութեան կամքն էր—գրում է նա—տալ ինձ և այս փորձը փորձել, առ ի ճոխացնելու իմ կենսական փորձերի գլուխը (կապիտալը)։ Բայց արդէն sat est superyne! Հարկաւոր է ինձ մտածել փոքր ինչ շունչ առնուլ իմ ծանրաբեռնած ծերութեան օրերում և իմ մոսկովեան բարեկամների գրկում»։

Ազատվելով «փորձանքից», նորից ընկնելով Մօսկվա, նա համարեա այլ ևս ոչ մի հասարակական գործով ցոյց չը տուեց իր գոյութիւնը։ Մենք սրանով չենք ասում թէ Նազարեանցը իսպառ մոռացել էր հայոց գրականութիւնը և հասարակական հարցերը։ Ո՛չ, դրանք կային նրա համար և կարևոր էին մինչև կեանքի վերջը։ Բայց նա չերևաց հրապարակում, չը հրատարակեց որ և է գրական աշխատութիւն, չը մասնակցեց մեր մամուլին։ Ահա ինչ ենք ուզում ասել։

Բացառութիւն այդ կողմից կազմում է 1876 թւականը, երբ Նազարեանցը մի բաւական ընդարձակ յօդուած գրեց ժամանակակից հայ պարբերական մամուլի մասին։ Սակայն այդ գործը տպագրվեց նրա մահից ինն տարի յետոյ *)։ Ի՞նչ է ասում նա այդտեղ։

*) «Հանդ. գրակ. և պատ.», 1888, գ. ա., եր. 234։

«Հիւսիսափայլի» մահից տասը տարի էր անցել։ Հայ մամուլը բաւական առաջ էր գնացել, բաւական զարգացել էր, նոր երևոյթներ էր ներկայացնում. Նա բաժանված էր բանակների, պայքար էր մղում որոշ գաղափարների, որոշ դրօշակների շուրջը, վերջապէս բովանդակում էր իր մէջ մեր համարեա ամբողջ գրականութիւնը։ Նազարեանցը այս բոլորի մասին ոչինչ չէ խօսում, կարծես անկարևոր է համարում այդ երևոյթները։ Քննում է նա մեր ամսագիրներն ու լրագիրները վերին աստիճանի հարևանցօրէն, հազիւ մի քանի խօսք նուիրելով նրանց բովանդակութեան։ Յօդուածը երկու նպատակով է գրված. Նախ՝ պաշտպանել «Հիւսիսափայլը» և երկրորդ՝ նորից արծարծել աշխարհաբար լեզուի հարցը։

«Հիւսիսափայլը» պաշտպանելու համար Նազարեանցը մի խիստ բանակռիւ է մղում «Դպրոց» ամսագրի խմբագիր Վահան վարդապետ Բաստամեանցի դէմ, որ ասել էր թէ Նազարեանցն էլ, միւս հայ խմբագիրների նման, չէր հասկացել ժողովրդի և ժամանակի պահանջները և սպանել էր իր գործը Շիլլերի, Կիկերոնի և այլ այդպիսի թարգմանութիւններով։ Հերքելով այդ կարծիքը, Նազարեանցը, ի միջի այլոց, ասում է. «Հիւ-



սիսափայլը» պատերազմեց իւր պատերազմը, յաղթութեան արմաւենին ստացաւ, և այդ յաղթութեան պտուղը այժմուս վայելում է մանուկ սերունդը, իւր ծնողին անարգող սերունդը»։ Այս խօսքերը ցոյց են տալիս, որ ռուսահայ հրապարակախօսութեան նահապետը իր կատարած դերի գիտակցութեամբ էր հեռանում ասպարէզից։

Դիմելով ապա մեր մամուլի գործածած հայերէն լեզուին, Նազարեանցը յայտարարում է որ հայ գրողը չը գիտէ իր մայրենի լեզուն, և մի շարք գեղեցիկ խորհրդածութիւններ է անում մեր աշխարհիկ լեզուի կանոնաւոր մշակման և զարգացման մասին։ Սկըզբունքով այդ խորհրդածութիւնները ճիշտ են, բայց գործադրութեան միջոցներին գալով, Նազարեանցը ընկնում է սխալ և միակողմանի տեսութիւնների մէջ։ Մենք արդէն մի քանի անգամ նկատեցինք, որ ինքը, Նազարեանցը, հետևելով իր տեսութիւններին, բաւական աղճատել էր իր, առանց այդ էլ ծանր, աշխարհաբարը, առատութեամբ ընդունելով գրաբարի ձևերն ու հոլովները։ Հետաքրքրական է որ նա չէր հաւանում «Արարատ» ամսագրի լեզուն հէնց այն պատճառով, որ դա մի գրաբարախառն լեզու էր։ Օտար բառերի գործածութեան դէմ էր Նա-

զարեանցը, որովհետև, ասում էր նա, հայոց հին լեզուն ունի բառերի այնպիսի մի հարուստ պաշար, որ մենք հարկաւորութիւն չունենք դիմելու օտար բառերին։ Այս կարծիքը այսօր էլ կայ մեր գրականութեան մէջ և, ինչպէս յայտնի է, մասամբ միայն ճիշտ է։

Նազարեանցի այս գրուածքը, որ ունի վերնագիր՝ «Հայոց ժողովուրդը, նոր այժմեան լեզուի և մատենագրութեան վիճակը Ռուսաստանում, համառօտ տեսութեամբ», որքան մենք գիտենք, վերջինն է, որ դուրս եկաւ նրա գրչի տակից։ 1872 թուականին գրած նրա մի նամակից մենք իմանում ենք որ նա մտադրութիւն ունի թարգմանելու Ջօն Վիլիամ Դրեպէրի յայտնի աշխատութիւնը՝ «Պատմութիւն Քաղաքակրթութեան Եւրօպայում», եթէ հայերը տան դրամական միջոցներ։ Իր աշխատանքի վարձատրութիւն նա հաշւում էր 4000 րուբլի։ Եւ իրաւ, նա սկսել էր այդ թարգմանութիւնը, բայց այդպէս կիսատ էլ մնաց։

Նոյն 1876 թւի ամառը Նազարեանցը ճանապարհորդեց դէպի Եւրօպա։ Եւրօպական երկիրներից, ի հարկէ, Գերմանիան էր, որ ամենից շատ հետաքրքրում էր գերմանական գաղափարներով և ոգով կրթւած Նազարեանցին։ Բայց նախ քան այդ ճանապարհորդու-



թեան մասին խօսելը, բերենք մի հետաքրքրական իրողութիւն, որ պատմում է Նազարեանցի յարգողներից մէկը, պ. Փ. Վարդանեան *)։

Նազարեանցը ճանապարհվեց Պետերբուրգի վրայով։ Այստեղ պ. Վարդանեանը և նրա մի երկու ընկերները ճաշի հրաւիրեցին Նազարեանցին։ Սովորաբար, նա ուրախ և զըւարթ սեղանակից էր։ Բայց այս անգամ—ասում է պատմողը—ուրախ չէր նա, այլ տռչորված սրտով գանգատ էր անում, որ «Հայոց ազգը ապերախտ գտնվեցաւ դէպի նա, մոռացաւ նրան,—և նորա սնաթոյր տրտմութեամբ թելադրված ճառի լեզուն հատու էր իբրև սուսեր»։ Պ. Վարդանեան պատասխանում է նրան մի ճառով, որի մէջ յայտնում է թէ «չարերի լեզուն ինքն ըստ ինքեան կը պապանձվի այն ընդհանուր յարգանաց առջև, որ մտածող հայերի բազմութիւնը օր ըստ օրէ աւելի ընծայում է ձեր անուան»։ Այս ճառը «այն աստիճան ազդեց Նազարեանցի վրա, որ նա արտասուեց և պատասխանեց մեզ մի հոգեշունչ ճառով։ «Շատ է ինձ մտածող հայերի բազմութիւնը, ասաց նա հեկեկալով.—հերիք է, որ գէթ երկու, երեք մարդիկ ինձ սիրէին»։ Սիրոյ կարօտ էր այդ ազնիւ հոգին», աւելացնում է պատմողը։

*) «Մշակ», 1879, № 83։

Նազարեանցը նախ գնաց Դանիա, ապա Գերմանիա և Շվէյցարիա։ Պաստոր Վէօլէր իր յիշողութիւնների մէջ ասում է, հիմնվելով Նազարեանցի նամակների վրա, թէ այդ երկիրներից ամենալաւ տպաւորութիւնը թողել է Դանիան։ Այդտեղ Նազարեանցը գտաւ սիրալիր հիւրընկալութիւն գիտնականների շրջանում։ Մինչդեռ Գերմանիան, նրա սիրած ու պաշտած Գերմանիան, շատ աննպաստ, կարելի է ասել հիասթափեցնող տպաւորութիւն գործեց նրա վրա։ Այդտեղ Նազարեանցը չը գտաւ մտերմութիւն, սրտաբաց հիւրընկալութիւն։ Բայց այդ բանը, իհարկէ, չը փակեց նրա աչքերը և նա հիացաւ գերմանական քաղաքակրթութեան, կուլտուրայի վրա։

Այս ճանապարհորդութիւնը Նազարեանցի կեանքի մեզ յայտնի վերջին դէպքն է։ Անցաւ մօտ երեք տարի, և հեռագիրը հաղորդեց որ Նազարեանցը վախճանվեց։ Այդ տխուր իրողութիւնը տեղի ունեցաւ 1879 թւականի ապրիլի 26-ին։

Նազարեանցի վերջին օրերը և վերջին ժամերը նկարագրել է նրա ամենամօտիկ բարեկամ Ս. Շահազիզը։ Տխուր, վշտալի պատկեր է ներկայացնում այդ նկարագրութիւնը։

Մահից մի ամիս առաջ Նազարեանցը բո-



լորովին փոխվել էր։ Նախկին փիլիսոփայական վերաբերմունքը դէպի կեանքը նրա մէջ տեղի էր տուել մի յուսահատ դրութեան։ «Խաւարուած որպէս երկինք, անծիծաղ որպէս Ղազարոս, նա տարուբերվում էր իւր բարեկամների տներում, բայց կարծեմ, ուրախութիւնը նորան թողել էր յաւիտեան. նոյնպէս ալէկոծ, նոյնպէս մտայոյզ որպէս երէկ և միւս օրը։ Երբ նա խօսում էր իւր ընտանիքի, իւր բազմաթիւ զաւակների մասին, նորա ձայնը հնչում էր որպէս որդեկորոյս ծնողի հառաչանքը. երբ ծիծաղում էր, ասես, արտասուք էր թորում ծիծաղից, թէև երբէք չէր երևում երեսին. նորա հոգին, նորա սիրտը ու գլուխը արդէն ողողած փոխուած էին արտասուքի ծով»։

Ի՞նչ էր պատճառը։ Ընտանեկան անհամաձայնութիւնները թունաւորել էին խեղճ մարդու կեանքի վերջը։ Այդ անհամաձայնութիւններն էին պատճառ, որ Նազարեանցի բարեկամները այլ ևս չէին լինում նրա մօտ։ Մենակ ու վշտալի ծերունին մի անօրինակ խնամատարութեամբ պահպանում էր իր երեխաներին։ «Վաղ առաւօտից մինչև խոր գիշեր կամ մինչև միւս առաւօտ նա պիտոյ է հոգար, փայփայէր իւր մատաղահաս զաւակները. նա դոցա համար և հայր էր և մայր.

մէկին հաց, միւսին ջուր, երրորդին լուա-նալ, չորրորդին ուսուցանել, և այսպէս ամե-

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ (ԵՐ. 249)

նոյն բան պատրաստական գնում էր դոցա առաջ»։

Լսելով որ Նազարեանցը հիւանդացել է, պ. Շահազիզը ապրիլի 24-ին այցելում է նը-



րան։ Եւ ահա ինչպէս է նա նկարագրում հիւանդի կացութիւնը.

«Մի փոքրիկ սենեակ սաժէն ու կէս կամ երկու սաժէն երկայնութեամբ և լայնութեամբ, որ վարագուրով բաժանուած էր առանձնարանից, հանգուցեալը նշանակել էր իւրեան ննջարան. դորա մէջ տեղաւորուած էին և երկու փոքրագոյն մանուկների մահճակալները (հանգուցեալը սիրում էր և գիշերը մօտ լինել իւր երեխաներին)։ Եւ որովհետև պատուհանները բաւական հեռու էին և կապուտակ վարագոյրը վայր թողած, ննջարանի լոյսը միշտ խաւարային էր։ Այդ դրութեան մէջ ես տեսայ Նազարեանցին, անկողնում պառկած և ծածկոցը գլխին քաշած։ Մի խորին գերեզմանական լռութիւն տիրել էր ամբողջ տան մէջ։ Հիւանդի մօտ ոչ ոք չը կար»։

Այցելուն խօսեցնում է Նազարեանցին, որ յայտնում է թէ բաւական սաստիկ մըրսել է։

—Զարմանալի բան է, օրերը այնքան ցուրտ չեն, ասում է պ. Շահազիզը։

—Այո, պատասխանում է Նազարեանցը, մանուկ ոյժերը դոցա կարող են դիմանալ, բայց մեր քայքայուած ու զառամած մարմինը չէ տանում։ Է՛հ, եղբայր, իմ բոլոր գեղեցիկ իդէալներս այս կեանքում փլատա-

կուեցան, ինձ մնում է միայն մեռանել. ես իմ օրերով փորձեցի այն, որ ոչ մի մահկանացու չէ փորձել։ Այո, ինձ մնում է մեռանել։ Կարծում ես դու որ ես մահից երկիւղ ունիմ. ո՛չ, իմ ազնիւ ընկեր. դա մի բնական հարկաւորութիւն է։ Բայց այն սիրելութեան կապերը, որ կապում էին միմեանց հետ երկու սիրող սրտեր, այն քնքուշ յարակցութիւնները, որ կային երկու անձնանուէր բարեկամների մէջ, եթէ իմանայիր որքան դառնութիւն եմ զգում, երբ մտածում եմ որ այդ կապերը, այդ յարակցութիւնները պիտի քայքայուէին։

«Այս վերջին խօսքերը այնպէս շեշտեց, որ ձայնը կտրուեց, բայց ապա կազդուրուելով շարունակեց.

—Ի՞նչ նորութիւն կայ աշխարհիս երեսին։

Ժամանակի նորութիւնը Թիւրքիայի հայերի դրութիւնն էր։ Բերլինի վեհաժողովում լորդ Բիկօնսֆիլդը ցոյց էր տուել հայերին և միւս քրիստոնեայ ազգութիւններին որ Թիւրքիան բաժանելու համար չէ գումարված այդ վեհաժողովը։ Հայերին շնորհվեց մի թղթի կտոր, որի վրա գրված էր «րէֆորմ»։ Եւ այնուհետև այդ բառը ծեծվում էր պարլամենտական ժողովներում, իսկ հայերը սպա-



սում էին այն օրվան, երբ «րէֆորմը» կը գար իրանց համար դժոխքից դուրս գնալու ճանապարհ բաց անելու։ Լորդ Բիկօնսֆիլդը

ԲԺ. ԳԱԲՐԻԷԼ ՏԷՐ-ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ (ԷՐ. 262)

իրան ուղղված հարցապնդումներին պատասխանում էր իրան յատուկ ճարպկութեամբ, թիւրքամոլ բացատրութիւններով։

Պ. Շահազիզը, մի այդպիսի բիկոնսֆիլդեան ձեռնածութեան ազդեցութեան տակ պատասխանում է Նազարեանցի հարցին.

—Նորութիւնը, որ ես գիտեմ, աւելի հին է քան նոյն աշխարհը։

—Ի՞նչ է։

—Անգլիայի արիւնկզակ քաղաքագիտութիւնը.—ազատահայեաց կուսակցութիւնը պահանջում է ատենակալներից Թիւրքիայի ռէֆօրմների քարտէսը պառլամենտի սեղանի վերայ դնել և տեղեկութիւն տալ. արդեօք ո՛ր չափով դոքա իրագործուած էին ասիական նահանգներում և թէ Անգլիան իւր կողմից ունի՞ շնորհել այն նահանգներին իւր մեծ հովանաւորութիւնը։

—Ի՞նչ են պատասխանում ազնիւ լորդերը։

—Ազնիւ լորդերը պատասխանում են որ Թիւրքիան միշտ պատրաստ է եղել բարեկարգել այդ նահանգները, միայն այժմ շատ կարօտ է արծաթի, սպասել հարկաւոր է...

Նազարեանցը, ընդմիջելով նրա խօսքը, ասաց.

—Մինչև որ վերջին հայը, նզովելով և՛ Թիւրքիան և՛ Անգլիան, գտանէ հանգիստ գերեզմանում։ Ես կամէի հարցանել այդ քա-



ջատոհմիկ պարոններից. դոքա ինչ բանով աւել էին քան թէ նոյն տաճիկ փաշաները և քուրդերը, որ անպատուհաս պղծում են մեր եկեղեցիները, մեր կանայքը... բայց վա՜յ լուսաւորութեան որ փոխանակ մարդասիրութեան՝ մարդասպանութիւն է բերում։

—Անգլիացիք պաշտպանում են իւրեանց ինտերեսը։

—Բայց Լանկթէյմուրը, բայց Աթիլը չէ՞ին պաշտպանում իւրեանց ինտերեսը։ Ինտերես, և դարձեալ ինտերես.—տօ, եղբայր, ո՞վ չունի ինտերես. բոլոր աշխարհը տակն ու վերայ պիտի անենք։

Բայց մեռնողի այդ կծու բողոքը մարդկային շահամոլութեան դէմ կիսատ է թողնում երկու տարեկան մանուկը, որ այդ րոպէին ներս մտնելով, ուրախութեան ճիչերով մօտենում է իւր հօր մահճակալին։ «Քաղցր ժպտաց գթառատ հայրը, կալաւ ձեռից և սկսաւ սիրողաբար շփել երեխայի հրաշէկ մազերը։

—«Շահազիզ, տեսնո՞ւմ ես իմ լուսաւոր աստղիկս, ասում է ինձ Նազարեանցը, բայց խօսքը առաջ տանել չէ կարող»։

Դա Նազարեանցի վերջին խօսակցութիւնըն էր։ Պ. Շահազիզը հեռանում է, ոչինչ երկիւղ չունենալով հիւանդի մասին, որ առողջ խօսում էր, առողջ դատում։

Սակայն միւս օրը, երեկոյեան տասը ժամից, Թոքերի բորբոքումը սաստկացաւ։ Տանեցիները զանց արին իմաց տալու Նազարեանցի ծանօթներին և բժշկական օգնութիւն էլ, ինչպէս երևում է, չեղաւ։ Երեքչորս ժամ շարունակվում է տագնապը։

«Եւ ահա վերահասաւ չորրորդ ժամը, ասում է պ. Շահազիզը.—ժամ խորհրդաւոր և սոսկալի։ Այստեղ սկսում է մահուան բուն տագնապը և պատերազմը, և իմ սիրտը արիւն է կաթում, նկարագրելով այն ամայութիւնը, որ այդ րոպէին թագաւորում էր մեռանողի բնակարանի մէջ։ Նազարեանցը, այն մարդասէր Նազարեանցը, միայնակ ընկած է անկողնում, զրկուած և նոցանից, որոնք խաչով աւետարանով երդուել էին պահպանել նորա կեանքը. բայց քաջարար հանդիպում է իւր Թշնամուն, քաշում է ձգում է իւր մարմնից բժշկութեան սպեղանիքը. աչերը այս կողմ այն կողմ տանելով, ոչ ոք չէ տեսնում մերձաւորներից. տեսնում է միայն սև մահը առաջին կանգնած. և ապա մի արդարացի բարկութեամբ կանչում է. „Гдѣ мои друзья, гдѣ мои пріятели“? Երևի ողորմելին մըտածում էր. Այ ազնիւ Հայեր, ուր էք դուք. գոնէ գայիք իմ վերջին շունչս ու օրհնութիւնս հայերէն աւանդէի ձեզ. իմ յաւիտե-



նական ցմուր՝ եօթն գառնուկ երեխաներս յանձնէի ձեր հոգաբարձութեան։ Երկու անգամ բերանաբաց ներս քաշեց տան օդը, երկու անգամ լսելի եղաւ նորա շնչառութիւնը... Եւ մինչդեռ արշալոյսը իւր նուաղ նըշոյլները սփռել էր արևելքում, մեր արշալոյսը, կատարելով իւր դժուար ճանապարհը, արդէն մայր էր մտել յաւիտեան։ Եւ նա, որ միշտ ձեռը պարզած դէպի վատաբախտը, այնքան առողջ և հիւանդ մարդիկ մխիթարել էր իւր կեանքում, ինքը մեռաւ անմխիթար, անօգնական»...

Մահվան լուրը վաղ առաւօտին, ամենից առաջ, իմանում է Նազարեանցի վաղեմի մտերիմ Մելքոն Փանեանցը *)։ «Գնացի և ես, ահագին ցաւից խեղդուած—ասում է պ. Շահազիզը.—և մինչդեռ մտել էի հանգուցեալի նախասենեակը, պ. Փանեանցը միանգամայն գունաթափ, ձայնեց. «Արի տես,

*) Մելքոն Փանեանցը, ագուլեցի մի վաճառական, վաղուց ի վեր բնակութիւն էր հաստատել Մօսկվայում և Նազարեանցի ամենամտերիմ բարեկամն էր։ «Հիւսիսափայլի» մէջ տպված են այն դամբանական ճառերը, որ ասել է Նազարեանցը Փանեանցի կնոջ և աղջկայ դագաղների վրա։ Մելքոն Փանեանցը վախճանվեց Ագուլիսում անցեալ տարի։ Ասում են որ նրա մօտ են գտնվում Նազարեանցի բոլոր Թղթերը։

Ինչ գրութեան մէջ է մեր Ստեփան Իսայիչը»... Երեք չորս աթոռ, միմեանց մօտ շա-

ՄԵԼՔՈՆ ՓԱՆՆԵԱՆՑ

րած, պահպանում էին դիակը։ Բայց որքան վսեմութիւն տակաւին նշմարվում էր երեսի վերայ. բարկութեան հետքերը այնպէս թանձրացած էին, որ մի մի առաջ էին բերում նորա քաշած տառապանքը կեանքի մէջ։ Ես



միայն կարողացայ նորից ստուգել իմ կարծիքս, որ մարդ ծնաւ և իբրև նա գերագոյն մարդ հեռացաւ մեզանից. ծերութեան հասակում նորա հոգևոր ոյժերը չնուազեցին. հիւանդութեան անկողնում մնաւ որպէս զուարթ երիտասարդ, գառնութեան բաժակը, որ երանաւէտ սիրով պիտի ծաղկէր, քամեց մինչև վերջին կաթիլը։ Բնութեան տարրերը այնպէս էին խառնուած Նազարեանցի մէջ, որ ամէն մի շարժը երակների շարժում էր նորա սրտում ազգի ցաւը և ուրախութիւնը»։

Թաղումը կատարվեց մի չքեղ հանդէսով, որի նմանը դեռ չը կար Մօսկվայի հայոց եկեղեցու տարեգրութիւնների մէջ։ Հաւաքվեց ահագին բազմութիւն, եկեղեցին չը տեղաւորեց իր մէջ ամենքին։ Ներկայ էին պաշտօնակիցները, Լազարեան ճեմարանի աշակերտները, ուսանողութիւնը, կանայք, Մօսկվայի հայ գաղութը։ Դագաղը կորած էր ծաղիկների և պսակների մէջ։ Եկեղեցում ճառեր ասացին։ Ապա յուղարկաւորութեան հանդէսը ճանապարհ ընկաւ դէպի գերեզմանատուն։ Դագաղը ամբողջ ժամանակ իրանց ուսերի վրայ տանում էին ուսանողները, երիտասարդութիւնը. եկեղեցուց մինչև գերեզմանատուն ութ վերստ տարածութիւն է։

Գերեզմանատանն էլ ճառեր արտասանվեցին։ Կարգը կատարվեց, հողը իր գրկի մէջ առաւ մեր անխոնջ մշակին և պատկառելի երախտաւորին։ Յաւիտենական բնակարանի դուռը կնքելուն պէս, ուսանողութեան խնդիրքով հոգևորականութիւնը այդ թարմ գերեզմանի վրա հոգեհանգիստ կատարեց Խաչատուր Աբովեանցի և Միքայէլ Նալբանդեանցի համար։ Գեղեցիկ միտք։ Աբովեանց, Նազարեանց, Նալբանդեանց... Որքա՜ն բան է ասում մեր սրտին այս փայլուն երրորդութիւնը...

Փակենք այս գլուխը պ. Ս. Շահազիզի հետևեալ ոտանաւորով, որ նուիրված է Նազարեանցի դագաղի վրա.

*Անձեռագործ դու մահարձան քեզ կանգնեցիր,*
*Ո՛չ հողանիւթ, որպէս երկաթ կամ որձաքար.*
*Հզօր գրչով, սուրբ վաստակով ու անձանձիր,*
*Շունչ կենդանի եւ յետ մահուան հանդիսացար։*

*Ահա Նոր Ազգ եւ Նոր Լեզուդ իւր ձիթենին,*
*Քո ջրով բուսած, բե՛ղ է բերում, ով Ստեփանոս,*
*Խաղաղ մնա՛. մի՛ վրդովուիր, քոնն է դափնին,*
*Խաւարի մէջ լոյս մեզ ծագող Պռոմէթեւս։*

*Աշխարհ ծնար եւ աշխարհիս դարձար մշակ,*
*Բայց չը տեսար այս աշխարհից անդորրութիւն.*
*Աշխատաւոր մարդկան բաժին է փշեայ պսակ,*
*Ա՛հ քրտնաջան ոսկրների՛դ խաղաղութիւն։*



Նազարեանցի գերեզմանի վրա Մոսկվայի հայ հասարակութեան հաշւով դրված է գերեզմանաքար, որ ներկայացնում է մի բարձր սիւն, պսակված խաչով։ Սիւնի արևելեան երեսի վրա փորագրված է Ս. Շահազիզի վերոյիշեալ ոտանաւորը, արևմտեան կողմից այդ ոտանաւորի ռուսերէն թարգմանութիւնը։ Հիւսիսային երեսի վրա կայ հետևեալ լատիներէն արձանագրութիւնը.

Nationis amico humani
tatis inter populares consilori
Stephano Nazarians
Grati cives.*)

Հարաւային կողմից մահարձանի վրա կարդացվում է.

«Զառաքինութեանն զոստս քրտամբք և աշխատութեամբ, Պղատոն ասաց՝ բուսանել» (Մ. Խորենացի).

Ստեփանոս Նազարեանցին
երախտապարտ սրտով
Հայոց հասարակութիւնը։
Ծն. 1812 թ. վախճ. 1879 թ. 26 Ապրիլ

*) Ազգի բարեկամ, ազգայինների մէջ քաղաքակրթութիւն սերմանող Ստեփանոս Նազարեանցին շնորհապարտ ազգայինները։

ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ԳԵՐԵԶՄԱՆԸ

## III

*Գծեր Նազարեանցի բնաւորութիւնից։—Գնահատութիւն մահից յետոյ։—Հոգեհանգիստներ։—Գրիգոր Արծրունու յօդուածը։—Երիցեանը Նազարեանցի մասին։—Պատասխաններ։—Նազարեանցի յիշատակը մեր գրականութեան մէջ։—Վերջին խօսք։*

—∞—

Հասարակական խոշոր դեր կատարած անհատների մասնաւոր կեանքն էլ հետաքրքրական և ուսանելի է։ Իր խելքով, իր ընդունակութիւններով հարիւրաւորների ու հազարաւորների մէջ մի հատիկ դարձած գործիչի մարդկային յատկութիւնները մի առանձին խորհուրդ են ստանում նրան յարգող բազմութեան համար։ Ծանօթանալով այդպիսի մարդու գործերի հետ, մենք կամենում ենք իմանալ և այն թէ ինչպէս էր նա ինքը, գաղափարի քարոզիչը, ինչ բարոյական սկըզբունքներ ունէր իր մէջ և ինչպէս էր ինքը կատարում այն, ինչ առաջարկում էր ուրիշներին կատարելու։

Ստեփանոս Նազարեանցի վերաբերմամբ, դժբախտաբար, մենք շատ բան չը գիտենք, այնպիսի բան, որ պատկերացնէր նրա անհատական բնաւորութիւնը, նրա մասնաւոր կեանքը։ Եւ, պէտք է ասել, մեր համարեա բոլոր գործիչներն են այսպիսի վիճակի ենթարկված։ Չը կան նրանց ծանօթների, նրանց հետ գործ ունեցած մարդկանց յիշողութիւններ, որոնք այնքան հարկաւոր են գործիչի կեանքի պատմութիւնը կազմելու համար։ Պատմութիւն գրողը ունի իր առջև միայն այն, ինչ տուել է գործիչը։ Եւ սակայն դա բաւական չէ. շատ և շատ անգամ է պատահում որ այս կամ այն կողմը մութ է մնում, չէ պարզվում, և պատմութիւն գրողը ստիպված է լինում կամ ենթադրութիւնների դիմել, կամ հէնց այդպէս էլ մութ ու անորոշ թողնել այս ինչ կամ այն ինչ կէտը։ Էլի պէտք է շնորհակալ լինել պ. Շահազիզեանից, որ իր «Հրապարակախօս Ձայն»-ի մէջ տուել է մեզ մի քանի գծեր Նազարեանցի բնաւորութիւնից։ Այսօր, որքան էլ ցաւալի է, մենք միայն այդ տեղեկութիւններն ունենք հաղորդելու մեր ընթերցողներին։

Խիստ բարոյականութիւն, կենդանի քրիստոնէութիւն քարոզող Նազարեանցը իր անհատական կեանքի մէջ մարմնացնում էր



նոյն գաղափարները։ Դա մի բարի, մարդասէր, սրտացաւ անձնաւորութիւն էր, մի օրինակելի հայր, մի մարդ, որ պարզամիտ էր և ոչ խորամանկ, որ խաբվում էր և ոչ խաբում։ Իր յարաբերութիւնների մէջ նա քաղցրաբարոյ էր, առանց խտրութեան էր նայում մարդկանց վրա, ինչ դասակարգի և գիրքի էլ պատկանելիս լինէին նրանք։ Կարեկցող, ցաւակից սիրտ ունէր նա և նրա դուռը բաց էր ամենքի առջև, մանաւանդ երբ նրան դիմողը կարօտութիւն ունէր *)։

---

*) Մեր մանկավարժ և ժողովրդական գրող Ղ. Աղայեանցը իր «Իմ կեանքի գլխաւոր դէպքերը» յիշողութիւնների մէջ վերին աստիճանի կոպիտ, անքաղաքավարի, քարասիրտ է դուրս բերում Նազարեանցին, այդ պատճառով էլ լաւ հայհոյում է խեղճ Նազարեանցին, անուանելով նրան անասնական էգօիզմին հասած մարդատեաց և այլն։ Աղայեանցի այդ ինքնակենսագրութիւնը մեր աչքում ընդհանրապէս այնքան քիչ արժանաւորութիւն ունի, որ մենք չենք կարող նշանակութիւն տալ նրա վկայութիւններին։ Այդտեղ ամեն ինչ չափազանցրած է, մանաւանդ ինքնագովութիւնը։ Աղայեանցի պատմած այն դէպքը, որի մէջ Նազարեանցը դուրս է բերվում իբրև անհոգի էգօիստ, մեզ շատ անբնական է թւում. երևի այդտեղ պատմողը չէ ուզեցել այնպէս պատմել, որ իր արարքն էլ միանգամայն պարզ լինի։ Նազարեանցը դուրս է արել Աղայեանցին իր տանից. բայց ինչո՞ւ։—Առանց պատճառի, ասում է Աղայեանցը։ Ահա այդ չենք հասկանում...

Չընայած որ մեծ ընտանիքի տէր էր, չընայած որ ռոճիկով ապրող մարդ էր, նա իր լուման չէր խնայում այնտեղ, ուր կարօտութիւն կար։

Մանաւանդ շատ հոգս էր անում նա չքաւոր հայ ուսանողների մասին։ «Դոքա են մեր թարմ ծիլերը և ընձիւղները. դոքա են իմ առաջին սիրելիքը», ասում էր նա։ Եւ աղքատ ու կարօտ ուսանողի համար նա միշտ պատրաստ էր առանց յոգնելու ման գալ իր ծանօթների տները, դիմել վաճառականներին և փող հաւաքել։ Այդպէս անում էր նա յիսնական թւականներից մինչև եօթանասնական թւականները։

Ահա մի քանի դէպքեր, որոնք պատկերացնում են Նազարեանցի բնաւորութիւնը։

Մի օր, ասում է պ. Շահազիզեանը, ես և Նազարեանցը հրաւիրված էինք մի տուն. այնտեղ էր և մի հայ վաճառական։ Նազարեանցը, աչքերը կիսով չափ փակած (դա նրա սովորութիւնն էր), մօտենում է նրան և հարցնում.

—Պարոն, դուք վաճառական էք, ինչ է ձեր ապրանքը։

—Բամբակ և ապրչում, պատասխանում է վաճառականը։

—Ձեր տեղում կա՞ն դպրոցներ։

—Այո՛, ընտեղ սովրում են։



—Դուք լսած էք, որ հայոց վեհափառ կաթողիկոսը կամի շինել ձեր համար մի փառաւոր Ակադեմիա, ուր պիտի պատրաստուեն ուսումնական քահանաներ, վարդապետներ, եպիսկոպոսներ...

Վաճառականը փախսում է Ակադեմիա բառը. յայտնի է որ չէ հասկանում թէ ինչ բան է դա։ Իսկ Նազարեանցը շարունակում է.

—Այո՛, մեր վեհափառ կաթողիկոսի դիտաւորութիւնը գովելի է. նա կամի լինել արժանաւոր ժառանգորդ Գրիգոր Լուսաւորչի։

Վերջապէս վաճառականի լեզուն մի քիչ բացվում է և նա հարցնում է Նազարեանցին.

—Ստեփան Իսայիչ, հայոց կաթողիկոսը կաթօլիկ է թէ հայ, ախր ինչ օքմին է...

—Տօ, եղբայր սիրելի, ինչպէս կարելի է այդպիսի բաներ խօսել, ասում է Նազարեանցը և մեծ քայլերով դիմում է դէպի սեղանը, որպէս թէ զրոյցը շատ լաւ վերջացաւ։

Քաղցրաբարոյ ու մեղմ էր Նազարեանցը ընդհանրապէս։ Բայց ահա ինչպիսի վարվեցողութիւն էլ գիտէր նա։ Վաթսունական թւականներին մի հարուստ մարդ, Թիֆլիսեցի, հայոց ազգային ուսումնարանի հոգաբարձու, Մօսկվայում գնում է տեսնելու Նազարեանցին։ Վերջինս դիմաւորում է նրան նախասենեակում և հարցնում է.

—Ի՞նչ կամիք, պարոն։

—Տեսնել ձեզ, պատասխանում է հօգաբարձուն։

—Դուք այն հօգաբարձուն էք, որ աշակերտները հրապարակ քաշեցիք և պօլիցիայում ծեծեցիք... Ներեցէք, ես ձեզ տեսնել չկամիմ, և ճանաչել իսկ ոչ։

Ասում է, դուռը սաստկութեամբ փակում ու մտնում իր սենեակը։ Դրանից յետոյ հոգաբարձուն, պատահելով իր բարեկամին, ասում է.

—Ձեր Նազարեանցը կապոլի դիժ է...

Պետերբուրգում, արտասահման գնալիս, Նազարեանցը երկու օր ապրում է Զ... ազգանունով մի ռուսի տան։ Մի տարուց յետոյ այդ պարոնը, կորցնելով իր բոլոր գոյքը, անով տեղով գալիս է Մօսկվա և այդտեղ ամբողջ հինգ ամիս ապրում է Նազարեանցի տանը, ստանալով նրանից նոյն իսկ հագուստը, ուտելիքը։ Այդ բաւական չէ, Զ... առնում է Նազարեանցից և 475 րուբլի։ Երկար ժամանակ Նազարեանցը թագցնում է պարոնի վարմունքը նոյն իսկ բարեկամներից, բայց վերջը ստիպված է լինում պատմել նրանց ամեն ինչ։ Եւ երբ բարեկամները ասում են թէ ամենքը խաբում են նրան, նա պատասխանում է. «Է՛հ, ազնիւ բարեկամներ,



փառք Աստուծու որ ես չեմ խաբում, այլ ինձ են խաբում. ես կարող չէի ոտաբոբիկ արձակել այն ընտանիքը իմ տանից»։

Նա իդէալիստ էր, հաւատացող էր և կեանքի մէջ։ Պատմութեան դատաստանից շատ էր վախենում, իւրաքանչիւր մարդու պարտականութիւնն էր համարում մի որ և է բարի յիշատակ թողնել, ապրել այնպէս, որ մի լաւ բան արած լինի։ Վարձատրութիւն նա չէր պահանջում. ինքը, գաղափարը ամենամեծ վարձատրութիւնն էր։ Բայց Նազարեանցի բնաւորութեան մէջ կային և այնպիսի գծեր, որոնց չէ կարելի պակասութիւն չը համարել։ Այսպէս, մենք տեսնում ենք նրա նամակների մէջ մի մշտական գանգատ այն մասին, թէ իրան չեն գնահատում, թէ ինքը չարչարվում, տանջվում է այն պատճառով որ հայերը անհասկացող են, անբարեխիղճ են և այլն։ Մի առաջաւոր մարտնչողին չէր սազում այսպիսի լալկանութիւնը։ Նազարեանցը չէր ուզում որ իր ճանապարհին փըշեր լինեն, մինչդեռ հէնց այդ փշերն էին նրա փառքը կազմում։ Նկատելի է նրա նամակների մէջ և այն, որ նա սիրում էր չեշտել իր սեփական արժանաւորութիւնները։

Բացասական յատկութիւնները, ինչպէս տեսնում էք, շատ աննշան էին։ Այնպէս որ

առաջին ռուսահայ ազնիւ հրապարակախօսի մասին կարող ենք վստահութեամբ ասել. «Նա մարդ էր», մարդ՝ այս բառի լաւագոյն, նուիրական մտքով...

Նրա մահը ցաւ պատճառեց ամեն տեղ։ Հասարակութիւնը յիշեց իր հին երախտաւորին. ամեն տեղ հոգեհանգիստներ կատարվեցին։ Այդ հոգեհանգիստներով հայոց եկեղեցին ցոյց էր տալիս որ Յովսէփ Ջէրբէդեանները և նրան ձայնակցող հոգևորականները չեն իր ոգու արտայայտիչները. եկեղեցին դրանով ընդունում էր որ Նազարեանցի պէս մարդը իր հարազատ, սրտացաւ զաւակն է հէնց այն պատճառով, որ կռուել է իր պաշտօնեաների արատների դէմ, բարձրացրել է իդէալական, լուսամիտ, մարդասէր եկեղեցու անունն ու նշանակութիւնը։

Մեր պարբերական մամուլն էլ արժանի յարգանքներ մատուցեց հանգուցեալին։ Գրիգոր Արծրունին իր «Մշակի» մէջ*) մի ընդարձակ և կրակոտ յօդուած տպեց, որ դըրված էր սև շրջանակների մէջ։ Հաղորդելով համառօտ կենսագրական տեղեկութիւններ Նազարեանցի մասին, մեր նշանաւոր հրապարակախօսը այսպէս էր բնորոշում Նա-

*) 1879, № 62.



զարեանցի գործունէութիւնը և հայ հասարակութեան վերաբերմունքը դէպի նրան.

«Կարող ենք ասել որ Նազարեանց, ինչքան էլ մեծ գործ կատարեց հայ գրականութեան համար իր «Հիւսիսափայլ» ամսագիրը հրատարակելով, բայց նա աւելի գիտնական մարդ էր, քան ժողովրդական գործող, քան թէ պուբլիցիստ։ Դորան ամենալաւ ապացոյց այն կարող է լինել, որ զզվելով հասարակական գործունէութեան մէջ պատահող դժուարութիւններից, Նազարեանց մինչև իր կեանքի վերջը չը կարողացաւ շարունակել պուբլիցիստական գործունէութիւնը։ Անհերքելի է, որ նա յուսահատվեց, ընկճվեց հալածանքների, ինտրիգաների և թշնամութեան հարուածների տակ։

«Իսկ մամուլի մէջ գործողի յատկութիւնն է, ինչքան էլ դժուարութիւններ, արգելքներ լինէին, — երբէք չը թուլանալ, մինչև որ փիզիկական ոյժերը չը սպառվեն, երբէք չենթարկվել, չը խոնարհվել անաջող հանգամանքների առջև...

«Եւ ահա այդ պատճառով յայտնվեցաւ մի զարմանալի, անսովոր երևոյթ։ Գործողը, կենդանի մարդը, իր հասարակական ասպարէզը թողած, մոռացվում է ամենքից... Նա

կենդանի է մնում երկար տարիներ, բայց ամենքը նրան մոռացել են...

«Եւ միայն երբ Նազարեանցի մահվան լուրը կը տարածվի հայերի մէջ, թէ ռուսաստանցի և թէ թիւրքիայի հայերը կը յիշեն նրան, կը հասկանան որ Նազարեանց մեծ կռուողներից մէկն էր, որ նա հայոց ժամանակակից գրական ասպարիզում վերանորոգիչ էր և յեղափոխիչ։

«Այո, մտքով, ուղղութեամբ, գիտնական զարգացմամբ, տոկունութեամբ նա վերանորոգիչ էր, բայց իր համեստ, մեղմ, փափուկ բնաւորութիւնը հակառակում էր իր գործունէութեան...

«Կռուողի համար, վերանորոգիչ, յեղափոխիչ լինել ցանկացողի համար հարկաւոր է ունենալ աւելի զօրեղ, աւելի համարձակ, աւելի յանդուգն բնաւորութիւն, որպէս զի այդ տեսակ գործողը կարողանայ դիմանալ կեանքի ամեն տեսակ արգելքներին, մարդկանց ամեն տեսակ կեղտոտութիւններին և իր հասարակական գործունէութեան կէս ճանապարհի վրա չը կանգնի, չիջնի իր ասպարիզից, դեռ կենդանի ժամանակ, մահից շատ տարիներ առաջ, մեռած չը համարվի այն ազգի մէջ, որի մէջ գործել է, որի հնացած գաղափարների դէմ երկար ժամանակ կռուել է։



«Կեանքի ժամանակ իջնել ասպարիզից,— նշանակում է իր թուլութիւնը խոստովանել, նշանակում է իրան դատապարտել հասարակական մահվան, նշանակում է իրան յաղթված խոստովանել...

«Իսկապէս Ստեփաննոս Նազարեանց վախճանվել է հայութեան համար ոչ թէ 1879 թւին, այլ արդէն 1864 թւին։

«Թող հայոց հասարակութիւնը ինքն իրան մեղադրի, որ իր ձեռքերով սպանում է իր սեփական գործողներին, իր անտարբերութեամբ և թշնամութեամբ իր գործողների ամենալաւերին, դեռ նրանց կենդանութեան ժամանակ, դատապարտում է հասարակական մահվան»։

Ընթերցողը, աչքի առաջ բերելով Նա-
զարեանցի ամբողջ գործունէութիւնը, կը
տեսնէ որ Գրիգոր Արծրունու այս խօսքերի
մէջ կայ անհերքելի ճշմարտութիւն։ Մենք
էլ մեր պատմութեան ընթացքում տեսանք,
որ Նազարեանցը, ունենալով անյողդողդ կռ-
ւողի բոլոր յատկութիւնները, հաստատա-
մութիւնը, անխորտակելի համոզմունքը,
ուժեղ կամքը, զուրկ էր յարատեւ յամառու-
թիւնից, ֆանատիկոսութիւնից։ Նա, ճիշտ
որ, յուսահատվեց, ընկճվեց, հեռացաւ աս-
պարէզից։ Բայց նրա ժամանակակից ասա-
պարէզից։

ջադէմ հայ հրապարակախօսներից ոչ մէկն էլ չունէր այն, ինչ պահանջում էր Արծրունին. ոչ Ստեփան Ոսկանը, ոչ Նալբանդեանցը, ոչ Սվաճեանը չը կարողացան անընկճելի մնալ, մինչև ֆիզիկական ոյժերի սպառվելը։ Զօրեղ էին այդ մարդիկ, բայց անաջող հանգամանքները նրանցից աւելի զօրեղ հանդիսացան և տապալեցին նրանց։ Այդպէս էլ պիտի լինէր, ուրիշ կերպ չէր կարող պատահել.—առաջիններն էին նրանք։ Եւ Արծրունին՝ կուսղի, յեղափոխչի, վերանորոգչի համար պահանջելով «աւելի զօրեղ, աւելի համարձակ, աւելի յանդուգն բնաւորութիւն», իր սեփական պատկերն էր մէջ տեղ դնում, իր բնաւորութեան յատկութիւններն էր ձևակերպում։ Նազարեանցի սկսած գործը անցաւ մի այդպիսի բնաւորութեան ձեռքը. դա ինքը, Արծրունին էր, որ առաջ տարաւ այդ գործը մեծ յաղթանակով։ Արծրունին ուզում էր որ ամէն մէկը իր նման լինի. բայց դա անհնարին է, Արծրունիները բացառիկ երևոյթներ են կազմում...

Նազարեանցի մահը ողբացին և այնպիսի տեղերում, ուր նրա անունը մի ժամանակ անէծք և ատամների կրճտոց էր յարուցանում։ «Ծաղքաղի» խմբագիրներից մէկը, Զարմայր Մսերեանց, այդ ժամանակ «Փարոս



Հայաստանի» հանդէսն էր խմբագրում. Նա տպեց Նազարեանցի պատկերը և յայտնեց որ «մեր բոլոր Հայերիս լաւ ծանօթ գիտնական ուսուցչապետն Ստեփանոս Եսայեան Նազարեանց՝ որպէս յայտնի է՝ առանձին զարկ տուաւ մեր աշխարհիկ լեզուին և աշխատեցաւ նորա կատարելագործութեան վերայ» *)։ Մեծ գովասանքներ տպագրեց և «Մեղու Հայաստանի»-ն, այն «Մեղուն», որ Ստեփան քահանայ Մանդինեանի, Յովսէփ Ջէրքէզեանի գաղափարներից չէր հեռացել, բայց փառաբանում էր համարձակ վերանորոգչին, որովհետև խմբագիրը Նազարեանցի բարեկամն էր։ Եւ միևնոյն ժամանակ «Մեղուն» սաստիկ դիմադրում էր «Մշակին», որ «Հիւսիսափայլի» սկզբունքներն էր պաշտպանում։

Գերեզմանի առաջ խոնարհվել էին, կարծես, ամէնքը. կարծես բոլորովին մարել էին կրքերը և գոնէ այն տասն և հինգ տարիներից յետոյ, որոնք անցել էին «Հիւսիսափայլի» մահից, թւում էր թէ հայ հասարակութեան միաբան համակրութիւնը եկել էր արժանի մեծարանք մատուցանելու անմոռանալի վաստակաւորին։ Բայց հէնց այդ ընդհանուր երախտագիտական զգացմունքի արտա-

*) «Փարոս Հայաստանի», 1879, տետր Ա., եր. 33։

յայտութեան ժամանակ «Փորձ» ամսագիրը վեր է կենում ցոյց տալու որ Արարատեանների ոգին դեռ չէ մեռել։ Ալէքսանդր Երիցեանը, որ մինչև այդ լոկ հնագիտութեան և պատմագրութեան մէջ էր փորձում իր գրիչը, յանձն է առնում գրական-հասարակական ծանրակշիռ հարցերի քննադատի պաշտօն և մի ընդարձակ յօդուած է տպում Նազարեանցի գործունէութեան մասին *)։ Յօդուածի նպատակն էր ցոյց տալ որ Նազարեանցը իսկապէս մի ոչնչութիւն էր, որ նա գիտնական չէր, իբրև խմբագիր վատ էր, անընդունակ, գիտէր միայն հայհոյել, վնասակար ուղղութեան էր հետևում և յանցաւոր է իր ազգի և եկեղեցու առաջ։

Անաչառութիւնը պարտք է դնում մեզ վրա ասելու, որ Երիցեանը ցոյց է տուել Նազարեանցի մի քանի պակասութիւնները, օրինակ այն, որ նա իր մի քանի գրուածքները թարգմանել է ռուսերէնից, չը յիշելով աղբիւրները։ Բայց նոյն անաչառութեան հետևելով, մենք իր տեղում խոստովանեցինք և այն, որ Յովսէփ Ջէրքէզեանի գրուածքների մէջ էլ ճիշտ դիտողութիւններ կային։ Հարցը այդ չէ։ Մի հրապարակախօս, այն էլ

*) «Փորձ», 1879, № 11 և 1880, № 1։



ռազմիկ, պատերազմող հրապարակախօս, անկարելի է որ չունենայ թերութիւններ, և անսխալականութիւն վերագրել մի գործիչին նշանակում է ուղղակի անարգել մարդկային բնութիւնը, որի մէջ սխալներն էլ հարկաւոր են, անխուսափելի։ Հարցը այն չէ, որ ցոյց տրվեն մասնաւոր պակասութիւնները։ Կայ գլխաւորը—վերաբերմունքը, ոգին, ըմբռնողութիւնը։ Այս կողմից Երիցեանի գրուածքը մի նորութիւն չէր։ Նոյն հին պահպանողական մտավախութիւնն էր, որ նրա իւրաքանչիւր տողից աղաղակում էր թէ Նազարեանցը վնասակար գործիչ էր։ Նոյն կանխակալ, նեղ հայեացքն էր, որ թելադրում էր պատմական անցքերին այնքան շատ տեղեակ Երիցեանին ասել թէ Նազարեանցն էր, որ կրօնական անխտրութիւն քարոզելով՝ Շամախու բողոքականութեան պատճառ դարձաւ։ Արարատեանի և Ջէրքէզեանի մեղադրանքները համարեա միևնոյն ձևի տակ կըրկնում էր և Երիցեանը. Նրա քննադատական փաստերը շատ ողորմելի տպաւորութիւն են թողնում։ Նազարեանցի համարձակ ոճը, խիստ դարձուածքները Երիցեանին էլ նոյն սարսափն են պատճառում, ինչ Արարատեանին։ Այսպէս, նա բողոքում է, որ Նազարեանցը «ժանգոտած» է անուանել գրաբար

լեզուն. դա, Երիցեանի կարծիքով, հայհոյանք էր: Նոյն Երիցեանը 1866-ին «Վաճառական» լրագրի մէջ ընդունել էր որ «կեանքի խնդիրների հասկացող առաջինը էլաւ «Հիւսիսափայլը». մեզ շրջապատող բընութեանն ծանօթացնելով, պ. Նազարեանցը մէկ քանի տարվայ մէջ բաւականին խնդիրներ չարժեց ու իր կողմից իր հայեցուածքին համեմատ էնքան գործ կատարեց, որքան որ արժանի էր մէկ հասկացող մարդուն» *): Այժմ, 1879-ին, Երիցեանը ուրանում էր որ Նազարեանցը որ և է գրական գործ կատարած լինի: Մի խօսքով, «Փորձը» Նազարեանցի վերաբերմամբ կատարեալ «Ծըռաքաղ» էր...

Երիցեանի այդ գրուածքին պատասխանեց պ. Ս. Շահազիզեանը «Հրապարակախօս Ձայն» անունով մի գրքով, որ տպվեց Մոսկվայում 1881-ին: Այս աշխատութիւնը միայն պատասխան չէ, այլ և մի մանրամասն տեսութիւն Նազարեանցի գրական գործունէութեան: Ճիշտ որ շատ անգամ չարիքից բարիք էլ է ծնվում. Երիցեանը պատճառ դարձաւ այդպիսի մի գործի, որից հասարակութիւնը կարող էր միայն օգուտ տեսնել: Շահ-

*) «Վաճառական», 1866, № 11:



ազիզեանի կտրուկ, խիստ ոճը, զօրեղ ու համարձակ դատողութիւնները, առաջադիմական գաղափարները շատ լաւ տպաւորութիւն գործեցին ամեն տեղ, և Գրիգոր Արծրունին մի վերին աստիճանի համակրական յօդուածում *) ասաց թէ «Հրապարակախօս Ձայնը» յափշտակութեամբ է կարդացվում: Այստեղ էլ, նորից խօսելով Նազարեանցի մասին, Արծրունին գրում էր. «Առաջադէմ ոգին Ռուսաստանի հայ գրականութեան մէջ մտցրած է եղել Ս. Նազարեանցի ձեռքով և նրանք որոնք այժմ պատկանում են այդ ուղղութեանը, հպարտութեամբ կարող են իրանց անուանել Նազարեանցի աշակերտներ»: Շահազիզեանի գործը նա անուանում էր հերոսութիւն: Այդ գործը «Թանկագին է մեզ համար և այն պատճառով, որ արգասիք է մի շատ հազուագիւտ յատկութեան մեր մէջ: Հայի մէջ հերոսութիւն ասված զգացմունքը շատ քիչ է պատահում. հայը հակված է ամեն բարձր, յարգելի, մաքուր, պայծառ երևոյթ աղտոտելուն, քան թէ հերոսաբար պաշտպանելուն»:

Երիցեանը նոյն «Փորձի» մէջ պատասխանեց Շահազիզեանին, վերջինս էլ պատաս-

*) «Մշակ», 1881, № 89:

խանեց նրան «Մշակի» մէջ։ Բանակռիւը այդ երկուսի մէջ սրանով էլ վերջացաւ. բայց դրանից յետոյ Նազարեանցի բարի անուան և գործի պաշտպան հանդիսացաւ Արծրունին։ Իր ֆելիէտօնների մէջ նա շատ անգամ էր վերադառնում Երիցեանի գործին, շատ անգամ էր այդ առիթով յարձակվում հնագէտի վրա, անուանելով նրան Նազարեանցի գերեզմանափոր։

1886 թւականին Արծրունին նորից մի ընդարձակ յօդուած գրեց Նազարեանցի մասին։ Գերմանացի Արթուր Լէյստ «Armenische Biblothek» անունով իր գրքերից մէկի մէջ (որոնց հրատարակիչն էր նախկին «Փորձի» և այդ ժամանակ «Արձագանք» շաբաթաթերթի խմբագիր Աբգար Յովհաննիսեան) ասել էր թէ Նազարեանցի գործունէութիւնը բացասական էր և միայն դժգոհութիւն յարուցեց հայերի մէջ։ Արծրունին նորից բացատրեց թէ ինչ էր Նազարեանցը ռուսահայերի համար և անուանելով Լէյստին «վարձկան» գրող, իր հարուածները ուղղեց հրատարակչի դէմ, որի «Փորձը» արդէն ցոյց էր տւել թէ ինչպէս է նա վերաբերվում «Հիւսիսափայլի» խմբագրին։

Հետզհետէ լռեցին Նազարեանցին անպէտք, վնասակար անուանող ձայները։ Ժամանակը



ոչնչացնում է թշնամական մանր մունր բծախնդրութիւնները, վեր է հանում իսկական գործը, փայլ է տալիս նրան։ Նազարեանցը դարձաւ մի գեղեցիկ, անբիծ յիշատակ մեր գրականութեան մէջ։ «Փորձի» և «Armenische Bibliothek»-ի հրատարակիչը 1891-ին արդէն տպագրում էր Նազարեանցի պատկերը և նրա ու Նալբանդեանցի գովասանքն էր անում, թէև դրա համար ենթարկվեց «Մշակի» յարձակումներին։ Եւ այսօր էլ «Մեղուի», «Ծաղաքաղի», Ջերբէզեանների հարազատ թոռները իրանց համար մեծ պատիւ են համարում երկրպագել Նազարեանցի նուիրական յիշատակին, ամենևին հոգս չանելով որ դրանով տակն ու վրա են անում իրանց նախահայրերի մոռացված գերեզմանները։

Այսօր Նազարեանցի յաղթանակը կատարեալ է…

Վիթխարի տաղանդը չէր, որ Նազարեանցին այդքան բարձր պատուանդանի վրա դըրեց մեր մտաւոր աշխարհում։ Քրքրենք նորից նրա բոլոր գրուածքները, և դրանց մէջ մեծ ստեղծագործութիւն չենք գտնի, չենք ասի թէ մի արտակարգ շնորհք էր դա, որ

ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐԵԱՆՑ



երկնքից շնորհվում է միայն հազուագիւտ ընտրեալներին։ Համեստ է մեր Նազարեանցը․ և եթէ մենք հեռացնենք նրան մեր հողից, դնենք ուրիշ ազգերի մէջ հռչակված գործիչների կողքին, այդտեղ նա հազիւ թէ նկատելի լինի։

Ի՞նչ է սա ցոյց տալիս։

—Այն, որ մեր ազգին կարելի է մեծ բարերարութիւններ անել, չունենալով և խոշոր տաղանդ։ Փոքր ենք մենք, խեղճ, կարօտ ենք սրտակից, բարեկամ ուսուցիչների։ Այդպիսի ուսուցիչ էր մեզ համար Նազարեանցը։ Ունենալով զգայուն, սիրող սիրտ, լցված մի ազնիւ, բիւրեղեայ հայրենասիրութեամբ, նա իբրև լուսաւորված մարդ, լայն, աշխարհաշէն գաղափարների ջերմ հաւատացող երկրպագու, հասկացաւ ժամանակի խորհուրդը, դարձաւ նրա մարգարէն։ Նա աշխատեց, լաւ աշխատեց։

Եւ այդ սուրբ աշխատանքի արդիւնքը այսօր մեր առջև է։ Նազարեանց—դա մեր հերոսն է։ Նա մարմնացրեց մի նոր, մեզանում դեռ չը տեսնված տիպ, հասարակութիւնը առաջնորդող գրողի տիպը։ Նրանով գրական գործիչը հաստատուն, պատուաւոր տեղ գրաւեց մեր հասարակութեան մէջ։ Տանջվեց նա, երկար մաքառեց, բայց կարո-

ղացաւ հոյակապ շէնքի հիմքերը դնել քարի վրա. այդ շէնքը նոր գրականութիւնն էր, հասարակական գրականութիւնը, նա, որ կրթում է, սովորեցնում է, խրատում է, որ գաղափարներ է ցոյց տալիս, որ ղեկավարում է ձգտումները, բաց անելով նրանց առջև լայն հորիզոններ։

Մինչև Նազարեանցը կային գրողներ, բայց չը կային գրական նահատակներ։ Առաջ գրում էին սոսկ զուարճացնելու համար, իսկ Նազարեանցը պատերազմում էր գրելով։ Նահատակվել այդ պատերազմի մէջ, դափնիներ վաստակել, գրաւել հասարակութեան համակրանքը, դառնալ հասարակութեան պաշտամունքի առարկան, նրա սուրբը—ահա ինչ էր այդ հերոսը։

Դժբախտ չէր հայ ազգը։ Նրա մէջ յայտնվում էին մտաւոր հերոսներ։ Եւ Նազարեանցը դրանցից առաջինն էր։ Նա այսօր էլ ոգևորում է հեռու անցեալից, յաւիտենականութեան գրկից։

Միայն թէ լինէին ոգևորվողներ...

# ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՏՊՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Бѣглый взглядъ на исторію Гайканской Литературы до конца 13 столѣтія. Адъюнкта С. Назаріанца.—Ученыя Записки, издаваемыя Императорскимъ Казанскимъ Университетомъ, 1844, книжка I, եր. 46—95.

2. Обозрѣніе Исторіи Гайканской
письменности въ новѣйшія времена. Раз-
сужденіе, писанное для пріобрѣтенія сте-
пени магистра армяно-персидской сло-
весности кандидатомъ философіи Сте-
паномъ Назарянцемъ. Казань, въ ти-
пографіи Императорскаго Казанскаго
Университета. 1846. եր. 158.

Տպված է նոյն „Ученыя Записки"-ի մէջ: Առանձին գրքոյկով հրատարակված է նոյն թւին Կազանում:

Գրքի սկզբում դրված են հետևեալ նուէր-ները.

1. Առ Վեհափառ Կաթողիկոս ընդհանուր

*Հայկականաց սեռից Տէր Տէր Ներսէս Խոճա-կան Առաջնորդ Արամեան ազգի և Վեհանձն Պաշտպան գիտութեանց նուէր պատկառ ի հեղինակէն։*

2. Великодушнымъ благотворителямъ своимъ Ивану Якимовичу, Христофору Якимовичу, Лазарю Якимовичу Лазаревымъ, какъ памятникъ любви, уваженія и признательности, посвящаетъ авторъ.

3. Высоко-уважаемому Академическому наставнику своему и другу, господину статскому совѣтнику и профессору Блуму (*Տեսածը ինչպէս նախընթացում*)։

4. Незабвенному благодѣтелю своему и другу Фридриху фонъ-Швебсу (*Տեսածը ինչպէս նախընթացում*)։

*Այս վերջինը, «իր անմոռանալի բարերար և բարեկամ» Ֆրիդրիխ Ֆօն-Շվէբս, անշուշտ, այն գերմանացին է, որի օգնութեամբ և ծախսով Նազարեանցը գնաց Դօրպատ (տ. Հատ. I, եր. 63—64)։ Մենք գրել ենք Շվէբս, ինչպէս գրված էր այն աղբիւրի մէջ, որից մենք օգտվել ենք. ուրեմն, պէտք է ուղղել այդ անունը և գնել ոչ թէ Շվէբս, այլ Շվէբս։*

3. Абулъ-Касемъ Фердауси Тусскій,



творецъ Книги Царей, извѣстной подъ названіемъ Шахъ-Намэ. Съ присовокупленіемъ краткаго обзора исторіи персидской поэзіи до исхода XV столѣтія по Р. Х.—Сочиненіе доктора Восточной Словесности Степана Назарянца. *Книжка первая.* Казань, 1849, въ типографіи Университета. *եր.* 4+104.

4. *Նոյնը — Книжка вторая.* Москва, 1851, въ университетской типографіи. *եր.* 2+94.

Ա. Երիցեան («Փորձ» 1879, № XI) և Մ. Ճահագիգ («Հրապար. Ձայն», եր. 23) ասում են որ սա նոյն գիրքն է մի քանի փոփոխութիւններով։ Բայց դա սխալ է. այս 4-րորդ աշխատութիւնը երրորդի շարունակութիւնն է, նրա երկրորդ մասը։

5. *Ստեփաննոսի Նազարեանց վարդապետի արևելեան լեզուագիտութեան Յազագս Փորձական Հոգեբանութեան ճառ. Մոսկվա. ի տպարանի Վօլդէմար Կօթիէ ֆրանսիացւոյ.* 1851։ *Եր.* ԻԸ+80։

Գիրքը նուիրված է «բարերանեալ յիշատակի վաղամեռիկ եղելոյ մանկանն Յովհաննու Խաչատրեան Լազարեանց». դրան հետևում է այս ոտանաւորը.

Յաւերժացեա՛լ դու

Բաղդ յաշաղկոտ թէ ոչ շնորհեաց
Առ կենդանեօքդ ըղձեղ պաշտել.

Ի Քոյդ չիրիմ տուր արտասուաց
Թողցի գայս իմ երկ նուիրել։

Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը Ճահուխաթունեան եպիսկոպոսի կենսագրութեան մէջ, բերելով այս ձօնը և յիշեցնելով որ «Հոգեբանութիւնը» սկզբում նուիրված է եղել Ճահուխաթունեանին, մի քանի ծանր ակնարկութիւններ է անում Նազարեանցի մասին (եր. 205—206), իբր թէ Նազարեանցը, լոկ այն պատճառով, որ Լազարեանները տուել են գրքի տպագրութեան ծախսը, փոխել է իր նուէրը և յատկացրել Լազարեանի փոքրիկ որդու յիշատակին։ Նա աններելի է համարում որ Նազարեանցը «100 կամ 150 րուբլի ստանալու համար մոռանում է այն բարեկամի անունը, որին չորս տարի առաջ ընծայուած էր աշխատութիւնը»։ Նազարեանցը, ուրեմն, մեղադրվում է մի գծուծ շահասիրութեան համար։ Մենք իր տեղում խօսել ենք այս նուէրի մասին, ասել ենք թէ ինչ էր Յովհաննէս Լազարեանի մահը Լազարեան հռչակաւոր տոհմի համար։ Չը պէտք է մոռանալ որ այդ մահը ողբացին ամենքը իբրև ազգային կորուստ։ Եւ եթէ իրաւունք ունենանք կասկածի ենթարկելու Նազարեանցի անկեղծութիւնը, այն ժամանակ պէտք է ընդունենք որ զանազան կողմերից թափվող ցաւակցութիւններն էլ գրել են միայն այնպիսի մարդիկ, որոնք Լազարեաններից 100—150 րուբլի էին ստացել։ Բայց այսպէս չէ կարելի բացատրել մի ընդհանուր հասարակական վշտի շարժառիթները։

**6.** *Ստեփանոսի Նազարեան Վարդապետարան Կրօնի հասարակաց հայախօսութեամբ. Մասն առաջին, որ պարունակում է իւր մէջ. ա) Քրիստոնէական հաւատի ուսումն. բ) Քրիստոնէական բարոյականութիւն. գ) Սուրբ պատմագրութիւն։ Մոսկվայի մէջ, Լազարեանց Քաջափայլ պարոնների տպարանումը.* 1853։ *Եր.* 264։

«Աստուծոյ Ամենակալի փառքին իւր սրտի ծունրը խոնարհեցուցանելով նուիրում է Հեղինակը»։

Ա. Երիցեան մեղադրում է Նազարեանցին («Փորձ», 1881, № 5—6), որ նա իր գրքերի վրա առաջ դնում է իր անունը, յետոյ գրքի անունը։ Այդ բանը Երիցեանը համարում է անհամեստութիւն, մի գիտնական մարդուն անարժան ինքնագովութիւն։ Դա միայն խծբծանք է։ Նոյն իսկ այն ժամանակ, երբ Երիցեանը գրում էր այդ մեղադրանքը, ամեն տեղ սովորութիւն էր դարձել որ հեղինակը նախ իր անունն էր դնում, ապա գրքի անունը։ Երիցեանը վրդովվում է և այն բանի դէմ, որ Նազարեանցը գործ է ածում իր գիտնական տիտղոսը—«վարդապետ» (դօկտոր)։ Բայց դա էլ մի շատ տարածված սովորութիւն էր այն ժամանակներում։

**7.** *Առաջին Հոգեղէն Կերակուր հայազգի երեխաների համար. Ստեփանոս Նազարեան Վարդապետի Աշխատասիրութիւն. Մոսկվա քաղաքի մէջ, Վօլդեմար Գօթիէ ֆրանսիացոյ տըպարանումը.* 1853։ *Եր.* 103։

«Հայոց մանուկներին՝ Դաւիթ Թամամշեան, Ազաթօն Ակիմեան և Յովհաննէս Յօնանեան բարձրապատիւ Պարոնների կողմից սիրողապէս պարգև՛»։

**8.** Розовый Кустарникъ шейха Муслехеддинъ Саади Ширазскаго славный

подъ названіемъ Гулистана. Переводъ съ персидскаго С. Назаріанца, Доктора Восточной словесности. Москва, 1857, въ типографіи Лазаревскаго Института восточныхъ языковъ. *Եր.* XX+174.

*Նուիրված է Լազարեան ճեմարանին ի յիշատակ իր եօթնամեայ գործունէութեան նրա յարկի տակ:*

*Հարուստ առաջաբան Սաադիի գործի մասին, կենսագրական և մատենագրական տեղեկութիւններով:*

9. *Հանդէս Նոր Հայախօսութեան. աշխատութիւն Ստեփանոս վարդապետի Նազարեանց. առաջին մասն. Մոսկվայի մէջ, Լազարեանց Բաջափայլ պարոնների տպարանումը.* 1857. *Եր.* գ+503:

10. *Նոյնը երկրորդ մասն.* 1857. *Եր.* 502.

*Սկզբում դրված է Նազարեանցի «Մայրենի լեզու, մայրենի բարբառ» յայտնի երգը:*

11. *Պաւլոս և Վիրգինիա, գործ Բեռնարդէն դը Սան-Պիեռ Փրանսիացու: Որպէս յաւելուած փոքրիկ պատմութիւնը՝ «Հնդկական Խուղ»: Ֆրանսիական բնագրից թարգմանված Ստեփանոս Նազարեանցի աշխատութեամբ: Մոսկվա, գերմանացի Բարֆքնեհթի տպարանումը,* 1858: *Եր.* XXV+150:



*«Նորին Սրբազնութեան Տեառն Մատթէոսի վիճակաւոր արքեպիսկոպոսի Հաշտարխանու Հայոց, խոհական և ազգասէր հովուապետի մեծարանքով նուիրում է հեղինակը»:*

12. *Հիւսիսափայլ. Օրագիր ընդհանուր ազգային լուսաւորութեան և դաստիարակութեան: Մոսկվա,* 1858, 1859, 1860, 1861, 1862, 1864:

*Վեց տարի, 72 տետրակ, ընդամենը 5414 երես: Առաջին տարին Բարֆքնեհթի տպարանում, երկրորդ տարին Գրաչևլի և Ընկ. տպարանում, մնացած տարիները Լազարեան ճեմարանի տպարանում:*

*Առաջին տարին ճակատի պատկերը ներկայացնում էր ծով, ժայռերի վրա ընկած նաւակ, ետևում հիւսիսափայլը: Երկրորդ տարուց պատկերը փոխված է. հիւսափայլ, երկու ժայռեր, որոնցից մէկի վրա երկու փոքրիկ հիւսիսային վոխտ ծառեր:*

13. *Ճառախօսութիւն և համարատւութիւն Ներսիսեան Ազգային Հոգևոր Դպրոցի հանդիսաւոր գործողութեան մէջ* 1869 *թուականի նոյեմբերի* 12-*ին: Թիֆլիս,* 1870, *Հ. Էնֆիաճեանցի և ընկ. տպարան. Եր.* 70.

*Այս տետրակում Նազարեանցի գրչին պատկանում են. ճառ դպրոցի միամեայ գործունէութեան մասին, «Դամբանական ճառախօսութիւն Մկրտչէլ Տէր Գրիգոր-եան բժշկապետի դագաղի վերայ» և «Պատմութիւն Պե-դազօգիկայի, որպէս դա կերպարանագործուած է համ-*

աշխարհական պատմութեան մէջ և նրքին, օրինապատշաճ կերպով շաղկապուած է ազգերի կրթութեան հետ. հանած գերմանական մատենագրի, Կարլոս Շմիդթի գործից»։

Մի նամակի մէջ Նազարեանցը գանգատվում է որ շատ է չարչարվել այս տետրակի տպագրութեան վրա։ Բոլոր յօդուածները ինքն է սրբագրել, համարեա նորից գրել է։

**14.** *Տեսական և գործնական առաջնորդ ռուս լեզուի ի պէտս հայկազեան մանուկների. գործ Ստեփանոսի Նազարեանց, տպագրեալ ծախուք Ներսիսեան Ազգային-Հոգեւոր դպրոցի (Հանդերձ համառօտ ճառագրութեամբ ընդհանուր քերականութեան կանոնների, որ ծաղկաքաղ են արած Սիլվեստր դը Սասիւ գործից մակագրութեամբս «Հիմնական կանոնք ընդհանուր քերականութեան մանուկների հասկացողութեանը պատշաճեցուցած և կարող սպասաւորել իբրև ներքածութիւն բոլոր լեզուների ուսումնասիրութեան մէջ, 4 տպագրութիւն, Փարիզ, 1823)։ Թիֆլիս, 1871, տպարան Հ. Էնֆիաճեանց և ընկ. Եր. 12+317։*

**15.** *Հայոց ժողովուրդը, նոր այժմեան լեզուի և մատենագրութեան վիճակը Ռուսաստանում, համառօտ տեսութեամբ («Հանդէս Գրականական և Պատմական». Մոսկվա, 1888, գիրք առաջին, եր. 234—251)։*



**16.** *Ազգային նկատողութիւնք. մի նամակի առիթով որ ստացած է Շամախուց։— Նոր Հայկազեան օրագիր «Լապտեր Հայաստանի» (Նոյն ժողովածուի մէջ, 1889, երկրորդ գիրք, եր. 276—287)։*

## ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ.

«Հայկական Աշխարհ», 1866, № 8—9, եր.
285։—«Մշակ», 1879, № 83։—«Հանդէս Գրա-
կանական և Պատմական», № 6, 1895, եր. 112—
148, № 7, եր. 323—325։—«Լումայ» հանդէս.
1898, № 1, եր. 268, № 2, եր. 252—258,
1899, № 1, եր. 222—228, 1896, № 2, եր.
329, 1901, № 1։—«Տարազ», 1900, № 9։—
Եր. Շահազիզ—«Միքայէլ Ղազարեան Նալ-
բանդեանց», Մոսկվա, 1897, եր. 54—57։—
Արխատակէս եպիսկոպոս Սեդրակեան—«Յով-
հաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կեն-
սագրութիւնը», Պետերբուրգ, 1898, եր. 193։
—«Ընտիր Հատուածներ» Յ. Նազարեանցի.
Թիֆլիս, 1889, եր. 206—207։—«Մուրճ» ամ-
սագիր, 1902, № 5 և 7։

—ₒₒ—

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՆԱԶԱՐԵԱՆՑԻ ԵՒ ՆՐԱ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ*)

1. *«Մասեաց Աղաւնի», ամսագիր. խմբագիր Գաբրիէլ վարդապետ Այվազովսկի, Պարիզ։*

1856, № 2, *եր.* 26 (*Աշխարհաբարի մասին* **)։

*Թէոդոսիա,* 1860, № 12, *եր.* 190, 1861 (*Կիսամսեայ հանդէս*) №№ 4, 5, 9, 10 (*եր.* 42, 53, 100, 115, *Չէրքէզեանի գրուածքը*)։

2. *Ա. Արարատեանց. «Դիմագրաւ ընդդէմ սատան յարուցելոց ամենապատուական լեզուիս հայոց». Թիֆլիս,* 1858։

3. *Նոյն. «Սխալանք գրոցն՝ որ կոչի Վարդապետարան Կրօնի, ի պէտս զգուշութեան համազգեաց յերեան հանեալ». Թիֆլիս,* 1858։

4. *«Մեղու Հայաստանի», շաբաթաթերթ. խմբագիր Ստեփան քահանայ Մանդինեանց. Թիֆլիս.*

---

*) *Ձեռնարկելով այս ցուցակը կազմելուն, մենք շատ լաւ զգում էինք գործի դժուարութիւնը և բոլորովին յաւակնութիւն չունենք կարծելու թէ լիակատար է մեր այս ցուցակը։ Սա միայն մի փորձ է. մենք միայն օգտվել ենք մեր ձեռքի տակ ունեցած նիւթերից և գիտենք որ կը լինեն շատ ուրիշ գրուածքներ, որոնք մեզ անծանօթ են։*

**) *Փակագծերի մէջ մենք դնում ենք փոքր ի շատէ աչքի ընկնող յօդուածների մասին համառօտ տեղեկութիւններ։*



1858, №№ 14, 16 (*Մանդինեանցի յօդուած*), 24, 25, և 35 (*Վահան Արամեանի նամակներ*), 29, 30 (*Քննութիւն Մ. Ղ.-ի*), 37.

1859, № 10 (*Ս. Պալասանեանի յօդուած*)։

1860, № 5 (*Չէրքէզեան*), № 13 (*Չէրքէզեան*), № 31 (*Չէրքէզեան*), № 17, 43 (*Սկայորդի*)։

1863, *խմբագիր Պետրոս Սիմէօնեանց.* № 1.

1866, № 28 (*Նամակ Նազարեանցի*), № 26, 30 (*Նազարեանցի ճառ*).

1869, № 22, 35 (*Նազարեանցի ընդունելութիւնը Ներսիս. դպր.*), 40, 41, 46.

1870, № 6 (*Նազարեանցի ճառ*), № 13 (*ճառ, գրաբառ*)։

1872, № 10-ի *յաւելուած* (*Սենեք. Արծրունու յօդուած*)։

1879, № 32 (*Մահացուցակ*), № 40 (*Թղթակցութիւն Պօլսից Նազարեանցի մահվան մասին*), № 41 (*Խորէն քահ. Միրզաբէկեանց*)։

5. *«Արեւմուտք», կիսամսեայ թերթ, խմբագիր Ստեփան Ոսկան, Պարիզ։*

1859, № 10, *եր.* 79 (*Ոսկանի նկատողութիւնը*), № 11, *եր.* 82։

6. *«Ճռաքաղ», ամսագիր. խմբագիրներ Մսեր Մագիստրոս Մսերեանց և Զարմայր Մսերեանց, Մոսկվա։*

1859, *եր.* 174—182 և 374—388 (*Մսերի քննադատութիւն*), *եր.* 141—145, 221—224, *առանձին յաւելուած՝ «Մ. Իսահակեանցի պատասխան», եր.* 1—12։

1860—1861, № 9, *եր.* 144 (*Չէրքէզեանի «Հերքումն կարծեաց», հրատարակված է և առանձին բրօշիւրով*),

№ 10, եր. 172, № 13, եր. 217, № 14, եր. 233, № 18, եր. 293—300, № 19, եր. 310—316, № 22, եր. 358—364, № 23, եր. 367—379 և № 24, եր. 384—398 (Չէրքէզեանի «Մեկնութիւն մեկնութեան»)։

7. *«Կռունկ Հայոց Աշխարհին», ամսագիր· խմբագիր Մարկոս Աղաբէկեան, Թիֆլիս.*

1860, № 10, եր. 832—848 (Գ. Մուրադեանցի պատասխան)։

1862, № 11, եր. 841—863 («Հիւսիսափայլի» առաջարկութիւնը)։

8. *«Հայկական Աշխարհի Կռունկ», ամսագիր· խմբագիր Ս. Ստեփանէ. Թիֆլիս։*

1864—1865, № 1—4, եր. 122, № 7, եր. 181, 316, № 10—12, եր. 484։

9. *«Մեղու», հանդէս տասնօրեայ, խմբագիր Յ. Սվաճեան, Կ. Պոլիս։*

1860, № 119։

1861, № 129, եր. 84 (Զամուռճեանի դէմ), № 132, եր. 107, № 145, եր. 214, № 147, եր. 228, № 148, եր. 236։

1862, № 171, եր. 187։

1864, խմբագիր Ա. Հայկունի. № 233, եր. 50, № 236, եր. 75, № 251, եր. 196։

10. *«Երևակ», կիսամսեայ հանդէս, խմբագիր Յ. Տէրոյենց-Զամուռճեան, Կ. Պոլիս։*

1860, № 94, եր. 308—313 (բանակռիւ Նալբանդեանցի դէմ), № 96, եր. 365։

1861, № 97, եր. 22։



11. *«Արշալոյս Արարատեան», շաբաթաթերթ, խմբագիր Գ. Պալտազարեան. Զմիւռնիա։*

1860, № 626, 627, 628։

1862, № 667, 668։

12. *Միքայէլ Նալբանդեանց. «Երկու Տող», Պարիզ,* 1861, եր. 48։

13. *«Հայկական Աշխարհ», ամսագիր· խմբագիր Ս. Ստեփանէ. Թիֆլիս։*

1866, № 8—9, եր. 283։

1867, № 2—3, եր. 123, № 9, եր. 383։

1868, № 2—3, եր. 108, 119, № 11, եր. 395։

1869, № 9, եր. 323—324, № 11—12, եր. 354, 372։

1870, № 3—4, եր. 111, № 7—8, եր. 224, № 12, եր. 296—297։

14. *«Վաճառական, Թիֆլիսի առևտրական գազէթ», խմբագիր Գ. Տէր-Աղէքսանդրեանց.*

1866, №№ 7, 11, 18, 23։

15. *«Գարուն», ամսագիր· խմբագիր Ստեփան քահ. Մանդինեանց. Թիֆլիս.*

1866, № 7, եր. 416 (Մանդինեանցի քննութիւն)։

16. *Ստ. Պալասանեան. «Պատմութիւն Հայոց Գրականութեան». Ա. հատոր, Թիֆլիս,* 1865, եր. 11—13։

17. «Մշակ», լրագիր, շաբաթաթերթ. խմբագիր Գրիգոր Արծրունի, Թիֆլիս.

1872, № 18։

1873, № 2։

1879, ամենօրեայ թերթ, № 62 (Մահացուցակ), № 70 (Թղթակ. Մոսկվայից), № 83 («Հոգեհանգիստ»—Փ. Վարդանեանի)։

1881, № 89 («Հրապարակախօս Ձայն», մատենագրութիւն), № 161 («Մի պատասխան» Ս. Շահազիզեանի)։

1886, շաբաթը երկու անգամ, № 21, 106. № 109 («Մեր պատասխանը» Գ. Արծրունու, Լէոյի դէմ), № 120։

1888, № 48, 141։

1889, № 5 (Արծրունու պատասխան «Մուրճին») № 9 (Րաֆֆիի յօդուած)։

1890, № 45, 46, 49։

1892, № 12 և 13 («Չափաւորութեան ասպետը» Տ. Յովհաննիսեանի), № 45, 99։

1899, Խմբագիր Ա. Քալանթար, ամենօրեայ. № 161, 162, 163, 164 և 165 («Դրական Դէմքեր—Ստեփանոս Նազարեանց» Լէօի)։

18. «Դպրոց», մանկավարժական ամսագիր. խմբագիր Վահան վարդապետ Բաստամեանց, Էջմիածին.

1875, № 11—12, եր. 386—388։

19. «Պատմութիւն հայերէն Դպրութեան». Վենետիկ, 1878, եր. 501։

20. Յարոյ. «Հայոց Մամուլը Ռուսաստանում և Կովկասի մէջ». Թիֆլիս, 1878 (տպված և «Обзоръ» ռուսերէն լրագրի մէջ), եր. 31—55.



21. «Արարատ», ամսագիր. Էջմիածին.

1879, № 6, եր. 277։

22. «Փորձ», ամսագիր. խմբագիր Աբգար Յովհաննիսեան. Թիֆլիս.

1879 № 6, եր. 142. (Բանաստեղծ. Շահազիզեանի), № 9, եր. 172—180 (Նամակ Նազարեանցի մասին, նոյնի), № 11, եր. 31—83 (Ա. Երիցեանի յօդուածը)։

1880, № 1, եր. 53—87 (նոյնը)։

1881, № 5—6, եր. 211—264 (Երիցեանի պատասխանը)։

23. «Փարոս Հայաստանի», կիսամեայ հանդէս, խմբագիր Զարմայր Մսերեանց. Մոսկվա.

1879, ա. տետր, եր. 33։

1880, բ. տետր, 83, 95։

1881, երկամսեայ հանդէս, տետ. ե. եր. 13—14։

24. «Արձագանք», շաբաթաթերթ. Խմբագիր Աբգար Յովհաննիսեան. Թիֆլիս.

1886, № 35 և 36 (բանակռիւ «Մշակի» դէմ, Լայստի առիթով)։

1890, № 10 (Նազարեանցի յայտարարութիւնը Ներսիսեան դպ. հոգաբարձութեան՝ դասագրքերի մասին)։

25. Սմբատ Շահազիզեան. «Հրապարակախօս Ձայն», Մոսկվա, 1881, եր. 1—304։

26. «Մուրճ» ամսագիր. խմբագիր Աւետիս Արասխանեանց. Թիֆլիս։

1889, № 1։

1891, № 5։

1898, № 5, եր. 684—697 («Հիւսիսափայլ» և Ս. Ճահազիզեան» —Կուսիկեանի)։

1902, Նոր շրջան, խմբագիր Կ. Կրասլինիկեան № 1, եր. 57—77 («Ռուսահայ հրապարակախօսութեան նահապետը»—Կուսիկեանի)։

27. Ս. Պալասանեան «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1890, եր. 445.

28. Ղ. Աղայեանց. «Մի երես մեր նորագոյն պատմութիւնից» (արտատպած «Գրական և Պատմական Հանդէսից»), Մոսկվա, 1891, եր. 7, 26։

29. Հ. Գրիգորիս վ. Գալէմքեարեան. «Պատմութիւն հայ լրագրութեան». Վիեննա, 1893, եր. 166—178։

30. Ղազարոս Աղայեանց. «Իմ կեանքի գլխաւոր դէպքերը» (արտատպած «Մուրճ» ամսագրից). Թիֆլիս, 1894, եր.39, 51, 56—58.

31. «Արօրի Օրացոյց», Բագու, 1895, եր. 156—170։

32. Նոյնը. 1897, եր. 144—147.

33. Եր. Շահազիզ. «Միքայէլ Ղազարեան Նալբանդեանց» (արտատպած «Գրական և Պատմական Հանդէսից»), Մոսկվա, 1897, գլ. ե—գ.

34. Ն. Տէր-Կարապետեան. «Խաչատուր



Աբովեան» (արտատպած «Լումայ» հանդէսից), Թիֆլիս, 1897, եր. 19, 31, 65.

35. «Խաչատուր Աբովեանի Երկերը», Մոսկվա, 1897, «Խաչատուր Աբովեան» Ս. Տէր-Սարգսեանցի։

36. «Ղազար Փարպեցու Թուղթը» Մ. Նալբանդեանցի. Պետերբուրգ, 1868, եր. XI—XIV (Նալբանդեանցի համառօտ կենսագրութիւնը Մ. Տէր-Գրիգորեանցի)։

37. Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան. «Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանցի կենսագրութիւնը». Պետերբուրգ, 1898, եր. 190—207.

38. Գրիգորիս Երզնկեանց—«Պատմութիւն Մանկավարժութեան», Թիֆլիս, 1895, եր. 299—300.

39. Սմբատ Շահազիզեան—«Յօբելեանի տարեգարձ», Մոսկվա, 1893, եր. 12, 16.

40. «Սմբատ Շահազիզեանի երեսնամեայ յօբելեանը», խմբագրեց Ա. Ծատուրեան. Մոսկվա, 1894, եր. 7 և այլն։

41. Ս. Շահազիզեան—«Ամառնային նամակներ», Մոսկվա, 1897, եր. 174.

42. «Երեսուն և հինգ տարի». Մոսկվա, 1898, եր. 6։

43. Եր. Շահազիզ. «Մկրտիչ Յովսէփեան

էմին» (Արտատպած «Լումայ» հանդեսից) Թիֆլիս, 1900, եր. 26, 35։

44. Գաբրիէլ արքեպիսկոպոս Այվազեան. «Պատմութիւն Խալիպեան ուսումնարանին». Թիֆլիս, 1880, եր. 28—29։

45 Ա. Երիցեան—«Գրիգոր Արծրունու և նրա քսանըհինգ տարվայ գրական գործունէութեան առիթով». Թիֆլիս, 1890, եր. 51, 55։

46. Ստ. Մալխասեանց. «Համառօտ պատմութիւն Ներսիսեան Հոգևոր Դպրոցի». Թիֆլիս, 1900, եր. 129—139։

47. «Բազմավէպ» ամսագիր. Վենետիկ, ս. Ղազար. 1902, № 1, եր. 29—33, № 2, եր. 73, 77 (կենսագրութիւն։

48. Խ. Մալումեան. «Մտքի մշակը». Թիֆլիս, 1890, եր. 37—39։

Օտար լեզուներով եղած գրուածքների ցուցակը չը կարողացանք կազմել. մեզ մօտ չը կային բոլոր նիւթերը մի այդպիսի ցուցակ կազմելու համար։

---

## ՍԽԱԼՆԵՐ

| Եր. | Տող | Տպված է | Ուղղել |
|---|---|---|---|
| 31 | 16 վ. | 1853 | 1858 |
| 53 | 2 « | պահական | պատահական |
| 60 | 12 « | ժամակ | ժամանակ |
| 63 | 1 « | բարի մարդիկ | բարիմարդիկ |
| 201 | — | VI | VII |
| 230 | — | IX | VIII |
| 345 | 6 վ. | Superyne | Superque |

67.885